

Լիահորձա



Գերագույն համաժողովի ելույթները

Նախագահ Նելսոնը հորդորում է
Սրբերին՝ «Թող Աստված տնօրինի»,
ևսև դատապարտում է ռասիզմը

Հայտարարվեց ղեկավարների
փոփոխություններ Յոթանասուևի
քվորումում, Նախագահող
եպիսկոպոսությունում

Հայտարարվել են 6 նոր տաճարներ



Լուսանկարներ. Լու Նարվաեզ, Վ շրջան, Չիլի, ներդիր. Ապիա, Սամուա

COVID-19-ի պատճառով Եկեղեցու շատ անդամներ չկարողացան հավաքվել ժողովատներում՝ դիտելու համաժողովը: Փոխարենը, նիստերը հեռարձակվեցին ազգային և տարածաշրջանային հեռուստատեսությունով և ռադիոկայաններով ավելի քան 50 երկրներում՝ համաժողովը հասանելի դարձնելով ավելի քան 1,4 միլիարդ մարդ ունեցող հավանական լսարանին:

Բովանդակություն, նույնաբեր 2020

Հատոր 21 • Համար 11

Շաբաթօրյա առավոտյան նիստ

- 6 Շարժվելով առաջ
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
- 8 Եվ դրանով մենք նրանց կստուգենք
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
- 12 Դառնալով Նրա նման
Երեց Աքոթ Դ. Վայթինգ
- 15 Աչքեր՝ որ տեսնեք
Միշել Դ. Զրեյգ
- 18 Միավորել սրտերը արդարությամբ ու միությանը
Երեց Թվենթին Լ. Քուք
- 22 Տիրոջը երաշխավորված
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ
- 26 Սիրեք ձեր թշնամիներին
Նախագահ Դալլին Զ. Օուքս

Շաբաթօրյա ցերեկային նիստ

- 30 Բարձրագույն իշխանությունների, տարածքային յոթանասունականների և բարձրագույն պաշտոնյաների հաստատումը
Նախագահ Չենրի Բ. Այրինգ
- 32 Կայուն հասարակություններ
Երեց Դ. Թոդ Զրիստոֆերսոն
- 35 Գտնելով ուրախություն Քրիստոսում
Ստիվեն Ջ. Լանդ
- 38 Բոլոր ազգերը, ցեղերը և լեզուները
Երեց Ջերիթ Վ. Գոնգ
- 42 Հաց կար
Եպիսկոպոս Վ. Զրիստոֆեր Վադել
- 45 Որդու արտասովոր պարզեր
Երեց Մեթյու Ս. Հոլլանդ
- 48 Քրիստոսի մշակույթը
Երեց Վիլյամ Կ. Ջեքսոն
- 51 Աստված աներևակայելի մի բան կանի
Երեց Դիտեր Ֆ. Ուլտորֆ

Կանանց նիստ

- 55 Զգացմունքների միասնականությամբ մենք զորություն ենք ձեռք բերում Աստծո հետ
Շարոն Յուրանկ
- 58 Պահեք տարբերությունը
Բեքի Զրեյվեն
- 60 Հիսուս Քրիստոսի բժշկող զորությունը
Զրիստինա Բ. Ֆրանկո
- 67 Սիրոյի քույրերը
Նախագահ Չենրի Բ. Այրինգ
- 70 Ուրախ եղեք
Նախագահ Դալլին Զ. Օուքս
- 73 Հավատքով ընդունել ապագան
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակօրյա առավոտյան նիստ

- 77 Արթուն կացեք և ամեն ժամանակ աղոթք արեք
Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ
- 80 Լոիր, պապանձվիր
Լիզա Լ. Հարկնես
- 82 Նայեք Քրիստոսին ձեր բոլոր մտորումներում
Երեց Ուլիսես Ստարես
- 86 Ես հավատում եմ հրեշտակների
Երեց Կարլոս Ա. Գոդոյ
- 88 Մենք խոսում ենք Քրիստոսի մասին
Երեց Նիլ Լ. Անդերսոն
- 92 Թող Աստված տնօրինի
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակօրյա ցերեկային նիստ

- 96 Փորձված, ստուգված և հղկված
Նախագահ Չենրի Բ. Այրինգ
- 99 Համբերությունը թող կատարեալ գործ ունենայ, և բոլորովին ուրախություն համարեցեք
Երեց Ջերեմի Ռ. Յագի
- 102 Մեծապես հովանավորված լինելով Տիրոջ կողմից
Երեց Գարի Ե. Սթիվենսոն
- 106 Խնդրեք, փնտրեք և թակեք
Միլթոն Կամարգո
- 109 Իրաւունք անել, ողորմութիւն սիրել, եւ խոնարհութեամբ վարուիլ Աստուծոյ հետ
Երեց Դեյլ Գ. Ռենկանդ
- 112 Համբերության զորությունը
Երեց Թեյլի Ռ. Ջոնսոն
- 115 Տիրոջ ապաւինողները
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
- 118 Նոր բնականոն կյանք
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
- 64 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բարձրագույն իշխանությունները և բարձրագույն պաշտոնյաները
- 120 Եկեղեցու նորությունները
- 127 **Եվ, հետևիր ինձ.** սովորել գերագույն համաժողովի ելույթներից



Օսակա, Ճապոնիա

190-րդ կիսամյա գերագույն համաժողով

Շաբաթ առավոտյան նիստ, 3 հոկտեմբերի 2020 թ.

Վարդո՛ նախագահ Հենրի Բ. Այրինգ Բացման աղոթք՝ երեց Պատրիկ Քիրոն Փակման աղոթք՝ երեց Խուան Ա. Ուսեդա Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբը*։ “Truth Eternal,” Hymns, no. 4, “Praise to the Lord, the Almighty,” Hymns, no. 72, կատ. Վիլբերգ, “I Feel My Savior’s Love,” Children’s Songbook, 74–75, կատ. Քարոլոն, «Աստծո որդիք միացե՛ք», *Հիմներ*, հր. 4, “Have I Done Any Good?” Hymns, no. 223, կատ. Ջաբրիսկի, “Love One Another,” Hymns, 308, arr. Wilberg:

Շաբաթ ցերեկային նիստ, 3 հոկտեմբերի 2020 թ.

Վարդո՛ նախագահ Դալլին Հ. Օուքս Բացման աղոթք՝ երեց Ջ. Դեվին Քորնիշ Փակման աղոթք՝ Ջոյ Դ. Ջոնս Երաժշտությունը՝ տարբեր երգչախմբերի կատարմամբ. “Hark, All Ye Nations!” Hymns, no. 264, կատ. Շանլի, “Beautiful Savior,” Children’s Songbook, 62–63, կատ. Կասեն, “Go Forth with Faith,” Hymns, no. 263, «Աստծո Սրբեր», Hymns, հր. 6, կատ. Էշբի:

Կանանց նիստ, 3 հոկտեմբերի 2020 թ.

Վարդո՛ Բոննի Հ. Քորդոն Բացման աղոթք՝ Լիզ Դարգեր Փակման աղոթք՝ Քեթրին Ռեյնոլդս Երաժշտությունը՝ տարբեր երգչախմբերի կատարմամբ. “As Zion’s Youth in Latter Days,” Hymns, no. 256, կատ. Կասեն, «Աստծո զավակն եմ», *Հիմներ*, հր. 58, “My Heavenly Father Loves Me,” Children’s Songbook, 228, կատ. Սուսեիլի, “More Holiness Give Me,” Hymns, no. 131, կատ. Գոտես:

Կիրակնօրյա առավոտյան նիստ, 4 հոկտեմբերի 2020 թ.

Վարդո՛ նախագահ Հենրի Բ. Այրինգ Բացման աղոթք՝ երեց Ռանդել Կ. Բեննեթ Փակման աղոթք՝ երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ. “Awake and Arise,” Hymns, no. 8, “Press Forward, Saints,” Hymns, no. 81, կատ. Վիլբերգ, “If the Savior Stood Beside Me,” DeFord, կատ. Քարոլոն, «Փառք քեզ Տեր Մարգարեի համար», *Հիմներ*, հր. 36, “God Is Love,” Hymns, no.

87, կատ. Մյորֆի, “For I Am Called by Thy Name,” Գեյթս:

Շաբաթօրյա ցերեկային նիստ, 4 հոկտեմբերի 2020 թ.

Վարդո՛ նախագահ Դալլին Հ. Օուքս Բացման աղոթք՝ երեց Փոլ Վ. Ջոնսոն Փակման աղոթք՝ եղբայր Ժան Ի. Նյուման Երաժշտությունը՝ Տաճարային Հրապարակի Թաբերնակի Երգչախումբ. “Oh Say, What Is Truth?” Hymns, no. 272, կատ. Լոնգհուրսո, “Softly and Tenderly,” Thompson, կատ. Վիլբերգ, “Guide Us, O Thou Great Jehovah,” Hymns, no. 83; «Տեր ընդ ձեզ մինչև նոր հանդիպում» *Հիմներ*, հր. 40, կատ. Վիլբերգ: * Յուրաքանչյուր նիստի երաժշտությունը, տարբեր խմբավարների ղեկավարությամբ և տարբեր երգեհոնահարների մասնակցությամբ, ձայնագրվել էր նախապես:

Համաժողովի ելույթները մատչելի են Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.ChurchofJesusChrist.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Մովորաբար համաժողովից

հետո վեց շաբաթվա ընթացքում անգլերեն լեզվով տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Գերագույն համաժողովի մասին նյութերը սահմանափակ կարողություններ ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.ChurchofJesusChrist.org կայքում:

Կազմի վրա

Լուսանկարն ըստ Կվեկու Օբենգի՝ Ակրա քաղաքում, Գանա:

Համաժողովի լուսանկարները

Սուրբ Լեյք Սիթիում լուսանկարել են. Քոդի Բել, Մեյսոն Քոբերլի, Ջոն Լոյդ, Լեսլի Նիլսոն և Դեյվ Վորդ: Լրացուցիչ լուսանկարներ՝ Բենսոն Արոտոյի, Ալեքսանդր Բորլեսի, Նիկոլաս Մերի Բուստամանտեի, Քրեյթոն Չանի, Ռենդի Քոլլիերի, Ուեսթոն Քոլթոնի, Մարիա Կայզակիի, Ջուլիան Կլեմի, Էլլի Լարսենի, Գրեգ Մարտինեսի, Ջոել Մավլամի, Մելանի Միգայի, Կվեկու Օբենգի, Մայակա Օկոբոյի, Մարգարիտա Պաշկովայի, Ահարոն Թոմփսոնի, Տիցիանո Պեզետիի, Ալիս Փրայսի, Ջոնաս Ռեբիցկիի և Նատալիա Տեդի:



Շուգար Սիթի, Այդահո, ԱՄՆ

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին նախագահություն Ռասայն Ա. Նելսոն, Դավիթ Հ. Օուքս և Շնորհ Բ. Այրիկ

Տասներկու Առաջակների Քվորում. Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆֆրի Ռ. Նոլանդ, Դիանա Տ. Ուոլտեր, Դեյվիդ Ա. Բեյլար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոմ Բրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսոն, Ռոնալդ Ա. Ռասբերդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյվ Գ. Ռենյանդ, Գերրիտ Վ. Գոնզ և Ուլիսես Սոարես **Խմբագիր.** Ռենդի Դ. Ֆանկ

Խորհրդատուներ. Բեքի Բրեյվեն, Շարոն Ցուբանկ, Քրիստինա Բ. Ֆրանկ, Վոլթեր Ֆ. Գոնզալեզ, Լարի Ա. Քենեդի, Ջեն Ի. Նյումեն, Էդրիան Օչոա, Մայքլ Թ. Ռիսկվուդ, Վեն Գ. Սթենֆիլդ

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթոն

Եկեղեցու ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբոզ

Բիզնես ղեկավար. Գարֆ Քենոն

Գործադիր խմբագիր. Ադամ Ա. Օլսոն

Գործադիր խմբագրի օգնական. Ռայնո Զար

Հրատարակման օգնական. Էլիշ Կ. Դավիա

Ձեռագրեր և խմբագրում. Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդ, Մեթյու Դ. Ֆիլթոն, Գարեթ Հ. Գարֆ, Ջոն Ռայան Ջենսեն, Միստրոն Ջոնսոն, Շարոտ Լարկլաբա, Մայքլ Ռ. Սորիս, Էրիկ Բ. Սոլորո, Ջոշուա Ջ. Փերդի, Ջեն Փինբերդ, Ռիչարդ Մ. Ռոմմի, Միլոնի Մելու, Լորի Ֆուլլեր Սոսա, Չեյքլ Ուրդեյ, Մարիսա Վիդլանտ

Նկարչական ձևավորման տնօրեն. Թադ Ռ. Փիքերոն

Ձևավորում. Ջանեթ Էսթրոյա, Ֆեյ Գ. Սերոուս, Մենդի Բենթլի, Ա. Քիմբլա Բոթ, Թոմաս Չալոյ, Ջոշուա Դենիս, Դեյվիդ Գրին, Քոլլին Հինքլի, Էրիկ Գ. Ջոնսոն, Մյուզան Լոֆգրեն, Սթոբ Ա. Մոյ, Ալենի Ռեգեր, Մարք Վ. Ռոբիսոն, Կ. Լիվոլ Վոլվենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեջ Նեբերեր Օն

Հրատարակման տնօրեն. Ամմոն Հարիս

Հրատարակում. Իրա Գլեն Սդեն, Ջուլի Բրոդեր, Բրայան Վ. Ջեյքի, Ջինի Զ. Նիլսոն, Մարիսա Ա. Մոլթ

Նախատպագրություն: Ջոշուա Դենիս, Ամմոն Հարիս

Տպագրության տնօրեն. Սթիվեն Թ. Լյուիս

Բաշխման տնօրեն. Նելսոն Գոնսալես

Փոստային հասցե. *Liahona*, Fl. 23, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0023, USA.

Լիահոնա (Մորմոնի Գրքի եզրույթ է, որը նշանակում է «կրոնագույց» կամ «ուղեցույց») իրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիլերեն, թամիլ, թալերեն, թելուգո, թունգրեն, ինդոնեզերեն, իսպաներեն, իսրայելերեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբատի, կորեերեն, հայերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հոնգարերեն, ճապոներեն, լատվերեն, մալայերեն, մոնտեգրերեն, կորեերեն, շվեդերեն, չինարեն, չինարեն, պորտուգալերեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովակերեն, սլոնոսերեն, ուկրաիներեն, ուրդու, քերեսալո, ֆիլիպիներեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների):

© 2020 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Տեղեկատվություն հեղինակային իրավունքի մասին. Եթե չկա որևէ նշում, անհատները կարող են պատճենահանել կրթությունը *Լիահոնայից* անձնական, ոչ-առևտրային օգտագործման նպատակներով (ներառյալ եկեղեցու կոլումների համար): Այս իրավունքը կարող է ուժը կորցրած ճանաչվել ցանկացած ժամանակ: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Տեղեկատվություն իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղորդե՛ք հետևյալ հասցեով: Intellectual Property Office, 50 E. North Temple St., FL 13, Salt Lake City, UT 84150, USA, կամ էլ-փոստով: cor-intellectualproperty@ChurchofjesusChrist.org:

For Readers in the United States and Canada: November 2020 Vol. 21 No. 4. *LIAHONA* (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (American Express, Discover, MasterCard, Visa) may be taken by phone or at store.ChurchofjesusChrist.org. (Canada Post Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.



Ապիա, Սամուա

Խոսակների ցուցիչ

Այրիկ, Շնորհ Բ., 30, 67, 96
Սնդերսոն, Նիլ Լ., 88
Բալլարդ, Մ. Ռասսել, 77
Բեդլար, Դեյվիդ Ա., 8
Գոդոյ, Կառլոս Ա., 86
Գոնզ, Ջեֆրի Վ., 38
Լանդ, Սթիվեն Ջ., 35
Կամարգո, Միլթոն, 106
Հարկենտ, Լիզա Լ., 80
Հոլլանդ, Մեթյու Ա., 45
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 115
Յագի, Ջերեմի Ռ., 99
Յուբենկ, Շերոն, 55
Նելսոն, Ռասսել Ա., 6, 73, 92, 118
Ուոլտեր, Դիանա Տ., 51
Ջեքսոն, Վիլյամ Վ., 48
Ջոնսոն, Քելլի Ռ., 112
Ռասբերդ, Ռոնալդ Ա., 22
Ռենյանդ, Դեյվ Գ., 109
Սթիվենսոն, Գարի Ի., 102
Սոարես, Ուլիսես, 82
Վադել, Վ. Քրիստոֆեր, 42
Վայթինգ, Սթոբ Դ., 12
Քուք, Բլեյթին Լ., 18
Քրեյգ, Միշել Դ., 15
Քրեյգ, Բեքի, 58
Քրիստոֆերսոն, Դ. Թոմ, 32
Օուքս, Դավիթ Հ., 26, 70
Ֆրանկ, Քրիստինա Բ., 60

Թեմաների ցուցիչ

ԱՄՆ սահմանադրություն, 18, 26
Ազատ կամք, 92
Արդթ, 77, 106
Անաստական արժանավորություն, 15
Անձնական աճ, 12, 58, 96
Անձնական հայտնություն, 106
Անվտանգություն, 73
Աշակերտություն, 15, 35, 88, 99, 118
Ապաշխարություն, 12, 45, 58, 60, 109
Առաջնություն, 77
Առաջնություն, 32, 82
Արարողություններ, 22, 102
Արդարակցություն, 18, 82
Արժանավորություն, 22
Բազմազանություն, 18
Բարի գործեր, 38
Բարություն, 15, 55
Բժշկում, 45, 60
Բնական մարդ, 82
Գայթակրություն, 82
Դարձ, 58, 86
Եկեղեցու աճ, 6
Եկեղեցու անդամություն, 38
Եկեղեցու իրապարակումներ, 38
Երեխաները և երիտասարդները, 35
Երկրորդ Գալուստ, 67, 77, 88
Զորություն, 55, 77, 112
Ընկերակցություն, 86
Ինքնապահովում, 42
Իսրայելի տուն, 92
Խմբատեսություն, 118
Խաղաղություն, 80
Խոնարհություն, 109
Կանայք, 67, 70, 73
Հակառակություն, 26
Հարողություն, 35
Համբերություն, 99, 115
Հայտնություն, 73
Հայր Աստված, 38, 51, 92, 115
Հավատարմություն, 8, 73, 96
Հավատք, 60, 73, 77, 80, 88, 99, 112, 115

Հավաքում, 92
Հիսուս Քրիստոս, 6, 12, 15, 18, 26, 32, 35, 45, 48, 55, 58, 70, 80, 82, 88, 92, 96, 109, 112
Հնագիտություն, 22
Հրեշտակներ, 86, 88
Ձայնորություն, 6, 8, 38, 42, 45, 51, 60, 70, 77, 80, 96, 99, 102, 115
Ենթարտություն, 32
Մահականացու կյանք, 70
Մարգարեներ, 42, 51
Մարգարեություն, 38
Մարդություն, 82
Մեղք, 45, 82, 109
Մերթախյալ պահեստ, 42
Միություն, 18, 26, 55, 67
Միջոցառման աշխատանք, 6, 38, 51
Մշակույթ, 48
Մորմոնի Գրք, 38, 73
Յոզեֆ Սմիթ, 38, 55, 70, 73, 77, 96
Նախապատրաստություն, 8, 42, 73
Որդնամություն, 55, 109
Որդնամություն, 22, 58, 92, 112
Ուրախություն, 35, 45, 70, 99
Պարտավորություն, 12
Ռահիբրաներ, 70
Ռասիզմ, 26, 92
Սեր, 15, 18, 26, 32, 38, 109
Սիրո, 18, 32, 55, 67
Սուրբ գրություններ, 106
Սպասակություն, 86, 102
Սկիզբի Միություն, 55, 67
Վախ, 80
Վկայություն, 6
Տանձարային աշխատանք, 22
Տանձարներ, 6, 22, 102, 112, 118
Տասնամյակ, 42
Տեխնոլոգիաներ, 51, 102
Փրկության ծրագիր, 8, 32, 48, 70, 96, 115
Քավություն, 35, 45, 60, 88
Քրիստոնեություն, 88
Քրիստոսի Լույսը, 32
Օրենքներ, 26
Օրինություններ, 38, 51, 102, 106, 115, 118

190-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում



Անորոշության ֆոնին միլիոնավոր մարդիկ մի պահ խաղաղություն գտան 2020 թվականի հոկտեմբերի 3–4-ը տեղի ունեցած գերագույն համաժողովի ընթացքում: Եկեղեցու ղեկավարները մեր ուշադրությունն ուղղեցին դեպի Հիսուս Քրիստոսը՝ միասնության և սիրո, հույսի ու բժշկման և աստվածային նպատակի խաղաղության ուղերձներով:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մեզ ուսուցանեց, թե ինչպես ձեռք բերել Աստծո ժողովուրդ դառնալու օրհնությունները:

«Երբ թույլ տաք, որ Աստված տնօրինի ձեր կյանքը, ինքներդ կզգաք, որ մեր Աստվածը՝ «Կրաջքների Աստված է» [Մովսես 9:11]: Նախագահ Ռասսել Մ. Նելսոն (տես էջ 92)

Ելույթ ունեցողներից շատերն անդրադարձան **անձնական աճին**՝ Հիսուս Քրիստոսին հետևելու, Նրան վստահելու և մեր կամքը

Նրան հանձնելու միջոցով:

«Երբ մենք խոնարհաբար դիմենք [Հիսուս Քրիստոսին], Նա կմեծացնի փոխվելու մեր ունակությունը»: Բեքի Քրեյվեն (տես էջ 58)

Կրկին **նոր կորոնավիրուսը** ազդեց այն ամենի վրա, ինչ մենք տեսանք և լսեցինք համաժողովում: Այնուամենայնիվ, այս լրացուցիչ փորձառությունը մեծ հեռանկար բացեց, քանի որ խոնակները կենտրոնացան ոչ միայն հույսի վրա, այլև մեր հավերժական երջանկության Աստծո ծրագիրն ավելի լավ հասկանալու վրա:

«Ստուգումները մահկանացու կյանքի դպրոցում կարևոր տարր են մեր հավերժական առաջընթացի համար: . . . Ես խնդրում եմ, որ մենք . . . սովորենք արժեքավոր դասեր, որոնք միայն դժվարին փորձառությունները կարող են ուսուցանել մեզ»: Երեց Դեյվիդ Ա. Բեդլսար (տես էջ 8)

Աշխարհի տարբեր մասերում

կատարվող **հասարակական անկարգությունների** պատճառով ղեկավարները դատապարտեցին ռասիզմը և բռնությունը: Նրանք կոչ արեցին, որ մենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, մեկ դառնանք արդարության մեջ, միասնություն գտնենք բազմազանության մեջ և օգնենք կառուցել բարոյական և սիրող հասարակություն:

«Մենք սպրոտ ենք ուժեղ պատակտումների մի հաստակ ժառանգակրում: . . . Մենք կարող ենք լինել այն ուժը, որը կրախցնի և կօրհնի հասարակությունը որպես մեկ սակրողջություն»: Երեց Քլեյմենտ L. Քոք (տես էջ 18)

Հուսով ենք, որ այս թողարկման միջոցով վերաարելով համաժողովը, կրկին կզգաք այն հույսն ու ոգեշնչումը, որն առաջին անգամ զգացել եք, ինչպես նաև առաջիկա ամիսներին նոր գիտելիք կստանաք ձեր ուսումնասիրության շնորհիվ: ■



Գվատենալա Սիթի, Գվատենալա



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու
Նախագահ

Շարժվելով առաջ

Տիրոջ աշխատանքը կայուն կերպով առաջ է շարժվում:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ինչպիսի՛ *ուղախություն է* լինել ձեզ հետ, երբ սկսում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 190-րդ կիսամյա գերագույն համաժողովը: Ես սիրում եմ միանալ ձեզ ձեր տներում կամ որտեղ էլ լինեք, և միասին լսել մարգարեների, տեսանողների, հայտնողների և Եկեղեցու մյուս ղեկավարների ուղերձները:

Մենք շատ երախտապարտ ենք տեխնոլոգիաների համար, որոնք թույլ են տալիս մեզ կապվել միմյանց հետ՝ որպես Հիսուս Քրիստոսի աշակերտների

համաշխարհային մեծ ժողով: Անցյալ տարվա ապրիլին կայացած գերագույն համաժողովը ավելի շատ մարդ ղիտեց, քան դրան նախորդող համաժողովները, և մենք ակնկալում ենք, որ դա կկրկնվի:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում համաշխարհային համավարակը, մոլեգնող անտառային հրդեհները և այլ բնական աղետները գլխիվայր շուտ օվեցին մեր մոլորակը: Ես սգում եմ նրանց հետ, ովքեր այս ընթացքում կորցրել են իրենց սիրելիներին: Եվ աղոթում եմ բոլոր

նրանց համար, ովքեր ներկայումս մաքառում են:

Միևնույն ժամանակ, Տիրոջ աշխատանքը կայուն կերպով առաջ է շարժվում: Սոցիալական հեռավորության, դիմակների և Zoom հանդիպումների ֆոնին մենք սովորել ենք որոշ բաներ ուրիշ կերպ կատարել, իսկ մյուսներն էլ՝ ավելի արդյունավետ: Անսովոր ժամանակները կարող են անսովոր ձևով պարզապես:

Մեր միսիոներներն ու միսիաների ղեկավարները եղել են հնարամիտ, ճկուն և իսկապես հրաշալի: Չնայած միսիոներների մեծ մասը ստիպված էր գտնել իրենց աշխատանքը կատարելու նոր, ստեղծագործական եղանակներ, շատ միսիաներ հայտնել են, որ *ավելի շատ* ուսուցում են կատարում, քան երբևէ:

Մենք ստիպված էինք որոշ ժամանակով փակել տաճարները, և որոշ շինարարական ծրագրեր կարճ ժամանակով հետաձգվել են, բայց այժմ դրանք բոլորն առաջ են շարժվում: 2020 օրացուցային տարում մենք կդնենք 20 նոր տաճարների հիմքը:

Ընտանեկան պատմության աշխատանքը մեծապես աճել է: Ստեղծվել են բազմաթիվ նոր ծխեր և ցցեր: Եվ մենք ուրախ ենք տեղեկացնել, որ Եկեղեցին համավարակային մարդասիրական օգնություն է տրամադրել 150 երկրների՝ 895 նախագծերի շրջանակում:

Շատ տներում ավետարանի ուսումնասիրությունը ստեղծում է ավելի ամուր վկայություններ և ընտանեկան հարաբերություններ: Մի մայր գրել է. «Այժմ մենք մեզ ավելի հարազատ ենք զգում մեր երեխաների և թոռների հետ, երբ ամեն կիրակի հավաքվում ենք Zoom-ի միջոցով»: Ամեն մեկս կիսվում է *Եկ, հետևիր ինձ* ծրագրի մեր մտքերով: Մեր ընտանիքի անդամների համար աղոթքները փոխվել են, քանի որ մենք ավելի լավ ենք հասկանում, թե նրանց ինչ է պետք:

Ես աղոթում եմ, որ մենք՝ որպես եկեղեցու անդամներ,



Օլմուն, Վալպարաիսո, Չիլի



այս եզակի ժամանակն օգտագործենք հոգևորապես աճելու համար: Մենք այստեղ՝ երկրի վրա ենք, որպեսզի փորձվենք և ստուգվենք՝ տեսնելով, թե արդյոք կրնա՞նք հետևել Հիսուս Քրիստոսին, պարբերաբար ապաշխարել, սովորել և առաջադիմել: Մեր հոգիները կարոտ են առաջընթացի: Իսկ մենք դա լավագույն ձևով ենք անում, երբ ամուր ենք կանգնում ուխտի արահետին:

Չնայած այդ ամենին, մեր Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, սիրում են

մեզ: Նրանք հոգ են տանում մեր մասին: Նրանք և նրանց սուրբ հրեշտակները հսկում են մեզ:¹ Ես գիտեմ, որ դա ճշմարիտ է:

Երբ մենք հավաքվում ենք, որպեսզի լսենք Տիրոջ ձայնը, որոնք Նա ներշնչել է Իր ծառաներին՝ հաղորդելու մեզ, ես հրավիրում եմ ձեզ խորհել Տիրոջ տված խոստման մասին: Նա ասել է, որ «*ոյ որ կառնես*» կարող է կառչած մնալ Աստծո խոսքին, որը կենդանի է և հզոր, որը կտոր-կտոր է անում դևի ողջ խորամանկությունը և ծուղակները, և առաջնորդում

է Քրիստոսի [աշակերտներին] մի անձուկ ու նեղ ուղիով»:²

Ես աղոթում եմ, որ դուք *ընտրեք* կառչած մնալ Աստծո խոսքին, ինչպես հայտարարվեց այս գերագույն համաժողովի ընթացքում: Եվ աղոթում եմ, որ դուք զգաք Տիրոջ կատարյալ սերը ձեր հանդեպ,³ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՐՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.88:
2. Հելլաման 3.29, շեշտադրումն ավելացված է:
3. Տես 2 Նեփի 1.15:



Երեց Դեյվիդ Ա. Բեդևար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Եվ դրանով մենք նրանց կատուգենք (Աբրահամ 3.25)

*Աբրահամի գրքում Տեր Աստվածը հայտարարեց.
«Եվ դրանով մենք նրանց կատուգենք, որպեսզի
տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը,
ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:*

Ես հայցում եմ Սուրբ Հոգու օգնությունը մեր բոլորի համար, մինչ կկիսվեմ այն խոհերով և զգացումներով, որոնք եկել են իմ միտքն ու սիրտը այս գերագույն համաժողովին նախապատրաստվելու ընթացքում:

Ստուգումների կարևորությունը

Ավելի քան երկու տասնամյակ առաջ, նախքան լիաժամկետ եկեղեցական ծառայության կանչվելը, ես աշխատում էի որպես համալսարանի դասախոս և կառավարիչ: Որպես ուսուցիչ՝ իմ

հիմնական պարտականությունն էր օգնել ուսանողներին սովորել, թե ինչպես ինքնուրույն սովորեն: Եվ իմ աշխատանքի ամենակարևոր մասն էր՝ ստուգարքների հիման վրա ստեղծել, գնահատել և հաշվետվություն ուղարկել ուսանողների կատարողականի վերաբերյալ: Ինչպես դուք գուցե արդեն գիտեք անձնական փորձառությունից, ստուգարքները սովորաբար ուսման գործընթացի մաս չեն կազմում, ինչն ուսանողները ամենաշատն են սիրում:

Սակայն, պարբերական ստուգումները բացարձակ կարևոր են ուսման համար: Արդյունավետ ստուգարքն օգնում է մեզ մեր իմացածը համեմատել նրա հետ, ինչ մենք պետք է իմանանք որոշակի առարկայի մասին, դա նաև ապահովում է մի չափորոշիչ, որի միջոցով մենք կարող ենք գնահատել մեր գիտելիքը և զարգացումը:

Նմանապես, ստուգումները մահկանացու կյանքի դպրոցում կարևոր տարր են մեր հավերժական առաջնության համար: Այնուամենայնիվ հետաքրքիր է, որ *ստուգել* բառը նույնիսկ մեկ անգամ չի նշվում կանոնիկ սուրբ գրությունների անգլերեն աշխատությունների տեքստում: Ավելի շուտ օգտագործվում են *ստուգել, քննել*, և *փորձել* բառերը, որպեսզի նկարագրենք մեր հոգևոր գիտելիքի տարբեր ձևերը, որպեսզի պատշաճությամբ ցուցադրենք մեր Երկնային Հոր երջանկության հավերժական ծրագրին և Փրկիչի Քավության օրհնություններին ձգտելու, հասկանալու և նվիրվելու մեր կարողությունը

Նա, ով փրկության ծրագրի հեղինակն է, նկարագրել է մեր մահկանացու կյանքի փորձաշրջանը՝ օգտագործելով *ստուգել, քննել*, և *փորձել* բառերը հնարարյան և ժամանակակից սուրբ գրություններում: «Եվ դրանով մենք նրանց *կստուգենք*, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:¹



Պրով, Յուսա, ԱՄՆ



Սանտո Դոմինգո, Դոմինիկյան Հանրապետություն

Մտածեք Մաղմոսող Դավթի այս աղերսանքի շուրջ.

«Փորձիր ինձ, [Ով] Տեր, և քննիր ինձ. փորձիր իմ երկկամունքները և իմ սիրտը:

Որովհետեւ քո ողորմութիւնն իմ աչքի առաջին է եւ ես քո ճշմարտութիւնումն եմ գնում:²

Եվ Տերը հայտարարել է 1833 թ.-ին. «Հետևաբար, մի վախեցեք ձեր թշնամիներից, քանզի ես իմ սրտում որոշել եմ, ասում է Տերը, որ ես կփորձեմ ձեզ բոլոր բաներում, թե արդյոք դուք կմնաք իմ ուխտի մեջ, մինչև իսկ մահով, որպեսզի դուք արժանի գտնվեք»:³

Ինչպես ենք ստուգում և փորձում ներկա օրերում

2020 թվականը հայտնի դարձավ մասամբ համաշխարհային համավարակով, որը ստուգեց, քննեց և փորձեց մեզ շատ եղանակներով: Ես խնդրում եմ, որ մենք՝ որպես անհատներ և ընտանիքներ, արժեքավոր դասեր սովորենք, որոնք միայն դժվարին փորձառությունները կարող են ուսուցանել մեզ: Ես նաև հուսով եմ, որ մենք բոլորս լիովին կճանաչենք «Աստծո մեծությունը» և այն ճշմարտությունը, որ «նա կնվիրագործի [մեր] չարչարանքները [մեր] օգտի համար»:⁴

Երկու հիմնական սկզբունքներ կարող են առաջնորդել և զորացնել մեզ, երբ մեր կյանքում հանդիպում ենք ստուգող և փորձող հանգամանքների, ինչպիսին էլ դրանք լինեն. (1) նախապատրաստության սկզբունքը, և (2) Քրիստոսում անսասան առաջ մղվելու սկզբունքը:

Ստուգում և նախապատրաստություն

Որպես Փրկիչի աշակերտներ, մեզ պատվիրվել է. «Նախապատրաստե՛ք ամեն անհրաժեշտ բան, և հաստատե՛ք մի տուն, այսինքն՝ աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն»:⁵

Տերը նաև խոստացել է մեզ. «Եթե դուք պատրաստ լինեք, դուք չեք վախենա:

Եվ, որ դուք կարողանաք խույս տալ թշնամու զորությունից և հավաքվել ինձ մոտ՝ մի արդարակյաց ժողովուրդ, անբիծ ու անարատ»:⁶

Այս սուրբ գրություններն ապահովում են կատարյալ կառուցվածք մեր կյանքը և տները կազմակերպելու և պատրաստելու համար՝ ինչպես նյութապես, այնպես էլ հոգևորապես: Մահկանացու կյանքի ստուգիչ փորձառություններին պատրաստվելու մեր ջանքերը պետք է հետևեն Փրկիչի օրինակին, ով աստիճանաբար «զարգանում էր իմաստութիւնով եւ հասակով. եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդկանց մօտ»⁷ մտավոր, ֆիզիկական, հոգևոր և հասարակական պատրաստվածության միաձուլյալ հավասարակշռությամբ:

Մի քանի ամիս առաջ կեսօրին ես և Սյուզանը գույքագրեցինք մեր ուտելիքի պահեստը և արտակարգ իրավիճակների պարագաները: Այդ ժամանակ COVID-19-ը արագ տարածվում էր, իսկ Յուտայի մեր տունը ցնցվել էր մի շարք երկրաշարժերից: Մեր ամուսնության սկզբից մենք հետևել ենք մարգարեական խորհրդին՝

պատրաստվել անկանխատեսելի մարտահրավերներին, այնպես որ մեր պատրաստվածության վիճակը «ստուգելը» վիրուսի և երկրաշարժերի ընթացքում թվում էր ճիշտ և ժամանակին կատարվող քայլ: Մենք ցանկանում էինք պարզել մեր գնահատականները այդ չհայտարարված ստուգարքների վերաբերյալ:

Մենք շատ բան սովորեցինք: Շատ ուրորտներում մեր նախապատրաստական աշխատանքը ուղղակի ճիշտ էր: Մի քանի այլ ասպարեզներում, այնուամենայնիվ, բարելավումը անհրաժեշտ էր, որովհետև ճիշտ ժամանակին չէինք հասկացել և հոգացել որոշակի կարիքներ:

Մենք նաև շատ ծիծաղեցինք: Օրինակ՝ մենք հայտնաբերեցինք առարկաներ հեռավոր մի դարակում, որոնք մեր ուտելիքի պահեստում էին տասնամյակներ շարունակ: Անկեղծ ասած, մենք վախեցանք բացել և ստուգել որոշ տարաներ՝ վախենալով տարածել ևս մեկ գլոբալ համավարակ: Բայց դուք պետք է երջանիկ լինեք, իմանալով, որ մենք պատշաճորեն ազատվեցինք վտանգավոր նյութերից, և որ աշխարհի առողջությանը սպառնացող վտանգը վերացավ:

Եկեղեցու որոշ անդամներ այն կարծիքին են, որ արտակարգ իրավիճակի ծրագրերն ու առարկաները, ուտելիքի պահեստը և 72- ժամյա պայուսակները չպիտի կարևոր լինեն այլևս, որովհետև Եղբայրները վերջին գերագույն համաժողովներում շատ չեն խոսել այդ մասին և դրանց հետ կապված թեմաներից: Բայց պատրաստվելու կրկնվող հորդորները տասնամյակներ շարունակ հայտարարվել են Եկեղեցու ղեկավարների կողմից: Մարգարեական խորհրդի հետևողականությունը ժամանակի ընթացքում ստեղծում է պարզության և նախազգուշացման հզոր համերգ, որի ձայնի բարձրությունը շատ ավելի ուժգին է, քան մենակատարումները երբևէ կարող են առաջացնել:



Գվատեմալա Սիթի, Գվատեմալա

Ինչպես դժվարին ժամանակները բացահայտում են անհամապատասխանությունները նյութական պատրաստվածության ասպարեզում, այպես էլ հոգևոր անվտանգության և ինքնագոհության հիվանդությունները առաջացնում են ամենակործանարար հետևանքները ծանր փորձությունների ժամանակ: Օրինակ՝ տասը կույսերի առակում մենք սովորում ենք, որ նախապատրաստության հետաձգումը հանգեցնում է անհաջող ստուգման: Հիշեք, թե ինչպես հինգ հիմար կույսերը թերացան պատշաճորեն նախապատրաստվել քննությանը, որը նրանց տրվել էր Փեսայի գալստյան օրվա համար:

«Մյուս հինգը հիմար էին, քանի որ նրանք ձեռք վեր չառան իրենց հետ»:

Բայց իմաստունները իրենց ամաններումը ձեռք վեր առան իրանց լապտերների հետ մեկտեղ:

Եվ կես գիշերին աղաղակ եղա՝ Միս փեսան գալիս է. Դուրս եկեք նորան դիմավորելու:

Այն ժամանակ ամեն կոյսերը վերկացան՝ եւ իրանց լապտերները պատրաստեցին:

Բայց հիմարներն ասեցին իմաստուններին. Տվեք մեզ ձեր յուղիցը, որովհետև մեր լապտերները հանգչում են:

Իմաստուններն էլ պատասխանեցին և ասեցին. Մի գուցե մեզ և ձեզ բավական չլինի. Բայց ավելի լավ գնացեք ծախողների մոտ և գնեցեք ձեզ համար:

Եւ երբոր նորանք գնացին գնելու, փեսան եկաւ. և պատրաստները նորա հետ հարսանիքը մտան, և դուռն փակուեցավ:

Եւ յետոյ այն միուս կոյսերն էլ եկան եւ ասեցին. Տէր, Տէր բաց մեզ:՝⁸

Բայց Նա էլ պատասխանեց եւ ասեց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, Դուք չէք ճանաչում ինձ»:՝⁹

Այդ քննության ժամանակ հինգ հիմար կույսերն ապացուցեցին, որ իրենք միայն լսողներ են եղել, այլ ոչ թե խոսքը կատարողներ:՝¹⁰

Դպրոցում ես մի ընկեր ունեի, ով ջանասեր ուսանող էր համալսարանում: Կիսամյակի ընթացքում Մեմն ամեն օր ժամանակ էր հատկացնում՝ յուրաքանչյուր դասընթացը վերանայելու, ամփոփելու և իր գրառումներից դասեր քաղելու համար, որոնցում նա ընդգրկված էր: Ամեն շաբաթվա և ամեն ամսվա վերջում նա հետևում էր նույն եղանակին իր բոլոր դասերի համար: Այդ մոտեցումը հնարավորություն տվեց նրան սովորել օրենքը, այլ ոչ թե միայն սերտել մանրամասները: Եվ երբ ավարտական քննությունները մոտենում էին, Մեմը պատրաստ էր: Փաստորեն նա ավարտական քննությունը համարում էր իր իրավաբանական ուսումնառության

ամենաքիչ լարված շրջաններից մեկը: Արդյունավետ և ժամանակին նախապատրաստումը նախորդում է հաջող ստուգարքին:

Մեմի մոտեցումը իր իրավաբանական կրթությանը լուսաբանում է աճի և զարգացման Տիրոջ հիմնական ձևաչափերից մեկը: «Այսպես է ասում Տեր Աստվածը. Ես կտամ մարդկանց զավակներին՝ տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ. և օրհնված են նրանք, ովքեր ականջ են դնում իմ ցուցումներին և ունկրում իմ խորհրդին, քանզի նրանք իմաստություն կսովորեն. քանզի նրան, ով ընդունում է, ես կտամ ավելին»:՝¹¹

Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին «Մեր ուշը դարձնենք [մեր] ճանապարհներին»¹² և «փորձենք» [մեր] անձերը, թե արդեօք [մենք] հավատքով ենք, [և] քննենք [մեր] անձերը»:՝¹³ Ի՞նչ ենք սովորել այս վերջին ամիսների ընթացքում ապրելակերպի ճշգրտումների և սահմանափակումների մասին: Ի՞նչ պետք է անենք, որպեսզի բարելավվենք մեր կյանքը հոգևորապես, սոցիալապես, հուզական և մտավոր ասպարեզներում: Աբրահամի գրքում Տեր Աստվածը հայտարարեց. «Եվ դրանով մենք նրանց կատուզենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:

Քննելով և առաջ շարժվելով

Մի անգամ ես մասնակցեցի մի երիտասարդ միսիոների թաղմանը, ով մահացել էր վթարից: Միսիոների հայրը խոսեց արարողության ժամանակ և նկարագրեց սիրելի զավակի անսպասելի մահվան պատճառով բաժանման սրտի ցավը: Նա անկեղծորեն հայտարարեց, որ ինքը անձնապես չէր հասկանում այդպիսի իրադարձության պատճառները կամ ժամկետը: Բայց ես միշտ կհիշեմ նաև այդ բարի մարդու հայտարարությունը. ինքը գիտեր՝ Աստված իմանում էր պատճառները և

ժամկետները իր զավակի հեռանալու համար, և դա բավարար էր նրա համար: Նա ասաց հավաքվածներին, որ չնայած ինքը և իր ընտանիքը վշտահար էին, բայց հետո լավ կլինեն, իսկ նրանց վկայությունները մնացել էին ամուր և անասան: Նա եզրափակեց իր դիտարկումները այս հայտարարությամբ. «Ինչ վերաբերում է Հիսուս Քրիստոսի ավետարանին, ես ուզում եմ, որ դուք իմանաք՝ մեր ընտանիքը ամբողջությամբ հավատարիմ է ավետարանին: Մենք բոլորս ավետարանում ենք»:

Չնայած իրենց թանկագին ու սիրելի զավակի կորուստը սրտակեղեք էր և դժվար, այդ քաջարի ընտանիքի անդամները հոգևորապես պատրաստված էին ապացուցելու, որ իրենք կարող էին սովորել հավերժական կարևորություն ունեցող դասեր այն ամենի միջոցով, որոնցով իրենք անցնում էին:¹⁴

Հավատարմությունը հիմարություն չէ, ոչ էլ մոլեռանդություն: Ավելի շուտ պետք է վստահենք Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր Փրկիչի, և ապավինենք Նրա անունին և Նրա խոստումներին: Երբ մենք «առաջ մղվենք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ»,¹⁵ մենք կօրհնվենք հավերժական հեռանկարով և տեսլականով, որը ձգվում է մեր մահկանացու սահմանափակ կարողությունից այն կողմ: Մենք հնարավորություն կունենանք «հավաքվել միասին և կանգնել սուրբ տեղերում»,¹⁶ և « շարժվել, մինչև որ Տիրոջ օրը գա»:¹⁷

Երբ ես ծառայում էի որպես Այդահոյի Բրիգամ Յանգի համալսարանի նախագահ, Ջեֆրի Ռ. Հոլլանդը եկավ համալսարան 1998 թվականի դեկտեմբերին՝ էլութ ունենալու մեր ամենշաբաթյա հոգևոր հավաքին: Ես և Սյուզանը հրավիրեցինք մի խումբ ուսանողների հանդիպել և ծանոթանալ Երեց

Հոլլանդի հետ, մինչև նրա էլութը: Երբ մեր համատեղ ժամանակը մոտենում էր ավարտին, ես հարցրի Երեց Հոլլանդին. «Եթե դուք ուսուցանեիք այս ուսանողներին միայն մի բան, դա ինչը կլիներ»:

Նա պատասխանեց.

«Մենք ականատես ենք լինում ավելի մեծ շարժման դեպի բնեռացումը, քան երբևէ: Մենք՝ որպես Վերջին Օրերի Սրբեր, կգրկվենք ոսկե միջինը ունենալու տարբերակի հնարավորությունից: Ճանապարհի միջին մասը հետ կքաշվի:

Եթե գետի ջրի հոսանքի մեջ քայլում եք, ինչ-որ տեղ կգնաք: Դուք ուղղակի կգնաք, ուր հոսանքը կտանի ձեզ: Հոսանքի ուղղությամբ գնալով և հետևելով ալիքին, հոսանքին հակառակ չենք գնա:

Ընտրություններ պետք է կատարվեն: Ընտրություն չկատարելը նույնպես ընտրություն է: Սովորեք ընտրել այժմ»:

Բնեռացումը խորանալու վերաբերյալ Երեց Հոլլանդի հայտարարությունը ապացուցեց իր մարգարեական լինելը՝ 22 տարվա հասարակական միտումների և իրադարձությունների միջոցով՝ այն ժամանակից ի վեր, երբ նա պատասխանեց իմ հարցին: Կանխագուշակելով մեծացող տարբերությունը Տիրոջ ուղիների և աշխարհիկ ուղիների միջև, Երեց Հոլլանդը նախագուշացրեց, որ հարմարավետության օրերը՝ մեկ ոտքը ունենալով վերականգնված Եկեղեցում, իսկ մյուս ոտքը՝ աշխարհում, արագորեն անհետանում էին: Տիրոջ այս ծառան խրախուսում էր երիտասարդներին ընտրել, պատրաստվել և դառնալ Փրկիչի նվիրված աշակերտներ: Նա օգնում էր նրանց պատրաստվել և առաջ մղվել՝ ապացուցելով, քննելով և իրենց կյանքի փորձող փորձառությունների միջով անցնելով:

Խոստում և վկայություն

Մեր անձերը քննելու գործընթացը Երկնային Հոր երջանկության

ծրագրի հիմնարար մասն է հանդիսանում: Ես խոստանում եմ, որ եթե մենք և՛ պատրաստվենք, և՛ առաջ մղվենք հավատքով դեպի Փրկիչը, մենք կարող ենք բոլորս ստանալ նույն գնահատականը մեր մահկանացու կյանքի ավարտական քննության ժամանակ. «Լավ, բարի և հավատարիմ ծառայ, քիչ բաների վերայ հաւատարիմ էիր, ես քեզ շատ բաների վերայ կդնեմ, մտիր քո տիրոջ ուրախությունը»:¹⁸

Ես վկայում եմ, որ Աստված՝ Հավիտենական Հայրը, մեր Հայրն է: Հիսուս Քրիստոսը Նրա Միածին և կենդանի Որդին է, մեր Փրկիչն ու Քավիչը: Այս ճշմարտությունների մասին ես ուրախությամբ վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՉՂՈՒՄՆԵՐ

1. Աբրահամ 3.25, շեշտադրումն ավելացված է:
2. Սաղմոս 26.2-3, շղագիրն ավելացված է:
3. Վարդապետություն և Ուխտեր 98.14, շեշտադրումն ավելացված է:
4. 2 Նեփի 2.2:
5. Վարդապետություն և Ուխտեր 88.119, շեշտադրումն ավելացված է:
6. Վարդապետություն և Ուխտեր 38.30-31:
7. Դուկաս 2.52
8. Մատթեոս 25.3-4, 6-11:
9. Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 25.12 (Մատթեոս 25.12, ծանոթագրություն *ս*):
10. Տես Հակոբոս 1.22-25:
11. 2 Նեփի 28.30:
12. Անգե 1.5, 7:
13. [Բ Կորնթացիս 13.5:]
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 105.6:
15. 2 Նեփի 31.20:
16. Վարդապետություն և Ուխտեր 101.22:
17. Վարդապետություն և Ուխտեր 87.8:
18. Մատթեոս 25.21:





Երեց Արթ Ռ. Վայնսլյան
Յոթանասունից

Դառնալով Նրա նման

Միայն Նրա աստվածային օգնությամբ մենք բոլորս կարող ենք առաջ ընթանալ՝ Նրա նման դառնալու համար:

Նույնիսկ Հիսուս Քրիստոսի կյանքի և ծառայության հանդեպ ուշադիր ուսանողին ուղղված Փրկիչի հորդորը՝ լինել «ճիշտ ինչպես ես»,¹ վախեցնող է և անհնարին թվացող: Հավանաբար դուք նման եք ինձ՝ բոլորդ լավ գիտեք ձեր սխալներն և թույլությունները, ուստի, գուցե, մտավորապես ավելի հարմար գտնեք քայլել մի արահետով, որը վեր բարձրացող թեքության չունի և ունի փոքր աճ: «Անշուշտ, այս ուսմունքը անիրական է և չափազանցված», - պատճառաբանում ենք մենք, երբ ընտրում

ենք հարմարավետ և ամենաքիչ դիմադրություն պահանջող ընթացքը, այդպիսով այրելով ավելի քիչ կալորիաներ՝ պահանջվող փոփոխության համար: Իսկ ի՞նչ, եթե դառնալ «ճիշտ ինչպես [Նա է]» արտահայտությունը փոխաբերական չէ՝ նույնիսկ մեր մահկանացու վիճակում: Իսկ ի՞նչ, եթե դա ինչ-որ չափով հասանելի է այս կյանքում և, իրոք, նախադրյալ է՝ Նրա հետ կրկին լինելու համար: Իսկ եթե «ճիշտ ինչպես ես եմ» արտահայտությունը ճշգրտորեն և հստակորեն արտահայտում է

այն, ինչ նկատի է ունեցել Փրկիչը: Ուրեմն ի՞նչ: Մենք ի՞նչ ջանքեր կկամենայինք գործադրել՝ հրավիրելով Նրա հրաշագործ ուժը մեր կյանք, որպեսզի փոխենք մեր բուն էությունը:

Երեց Նիլ Ա. Մաքսվելն ուսուցանել է. «Երբ մենք խորհում ենք Իր նման դառնալու Հիսուսի պատվիրանի մասին, մենք տեսնում ենք, որ պարտադիր չէ, որ ներկայումս գտնվենք ամբարիշտ հոգևոր վիճակում, այլ ավելի շուտ այնպիսի վիճակում, երբ այնքան անվճռական ենք և այնքան զերծ խանդավառությունից՝ Նրա գործի հանդեպ, որը նաև մեր գործն է: Մենք մեծարում ենք, բայց հազվադեպ ենք ընդօրինակում Նրան:»² Մի երիտասարդ ծառայող՝ Չարլզ Մ. Շելդոն անունով, արտահայտեց այսպիսի զգացումներ. «Մեր քրիստոնեությունը չափազանց շատ է սիրում իր հանգիստն ու հարմարավետությունը, որպեսզի վերցնի այնքան կոպիտ և ծանր մի բան, ինչպիսին խաչն է»:³

Փաստորեն, բոլորը Նրա նման դառնալու հրահանգի ներքո են, ճիշտ՝ ինչպես Հիսուս Քրիստոսը դարձավ Հոր նման:⁴ Երբ մենք առաջադիմում ենք, դառնում ենք ավելի ամբողջական, ավարտուն և լիովին զարգացած:⁵ Այդպիսի ուսմունքը հիմնված չէ որևէ աղանդի վարդապետությունների վրա, այլ անմիջականորեն զալիս է Իրենից՝ Տիրոջից: Այս տեսակետով միջոցով է, որ կյանքերը պետք է ապրեն, շփումները կառուցվեն և փոխհարաբերություններ զարգացվեն: Իսկապես, չկա ուրիշ ոչ մի ուղի, որ բժշկվեն խաթարված փոխհարաբերությունների և մասնատված հասարակության վերքերը, քան այն, որ մեզանից յուրաքանչյուրի համար Խաղաղության Իշխանին լիովին ընդօրինակելն է:⁶

Եկեք քննարկենք՝ ինչպես ձգտել լրջորեն, միտումնավոր և կանխամտածված կերպով նմանվել Նրան՝ ձեռք բերելով Հիսուս Քրիստոսի բուն հատկանիշները:



Օրեն, Յուսա, ԱՄՆ

Վճռել և պարտավորվել

Մի քանի տարի առաջ, ես և կլինս կանգնած էինք ճապոնիայի ամենաբարձր Ֆուջի լեռը տանող արահետի սկզբում: Երբ սկսեցինք մեր վերելքը, նայեցինք հեռվում երևացող գագաթին և երկմտեցինք, թե կկարողանայինք արդյոք հասնել այնտեղ:

Երբ առաջ գնացինք, հոգնածությունը, ցավող մկանները և բարձրության ազդեցությունը սկսեցին զգացնել տալ: Մտավորապես մեզ համար կարևոր դարձավ ուղղակի կենտրոնանալ հաջորդ քայլի վրա: Մենք ասում էինք. «Ես գուցե շուտով չհասնեմ գագաթին, բայց կարող եմ անել հաջորդ քայլը հենց հիմա»: Ժամանակի ընթացքում երկյուղալի հանձնարարությունը, ի վերջո, հասանելի դարձավ՝ քայլ առ քայլ:

Հիսուս Քրիստոսին նմանվելու այս արահետի վրա առաջին քայլը կատարելու համար պետք է դա անելու ցանկություն ունենալ: Լավ է հասկանալ Նրա նման լինելու հորդորը, բայց այդ հասկացողությունը պետք է զուգակցվի մեր անձերը փոխակերպելու տենչով՝ ամեն անգամ մեկ քայլ անելով բնական մարդուց այն կողմ:⁷

Որպեսզի զարգացնենք այդ ցանկությունը, մենք պետք է գիտենանք, թե ով է Հիսուս Քրիստոսը: Մենք պետք է ինչ-որ բան իմանանք Նրա բնավորության մասին,⁸ և պետք է փնտրենք Նրա հատկանիշները սուրբ գրություններում, երկրպագության ծառայություններում և այլ սուրբ վայրերում: Երբ ավելի շատ բան իմանանք Նրա մասին, մենք արտացոլված կտեսնենք Նրա հատկանիշները ուրիշների մեջ: Դա մեզ կքաջալերի մեր սեփական որոնումներում, քանի որ, եթե մյուսները ինչ-որ չափով հասնում են Նրա հատկանիշներին, մենք նույնպես կարող ենք:

Եթե մենք ազնիվ ենք ինքներս մեզ հետ, Քրիստոսի Լույսը⁹ մեր մեջ կհուշի, որ հեռավորություն կա մեր գտնված տեղի և Փրկիչի ցանկալի բնավորության միջև:¹⁰ Այդպիսի ազնվությունը էական



է, եթե մենք պետք է առաջադիմենք՝ Նրա նման դառնալու համար: Ազնվությունը իրոք Նրա հատկանիշներից մեկն է:

Այժմ, մեզանից նրանք, ովքեր քաջ են, գուցե հարցնեն ընտանիքի մի վստահելի անդամի, կողակցի, ընկերոջ կամ հոգևոր առաջնորդի, թե Հիսուս Քրիստոսի որ հատկանիշի կարիքը մենք ունենք, իսկ մեզ գուցե հարկ լինի պատրաստվել պատասխանին: Երբեմն մենք մեզ տեսնում ենք ծիծաղի սենյակի հայելիների աղավաղված ձևերով, որոնք մեզ ցույց են տալիս կամ շատ ավելի կլոր, կամ շատ ավելի նիհար, քան իրականում կանք:

Վստահելի ընկերները և ընտանիքը կարող են օգնել մեզ ավելի ճիշտ տեսնել ինքներս մեզ, բայց նույնիսկ նրանք՝ որքան էլ սիրալիր և օգնող կկամենային լինել, գուցե, որոշ բաներ անկատար ձևով տեսնեն: Արդյունքում կարևոր է, որ մենք հարցնենք նաև մեր Երկնային Հորը, թե ովքեր ունեն մեր կարիքը, և որտեղ պետք է կենտրոնացնենք մեր ջանքերը: Նա կատարյալ տեսական ունի մեր մասին և սիրով ցույց կտա մեզ մեր թուլությունները:¹¹

Միգուցե դուք իմանաք, որ ավելի մեծ համբերության, խոնարհության, գթության, սիրո, հույսի, ջանասիրության և հնազանդության կարիք ունեք, իսկ սրանք ընդամենը մի քանիսն են:¹²

Վերջերս ես հոգևոր աճի մի փորձառություն ունեցա, երբ Եկեղեցու մի սիրալիր ղեկավար շատ ուղղակիորեն առաջարկեց, որ ես կարիք ունեի բարելավել մի որոշակի հատկանիշ: Եկեղեցու ղեկավարը սիրով ներկայացրեց ճշմարտությունը՝ առանց այն աղավաղելու: Երեկոյան ես կնոջս հետ կիսվեցի այդ փորձառությամբ: Նա բարեհաճ ու գթառատ էր, նույնիսկ, եթե համաձայն էր ղեկավարի առաջարկի հետ: Սուրբ Հոգին հաստատեց ինձ, որ նրանց խորհուրդը սիրառատ Երկնային Հոր կողմից էր:

Գուցե նաև օգտակար լինի ազնվորեն լրացնել Քրիստոսանման հատկանիշների վերաբերյալ վարժությունը *Քարոզիչ Իմ Այնտապասնը* ձեռնարկի 6-րդ գլխում:¹³

Եթե ազնվորեն կշռադատել եք և վճռել եք սկսել մազլցել սարն ի վեր, դուք ապաշխարելու կարիք կունենաք: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը սիրով ուսուցանել է. «Երբ ընտրում ենք ապաշխարությունը, մենք փոխվելու որոշում ենք կայացնում: Մենք թույլ ենք տալիս Փրկիչին վերափոխելու և դարձնելու մեզ մեր անձի լավագույն տարբերակը: Մենք որոշում ենք հոգևորապես աճել և ուրախություն ստանալ. փրկագնման ուրախությունը Նրանում: Երբ փորձում ենք ապաշխարել, մենք որոշում ենք նմանվել Հիսուս Քրիստոսին»:¹⁴

Հիսուս Քրիստոսին նմանվելու համար կպահանջվի կամքի ուժ, որպեսզի փոխենք մեր սրտերն ու մտքերը, իրականում մեր բուն բնավորությունը, և դրա իրականացումը հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսի փրկիչ շնորհի միջոցով:¹⁵

Բացահայտեք և գործեք

Այժմ, երբ դուք վճռել եք փոխվել և ապաշխարել և առաջնորդություն



Ռեքսբուրգ, Այրահո, ԱՄՆ

եք փնտրել աղոթքի միջոցով, ազնվորեն խորհրդածելով և, հնարավոր է, խորհրդակցելով մյուսների հետ, դուք պետք է ընտրեք մի հատկանիշ, որը հատկապես կդառնա ձեր կիզակետը: Դուք պետք է ինքներդ պարտավորվեք՝ գործադրելով իմաստալի ջանքեր: Այդ հատկանիշները չեն գա հեշտությամբ և հանկարծակի, այլ կգան Երա շնորհի միջոցով՝ աստիճանաբար ճիգեր թափելու ընթացքում:

Քրիստոսանման հատկանիշները պարզևներ են սիրառատ Երկնային Հորից՝ օրհնելու մեզ և մեր շրջապատում գտնվող մարդկանց: Ուստի այդ հատկանիշները ձեռք բերելու մեր ջանքերը կպահանջեն սրտառու աղերսանքներ Երա աստվածային օգնության համար: Եթե մենք ձգտենք այդ պարզևներին, որպեսզի ավելի լավ ծառայենք ուրիշներին, Եա կօրհնի մեզ մեր ջանքերում: Աստծուց եսասիրաբար պարզևի հետամուտ լինելը կավարտվի հուսահատությամբ և հիասթափությամբ:

Խորապես կենտրոնանալով մեկ անհրաժեշտ հատկանիշի վրա, երբ դուք առաջադիմում եք այդ հատկանիշը ձեռք բերելու համար, ուրիշ հատկանիշներ էլ են ավելանում ձեզ մոտ: Արդյո՞ք նա, ով խորապես կենտրոնացել է գթության վրա, կարող է չլքվել սիրով և խոնարհությամբ: Արդյո՞ք

նա, ով կենտրոնացել է հնազանդության վրա, կարող է չլքվել ավելի մեծ ջանասիրությամբ և հույսով: Ձեր նշանակալի ջանքերը ձեռք բերելու մեկ հատկանիշը դառնում է ավիք, որը բարձրացնում է նավահանգստի բոլոր նավերը:

Գրի առեք և պահպանեք

Երբ ձգտում եմ Երա նման դառնալ, ինձ համար կարևոր է գրի առնել իմ փորձառությունները և այն, ինչ սովորում եմ: Երբ խորապես ուսումնասիրում եմ Երա հատկանիշներից

մեկը իմ մտքում, սուրբ գրությունները դառնում են նոր, քանի որ այդ հատկանիշի նոր օրինակներ եմ տեսնում Երա ուսմունքներում, Երա ծառայությունում և Երա աշակերտների մեջ: Իմ աչքը նաև ավելի է կենտրոնանում, երբ այդ հատկանիշը ճանաչում եմ ուրիշների մեջ: Ես նկատել եմ հրաշալի մարդկանց՝ ինչպես Եկեղեցու ներսում, այնպես էլ դրսում, ովքեր ունեն հատկանիշներ, որոնք ընդօրինակում են Երան: Դրանք հզոր օրինակներ են, թե ինչպես կարող են այդ հատկանիշները դրսևորվել սովորական մահկանացուների մեջ՝ Երա սիրառատ շնորհի միջոցով:

Իրական առաջընթաց տեսնելու համար հարկավոր է շարունակական ջանքեր գործադրել: Ճիշտ, ինչպես լեռ մազլցելիս պահանջվում է նախապատրաստություն, համբերություն ու համառություն վերելքի ժամանակ, այնպես էլ այս ճամփորդությունը պահանջում է իրական ջանք և զոհաբերություն: Ճշմարիտ քրիստոնեությունը, որում մենք ձգտում ենք դառնալ մեր Տիրոջ նման, միշտ պահանջել է մեր լավագույն ջանքերը:¹⁶

Այժմ կարճ նախազգուշացում: Երան նման լինելու պատվիրանը նախատեսված չէ ստիպելու ձեզ մեղավոր, անարժան կամ չսիրված զգալ: Մեր ողջ մահկանացու

կյանքի փորձառությունը առաջընթացի, փորձելու, ձայնողվելու և հաջողության մասին է: Ես ու կինս, որքան էլ շատ ցանկանայինք փակել մեր աչքերը և կախարդական փայտիկի օգնությամբ տեղափոխվելիք գագաթնակետ, դա այն չէր լինի, ինչ իրական կյանքում է:

Դուք բավականին լավն եք, դուք սիրված եք, բայց դա չի նշանակում, որ դուք կատարյալ եք: Այս կյանքում և հաջող կյանքում աշխատանք կա անելու: Միայն Երա աստվածային օգնությամբ մենք բոլորս կարող ենք առաջընթանալ՝ Երա նման դառնալու համար:

Մեր օրերում, երբ «բոլոր բաները [կարծես], խառնաշփոթի մեջ են և . . . [թվում է] երկյուղը պատում է բոլոր մարդկանց»,¹⁷ միակ հակաթույնը, միակ դեղն է՝ ձգտել նման լինել Փրկիչին,¹⁸ Քավիչին¹⁹ ողջ մարդկության, աշխարհի Լուսին,²⁰ և նմանվել Երան, ով հայտարարել է. «Ես եմ ճանապարհը»:²¹

Ես գիտեմ, որ Երա աստվածային օգնությամբ և ուժով Երա նման դառնալը իրագործելի է քայլ առ քայլ: Եթե այդպես չլինեք, Եա չէր տա մեզ այս պատվիրանը:²² Ես գիտեմ դա, մասամբ այն պատճառով, որ տեսնում եմ Երա հատկանիշները ձեզանից այնքան շատերի մեջ: Այս բաների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 3 Նեփի 27.27: Փրկիչի կողմից տրված հորդորների հետ կապված, տես Մատթեոս 5.48 («Արդ դուք կատարեալ եղիք, ինչպես ձեր Հայրը, որ Երկնքում է, կատարեալ է»), Ս Հովհաննես 2.6 («Ով որ ասում է, թե նորանում եմ բնակվում, պետք է, ինչպես որ նա գնաց, ինքն էլ այնպես գնայ» Մտախ 3.19 («Քանզի բնական մարդը Աստծո մի թշնամի է, և եղել է Ադամի անկումից ի վեր և կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ, և դառնա ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին որոնք Տերը հարմար է տեսնում բերել նրա վրա, ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը»), Ավմա 5.14 (Եվ արդ ահա, ես հարցնում եմ ձեզ,

- եկեղեցու իմ եղբայրներ, ծնվե՞լ եք դուք Աստծուց հոգևորապես: Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին), 3 Նեփի 12.48 (Հետևաբար, ես կամենում եմ, որ դուք լինեք կատարյալ, ճիշտ ինչպես ես, կամ ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է):
2. Neal A. Maxwell, *Even As I Am* (1982), 16.
 3. Charles M. Sheldon, *In His Steps* (1979), 185.
 4. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.12-17:
 5. Տես Մատթեոս 5.48, տողատակի ծանոթագրությունը ք:
 6. Տես Եսայիա 9.6, 2 Նեփի 19.6:
 7. Տես Ա Կորնթացիս 2.14, Մոսիա 3.19:
 8. Տես Մատթեոս 7.23, 25.12, Մոսիա 26.24, տես նաև յուրաքանչյուր սուրբ գրության հղումները, Դեյվիդ Ա. Բեդնար, «Եթե ինձ իմացած լինեիք», *Լիստոնս*, նոյեմբեր 2016, 102-5:
 9. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.2:
 10. Տես Մորոնի 7.12-19:
 11. Ես Եթեր 12.27:
 12. Տես *Քարոզիչ Իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց*, խմբ. հր. (2019), գլուխ 6, «Ինչպե՞ս զարգացնեմ Քրիստոսանման հատկանիշներ»: Քրիչի այլ հատկանիշների մասին հղումները ցրված են սուրբ գրությունների մեջ: Մի քանի օրինակներ ներառում են Մոսիա 3.19, Ալմա 7.23, Հավատո հանգանակ 1.13:
 13. Տես *Քարոզիչ Իմ ավետարանը*, 132:
 14. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավ լինել», *Լիստոնս*, մայիս, 2019թ., 67:
 15. Տես Bible Dictionary, “Grace”, տես նաև Սուրբ Գրքերի ուղեցույց, «Շնորհ», scriptures.ChurchofJesusChrist.org:
 16. Տես Շելդոն, *In His Steps*, 246. «Եթե Քրիստոնյա լինելու մեր սահմանումը, ուղղակի երկրպագության արտոնությունների վայելումն է. լինել առատաձեռն՝ առանց մեր հաշվին ծախսելու, լավ, հանգիստ ժամանակ անցկացնել հաճելի ընկերներով և հարմարավետ իրերով շրջապատված, հարգված լինել ու միևնույն ժամանակ խուսափել աշխարհի մեղքի գերազանցությունից և դժբախտությունից, որովհետև դա խիստ մեծ ցավ է, որպեսզի այն տանենք, եթե սա է քրիստոնեության մեր սահմանումը, անշուշտ մենք շատ հեռու ենք Նրա քայլերին հետևելուց, ով քայլեց հառաչանքների, արցունքների ու տառապանքի ճանապարհով, հեկեկալով կորած մարդկության համար, ով քրոտնեց, կարծես, արյան մեծ կաթիլներով, ով աղաղակեց խաչին բարձրացված, «Իմ Աստուած՝ իմ Աստուած, ի՞նչու թողցիր ինձ»:
 17. Վարդապետություն և Ուխտեր 88.91:
 18. Տես Եսայիա 43.3:
 19. Տես Հոբ 19.25:
 20. Տես Հովհաննես 8.12:
 21. Հովհաննես 14.6:
 22. Տես 1 Նեփի 3.7:



Միշել Դ. Քրեյգ
 Երիտասարդ կանանց գերագույն նախագահության
 առաջին խորհրդակալ

Աչքեր՝ որ տեսներ

*Սուրբ Հոգու զորությամբ Քրիստոսը մեզ
 հնարավորություն կտա տեսնել մեզ և տեսնել
 ուրիշներին այնպիսին, ինչպիսին Նա է տեսնում:*

Տեսնել Աստծո ձեռքը

Ես սիրում եմ Հին Կտակարանի այն երիտասարդի պատմությունը, ով ծառայում էր Եղիսե մարգարեին: Մի օր վաղ առավոտյան երիտասարդն արթնացավ, դուրս գնաց և տեսավ, որ մի մեծ գործ պաշարել էր քաղաքը՝ նրանց կործանելու մտադրությամբ: Նա վազեց Եղիսեի մոտ. «Վա՛յ, տեր իմ, ի՞նչ անենք»:

Եղիսեն պատասխանեց. «Մի վախենար. որովհետև մեզ հետ եղողները շատ են քան թե նորանց հետ եղողները»:

Եղիսեն գիտեր, որ երիտասարդին ավելին էր պետք, քան հանգստացնող հավաստիացումը. նրան տեսիլք էր պետք: Ուստի, «Եղիսեն աղօթք արա, . . . Ով Տեր, . . . բաց նորա աչքերը որ տեսնէ: Եւ Տէրը բացաւ ծառայի աչքերը եւ նա տեսաւ, եւ ահա սարը լիքն էր հրեղէն ձիերով եւ կառքերով Եղիսէի շուրջը»:¹

Կարող են լինել պահեր, երբ դուք ինքներդ, այդ ծառայի նման դժվարանում եք տեսնել, թե ինչպես է Աստված աշխատում ձեր կյանքում՝ ժամանակներ, երբ *դուք* ձեզ շրջափակման մեջ եք զգում, երբ մահկանացու կյանքի փորձությունները ձեզ ծնկի են բերում: Սպասեք և ապավինեք Աստծուն և

Նրա ժամանակին, քանի որ դուք կարող եք վստահել Նրա սրտին ձեր ողջ սրտով: Բայց այս պատմությունից մի բան էլ ենք սովորում: Իմ թանկագին քույրեր և եղբայրներ, դուք նույնպես կարող եք աղոթել Տիրոջը, որպեսզի բացի ձեր աչքերը, որ տեսնեք այն, ինչը սովորաբար չեք տեսնում:

Տեսնել մեզ այնպիսին, ինչպիսին տեսնում է Աստված

Մեզ համար, թերևս, ամենակարևորն այն է, որ հստակ տեսնենք, թե ով է Աստված, և ով



Վակայամա, Ճապոնիա

ենք մենք իրականում. երկնային ծնողների որդիներ և դուստրեր՝ «աստվածային էության մեջ և հավերժական ճակատագրով»:² Խնդրեք Աստծուն հայտնել ձեզ այդ ճշմարտությունները, ինչպես նաև այն, թե Նա ինչ կարծիք ունի ձեր մասին: Որքան շատ և խորությամբ եք հասկանում ձեր իրական ինքնությունն ու նպատակը, այնքան դա ավելի շատ կազդի ամեն ինչի վրա ձեր կյանքում:

Տեսնել ուրիշներին

Հասկանալով թե ինչպիսին է Աստված տեսնում մեզ, ուրիշ ենք նախապատրաստում՝ օգնելու մեզ տեսնել ուրիշներին այնպիսին, ինչպիսին տեսնում է Նա: Մամուլի տեսաբան Դեյվիդ Բրուքսն ասել է. «Մեր հասարակության մեծագույն խնդիրներից շատերը բխում են այն մարդկանցից, ովքեր իրենց անտեսված ու չգնահատված են զգում: . . . [Կա մի] հիմնական . . . հատկություն, որը մենք բոլորս պետք է . . . ավելի շատ զարգացնենք, [և դա] միմյանց հանդեպ խորաթափանց վերաբերմունք ցուցաբերելն է և ուրիշների կողմից նույն վերաբերմունքին արժանանալը»:³

Հիսուս Քրիստոսը տեսնում է մարդկանց հոգիների խորքերը: Նա տեսնում է անհատների, նրանց կարիքները, և թե նրանք ով կարող են դառնալ: Որտեղ ուրիշները տեսնում էին ձկնորսների, մեղավորների կամ մաքսավորների, Հիսուսը տեսավ աշակերտների, որտեղ ուրիշները տեսնում էին դևերով բռնված մի մարդու, Հիսուսը, անտեսելով նրա արտաքինը, ճանաչեց նրան և բուժեց նրան:⁴

Նույնիսկ մեր զբաղված կյանքում մենք կարող ենք հետևել Հիսուսի օրինակին և տեսնել անհատներին՝ նրանց կարիքները, հավատքը, պայքարը և ով կարող են դառնալ:⁵

Երբ ես աղոթում եմ, որ Տերը բացի իմ աչքերը, որ տեսնեմ այն, ինչը սովորաբար կարող եմ չտեսնել, ես հաճախ ինքս ինձ երկու

հարց եմ տալիս և ուշադրություն եմ դարձնում ստացած տպավորություններին. «Ի՞նչ եմ անում, որ պետք է դադարեմ անել» և «Ի՞նչ չեմ անում, որ պետք է սկսեմ անել»:⁶

Ամիսներ առաջ հաղորդության ընթացքում ես ինձ այս հարցերը տվեցի և զարմացա ստացած տպավորությունից: «Հերթում սպասելիս մի՛ նայիր քո հեռախոսին»: Հերթում կանգնած՝ հեռախոսին նայելը գրեթե մեխանիկորեն էր ստացվում. կարծում էի, որ դա լավ պահ էր բազմազբաղ լինելու համար, ինչպես նաև էլեկտրոնային փոստին, կարևոր նորություններին կամ սոցիալական լրատվամիջոցների լրահոսին հետևելու համար:

Հաջորդ առավոտյան ես կանգնած էի խանութի երկար հերթում: Ես հանեցի հեռախոսս և անմիջապես հիշեցի իմ ստացած տպավորությունը: Հեռախոսս տեղը դրեցի և նայեցի շուրջս: Նկատեցի մի տարեցի, որ կանգնած էր հերթի վերջում: Նրա զամբյուղը գրեթե դատարկ էր. այնտեղ ընդամենը մի քանի տուփ կատվի կեր էր դրված: Ես ինձ մի փոքր անհարմար էի զգացի, բայց ասացի *խկսապես* խելացի մի բան. «Ես տեսնում եմ, որ դուք կատու ունեք»: Նա ասաց, որ փոթորիկ էր սպասվում, և ինքը չէր ուզում մնալ առանց կատվի կերի: Մենք մի փոքր զրուցեցինք, ապա նա շրջվեց իմ կողմը և ասաց. «Գիտեք, ես ոչ ոքի չեմ ասել այդ մասին, բայց այսօր իմ ծնունդն է»: Դա շատ հուզիչ պահ էր: Ես շնորհավորեցի նրա ծնունդը և երախտագիտության աղոթք ասացի մտովի, որ չէի տարվել իմ հեռախոսով և բաց թողել մեկ այլ մարդու իսկապես տեսնելու և նրա հետ շփվելու հնարավորությունը, որի կարիքը նա ուներ:

Իմ ողջ սրտով ես չեմ ուզում նմանվել Երիքովի ճանապարհով անցնող քահանային կամ Ղևտացուն. նրանց, ովքեր նայում և անցնում են:⁷ Մակայն շատ հաճախ կարծում եմ, որ այդպես եմ անում:

Տեսնել փոքրիկ հանձնարարությունները, որոնք Աստված տալիս է ինձ

Ես վերջերս մի արժեքավոր դաս քաղեցի խորաթափանց լինելու վերաբերյալ Ռոզլին անունով մի պարմանուհուց:

Այդ պատմությունով ինձ հետ կիսվել էր ընկերուհիներիցս մեկը, ով խիստ վշտացած էր, որ 20 տարվա ամուսնությունից հետո ամուսինը հեռացել էր: Քանի որ նրա երեխաները շաբաթվա կեսն էին անցկացնում իր հետ, եկեղեցի մենակ գնալու միտքը սարսափ էր ներշնչում: Նա պատմում է.

«Եկեղեցում, որտեղ ընտանիքը ամենակարևորն է համարվում, միայնակ նստելը կարող է ցավ պատճառել: Այդ առաջին կիրակին ես ներս մտա աղոթելով, որ ոչ ոք ինձ հետ չլսուեր: Ես հազիվ էի տիրապետում ինձ ու զսպում արցունքներս: Ես նստեցի իմ մշտական տեղում, հուսալով, որ ոչ ոք չէր նկատի, թե որքան դատարկ է թվում նստարանը:

Մեր ծխի երիտասարդ աղջիկներից մեկը շրջվեց և նայեց ինձ: Ես ձևացրի, թե ժպտում եմ: Նա նույնպես ժպտաց՝ ի պատասխան: Ես մտահոգություն նկատեցի նրա դեմքին: Ես լուռ աղերսում էի, որ նա չմոտենար ինձ և չլսուեր. ես ոչ մի դրական բան չունեի ասելու և գիտեի, որ լաց կլինեմ: Ես աչքերս խոնարհեցի և ձգտեցի խուսափել նրա հայացքից:

Հաջորդ մեկ ժամվա ընթացքում ես նկատում էի, որ նա հաճախ նայում էր իմ ուղղությամբ: Ժողովի ավարտից անմիջապես հետո նա մոտեցավ ինձ: «Ողջույն, Ռոզլին», - շնջացի ես: Նա գրկեց ինձ և ասաց. «Քույր Մմիթ, ես նկատում եմ, որ սա վատ օր է ձեր համար: Շատ եմ ցավում: Ես սիրում եմ ձեզ»: Ինչպես և կանխատեսել էի, արցունքներս հորդեցին, երբ նա կրկին գրկեց ինձ: Բայց երբ տուն էի վերադառնում, ինքս ինձ մտածեցի. «Գուցե ինձ հաջողվի՞ անցնել այս ամենի միջով»:

Այդ 16-ամյա անուշիկ պարմանուհին, ով երկու անգամ ինձնից

երիտասարդ էր, մի ամբողջ տարի ամեն կիրակի մոտենում էր ինձ, գրկում և հարցնում էր. «Ինչպե՞ս եք»: Եկեղեցի հաճախելիս դա շատ բան փոխեց իմ զգացողություններում: Ճշմարտությունն այն է, որ ես սկսեցի *սայալինել* այդ գրկախառնություններին: Կար մեկը, ով նկատում էր ինձ: Կար մեկը, ով գիտեր, որ ես այնտեղ էի: Կար մեկը, ով մտահոգվում էր իմ մասին»:

Ինչպես բոլոր պարզունների դեպքում, որոնք Հայրը պատրաստակամորեն առաջարկում է, խորաթափանցությունը պահանջում է մեզանից *խնդրել Նրանից*, իսկ հետո *գործել: Խնդրեք*, որ տեսնեք ուրիշներին այնպիսին, ինչպիսին Նա է տեսնում՝ Նրա իրական որդիներ և դուստրեր՝ անսահման և աստվածային ներուժով: Ապա *գործեք*՝ սիրելով, ծառայելով և հաստատելով նրանց արժեքն ու ներուժը՝ համաձայն հուշումների: Երբ սա օրինաչափություն դառնա մեր կյանքում, մենք կնկատենք, որ դառնում ենք «Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ . . .»:⁸ Մարդիկ կկարողանան ամբողջ սրտով վստահել մեզ: Եվ այս օրինաչափությամբ մենք նաև կբացահայտենք *մեր իսկ* իրական ինքնությունն ու նպատակը:

Ընկերուհիս կիսվել է ևս մեկ փորձառությամբ, մինչ միայնակ նստել էր այդ նույն դատարկ նստարանին, խորհելով, թե արդյոք իր տանը ավետարանով ապրելու այդ 20 տարիների բոլոր ջանքերը գուր էին անցել: Նրան ավելին էր պետք, քան հանգստացնող հավաստիացում. նրան տեսիլք էր պետք: Նա զգաց, որ մի հարց թափանցեց իր սիրտը. «Ինչո՞ւ ես արել այդ բաները: Դու արել ես դրանք վարձատրությամբ, ուրիշների գովասանքի՞ կամ գուցե ցանկալի արդյունքի՞ համար»: Նա մի պահ տատանվեց, քննելով իր սիրտը, ապա կարողացավ վստահորեն պատասխանել. «Ես այդ ամենն արել եմ, քանի որ սիրում եմ Փրկիչին: Եվ ես սիրում եմ Նրա ավետարանը»: Տերը բացեց նրա աչքերը, որ



Սան Պաոլո, Բրազիլիա

օգնի նրան տեսնել: Տեսիլքի այս հասարակ, սակայն զորեղ փոփոխությունը օգնեց նրան շարունակել առաջ ընթանալ Քրիստոսի հանդեպ հավատքով՝ անկախ իր հանգամանքներից:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը սիրում է մեզ և կարող է տալ մեզ աչքեր՝ որ տեսնեք՝ *նույնիսկ* երբ դժվար է, *նույնիսկ*, երբ մենք հոգնած ենք, *նույնիսկ*, երբ մենք միայնակ ենք և *նույնիսկ*, երբ արդյունքները չեն արդարացնում մեր հույսերը: Իր շնորհով Նա կօրհնի մեզ և կմեծացնի մեր ունակությունները: Սուրբ Հոգու զորությամբ Քրիստոսը մեզ հնարավորություն կտա *տեսնել* մեզ և *տեսնել* ուրիշներին այնպիսին, ինչպիսին Նա է տեսնում: Նրա օգնությամբ մենք կարող ենք հասկանալ, թե որն է ամենակարևորը: Մենք կարող ենք սկսել տեսնել, թե ինչպես է Տիրոջ ձեռքը գործում մեր կյանքի սովորական մանրամասներում և դրանց միջոցով. մենք կդառնանք խորաթափանց:

Եվ որպեսզի հետո՝ այդ մեծ օրը, «երբ նա հայտնվի, մենք

լինենք նրա նման. քանզի *մենք* պիտի *տեսնենք նրան*, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը»,⁹ ես այսպես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դ Թագավորաց 6.15–17:
2. Տես Երիտասարդ Կանանց Թեմա, ChurchofJesusChrist.org:
3. David Brooks, “Finding the Road to Character” (Brigham Young University forum address, Oct. 22, 2019), speeches.byu.edu.
4. Տես Մարկոս 5.1-15:
5. «Լուրջ բան է՝ ապրել հնարավոր աստվածների և աստվածուհիների հասարակության մեջ, հիշել, որ ամենաձանձրալի . . . ամենաանհետաքրքիր անձը, որի հետ դուք կարող եք խոսել, մի օր կարող է լինել այն էակը, որին, եթե տեսնեք այժմ, երկրպագելու ուժեղ գայթակղություն կզգաք: . . . Չկան *հասարակ* մարդիկ»: (C. S. Lewis, *The Weight of Glory* [2001], 45–46):
6. Քիմ Բ. Քլարկ, «Երջապատված կրակով», (Մեմինարիաների և կրոնի ինստիտուտների հեռարձակում, Օգոստոսի 4, 2015), ChurchofJesusChrist.org:
7. Տես Դուկաս 10.30-32:
8. Մորոնի 7.48:
9. Մորոնի 7.48, շեշտադրումն ավելացված է:



Երեց Զվենթին Լ. Քուր
Տասներկու Առաքյալների Զվորումից

Միավորել սրտերը արդարությամբ ու միությանմբ

*Մեր Եկեղեցու պատմության 200-ամյա այս
հանգուցակետում, եկեք պարտավորվենք ապրել
արդար և լինել միաբան՝ ինչպես երբեք նախկինում:*

Արդարակեցությունն ու միաբանությունը շատ կարևոր են:¹ Երբ մարդիկ սիրում են Աստծուն իրենց ողջ սրտով և արդարացիորեն ձգտում են նմանվել Նրան, հասարակության մեջ ավելի քիչ հակառակություն և վեճեր են լինում: Եվ ավելի շատ միաբանություն է տիրում: Ես սիրում եմ մի

իրական պատմություն, որը սրա վառ օրինակն է:
Երիտասարդ գեներալ Թոմաս Լ. Քեյնը, ով մեր հավատքից չէր, աջակցում և պաշտպանում էր Սրբերին, երբ նրանցից պահանջեցին հեռանալ Նավուից: Երկար տարիներ նա Եկեղեցու պաշտպանն էր:²



Կույա Լումայր, Մալայզիա

1872 թվականին գեներալ Քեյնը, նրա շնորհալի կինը՝ Էլիզաբեթ Վուդ Քեյնը, և նրանց երկու որդիները Փենսիլվանիայի իրենց տնից ուղևորվեցին դեպի Մոլթ Լեյք Սիթի: Նրանք ուղեկցում էին Բրիգամ Յանգին և նրա պաշտոնակիցներին՝ դեպի Յուտայի Մենթ Ջորջ քաղաքը կատարվող գաղթի ընթացքում: Դեպի Յուտա իր առաջին այցի ժամանակ Էլիզաբեթը վերապահումով էր վերաբերվում կանանց: Նա զարմացավ որոշ բաների վրա, երբ իմացավ դրանց մասին: Օրինակ՝ նա պարզեց, որ Յուտայում ցանկացած մասնագիտություն, որով կինը կկարողանար ապրուստ վաստակել, հասանելի էր նրանց համար:³ Նա նաև իմացավ, որ Եկեղեցու անդամները բարի ու հասկացող էին, և հարգանքով էին վերաբերվում բնիկ ամերիկացիներին:⁴

Ուղևորության ընթացքում նրանք կանգ առան Ֆիլմորում՝ Թոմաս Լ. և Մաթիլդա Ռոբինսոն Քինգերի տանը:⁵

Էլիզաբեթը գրել է, որ երբ Մաթիլդան ուտելիք էր պատրաստում նախազահ Յանգի և նրա լամբի համար, հինգ ամերիկյան հնդկացիներ մտան սենյակ: Չնայած նրանց չէին հրավիրել, սակայն պարզ էր, որ նրանք ակնկալում էին միանալ լամբին: Քույր Քինգը նրանց հետ խոսում էր «նրանց բարբառով»: Նրանք նստել էին իրենց ծածկոցներով՝ հաճելի ժպիտը դեմքերին: Էլիզաբեթը հարցրեց Քինգի երեխաներից մեկին. «Ձեր մայրն ի՞նչ ասաց այդ մարդկանց»:

Մաթիլդայի որդին պատասխանեց. «Նա ասաց՝ այս մարդիկ առաջինն են եկել, և ես միայն նրանց համար եմ ուտելիք պատրաստել, բայց ձեր ուտելիքը կրակի վրա եփվում է հիմա, և ես կկանչեմ ձեզ, երբ այն պատրաստ լինի»:

Էլիզաբեթը հարցրեց. «Նա իրո՞ք կանի դա, թե ուղղակի նրանց կտա ուտելիքի մնացորդները խոհանոցի դռան մոտ»:⁶

Մաթիլդայի որդին պատասխանեց. «Մայրիկը ուտելիք կմատուցի

նրանց՝ ինչպես ձեզ, և տեղ կտա իր սեղանի շուրջը»:

Եվ նա այդպես էլ արեց, և «նրանք կերան կատարյալ պատշաճությամբ»: Էլիզաբեթը բացատրել է, որ այս հմուտ և գթասիրտ տանտիրուհու մասին ինքը հրաշալի կարծիք կազմեց:⁷ Միասնությունն ամրապնդվում է, երբ մարդկանց վերաբերվում են արժանապատվությամբ և հարգանքով, նույնիսկ, եթե նրանք տարբեր են իրենց արտաքին բնութագրերով:

Որպես ղեկավարներ, մենք չենք ապրում պատրանքներով, թե անցյալում բոլոր հարաբերությունները կատարյալ էին, բոլորը Քրիստոսանման վարքագիծ ունեին, կամ բոլոր որոշումներն արդար էին: Մակայն մեր հավատքն ուսուցանում է, որ մենք բոլորս երկնային Հոր զավակներն ենք, և երկրպագում ենք Նրան ու Նրա Որդի Հիսուս Քրիստոսին, ով մեր Փրկիչն է: Մենք ցանկանում ենք, որ մեր սրտերն ու մտքերը միավորվեն արդարությամբ և միությամբ, և մենք լինենք մեկ՝ Նրանց հետ:⁸

Արդարությունը լայն, համապարփակ եզրույթ է, բայց այն, անշուշտ, ներառում է կենդանի Աստծո պատվիրանները:⁹ Այն մեզ արժանի է դարձնում սրբազան արարողություններին, որոնք հաստատում են ուխտի արահետը և օրհնում են մեզ, որ Հոգին ուղղորդի մեր կյանքը:¹⁰

Արդար լինելը կախված չէ նրանից, թե արդյոք մեզանից յուրաքանչյուրն այս պահին կունենա մեր կյանքի բոլոր օրհնությունները: Մենք կարող ենք ամուսնացած չլինել, օրհնված չլինել զավակներով կամ չունենալ ուրիշ ցանկալի օրհնություններ հիմա: Բայց Տերը խոստացել է, որ արդարները, ովքեր հավատարիմ են, «կարողանում են բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում»:¹¹

Միաբանությունը նույնպես լայն, համապարփակ եզրույթ է, բայց անշուշտ, հանդիսանում է առաջին և երկրորդ մեծ

պատվիրանների օրինակը՝ սիրել Աստծուն և սիրել մեր մերձավորներին:¹² Այն մատնանշում է Միոնի ժողովրդին, ում սրտերն ու մտքերը «միավորված են միությամբ»:¹³

Իմ ուղերձի համատեքստն է՝ հակադրությունը և դրա տված դասերը սուրբ գրություններում:

200 տարի է անցել այն օրից, երբ Հայրն ու Իր Որդին առաջին անգամ հայտնվեցին և սկսեցին Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը 1820 թվականին: Մորմոնի Գրքի 4-րդ Նեփիում նկարագրված պատմությունը ներառում է նմանատիպ 200-ամյա ժամանակաշրջան այն բանից հետո, երբ Փրկիչը հայտնվեց և հիմնեց Իր Եկեղեցին հնադարյան Ամերիկայում:

Պատմական գրանցումը, որը մենք կարդում ենք 4-րդ Նեփիում, նկարագրում է մի ժողովրդի պատմություն, որտեղ չկային նախանձություններ, պայքարներ, խլրտումներ, պոռնկություններ, ստախոսություններ, սպանություններ, ոչ էլ որևէ ձևի հեշտասիրություն: Հիշատակարանն ասում է, որ այս արդարակեցության շնորհիվ. «անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով»:¹⁴

Միաբանության վերաբերյալ 4-րդ Նեփիի գլխում կարդում ենք. «Չկար ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում»:¹⁵

Ցավոք, 4-րդ Նեփիի գլխում այնուհետև նկարագրվում է մի կտրուկ փոփոխություն, որը սկսվեց «երկու հարյուր և մեկերորդ տարում»,¹⁶ երբ անօրինությունն ու պառակտումը քայքայեցին արդարությունն ու միաբանությունը: Հետագայում ամբարշտությունն այնքան խորացավ, որ ի վերջո, մեծ մարգարե Մորմոնը ողբալով զանգատվում է իր որդուն.

«Բայց ա՛խ, որդի՛ս, ինչպե՞ս կարող է այդպիսի մի ժողովուրդ, որի բերկրանքն այդքան շատ պղծության մեջ է:

Ի՞նչպես կարող ենք մենք սպասել, որ Աստված ետ կպահի իր ձեռքը մեր դեմ դատաստանում»:¹⁷

Չնայած այս տնտեսությունում մենք ապրում ենք հատուկ ժամանակում, սակայն աշխարհը չի օրհնվել արդարությամբ ու միաբանությամբ, որը նկարագրված է 4-րդ Նեփիի գլխում: Հիրավի, մենք ապրում ենք ուժեղ պառակտումների մի հատուկ ժամանակաշրջանում: Մակայն միլիոնավոր մարդիկ, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսի ավետարանը, պարտավորվել են հասնել արդարության և միաբանության: Մենք բոլորս տեղյակ ենք, որ կարող ենք ավելին անել, և սա է մեր այսօրվա մարտահրավերը: Մենք կարող ենք լինել այն ուժը, որը կլավացնի և կօրհնի հասարակությունը՝ որպես մեկ ամբողջություն: Մեր Եկեղեցու պատմության 200-ամյա այս հանգուցակետում, որպես Տիրոջ Եկեղեցու անդամներ, եկեք ապրենք արդար և լինենք միաբան՝ ինչպես երբեք նախկինում: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խնդրել է մեզ «ցուցադրել ավելի մեծ բարեկրթություն, ռասայական և էթնիկական ներդաշնակություն, ինչպես նաև փոխադարձ հարգանք»:¹⁸ Մա նշանակում է՝ սիրել միմյանց և Աստծուն, ընդունել բոլորին՝ որպես եղբայրներ և քույրեր, և իսկապես լինել Միոնի ժողովուրդ:

Մենք կարող ենք միասնության օազիս լինել և ընդունել բազմազանությունը մեր համապարփակ վարդապետությունով: Միասնությունն ու բազմազանությունը հակադրություններ չեն: Մենք կարող ենք հասնել ավելի մեծ միասնության, երբ հավասարության և հարգանքի մթնոլորտ խթանենք բազմազանության հանդեպ: 15 տարի ես ծառայել եմ Կալիֆորնիա Սան Ֆրանցիսկո ցցի նախագահությունում և մենք ունեցել ենք իսպաներենով, թնագերենով, սամոերենով, թագալոգ և մանդարին լեզուներով խոսող համայնքներ: Մեր

անգլախոս ծխերը կազմված էին տարբեր ռասայական և մշակութային ծագում ունեցող մարդկանցից: Կար սեր, արդարություն և միասնություն:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ծխերն ու ճյուղերը որոշվում են աշխարհագրական տեղակայումով և տեղի լեզվով,¹⁹ այլ ոչ թե ռասայով և մշակույթով: Ռասան չի նշվում անդամության գրանցումներում:

Սորմոնի Գրքի սկզբում՝ Քրիստոսի ծննդից մոտ 550 տարի առաջ, մեզ ուսուցանվում է այն հիմնարար պատվիրանը, որը վերաբերում է Երկնային Հոր զավակների միջև հարաբերություններին: Բոլորը պետք է պահեն Տիրոջ պատվիրանները, բոլորն են հրավիրվում ճաշակել Տիրոջ բարությունից. «Եվ նա չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այր թե կին. և նա հիշում է հեթանոսներին. և բոլորը նույնն են Աստծո համար՝ թե՛ հրեան, թե՛ հեթանոսը»:²⁰

Փրկիչի ծառայությունն ու ուղերձը հետևողականորեն հայտարարում են, որ բոլոր ցեղերն ու մաշկի տարբեր գույն ունեցողներն Աստծո զավակներ են: Մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք: Մեր վարդապետությունից իմանում ենք, որ Վերականգնումը հյուրընկալող երկրում՝ միացյալ Նահանգներում, Մ. Ն.-ի սահմանադրությունը²¹ և առնչվող փաստաթղթերը,²² որոնք գրվել են անկատար մարդկանց կողմից, ոգեշնչված են եղել Աստծո կողմից, որպեսզի օրհնեն բոլոր մարդկանց: Ինչպես կարդում ենք Վարդապետություն և Ուխտերում, այս փաստաթղթերը պետք է «հաստատվեն և պահպանվեն՝ սակուն մայրնի», իրավունքների ու պաշտպանության համար, համաձայն արդար և սուրբ սկզբունքների»:²³ Այս սկզբունքներից երկուսը բարոյական կամքի ազատությունն ու պատասխանատվությունն էին մեր իսկ մեղքերի համար: Տերը հայտարարել է.

«Հետևաբար, արդարացի չէ, որ մի մարդ մեկ ուրիշի գերության տակ լինի:

Եվ այդ նպատակով եմ ես հաստատել այս երկրի Մահմանադրությունը, իմաստուն մարդկանց ձեռքով, որոնց ես բարձրացրել եմ հենց այդ նպատակի համար, և արյուն թափելով փրկագնել եմ երկիրը»:²⁴

Այս հայտնությունը ստացվեց 1833 թ.-ին, երբ Միսսուրիի Սրբերը ծանր հալածանքների էին ենթարկվում: Վարդապետություն և Ուխտեր 101 բաժնի վերնագրի մեջ մասամբ ասվում է. «Ամբոխները նրանց դուրս էին հանել Ջեքսոն գավառի իրենց տներից: . . . Մահվան շատ սպառնալիքներ կային Եկեղեցու անհատ անդամների հանդեպ»:²⁵

Սա լարվածության ժամանակ էր մի քանի առումներով: Միսսուրիի բնակիչներից շատերը բնիկ ամերիկացիներին համարում էին անողոր թշնամի և ցանկանում էին, որ նրանք հեռացվեն երկրից: Բացի այդ, Միսսուրիի վերաբնակիչներից շատերը ստրկատերեր էին և սպառնալիք էին զգում նրանց կողմից, ովքեր դեմ էին ստրկությանը:

Ի տարբերություն դրա՝ մեր վարդապետությունը հարգում էր բնիկ ամերիկացիներին, և մենք ցանկանում էինք նրանց սովորեցնել Հիսուս Քրիստոսի ավետարանը: Ինչ վերաբերում է ստրկությանը, մեր սուրբ գրությունները հստակեցրել են, որ ոչ մի մարդ մեկ ուրիշի գերության տակ չպետք է լինի»:²⁶

Ի վերջո, Սրբերը բռնությամբ դուրս քշվեցին Միսսուրիից,²⁷ իսկ հետո հարկադրաբար տեղափոխվեցին դեպի Արևմուտք:²⁸ Սրբերը բարգավաճեցին և գտան այն խաղաղությունը, որն ուղեկցում է արդարությանը, միասնությանը և Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելուն:

Ուրախանում եմ Հովհաննեսի ավետարանում արձանագրված Փրկիչի բարեխոսական աղոթքով: Փրկիչը խոստովանեց, որ Հայրն

ուղարկել էր Իրեն, և որ Ինքը՝ Փրկիչը, ավարտել էր այն գործը, որի համար Ինքն ուղարկվել էր: Հետո Նա աղոթեց Իր աշակերտների և նրանց համար, ովքեր կհավատան Քրիստոսին. «Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մեկ լինեն»:²⁹ Միասնությունն այն է, ինչի համար Քրիստոսն աղոթեց՝ նախքան Իրեն կղավաճանեին ու կխաչեին:

Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնման առաջին տարում, որը գրանցված է Վարդապետություն և Ուխտերի 38-րդ բաժնում, Տերը խոսում է պատերազմների և ամբարշտության մասին և հայտարարում է. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»:³⁰

Մեր եկեղեցու մշակույթը ծագում է Հիսուս Քրիստոսի ավետարանից: Հռոմեացիներին ուղղված Պողոս առաքյալի նամակը շատ խորիմաստ է:³¹ Հռոմի վաղ շրջանի եկեղեցին բաղկացած էր հրեաներից և հեթանոսներից: Այս վաղեմի հրեաներն ունեին հուդայական մշակույթ և «նվաճեցին իրենց ազատությունը, սկսեցին բազմանալ և ծաղկել»:³²

Հռոմի հեթանոսների մշակույթն իր վրա զգալիորեն կրում էր հելլենիստական ազդեցությունը, որը Պողոս Առաքյալը լավ հասկացել էր Աթենքում և Կորնթոսում իր ունեցած փորձառությունների շնորհիվ:

Պողոսը համապարփակ ձևով ներկայացնում է Հիսուս Քրիստոսի ավետարանը: Նա ժամանակագրում է ինչպես հուդայականության, այնպես էլ հեթանոսական մշակույթի համապատասխան կողմերը,³³ որոնք հակասում են Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ավետարանին: Ըստ էության, նա խնդրում է նրանցից յուրաքանչյուրին թողնել իրենց հավատալիքների և մշակույթների մշակութային խոչընդոտները, որոնք չեն համապատասխանում Հիսուս Քրիստոսի ավետարանին: Պողոսը հրեաներին

և հեթանոսներին հորդորում է պահել պատվիրանները, սիրել միմյանց և, հաստատում է, որ արդարությունը տանում է դեպի փրկություն:³⁴

Հիսուս Քրիստոսի ավետարանի մշակույթը հեթանոսական կամ հուդայական մշակույթ չէ: Այն չի որոշվում մաշկի գույնով կամ բնակության վայրով: Չնայած մենք ուրախանում ենք տարբեր մշակույթներով, մենք պետք է շրջանցենք այդ մշակույթների այն տիրույթները, որոնք հակասում են Հիսուս Քրիստոսի ավետարանին: Մեր անդամները և նորադարձները հաճախ ունեն տարբեր ռասայական և մշակութային ծագում: Եթե մենք հետևենք Նախագահ Նելսոնի հորդորին՝ հավաքելով ցրված Իսրայելը վարագույրի երկու կողմերում, ապա կտեսնենք, որ մենք նույնքան տարբեր ենք, որքան հրեաներն ու հեթանոսները Պողոսի ժամանակներում: Այնուամենայնիվ, մենք կարող ենք միավորված լինել Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրո և հավատի մեջ: Պողոսի նամակը հռոմեացիներին հաստատում է այն սկզբունքը, որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանի մշակույթին և վարդապետությանը: Դա մեզ համար օրինակ է նույնիսկ այսօր:³⁵ Տաճարային արարողությունները մեզ միավորում են հատուկ ձևերով և թույլ են տալիս մեզ լինել մեկ՝ հավերժական առանձնահատուկ ձևով:

Մենք պատվում ենք մեր ռահվիրա անդամներին ամբողջ աշխարհում ոչ թե այն պատճառով, որ նրանք կատարյալ էին, այլ այն պատճառով, որ նրանք հաղթահարեցին դժվարությունները, կատարեցին գոհաբերություններ, ձգտեցին լինել Քրիստոսանման, հավատ կառուցել և մեկ լինել Փրկիչի հետ: Փրկիչի հետ միասնությունը նրանց մեկ դարձրեց միմյանց հետ: Այս սկզբունքը այսօր ճիշտ է իմ և ձեզ համար:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու անդամներին ուղղված հստակ կոչն է՝

ձգտել լինել Միոնի ժողովուրդ, ովքեր մեկ սրտի և մեկ մտքի են, և բնակվում են արդարության մեջ:³⁶

Ես աղոթում եմ, որ մենք արդար և միավորված լինենք, և ամբողջովին կենտրոնանք մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին ծառայելու և երկրպագելու վրա, որի մասին ես վկայում եմ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 38.27:
2. Թոմաս Քեյնի ծառայությունը անդամների կողմից հետևողականորեն ներկայացվել է «որպես անձնագոհ գոհաբերության գործողություն՝ մի երիտասարդ իդեալիստի կողմից, ով սկանստես է եղել այն անիրավություններին, որոնք դաժան և թշնամական մեծամասնության կողմից իրականացվել են հետապնդվող կրոնական փոքրամասնության հանդեպ» (introduction to Elizabeth Wood Kane, *Twelve Mormon Homes Visited in Succession on a Journey through Utah to Arizona*, ed. Everett L. Cooley [1974], viii):
3. Տես Kane, *Twelve Mormon Homes*, 5:
4. Տես Kane, *Twelve Mormon Homes*, 40:
5. Տես Lowell C. (Ben) Bennion and Thomas R. Carter, “Touring Polygamous Utah with Elizabeth W. Kane, Winter 1872–1873,” *BYU Studies*, vol. 48, no. 4 (2009), 162:
6. Ըստ երևույթին, Էլիզաբեթը ենթադրում էր, որ այդ ժամանակ ամերիկացիներից շատերը ամերիկյան հնդկացիներին պարզապես սննդի մնացորդներ կտային և նրանց հանդեպ խտրական վերաբերմունք



Քվեբեկում ղեկավարող, Վալպարայիտ, Չիլի

- կցուցաբերելին՝ իրենց մյուս հյուրերի համեմատ:
7. Տես *Twelve Mormon Homes*, 64–65: Հատկանշական է, որ շատ ամերիկացի բնիկներ, ներառյալ մի քանի ղեկավարներ, Եկեղեցու անդամ դարձան: Տես նաև John Alton Peterson, *Utah's Black Hawk War* (1998) 61; Scott R. Christensen, *Sagwitch: Shoshone Chieftain, Mormon Elder, 1822–1887* (1999), 190–95:
 8. Այս տնտեսությունում «արդարները պիտի հավաքվեն բոլոր ազգերի միջից և պիտի գան Միոն՝ երգելով հավիտենական ուրախության երգեր» (Վարդապետություն և Ուխտեր 45.71):
 9. Տես Վարդապետություն և Ուխտեր 105.3-5: Մուրբ գրությունները, որպես արդարության անհրաժեշտ տարր, հատուկ ուշադրություն են դարձնում աղքատների և կարիքավորների խնամքին:
 10. Տես Ալմա 36.30, տես նաև 1 Նեփի 2.20, Մոսիա 1.7. Ալմա 36.30-ի վերջին հատվածում ասվում է. «Որքան որ դուք չեք պահի Մատթո պատվիրանները, դուք կտրված կլինեք նրա ներկայությունից: Արդ, սա նրա խոսքի համաձայն է»:
 11. Մոսիա 2.41: Նախագահ Լորենզո Մոնոն (1814–1901) ուսուցանել է. «Չլա Վերջին Օրերի Մուրբ, ով հավատարիմ կյանքով ապրելուց հետո մահանա և կորցնի որևէ բան, որովհետև նրան չի հաջողվել անել որոշ բաներ, երբ հնարավորություններ չեն տրվել իրեն: Այլ խոսքով ասած, եթե մի երիտասարդ տղամարդ կամ երիտասարդ կին հնարավորություն չունի ամուսնանալու, բայց ապրում է հասկանալի կյանքով մինչև իր մահվան ժամանակը, նա կունենան բոլոր օրհնությունները, վեհացում և փառք, որը կունենա ամեն տղամարդ կամ կին, ովքեր ունեցել են այդ հնարավորությունը և օգտվել այդ հնարավորությունից: Դա հաստատ է, համոզված եմ» (*Եկեղեցու Նախագահների ռասնունները. Լորենզո Մոնոն* [2012], 150): Տես Մոսիա 2.41, տես նաև Richard G. Scott, “The Joy of Living the Great Plan of Happiness,” *Ensign*, Nov. 1996, 75:
 12. Տես 1 Հովիթ 5.2:
 13. Մոսիա 18.21, տես նաև Մովսես 7.18:
 14. 4 Նեփի 1.16:
 15. 4 Նեփի 1.15:
 16. 4 Նեփի 1.24:
 17. Մորոնի 9.13-14:
 18. Տես Russell M. Nelson, in “First Presidency and NAACP Leaders Call for Greater Civility, Racial Harmony,” May 17, 2018, newsroom.ChurchofJesusChrist.org; see also “President Nelson Remarks at Worldwide Priesthood Celebration,” June 1, 2018, newsroom.ChurchofJesusChrist.org:
 19. Վարդապետություն և Ուխտեր 90.11-ում ասվում է, որ «ամեն մարդ կլսի ավետարանի լրիվությունն . . . իր մայրենի լեզվով»: Հետևաբար, լեզվական համայնքի միավորները սովորաբար հաստատվում են:

20. 2 Նեփի 26.33:
21. Տես Միացյալ Նահանգների սահմանադրությունը:
22. See United States Declaration of Independence (1776); Constitution of the United States, Amendments I–X (Bill of Rights), National Archives website, archives.gov/founding-docs.
23. Վարդապետություն և Ուխտեր 101.77, շեշտադրումն ավելացված է:
24. Վարդապետություն և Ուխտեր 101.79–80:
25. Վարդապետություն և Ուխտեր 101, բաժնի վերնագիրը:
26. Տես Սրբերը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու սլաստությունը, հատ. 1, *The Standard of Truth, 1815–1846* (2018), 172–74; James B. Allen and Glen M. Leonard, *The Story of the Latter-day Saints*, 2nd ed. (1992), 93–94; Ronald W. Walker, “Seeking the ‘Remnant’: The Native American during the Joseph Smith Period,” *Journal of Mormon History*, vol. 19, no. 1 (Spring 1993), 14–16:
27. Տես Սրբերը, 1:359–83; William G. Hartley, “The Saints’ Forced Exodus from Missouri, 1839,” in Richard Neitzel Holzapfel and Kent P. Jackson, eds., *Joseph Smith, the Prophet and Seer* (2010), 347–89; Alexander L. Baugh, “The Mormons Must Be Treated as Enemies,” in Susan Easton Black and Andrew C. Skinner, eds., *Joseph: Exploring the Life and Ministry of the Prophet* (2005), 284–95:
28. Տես Սրբերը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու սլաստությունը, հատ. 2, *No Unhallowed Hand, 1846–1893* (2020), 3–68; Richard E. Bennett, *We’ll Find the Place: The Mormon Exodus, 1846–1848* (1997); William W. Slaughter and Michael Landon, *Trail of Hope: The Story of the Mormon Trail* (1997):
29. Հովհաննես 17.21:
30. Վարդապետություն և Ուխտեր 38.27:
31. Հռոմեացիներին ուղղված նամակը համապարփակ է վարդապետությունը հռչակելու հարցում: Հռոմեացիները գիրքը պարունակում է Քավության միակ հիշատակումը Նոր Կտակարանում: Ես սկսեցի գնահատել Հռոմեացիներին ուղղված նամակը՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով բազմազան մարդկանց միավորելու համար, երբ ես ծառայում էի որպես ցցի նախագահ՝ բազմաթիվ ռասայական և մշակութային ծագմամբ, տարբեր լեզուներով խոսող անդամների հետ:
32. Տես Frederic W. Farrar, *The Life and Work of St. Paul* (1898), 446:
33. See Farrar, *The Life and Work of St. Paul*, 450:
34. Տես Հռովմայեցիս 13:
35. Տես Dallin H. Oaks, “The Gospel Culture,” *Liahona*, Mar. 2012, 22–25; see also Richard G. Scott, “Removing Barriers to Happiness,” *Ensign*, May 1998, 85–87:
36. Տես Մովսես 7.18:



Երեց Ռոնալդ Ա. Ռասբալդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տիրոջը Երաշխավորված

«Տիրոջը երաշխավորված» դառնալու գործընթացը սկսեք այժմ, որ Նրա Հոգին առատորեն ձեզ հետ լինի:

Բարի լույս, եղբայրներ՝ և քույրեր՝: Որպես մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի աշակերտ, ես անհամբեր սպասել եմ այս համաժողովի համաշխարհային վիրտուալ հավաքին:

Սա շատ անսովոր տարի էր: Ինձ համար այն սկսվեց Առաջին Նախագահության հանձնարարությամբ՝ Տիրոջը նվիրագործել մի սուրբ տաճար Դուբայնում (Հարավային Աֆրիկա): Ես երբեք չեմ մոռանա շենքի վեհությունը:

Բայց դրանից առավել ես միշտ կգնահատեմ այն մարդկանց արժանապատվությունը, ովքեր այնքան լավ էին պատրաստվել՝ մուտք գործելու այդ սրբազան կառույցը: Նրանք պատրաստված եկել էին՝ ճաշակելու Վերականգնման մեծագույն օրհնություններից մեկը՝ Տիրոջ տան նվիրագործումը: Նրանք եկել էին Նրա և Նրա Քավության հանդեպ սիրով լի սրտերով: Նրանք եկել էին մեր Երկնային Հոր հանդեպ



Շուգար Սիթի, Այդահո, ԱՄՆ

երախտագիտությամբ լի սրտերով՝ սուրբ արարողությունները կատարելու համար, որոնք առաջնորդելու են նրանց դեպի վեհացում: Նրանք արժանի էին այդ այցելությանը:

Տաճարները, որտեղ էլ լինեն, վեր են աշխարհի ուղիներից: Վերջին Օրերի Սրբերի 168 տաճարներից յուրաքանչյուրը աշխարհում կանգնած են որպես հավերժական կյանքում ունեցած մեր հավատքի և ուրախության վկայություն, որը պիտի անցկացնենք մեր ընտանիքների և երկնային Հոր հետ: Տաճար այցելելով՝ մենք մեծացնում ենք մեր հասկացողությունը Աստվածազլխի և հավերժական ավետարանի վերաբերյալ, ճշմարտության համաձայն ապրելու և այն ուսուցանելու պարտավորությունը, և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելու պատրաստականությունը:

Եկեղեցու յուրաքանչյուր տաճարի վրա գրված են հետևյալ բառերը՝ «Սրբություն Տիրոջը»: Տաճարը Տիրոջ տունն է և ապաստան աշխարհից: Նրա Հոգին պարուրում է նրանց, ովքեր երկրպագում են այդ սրբազան պատերի ներքո: Նա սահմանում է չափանիշներ, որոնցով մենք մուտք ենք գործում որպես Նրա հյուրեր:

Իմ աները՝ Բլեյն Թվիթչելը, լավագույն մարդկանցից մեկը, ում ես երբևէ ճանաչել եմ, ինձ հրաշալի դաս է ուսուցանել: Ես և Քույր Ռասբանդը գնացինք նրան այցելության նրա մահկանացու ճամփորդության մայրամուտին: Երբ մենք մտանք նրա սենյակ, նրա եպիսկոպոսը պատրաստվում էր դուրս գալ: Երբ ողջունեցինք եպիսկոպոսին, ես մտածեցի. «Ի՞նչ հրաշալի եպիսկոպոս է: Ահա նա այստեղ է՝ սպասավորելով իր ծխի հավատարիմ անդամին»:

Ես ասացի Բլեյնին. «Ի՞նչ հաճելի էր տեսնել, որ եպիսկոպոսը եկել էր այցելության»:

Բլեյնը նայեց ինձ ու պատասխանեց. «Դա ավելին էր, քան

այցելություն: Ես խնդրել էի եպիսկոպոսին գալ, քանի որ ուզում էի տաճարային երաշխավորագրի հարցազրույց անցնել: Ես ուզում եմ գնալ՝ *Տիրոջը երաշխավորված*: Եվ նա արեց դա:

Այդ արտահայտությունը՝ «Տիրոջը երաշխավորված», մնաց իմ հուշերում: Դա միանգամայն նոր հեռանկար է տվել մեր Եկեղեցու ղեկավարների պարբերաբար անցկացվող հարցազրույցներին: Տաճարային երաշխավորագիրն այնքան կարևոր է, որ Եկեղեցու վաղ շրջանից մինչև 1891 թվականը տաճարային յուրաքանչյուր երաշխավորագիր հաստատվում էր Եկեղեցու Նախագահի կողմից:¹

Լինեք պատանի, թե չափահաս, ձեր տաճարային երաշխավորագրի հարցազրույցը ինչ-որ բաներ անելու կամ չանելու մասին չէ: Երաշխավորագիրը ստուգաթերթիկ, անցաթերթիկ կամ հատուկ նստատեղերի տոմս չէ: Այն ունի շատ ավելի վեհ ու սրբազան նպատակ: Տաճարային երաշխավորագիրը ստանալու պատվին արժանանալու համար դուք պետք է ներդաշնակ ապրեք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ուսմունքների հետ:

Ձեր հարցազրույցի ընթացքում դուք հնարավորություն ունեք քննելու ձեր հոգին՝ Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ ձեր անձնական հավատքի վերաբերյալ: Դուք օրհնվում եք՝ արտահայտելով ձեր վկայությունը վերականգնված ավետարանի մասին, ձեր պատրաստականությունը՝ աջակցելու նրանց, ում Տերը կանչել է Իր Եկեղեցին ղեկավարելու համար, արտահայտելով ձեր հավատքը ավետարանի վարդապետության հանդեպ, վկայելով ձեր ընտանեկան պարտականությունների կատարման, ազնվության, մաքրաբարոյության, հավատարմության, հնազանդության ձեր հատկությունների, Իմաստության Խոսքի, տասանորդի օրենքի և հանգստության օրը սրբությամբ պահելու մասին: Դրանք Հիսուս Քրիստոսին և Նրա

գործին նվիրված կյանքի հիմնարար սկզբունքներն են:

Ձեր տաճարային երաշխավորագիրը արտացոլում է խորը, հոգևոր միտում, որ դուք ձգտում եք ապրել Տիրոջ օրենքներով և սիրել այն, ինչ Նա է սիրում. խոնարհություն, հեզություն, անսասանություն, գթություն, քաջություն, կարեկցանք, ներողամտություն և հնազանդություն: Եվ դուք պարտավորվում եք ապրել այդ չափանիշներով, երբ ստորագրում եք այդ սուրբ փաստաթղթի տակ:

Ձեր տաճարային երաշխավորագիրը ձեր և ուրիշների համար բացում է երկնքի դարպասները՝ հավերժական նշանակություն ունեցող իրավունքներով և արարողություններով, ներառելով մկրտությունները, օժտումները, ամուսնությունները և կնքումները:

«Տիրոջը երաշխավորված» լինել՝ նշանակում է հիշել, թե ինչ է ակնկալվում ուխտեր պահող Վերջին Օրերի Սրբից: Իմ աները՝ Բլեյնը, դա համարում էր անգնահատելի նախապատրաստություն այն օրվա համար, երբ նա խոնարհաբար կկանգնեք Տիրոջ առջև:

Խորհեք այն դեպքի մասին, երբ Մովսեսը բարձրացավ Քորեբ լեռը, և Տեր Եհովան նրան հայտնվեց այրվող թփի մեջ: Աստված ասաց նրան. «Կօշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետեւ այն տեղը, որի վերայ դու կանգնել ես, սուրբ երկիր է»:²

Տաճարի դռան մոտ մեր կոշիկները հանելով՝ մենք թողնում ենք աշխարհիկ ցանկություններն ու հաճույքները, որոնք շեղում են մեզ հոգևոր աճից, մի կողմ ենք դնում այն ամենը, ինչը շեղում է մեր ուշադրությունը թանկագին մահկանացության ընթացքում, հրաժարվում ենք վիճահարույց վարքագծից և ժամանակ տրամադրում սուրբ լինելու համար:

Մեր ֆիզիկական մարմինը Աստծո արարումն է աստվածային տեսքով, տաճար է մեր հոգու համար և պետք է ակնածանքով վերաբերվել դրան: Որքա՞ն

ճշմարիտ են Երեխաների միության երգի բառերը. «Իմ մարմինը տաճար է, [որն] ունի ամենալավ հոգածության կարիք»:³ Երբ Տերը հայտնվեց Նեփիացիներին, Նա պատվիրեց. «Մրբագործվե՛ք՝ ընդունելով Սուրբ Հոգին, որպեսզի դուք կարողանաք կանգնել անբիծ իմ առջև վերջին օրը»:⁴ «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել». հարցրել է Տերը և ապա պատասխանել. «Ճիշտ ինչպես ես եմ»:⁵ «Տիրոջը երաշխավորված» լինելու համար մենք ձգտում ենք նմանվել Նրան:

Ես հիշում եմ Նախագահ Հովարդ Վ. Հանթերի առաջին գերագույն համաժողովի ելույթը՝ որպես Եկեղեցու 14-րդ Նախագահ: Նա ասաց. «Իմ սրտի ամենանվիրական ցանկությունն է, որ Եկեղեցու ամեն մի անդամ արժանի լինի մտնելու տաճար: Տիրոջը կգոհացներ, եթե յուրաքանչյուր չափահաս անդամ արժանի լիներ և կրեր ընթացիկ տաճարային երաշխավորագիր»:⁶ Ես կավելացնեմ, որ այդ ժամանակավոր երաշխավորագիրը հստակ ճանապարհ ցույց կտա մեր թանկագին պատանիներին:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն անդրադարձել է Նախագահ Հանթերի խոսքերին. «Այդ օրը՝ 1994 թ. հունիսի 6-ին, տաճարային երաշխավորագիրը, որը մենք կրում ենք, մեկ այլ իմաստ ստացավ ինձ համար: Մինչ այդ այն ինձ համար



ընդամենը մի թերթիկ էր, որը թույլ էր տալիս, որ մուտք գործեմ Տիրոջ սուրբ տունը: Սակայն նրա այդ հայտարարությունից հետո այն ավելի մեծ իմաստ ստացավ ինձ համար: Այն դարձավ Աստծո մարգարեին հնազանդ լինելու իմ գրավականը»:⁷

Եթե դուք դեռ չեք ստացել երաշխավորագիր կամ, եթե լրացել է ձեր երաշխավորագրի ժամկետը, հերթ կանգնեք եպիսկոպոսի դռան մոտ, ճիշտ ինչպես վաղ օրերի Մրբերը հերթ էին կանգնել Նավուի Տաճարի դռան մոտ 1846 թվականին:⁸ Իմ նախնիները եղել են այդ հավատարիմների շարքերում: Նրանք ստիպված էին լքել իրենց գեղեցիկ քաղաքը և գնալ էին դեպի արևմուտք, բայց նրանք գիտեին, որ տաճարում

իրենց սուրբ փորձառություններ էին սպասվում: Մարա Ռիչը Այովայի դժվարանցանելի հովտում գրել է. «Եթե չլիներ հավատը և գիտելիքը, որ մեզ տրվեց այդ տաճարում . . ., մեր ճանապարհը նման կլիներ. . . մթության մեջ թռիչք կատարելուն»:⁹ Դա այն է, ինչը մեզ պակասում է, երբ այս կյանքն անցնում ենք միայնակ՝ առանց տաճարում խոստացված ոգեշնչման և խաղաղության:

«Տիրոջը երաշխավորված» դառնալու գործընթացը սկսեք այժմ, որ Նրա Հոգին առատորեն ձեզ հետ լինի, և Նրա չափանիշները ձեզ «խղճմտանքի խաղաղություն» բերեն:¹⁰

Ձեր երիտասարդների ղեկավարները, երեցների քվորումի նախագահը, Սփոփող միության նախագահը և սպասավորող եղբայրներն ու քույրերը կօգնեն ձեզ նախապատրաստվել, իսկ ձեր եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը սիրով կառաջնորդեն ձեզ:

Մենք ապրում ենք մի ժամանակահատվածում, երբ տաճարները փակ են կամ սահմանափակումներով են գործում: Նախագահ Նելսոնի և նրա կողքին ծառայողներիս համար տաճարները փակելու ոգեշնչված որոշումը «ցավոտ» և «անհանգստացնող» էր: Նախագահ Նելսոնն ինքն իրեն հարց էր տվել. «Ես ի՞նչ եմ ասելու Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Ես ի՞նչ եմ ասելու Բրիգամ Յանգին, Վիլֆորդ Վուդրոֆին և մյուս նախագահներին՝ մինչև նախագահ Թոմաս Մ. Մոնտոնը»:¹¹

Այժմ մենք աստիճանաբար և երախտագիտությամբ վերաբացում ենք տաճարները կնքումների և օժտումների համար՝ սահմանափակ մասշտաբներով:

Տաճար այցելելու համար արժանի լինելը, ինչևէ, չի կասեցվել: Թույլ տվեք շեշտել. անկախ այն բանից՝ դուք տաճար մուտք գործելու հնարավորություն ունեք, թե ոչ, ձեզ հարկավոր է ունենալ ընթացիկ տաճարային երաշխավորագիր, որպեսզի ամուր մնաք ովստի արահետի վրա:



Պրովո, Յուտա, ԱՄՆ

Անցած տարվա վերջին ես և Քույր Ռասբանդը հանձնարարությամբ այցելել էինք Նոր Զելանդիա և զրուցել երիտասարդ ամուսինների մի մեծ խմբի հետ: Տաճար գնալը նրանց համար հեշտ բան չէր. Համիլթոնում գտնվող տաճարը վերանորոգվում էր, և նրանք դեռ սպասում էին Օքլենդի տաճարի կառուցմանը: Ինչևէ, ես ոգեշնչում զգացի խրատները նրանց վավերացնել կամ ստանալ տաճարային երաշխավորագրեր:

Չնայած նրանք չէին կարողանալու ներկայացնել դրանք տաճարում, նրանք կարող էին իրենց ներկայացնել Տիրոջ առաջ՝ մաքուր և պատրաստված ծառայելու Նրան: Ընթացիկ տաճարային երաշխավորագրին արժանի լինելը և՛ պաշտպանություն է հակառակորդից, քանի որ դուք հստակ պարտավորություններ եք ստանձնել Տիրոջ առաջ՝ կապված ձեր կյանքի հետ, և՛ խոստում, որ Հոգին կլինի ձեզ հետ:

Մենք կատարում ենք տաճարային աշխատանք, երբ փնտրում ենք մեր նախնիներին և ներկայացնում նրանց անունները արարողությունների համար: Մինչ մեր տաճարները փակ էին, մենք հնարավորություն ենք ունեցել փնտրելու մեր նախնիներին: Մեր սրտում ունենալով Աստծո Հոգին՝ որպես փոխարինողներ, մենք կանգնում ենք նրանց համար «Տիրոջ երաշխավորված» լինելով:

Երբ ես ծառայում էի Տաճարային բաժնի գործադիր տնօրեն, լսել եմ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի անդրադարձը այս սուրբ գրությանը, որտեղ Տերը խոսում է Նավուի Տաճարի մասին. «Թող իմ տաճարի աշխատանքը, և բոլոր գործերը, որոնք ես նշանակել եմ ձեզ, շարունակվեն և չդադարեն. և թող ձեր ջանասիրությունը, և ձեր հետևողականությունը, և համբերությունը, և ձեր աշխատանքները կրկնապատկվեն, և դուք ոչ մի դեպքում չեք կորցնի ձեր վարձքը, ասում է Զորաց Տերը»:¹²

Տաճարում կատարած մեր աշխատանքը կապված է մեր

հավերժական պարզևի հետ: Վերջին ժամանակներում մենք ենթարկվում ենք փորձության: Տերը կանչել է մեզ աշխատել տաճարներում՝ հիշելով «ջանասիրությունը . . . հետևողականությունը և համբերությունը»:¹³ «Տիրոջ երաշխավորված» լինելը պահանջում է այդ որակները: Մենք պետք է ջանասիրաբար ապրենք պատվիրաններով, հետևողականորեն մեր ուշադրության կենտրոնում պահենք մեր տաճարային ուխտերը, երախտապարտ լինենք այն ամենի համար, որ Տերը շարունակում է ուսուցանել մեզ դրանց մասին և համբերատար լինենք, մինչ սպասում ենք տաճարների լիարժեք վերաբացմանը:

Երբ Տերը կանչում է մեզ «կրկնապատկել» մեր ջանքերը, Նա խնդրում է, որ մենք ավելի արդարակյաց լինենք: Օրինակ, մենք կարող ենք ավելի շատ ժամանակ տրամադրել սուրբ գրությունների ուսումնասիրությանը, մեր ընտանեկան պատմության աշխատանքին և հավատքով լի աղոթքներին, որպեսզի կարողանանք Տիրոջ տան հանդեպ մեր սիրով կիսվել նրանց հետ, ովքեր պատրաստվում են ստանալ տաճարային երաշխավորագիր՝ հատկապես մեր ընտանիքի անդամների հետ:

Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալ, ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք կրկնապատկեք ձեր արդար ջանքերը, Աստծո և Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր նվիրվածությունը կնորոգվի, լիովի կզգաք Սուրբ Հոգու առաջնորդությունը, դուք երախտապարտ կլինեք



Զալցբուրգ, Ավստրիա

ձեր սուրբ ուխտերի համար, և խաղաղություն կզգաք, իմանալով, որ «Տիրոջ երաշխավորված» եք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints, 1833–1964*, 6 vols. (1965–75), 3:229.
2. Ելից 3.5
3. “My Body Is a Temple,” *The Children Sing* (1951), no. 99.
4. 3 Նեփի 27.20
5. 3 Նեփի 27.27
6. *Եկեղնցու Նախագահների ուսումնականը. Հովաթոյ Վ. Հանթեր* (2015), 180:
7. *Teachings of Russell M. Nelson* (2018), 373.
8. *Stu Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth, 1815–1846* (2018), 582–83:
9. Sarah P. Rich, *Autobiography, 1885–1890*, Church History Library, Salt Lake City, 66.
10. Մոսիա 4.3:
11. Sarah Jane Weaver, “President Nelson Talks about the ‘Painful’ Decision to Close Temples amid COVID-19,” *Church News*, July 27, 2020, thechurchnews.com.
12. Վարդապետություն և Ուխտեր 127.4:
13. Վարդապետություն և Ուխտեր 127.4:



Նախագահ Դավիթ Ն. Օնիսու
Առաջին Նախագահության առաջին խորհրդակալ

Սիրեք ձեր թշնամիներին

Գիտելիքը, որ մենք բոլորս Աստծո զավակներ ենք, պատկերացում է տալիս մյուս մարդկանց արժեքի մասին և տալիս է նաև նախապաշարմունքներից վեր կանգնելու կարողություն:

Տիրոջ ուսմունքները հավերժության և Աստծո բոլոր զավակների համար են: Այս ուղերձում ես մի քանի օրինակ կբերեմ Միացյալ Նահանգներից, բայց իմ ուսուցանած սկզբունքները կիրառելի են ամենուր:

Մենք ապրում ենք քաղաքական հարաբերությունների և քաղաքականության զայրույթի ու ատելության ժամանակներում: Մենք դրա ականատեսը

եղանք այս ամառ, երբ ոմանք դուրս եկան խաղաղ ցույցերի սահմաններից և դրսևորեցին կործանարար վարք: Մենք դատենում ենք պետական պաշտոնների համար ընթացող որոշումներ կալիս ընտրարշավներում: Դժբախտաբար, դրանց մի մասը, նույնիսկ, մեր եկեղեցու ժողովներում տարածվել է քաղաքական հայտարարությունների և անբարյացակամ հղումների մեջ:

Ժողովրդավարական երկրներում մենք միշտ կունենանք տարածայնություններ առաջարկվող թեկնածուների և քաղաքականության հարցում: Սակայն, որպես Քրիստոսի հետևորդներ, մենք պետք է հրաժարվենք այն բարկությունից և ատելությունից, որով քաղաքական որոշումները քննարկվում կամ դատապարտվում են բազմաթիվ վայրերում:

Միայն մեր Փրկիչի ուսմունքներից մեկը, որը հավանաբար հայտնի է, բայց հազվադեպ է կիրառվում.

«Լսել էք որ ասուեցաւ, քո ընկերին սիրիր, եւ քո թշնամիին ատիր:

«Բայց ես ասում եմ ձեզ, Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին. Բարի արեք ձեզ ատողներին. Եւ աղօթք արեք ձեզ չարչարողների եւ ձեզ հալածողների համար» (Մատթեոս 5.43-44):¹

Մեր ունդներ շարունակ հրեաներին սովորեցրել էին ատել իրենց թշնամիներին, և նրանք այն ժամանակ տառապում էին հռոմեական տիրապետության և դաժանությունների ներքո: Սակայն Հիսուսը նրանց սովորեցրեց «սիրել իրենց թշնամիներին» և «բարիք գործել նրանց համար, ովքեր չարակամ օգտագործում են իրենց»:

Ինչպիսի՞ հեղափոխական ուսմունքներ անձնական և քաղաքական հարաբերությունների համար: Բայց դա այն է, ինչ մեր Փրկիչը պատվիրում է այսօր: Մորմոնի Գրքում մենք կարդում ենք. «Քանզի ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ» (3 Նեփի 11.29):

Հեշտ չէ սիրել մեր թշնամիներին և մեր հակառակորդներին: «Մեզանից շատերը չեն հասել. . . սիրո և ներման այդ փուլին, - նկատել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին՝ հավելելով, որ «դա պահանջում է զրեթե ավելի մեծ ինքնակարգապահություն, քան



Սպիա, Սամուա

ընդունակ ենք»:² Բայց դա պիտի կարևոր լինի, քանի որ դա Փրկիչի երկու մեծ պատվիրաններից մեկն է՝ «սիրիր քո Տեր Աստուծուն» և «սիրիր քո ընկերին քո անձի պես» (Մատթեոս 22.37, 39): Եվ դա նաև պետք է հնարավոր լինի, քանի որ Նա նաև ուսուցանել է. «Խնդրեցէք եւ կտրուի ձեզ. Որոնեցէք եւ կգտնէք, դուռը թակեցէք եւ կբացուի ձեզ» (Մատթեոս 7.7):³

Ինչպէ՞ս ենք մենք պահում այս աստվածային պատվիրանները մի աշխարհում, որտեղ մենք ենթարկվում ենք նաև մարդկային օրենքներին: Բարեբախտաբար, մենք ունենք Փրկիչի անձնական օրինակը, թե ինչպես հավասարակշռել Իր հավերժական օրենքները մարդկանց ստեղծած օրենքների գործածության հետ: Երբ հակառակորդները փորձեցին ծուղակը զցել Նրան այն հարցով, թե արդյո՞ք հրեաները պետք է հարկեր վճարեն Հռոմին, Նա ցույց տվեց Կեսարի պատկերը նրանց մետաղադրամների վրա և հայտարարեց. «Ուրեմն կայսրինը կայսրին տուէք, եւ Աստուծունը Աստուծուն» (Ղուկաս 20.25):⁴

Այսպիսով, մենք պետք է հետևենք մարդկային օրենքներին (տանք կայսրին), որպեսզի խաղաղ ապրենք քաղաքական իշխանության ներքո, և հետևենք Աստծո օրենքներին՝ մեր հավերժական նպատակակետին հասնելու համար: Բայց ինչպէ՞ս դա անենք և հատկապես ինչպէ՞ս սովորենք սիրել մեր հակառակորդներին և մեր թշնամիներին:

Փրկիչի՝ «բարկությամբ [չ] վիճելու» ուսմունքը առաջին ճիշտ քայլն է: Դեռ հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց բարկությամբ վիճել միմյանց հետ: Նա թշնամանք և ատելություն է սերմանում անհատների և խմբերի միջև: Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնն ուսուցանել է, որ բարկությունը «Մատանայի գործիքն է», քանի որ «բարկանալիս դուք ենթարկվում եք սատանայի ազդեցությանը: Ոչ ոք չի կարող *ստիպել* մեզ



Սկրա, Գանա

բարկանալ: Դա մեր ընտրությունն է»:⁵ Բարկությունը ստեղծում է երկպառակություն և թշնամանք: Մենք սկսում ենք սիրել մեր հակառակորդներին, երբ խուսափում ենք բարկանալ վրա և թշնամանալ այն մարդկանց հետ, ում հետ ունենք տարաձայնություններ: Ավելի շատ է օգնում, երբ ցանկանում ենք սովորել նրանցից:

Ուրիշներին սիրելու գործությունը զարգացնելու այլ միջոցների թվում է այն պարզ եղանակը, որը նկարագրված է հին օրերի մյուզիքում: Երբ մենք փորձում ենք հասկանալ և առնչվել այլ մշակույթի մարդկանց, մենք պետք է ձգտենք ճանաչել նրանց: Բազում հանգամանքներում օտարների կասկածը կամ նույնիսկ թշնամանքը տեղի են տալիս ընկերությանը կամ նույնիսկ սիրուն, երբ անձնական շփումները փոխըմբռնում և փոխադարձ հարգանք են ստեղծում:⁶

Կարող ենք սովորել սիրել մեր հակառակորդներին և մեր թշնամիներին, երբ ձգտենք հասկանալ սիրո ուժը: Ստորև բերված են դրա վերաբերյալ բազմաթիվ մարգարեական ուսմունքներից երեքը:

Մարգարե Զոզեֆ Մմիթն ուսուցանել է, որ «դարերից եկող

խոսք է, որ սերը սեր է ծնում: Եկեք սեր սերմանենք և ցույց տանք մեր բարությունը ամբողջ մարդկությանը»:⁷

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ուսուցանել է. «Աշխարհը, որում ապրում ենք մենք, մեծապես կօգտվեր, եթե տղամարդիկ և կանայք ամենուրեք գործադրեին Քրիստոսի մաքուր սերը, որը բարի է, հեզ, և համեստ: Այն առանց նախանձի է կամ հպարտության: . . . Այն ոչինչ չի ակնկալում փոխարենը: . . . Այնտեղ մոլեռանդության, ատելության կամ բռնության համար տեղ չկա: . . . Այն խրախուսում է տարբեր մարդկանց ապրել միասին Քրիստոնեական սիրո մեջ՝ անկախ կրոնական հավատքից, ռասայից, ազգությունից, ֆինանսական դիրքից, կրթությունից կամ մշակույթից»:⁸

Իսկ նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հորդորել է մեզ «ընդլայնել մեր սիրո շրջանակը և ընդգրկել մարդկային ամբողջ ընտանիքը»:⁹

Մեր թշնամիներին սիրելու կարևոր մասը կայսրին տալն է՝ պահելով մեր տարբեր երկրների օրենքները: Թեև Հիսուսի ուսմունքները հեղափոխական էին,

ասկայն Նա չի քարոզել հեղափոխություն անել կամ օրենքը խախտել: Նա ուսուցանեց ավելի լավ ուղի: Ժամանակակից հայտնությունը նույնն է ուսուցանում:

«Թող ոչ ոք չխախտի երկրի օրենքները, քանզի նա, ով պահում է Աստծո օրենքները, պետք չէ որ խախտի երկրի օրենքները:

Ուստի, ենթարկվեք իշխանություններին» (Վարդապետություն և Ուխտեր 58.21–22):

Իսկ մեր հավատո հանգանակը, որը գրվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից այն բանից հետո, երբ վաղ օրերի Սրբերը ծանր հալածանքներ են կրել Միասուրիի պաշտոնյաների կողմից, հայտարարում է. «Մենք հավատում ենք թագավորներին, նախագահներին, կառավարիչներին և մյուս իշխանավորներին հպատակվելուն, օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն և պաշտպանելուն» (Հավատո Հանգանակ 1.12):

Դա չի նշանակում, որ մենք համաձայն ենք այն ամենի հետ, ինչ կատարվում է օրենքի ուժով: Դա նշանակում է, որ մենք ենթարկվում ենք գործող օրենքին և օգտագործում ենք խաղաղ միջոցներ՝ այն փոխելու համար: Դա նշանակում է նաև, որ մենք խաղաղությամբ ենք ընդունում ընտրությունների արդյունքները: Մենք չենք մասնակցի բռնություններին, որոնք հրահրում են արդյունքից հիասթափվածները:¹⁰ Ժողովրդավարական հասարակության մեջ մենք միշտ ունենք հնարավորություն և պարտականություն՝ խաղաղ գոյատևելու մինչև հաջորդ ընտրությունները:

Մեր թշնամիներին սիրելու Փրկիչի ուսմունքը հիմնված է այն իրողության վրա, որ բոլոր մահկանացուներն Աստծո սիրելի զավակներն են: Այդ հավերժական սկզբունքը և օրենքի որոշ հիմնարար սկզբունքներ վերջերս փորձարկվել են Ամերիկայի մի շարք քաղաքներում տեղի ունեցած բողոքի ցույցերում:

Մի կողմից, կարծես, ոմանք մոռացել են, որ Միացյալ Նահանգների սահմանադրության առաջին հոդվածը երաշխավորում է «ժողովրդի խաղաղ հավաքվելու և դժգոհությունները բավարարելու խնդրանքով պետությանը դիմելու իրավունքը»: Դա հանրային իրազեկության բարձրացման և օրենքների բովանդակության կամ վարչարարության անարդարությունների վրա կենտրոնանալու լիազորված միջոցն է: Իսկ անարդարություններ իսկապես եղել են: Հանրային գործողություններում և մեր անձնական վերաբերմունքում մենք բախվել ենք ռասիզմի դրսևորումների և դրան առնչվող դժգոհությունների: Իր համոզիչ անձնական ակնարկում «Գունավոր մարդկանց առաջընթացի ազգային ասոցիացիայից» (NAACP) Պատվելի Թերեզա Ա. Դիերը հիշեցրել է մեզ, որ «ռասիզմը զարգանում է ատելության, ճնշման, դավաճանության, պասիվության, անտարբերության և լռության պատճառով»:¹¹ Որպես քաղաքացիներ և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք պետք է օգնենք արմատախիլ անել ռասիզմը:

Մյուս կողմից այդ ցույցերի մասնակիցների և կողմնակիցների փոքրամասնությունը, կատարելով անօրինական գործողություններ, կարծես մոռացել է, որ սահմանադրությամբ պաշտպանված ցույցերը *խաղաղ* ցույցերն են: Ցուցարարներն իրավունք չունեն ոչնչացնել, խեղաթյուրել, գույք հափշտակել կամ խարխլել պետության օրինական ոստիկանների լիազորությունները: Սահմանադրության և օրենքների մեջ չկան հեղափոխության կամ անիշխանության կոչեր: Բոլորս՝ ոստիկանությունը, ցուցարարները, աջակիցները և ականատեսները, պետք է հասկանանք մեր իրավունքների սահմանները և գործող օրենքների սահմաններում մնալու մեր պարտականությունների

կարևորությունը: Աբրահամ Լինքոլնը ճիշտ էր, երբ ասում էր. «Չկա դժգոհություն, որը կարելի է լուծել ամբոխի օրենքներով»:¹² Ամբոխի միջոցով լուծված դժգոհությունն անօրինական միջոցներով լուծում է: Դա անիշխանություն է՝ մի վիճակ, որը չունի արդյունավետ կառավարում և չունի պաշտոնական ոստիկանություն, որը խարխլում և ոչ թե պաշտպանում է մարդկանց իրավունքները:

Պատճառներից մեկը, որ Միացյալ Նահանգներում վերջերս տեղի ունեցած բողոքի ցույցերը ցնցող էին շատերի համար, այն էր, որ տարբեր երկրներում այլ ազգությունների շրջանում թշնամությունն ու անօրինականությունը չպետք է զգացվեն Միացյալ Նահանգներում: Այս երկիրը պետք է ավելի լավ պայքարի ռասիզմի դեմ ոչ միայն սևամորթ ամերիկացիների դեպքում, որոնք առավել տեսանելի էին վերջին ցույցերում, այլ նաև լատինացիների, ասիացիների և այլ խմբավորումների դեմ: Այս ազգի ռասիզմի պատմությունը երջանիկներից մեկը չէ, և մենք պետք է բարելավվենք:

Միացյալ Նահանգները ստեղծվել են տարբեր ազգությունների և տարբեր էթնիկ խմբերի ներգաղթյալների կողմից: Դրա միավորող նպատակը որոշակի կրոն հաստատելը կամ նախկին երկրների բազմազան մշակույթներից կամ ցեղային սովորույթներից որևէ մեկի պահպանումը չէր: Մեր հիմնադիր սերունդը ձգտել է միավորվել նոր սահմանադրությամբ և օրենքներով: Դա չի նշանակում, որ մեր միավորող փաստաթղթերը կամ այն ժամանակվա դրանց իմաստի ընկալումը կատարյալ էր: Միացյալ Նահանգների առաջին երկու դարերի պատմությունը ցույց տվեց, որ անհրաժեշտ է կատարել բազմաթիվ հղկումներ, ինչպիսիք են՝ կանանց ձայնի իրավունքը և, մասնավորապես, ստրկության վերացումը՝ ներառյալ օրենքները, որով

երաշխավորվում էր, որ ստրուկները կունենան ազատ մարդկանց բոլոր իրավունքները:

Վերջերս Յեյլ համալսարանի երկու գիտնականներ հիշեցրին մեզ.

«Միացյալ Նահանգներն իր բոլոր թերություններով հանդերձ՝ ունի յուրօրինակ գործիքակազմ՝ տարբեր և պառակտված հասարակությունները միավորելու համար: . . .

Նրա քաղաքացիները չպետք է ընտրություն կատարեն ազգային ինքնության և բազմամշակութային ընտրության միջև: Ամերիկացիները կարող են երկուսն էլ ունենալ: Բայց կարևորը սահմանադրական հայրենասիրությունն է: Մենք պետք է միավորված մնանք Սահմանադրությամբ և դրա շնորհիվ՝ անկախ մեր գաղափարական տարածայնություններից»:¹³

Շատ տարիներ առաջ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարը Ստոքին պալատում բանավեճի ժամանակ տվեց այս հրաշալի խորհուրդը. «Մենք չունենք հավերժական *դաշնակիցներ* և չունենք մշտական *թշնամիներ*: Մեր *շահերը* հավերժական և մշտական են, և այդ շահերին մենք պարտավոր ենք հետևել»:¹⁴

Դա լավ *աշխարհիկ* պատճառ է քաղաքական հարցերում «հավերժական և մշտական» շահերին հետևելու համար: Բացի այդ, Տիրոջ եկեղեցու վարդապետությունը մեզ ուսուցանում է մեկ այլ հավերժական շահի մասին, որն առաջնորդում է մեզ. մեր Փրկիչի ուսմունքները, որոնք ոգեշնչեցին Միացյալ Նահանգների Սահմանադրությունը և մեր բազմաթիվ երկրների հիմնական օրենքները: Ժամանակավոր «դաշնակիցների» փոխարեն հավատարիմ մնալով հաստատված օրենքին՝ մեր հակառակորդներին և մեր թշնամիներին սիրելու լավագույն միջոցն է, երբ ձգտում ենք միասնության՝ բազմազանության մեջ:

Գիտելիքը, որ մենք բոլորս Աստծո զավակներ ենք, հոգևոր

պատկերացում է տալիս բոլոր մյուս մարդկանց արժեքի մասին և տալիս է նաև նախապաշարմունքներից և ռասիզմից վեր կանգնելու կամք և կարողություն: Քանի որ ես երկար տարիներ ապրել եմ այս երկրի տարբեր վայրերում, Տերն ինձ սովորեցրել է, որ հնարավոր է հնազանդվել և ձգտել կատարելագործել մեր ազգի օրենքները, ինչպես նաև սիրել մեր հակառակորդներին և մեր թշնամիներին: Թեև հեշտ չէ, բայց դա հնարավոր է մեր Տեր Հիսուս Քրիստոսի օգնությամբ: Նա տվեց սիրելու պատվիրան և Նա խոստանում է օգնել, եթե մենք ձգտենք հնազանդվել դրան: Ես վկայում եմ, որ Երկնային Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը սիրում են մեզ և կօգնեն մեզ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես նաև Դուկաս 6.27–28, 30:
2. Gordon B. Hinckley, “The Healing Power of Christ,” *Ensign*, Nov. 1988, 59; see also *Teachings of Gordon B. Hinckley* (1997), 230.
3. Տես նաև Վարդապետություն և Ուխտեր 6.5:
4. Տես նաև Մատթեոս 22.21, Մարկոս 12.17:
5. Թոմաս Ս. Մոնտոն, «Դաստիարակիր զգացմունքները, ով իմ եղբայր», *Լիստոնա*, նոյեմբեր 2009, 68:

6. Stu Becky and Bennett Borden, “Moving Closer: Loving as the Savior Did,” *Ensign*, Sept. 2020, 24–27:
7. Joseph Smith, in *History of the Church*, 5:517. Նմանապես, Մարտին Լյուտեր Քինգ կրտսերն (1929–68) ասել է. «Բռնությանը բռնությամբ պատասխանելը բազմապատկում է բռնությունը՝ աստղերից գուրկ գիշերվան ավելացնելով ավելի շատ մթություն: Խավարը չի կարող դուրս մղել խավարին. դա կարող է անել միայն լույսը: Ատելությունը չի կարող դուրս մղել ատելությանը. դա կարող է անել միայն սերը» («Ո՞ր գնանք այստեղից. քաոս, թե համայնք» (*“Where Do We Go from Here: Chaos or Community?”*) [2010], 64–65):
8. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Հովաթյո Վ. Հանթեր* (2015), 263:
9. Ռասել Մ. Նելսոն, «Երանի խաղաղարարներին», *Լիստոնա*, նոյեմբեր 2002 թ., տես նաև *Ռասսել Մ. Նելսոնի ուսմունքները* (2018), 83:
10. Stu “A House Divided,” *Economist*, Sept. 5, 2020, 17–20:
11. Theresa A. Dear, “America’s Tipping Point: 7 Ways to Dismantle Racism,” *Deseret News*, June 7, 2020, A1.
12. Արրահամ Լինքոլն, ուղերձ Երիտասարդ տղամարդկանց ճեմարանում, Սփրինգֆիլդ, Իլինոյս, 27 հունվարի 1838 թ., in John Bartlett, *Bartlett’s Familiar Quotations* 18th ed. (2012), 444:
13. Amy Chua and Jed Rubenfeld, “The Threat of Tribalism,” *Atlantic*, Oct. 2018, 81, theatlantic.com.
14. Henry John Temple, Viscount Palmerston, remarks in the House of Commons, Mar. 1, 1848; in Bartlett, *Bartlett’s Familiar Quotations*, 392; emphasis added.



Բենգալուրու, Նոյակաստան



Ներկայացնող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդակալ

Բարձրագույն իշխանությունների, տարածքային յոթանասունականների և բարձրագույն պաշտոնյաների հաստատումը

Եղբայրներ՝ և քույրեր՝, այժմ ես ձեր հաստատմանը կներկայացնեմ Եկեղեցու բարձրագույն իշխանություններին, տարածքային յոթանասունականներին և բարձրագույն պաշտոնյաներին:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Ռասսել Մերիոն Նելսոնին՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Դավիթ Հարիս Օուքսին՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդակալ, և Հենրի Բենիոն Այրինգին՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդակալ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Դավիթ Հ. Օուքսին

որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և Մ. Ռասսել Բալլարդին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահ:



Չիրա, Ճապոնիա

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլլանդին, Դիտեր Ֆ. Ուլսդորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քվենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբենդին, Գարի Է. Սթիվենսոնին, Դեյլ Գ. Ռենլանդին, Գերիթ Վ. Գոնզալես և Ուիլսես Մոարեսին:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդակալները և Տասներկու Առաքյալները՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Մենք ազատել ենք Երեցներ Լ. Ուիթնի Քլեյթոնին, Էնրիկե Ռ. Ֆալաբելլային և Ռիչարդ Ջ. Մեյնզին բարձրագույն իշխանություն յոթանասունականի իրենց կոչումներից և շնորհել նրանց պատվավոր անդամի կոչում:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել այս եղբայրներին և նրանց ընտանիքներին իրենց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Մենք ազատել ենք Երեց Լ. Թոդ Բադջին՝ Բարձրագույն Իշխանություն Յոթանասունականի կոչումից:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են իրենց շնորհակալությունը արտահայտել նրա ծառայության համար, կարող են արտահայտել ձեռքի բարձրացումով:

Մենք ազատել ենք եպիսկոպոսներ Դին Մ. Դեյվիսին և Վ. Քրիստոֆեր Վադելին, որպես համապատասխանաբար



Բենգալուրու, Չոդկաստան

Առաջին և երկրորդ խորհրդականներ Նախագահող եպիսկոպոսությունում:

Ովքեր ցանկանում են իրենց շնորհակալությունը հայտնել այդ եղբայրներին նրանց նվիրված ծառայության համար, կարող են արտահայտել դա:

Մենք ազատել ենք հետևյալ Տարածքային յոթանասունականներին. Ռուբեն Ակոստա, Ռենե Ռ. Ալբա, Ալբերտո Ա. Ալվարեսին, Վլադիմիր Ն. Աստաշով, Խոսե Բատալա, Բրեդֆորդ Մ. Բուրեն, Սերջիո Լուի Կարբոնի, Արմանդո Կարենո, Ս. Մարկ Քլեյ կրտ., Ջ. Դոմինիկ Դեկայ, Օսվալդո Ռ. Դիաս, Մայքլ Մ. Դուլի, Մարկ Պ. Դուրհամ, Ի. Քսավիեր Էսպինոզա, Ջեյմս Ի. Էվանսոն, Պասկուալ Ֆ. Ֆորտունատո, Սեմ Մ. Գալվե, Պատրիշիո Մ. Գիուֆրա, Լեոնարդ Դ. Գրիդ, Դանիել Պ. Հոլլ, Թորո Հայաշի, Փոլ Ֆ. Հինցե, Ադոլֆ Ջ. Յոհանսոն, Վիսիթ Խանախամ, Սեուզ Խոն Կու, Պեդրո Ջ. Լարեալ, Ջոնի Լ. Լեոտա, Խոսե Ի. Մարավիլա, Ջոել Մարտինես, Ջոակիմ Ջ. Մորեյրա, Այզլ Կ. Մորինսոն, Էդուարդո Ա. Նորամբունես, Ֆերդինանդ Պ. Պանգան, Խայրուս Կ. Պերես, Մթիվեն Մ. Փիթերսեն, Ջեյ Դ. Պիմենթե, Էդվալդո Բ. Փինթո կրտ., Ալեքսեյ Վ. Սամայկին, Ք. Դեյվիդ Սքոթ, Բուլոն Ֆ. Սթեյսի, Կարլ Մ. Թիլեման, Վիլիամ Ռ. Թիթերա,

Կառլոս Ռ. Տոլեդո, Միգաբ Ի. Վիլյար, Դեյվիդ Թ. Ուորներ, Գերի Ք. Ուայլդ և Վիլիամ Բ. Վուան:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել նրանց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Երբ երեց Լ. Ուիթնի Քլեյթոնն ազատվեց բարձրագույն իշխանություն յոթանասունականի կոչումից և ստացավ պատվավոր անդամի կոչում, նա նաև ազատվեց յոթանասունի նախագահության անդամի կոչումից:

Երեց Բրենտ Հ. Նիլսոնը կանչվել է յոթանասունի նախագահության անդամ և մենք առաջարկում ենք հաստատել նրան:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Դին Մ. Դեյվիսը՝ որպես Բարձրագույն իշխանություն յոթանասունական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են ևս քվեարկել:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք Վ. Քրիստոֆել Վադելին որպես Նախագահող եպիսկոպոսության առաջին խորհրդական, իսկ Լ. Թոդ Բաջին՝ որպես

Նախագահող եպիսկոպոսության երկրորդ խորհրդական:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են՝ միևնույն նշանով:

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Տարածքային յոթանասունականներ՝ Լաուրիան Պ. Բալիլենվա, Ջոնաթոն Վ. Բունկեր, Էնրիկե Մայորգա և Կոնստանտին Տոլմենկ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե այդպիսիք կան, կարող են արտահայտել դա:

Առաջարկվում են հաստատման Եկեղեցու մյուս Բարձրագույն իշխանավորները, Տարածքային յոթանասունականները և բարձրագույն պաշտոնյաները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դեմ լինելու դեպքում, եթե այդպիսիք կան, արտահայտեք նույն կերպ:

Ովքեր դեմ քվեարկեցին որևէ առաջադրման, խնդրում ենք զրուցել իրենց ցցի նախագահի հետ:

Եղբայրներ՝ և քույրեր՝, մեր երախտագիտությունն ենք հայտնում Եկեղեցու ղեկավարների համար ձեր շարունակական հավատքի և աղոթքների համար: ■



Երեց Դ. Թոդ Զրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Զվորումից

Կայուն հասարակություններ

Եթե մենք բոլորս՝ մեր ընտանիքները և մեր հարևաններից շատերն առաջնորդենք մեր կյանքն «Աստծո ճշմարտությամբ», ապա յուրաքանչյուր հասարակության համար անհրաժեշտ բարոյական արժանիքներն առատ կլինեն:

Ինչպիսի՞ գեղեցիկ երգչախումբ է երգում գեղեցիկ Փրկիչի մասին:

2015 թվականին ՄԱԿ-ը ընդունեց մի օրակարգ, որը կոչվում էր «2030 թվականի կայուն զարգացման օրակարգ»: Այն նկարագրվեց որպես «խաղաղության և բարգավաճման ընդհանուր նախագիծ մարդկանց և մոլորակի համար՝ ներկայումս և ապագայում»: Կայուն զարգացման օրակարգը ներառում է 17 նպատակ, որոնք պետք է իրականացվեն մինչև 2030 թվականը. դրանք են՝ «Աղքատության բացակայություն, սովի բացակայություն, որակյալ կրթություն, գենդերային հավասարություն, մաքուր ջուր և սանիտարական մաքրություն և պատշաճ աշխատանք»:¹

Կայուն զարգացման գաղափարը հետաքրքիր և կարևոր է: Այնուամենայնիվ, ավելի հրատապ է կայուն հասարակություն ունենալու ընդհանուր խնդիրը: Որո՞նք են այն հիմքերը, որոնք ապահովում են ծաղկող հասարակություն՝ երջանկություն, առաջընթաց,

խաղաղություն և բարեկեցություն խթանող հասարակություն: Մուրբ գրություններում մենք ունենք առնվազն երկու այդպիսի ծաղկուն հասարակությունների մասին գրառումներ: Մենք ի՞նչ կարող ենք սովորել նրանցից:

Հնում, մեծ հայրապետ և մարգարե Ենովքը քարոզեց արդարություն և «կառուցեց մի քաղաք, որը կոչվեց Մրբության քաղաք, այսինքն՝ Միոն»:² Գրված է, որ «Տերն իր ժողովրդին կոչեց Միոն, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին, և բնակվում էին արդարության մեջ. և ոչ մի աղքատ չկար նրանց մեջ»:³

«Եվ Տերն օրհնեց երկիրը, և նրանք օրհնված էին սարերի վրա, և բարձր տեղերում, և ծաղկում էին»:⁴

Առաջին և երկրորդ դարերում արևմտյան կիսագնդի ժողովուրդները, որոնք հայտնի էին որպես նեփիացիներ և լամանացիներ, ծաղկող հասարակության մեկ այլ ակնառու օրինակ են: Հետևելով հարություն առած Փրկիչի

ուշագրավ ծառայությանը իրենց մեջ, «նրանք քայլում էին՝ ըստ այն պատվիրանների, որոնք ստացել էին իրենց Տիրոջից և իրենց Աստծուց՝ շարունակելով ծոմապահությունով ու աղոթքով, և հաճախ հավաքվելով միասին, ինչպես աղոթելու, այնպես էլ լսելու Տիրոջ խոսքը: . . .

Եվ չկային նախանձություններ, ոչ էլ պայքարներ, ոչ էլ խլրտումներ, ոչ էլ պոռնկություններ, ոչ էլ ստախոսություններ, ոչ էլ սպանություններ, ոչ էլ որևէ ձևի հեշտասիրություն. և, անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով»:⁵

Այս երկու օրինակներում բերված հասարակությունները ստացան երկնքի օրհնությունները, քանի որ օրինակելի նվիրվածություն ցուցաբերեցին այդ երկու մեծ պատվիրանների նկատմամբ՝ «Միրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը» և «Միրիր քո ընկերին քո անձի պես»:⁶ Իրենց անձնական կյանքում նրանք հնազանդ էին Աստծուն և հոգ էին տանում միմյանց ֆիզիկական և հոգևոր բարեկեցության մասին: Համաձայն Վարդապետության և Ուխտերում գրված խոսքերի, դրանք հասարակություններ էին, որտեղ «ամեն մարդ փնտրելով իր մերձավորի շահը, և բոլոր բաներն անելով պարզ աչքով ուղղված Աստծո վիճաքին»:⁷

Դժբախտաբար, ինչպես երեց Քվենթին Լ. Քուքը նշեց այս առավոտ, Մորմոնի Գրքի 4-րդ Նեփիում նկարագրված կատարյալ հասարակությունը երկու հարյուր տարուց ավել չապրեց: Կայունությունը երաշխավորված չէ, իսկ ծաղկող հասարակությունը կարող է ժամանակին քայքայվել, եթե հրաժարվի պաշտպանել իր գլխավոր արժանիքները, որոնց վրա հենված են խաղաղությունն ու բարգավաճումը: Այս դեպքում, ենթարկվելով սատանայի գայթակղություններին, այդ ժողովուրդը

«սկսեց բաժանվել դասերի. և նրանք իրենց համար սկսեցին հիմնել եկեղեցիներ՝ շահ ստանալու համար, և սկսեցին ուրանալ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին»:⁸

«Եվ եղավ այնպես, որ երբ երեք հարյուր տարիներ անցան, ինչպես Նեփիի ժողովուրդը, այնպես էլ Լամանացիները դարձան չափազանց ամբարիշտ՝ մեկը մյուսի նման»:⁹

Մեկ այլ դարավերջին միլիոնավոր մարդիկ մահացան ներքին պատերազմում, և նրանց երբեմնի ներդաշնակ ազգը վերածվեց պատերազմող ցեղերի:

Մտածելով ժամանակին ծաղկող հասարակությունների այս և այլ օրինակների մասին, որոնք հետագայում ստեղծվեցին, ես կարծում եմ, որ ճիշտ կլինի ասել, որ երբ մարդիկ հեռանում են Աստծո առջև պատասխանատվության զգացումից և փոխարենը սկսում են վստահել «մարմնի բազկին», աղետը վրա է հասնում: «Մարմնի բազկին վստահել» նշանակում է՝ անտեսել մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության աստվածային հեղինակին և մեծ առաջնահերթություն տալ աշխարհիկ հարստությանը, զորությանը և փառքին (մինչդեռ հաճախ ծաղրում և հետապնդում են նրանց, ովքեր այլ չափանիշ են պահպանում): Մինչդեռ կայուն հասարակություններում գտնվողները ձգտում են, ինչպես ասել է Բենիամին թագավորը՝ «անել նրա փառքի գիտության մեջ, ով ստեղծել է [նրանց], կամ այն գիտության մեջ, ինչն արդար է և ճշմարիտ»:¹⁰

Ընտանիքի և կրոնի ինստիտուտները անհատներին և համայնքներին արժանիքներով օժտելու կարևոր նշանակություն ունեն, որոնք իրենց հերթին ապահովում են հասարակության շարունակությունը: Ավետարանում արմատավորված այս արժանիքներն են՝ ազնվությունը, պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, կարեկցանքը, ամուսնությունը և

հավատարմությունն ամուսնության մեջ, ուրիշի և ուրիշի ունեցվածքի նկատմամբ հարգանքը, ծառայությունը և աշխատանքի անհրաժեշտությունն ու արժանապատվությունը մարդկանց մոտ:

Գլխավոր խմբագիր Ժերար Բեյքերն այս տարվա սկզբին *The Wall Street Journal*-ում մի նյութ էր գրել, որը նվիրել էր իր հոր՝ Ֆրեդերիկ Բեյքերի 100-ամյակին: Բեյքերը շահարկեց իր հոր երկարակեցության պատճառները, բայց հետո ավելացրեց հետևյալ մտքերը.

«Թեպետ բոլորս ցանկանում ենք իմանալ երկարատև կյանքի գաղտնիքը, սակայն ես հաճախ մտածում եմ, որ ավելի լավ կլինի ժամանակ հատկացնել և հասկանալ, թե ինչպես ապրել լավ կյանքով, անկախ նրանից, թե որքան ժամանակ է մեզ հատկացված: Մյստեղ ես վստահ եմ, որ գիտեմ հայրիկիս գաղտնիքը:

«Նա մի դարաշրջանից է, երբ կյանքը հիմնականում սահմանվում էր պարտականությամբ, այլ ոչ թե իրավունքով. սոցիալական պարտականություններով, այլ ոչ՝ անձնական արտոնությամբ: Նրա ապրած դարի հիմնական շարժիչ սկզբունքը եղել է պարտավորության զգացումը՝ ընտանիքի, Աստծո, երկրի հանդեպ:

«Դարաշրջանում, որտեղ գերակշռում էր քայքայված ընտանիքների ավերակները, հայրս 46 տարի նվիրված ամուսին էր իր կնոջ համար և վեց երեխաների պարտաճանաչ հայր էր: Նա ավելի կենտրոնացած ու նվիրված էր իր ընտանիքին, երբ ծնողներս տառապում էին զավակին կորցնելու սարսափելի ողբերգությունից: . . .

Եվ մի դարաշրջանում, երբ կրոնը գնալով դառնում է հետաքրքրասիրություն, հայրս եղել է ճշմարիտ, հավատարիմ կաթոլիկ՝ անսասան հավատալով Քրիստոսի խոստումներին: Իսկապես, ես երբեմն կարծում եմ, որ նա ապրել է այդքան երկար, քանի որ ավելի լավ է պատրաստվել մեռնելու համար, քան որևէ մեկը, ում ես երբևէ հանդիպել եմ:

«Ես եղել եմ բախտավոր մարդ՝ օրինված լինելով լավ կրթությամբ, իմ անձնական հիանալի ընտանիքով և աշխարհիկ որոշ հաջողություններով, որին արժանի չէի: Բայց առավել հպարտ ու երախտապարտ եմ այն մարդու համար, ով առանց աղմուկի կամ տեսարան սարքելու, առանց պարզևատրման կամ նույնիսկ շնորհակալության ակնկալիքի, արդեն մեկ դար շարունակ կատարում է այդ պարզ պարտականությունները, պարտավորությունները և, ի վերջո, ուրախանում է առաքինի կյանքով ապրելուց»:¹¹

Կրոնի և կրոնական հավատքի նկատմամբ ընկալվող կարևորությունը շատ ազգերի մոտ նվազել է վերջին տարիներին: Ավելի շատ մարդիկ են կարծում, որ Աստծուն հավատալն ու Նրան նվիրվածությունն անհրաժեշտ չեն մարդկանց և հասարակությունների բարոյական ուղղամտության համար:¹² Կարծում եմ, որ բոլորս կհամաձայնվենք այն մտքի հետ, որ նրանք, ովքեր ոչ մի կրոնական հավատքի չեն դավանում, կարող են լինել և շատ հաճախ՝ լավ, բարոյական մարդիկ են: Մակայն մենք չենք համաձայնվի այն մտքի հետ, որ դա տեղի է ունենում առանց աստվածային ազդեցության: Ես նկատի ունեմ Քրիստոսի Լույսը: Փրկիչը հայտարարել է. «Եվ որ ես եմ ճշմարիտ լույսը, որը լուսավորում է ամեն մարդու, ով գալիս է աշխարհ»:¹³ Անկախ նրանից՝ մենք տեղյակ ենք, թե ոչ, տարբեր հավատքների հարող, տարբեր վայրերում գտնվող և տարբեր դարերում ապրող յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա լցված է Քրիստոսի Լույսով և հետևաբար ունի ճիշտ ու սխալը տարբերելու ունակություն, որը մենք հաճախ անվանում ենք խիղճ:¹⁴

Այնուամենայնիվ, երբ անձնական և աշխարհիկ մտածելակերպը քաղաքացիական առաքինությունը տարանջատում է Աստծո առջև պատասխանատվության զգացումից, ապա այն պոկում է բույսն իր արմատներից:

Բավարար չէ միայն ապավինել մշակույթին և ավանդույթին՝ հասարակության մեջ առաքինությունը պահպանելու համար: Երբ մարդու համար չկա ավելի մեծ աստված, քան ինքը, և չի փնտրում ավելի մեծ բարիք, քան բավարարել իր սեփական ախորժակը և նախասիրությունները, ապա դրա հետևանքները արտահայտվում են ժամանակի ընթացքում:

Օրինակ՝ այն հասարակությունը, որտեղ համաձայնությունը սեռական գործողության միակ խոչընդոտն է, ապա այդ հասարակությունը քայքայվող հասարակություն է: Շնորհիվ, անառակությունը, արտամուսնական ծնունդները¹⁵ և ընտրովի վիժեցումն այն դառն պտուղներից են, որոնք առաջանում են սեռական հեղափոխության կողմից հաստատված անբարոյականության արդյունքում: Դրանից բխող հետևանքները, որոնք խաթարում են առողջ հասարակության կայունությունը՝ աղքատության մեջ մեծացող երեխաների աճող թվերն են, որտեղ բացակայում է հայրերի դրական ազդեցությունը, իսկ երբեմն՝ մի քանի սերունդ շարունակվող միայնակ մայրերի օրինակներն են, ովքեր միայնակ կրում են երկու ծնողի պարտականությունները, իսկ ընտանիքներում այդ կրթության ձևաչափն մեծ պակասը փոխհատուցելու խնդիրն ընկած է դպրոցների և այլ հաստատությունների ուսերին:¹⁶ Այդ սոցիալական ախտաբանություններին գումարվում են նաև անձնական վշտի ու հուսահատության անթիվ դեպքերը, որոնք հոգևոր և մտավոր կործանման են ենթարկում՝ ինչպես մեղավորին, այնպես էլ անմեղին:

Նեփին հայտարարել է.

«Վա՛յ լինի նրան, ով լսում է մարդկանց ցուցումներին և ժխտում Աստծո գործությունը և Սուրբ Հոգու պարզը: . . .

. . . Վա՛յ բոլոր նրանց, ովքեր դողում են և բարկացած են՝ Աստծո ճշմարտության պատճառով»:¹⁷

Փոխարենը, մեր զավակներին և ողջ մարդկությանն ուղղված մեր ուրախալի ուղերձն այն է, որ «Աստծո ճշմարտությունը» ցույց է տալիս ավելի լավ ճանապարհ, կամ ինչպես Դոդոս առաքյալն է ասել՝ «ավելի գերազանց ճանապարհ»:¹⁸ մի ճանապարհ, որն առաջնորդում է դեպի անձնական երջանկություն և համայնքի բարեկեցություն հիմա և դեպի հարատև խաղաղություն ու ուրախություն՝ հետագայում:

Աստծո ճշմարտությունը վերաբերում է այն հիմնական ճշմարտություններին, որոնք ընկած են Իր զավակների համար Նրա երջանկության ծրագրի հիմքում: Այս ճշմարտություններն են.

որ Աստված ապրում է, որ Նա մեր հոգիների Երկնային Հայրն է, որպես Իր սիրո դրսևորման հետևանք Նա մեզ տվել է պատվիրաններ, որոնք առաջնորդում են դեպի Նրա հետ ուրախության լիություն, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին և մեր Քավիչն է, որ Նա տառապեց և մեռավ մեղքերը քավելու համար՝ պայմանով, որ մենք կապաշխարենք, որ Նա հարություն առավ մեռելներից՝ իրականացնելով ողջ մարդկության Հարությունը, և որ մենք բոլորս կանգնելու ենք Նրա առջև, որպեսզի դատվենք, այսինքն՝ հաշվետու լինենք մեր կյանքի համար:¹⁹

Մորմոնի Գրքի այսպես կոչված «դատավորների կառավարումից» ինը տարի անց Ալմա մարգարեն հրաժարական տվեց իր գլխավոր դատավորի պաշտոնից՝ ամբողջ ժամանակը նվիրելով Եկեղեցու ղեկավարմանը: Նրա նպատակն էր վերացնել հպարտությունը, հալածանքները և ազատությունը, որոնք աճում էին մարդկանց և, մասնավորապես, Եկեղեցու անդամների շրջանում:²⁰ Ինչպես մի անգամ ասել է Երեց Սթիվեն Դ. Նադաուդը. «[Ալմայի] ոգեշնչված որոշումն այն էր, որ ոչ թե ավելի շատ ժամանակ ծախսեր ավելի շատ օրենքներ հանելու և գործադրելու վրա՝ իր ժողովրդի վարքը շտկելու համար, այլ նրանց

հետ խոսեր Աստծո խոսքի մասին և այնպես աներ, որ փրկագնման ծրագրի մասին նրանց ընկալումը ստիպեր փոխել իրենց վարքը»:²¹

Որպես հարևաններ և համաքաղաքացիներ, շատ բան կարող ենք անել, որպեսզի նպաստենք այն հասարակությունների կայունությանն ու հաջողությանը, որտեղ մենք ապրում ենք և, անկասկած, մեր ամենահիմնարար և շարունակական ծառայությունը կլինի ուսուցանել և ապրել ճշմարտություններով, որոնք բնորոշ են Աստծո փրկագնման մեծ ծրագրին: Ինչպես օրիներգի բառերն են ասում.

*Մեր հայրերի հախտափր մենք
կսկզբենք
Եվ ընկերին և թշնամուն կյանքի
հանդեպ մեր պայքարում,
Միտույ, բարի խոսքով
և մեր կյանքով առաքինի
կքաղողենք»:²²*

Եթե մենք բոլորս՝ մեր ընտանիքները և մեր հարևաններից շատերը ձգտենք որոշումներ կայացնել և առաջնորդենք մեր կյանքն Աստծո ճշմարտությամբ, ապա յուրաքանչյուր հասարակության համար անհրաժեշտ բարոյական արժանիքներն առատ կլինեն:

Իր սիրո շնորհիվ մեր Երկնային Հայրը տվել է Իր Միածին Որդուն, որպեսզի մենք հավիտենական կյանք ունենանք:²³

«[Հիսուս Քրիստոսը] չի անում որևէ բան, բացի դա լինի ի օգուտ աշխարհի. քանզի նա սիրում է աշխարհն այնքան, որ նա վայր է դնում իր սեփական կյանքը, որպեսզի կարողանա ձգել բոլոր մարդկանց իր մոտ: Ուստի, նա ոչ ոքի չի պատվիրում, որ նրանք չճաշակեն իր փրկությունից:

Ահա, կանչո՞ւմ է նա որևէ մեկին՝ ասելով. Հեռացե՛ք ինձանից: Ահա, ես ասում եմ ձեզ՝ Ո՛չ. այլ նա ասում է. Եկե՛ք ինձ մոտ, բոլո՛րդ, աշխարհի՛ ծայրեր, առե՛ք կաթ ու մեղր առանց փողի և առանց գնի»:²⁴

Այս ամենը մենք հայտարարում ենք «արտի հանդիսավորությամբ, հեզության ոգով»²⁵ և Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. Տես «17 նպատակները», ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի բաժնի կայք, sdgs.un.org/goals:
2. Մովսես 7.19:
3. Մովսես 7.18:
4. Մովսես 7.17:
5. 4 Նեվիի 1.12, 16:
6. Մատթեոս 22.37, 39:
7. Վարդապետություն և Ուխտեր 82.19:
8. 4 Նեվիի 1.26:
9. 4 Նեվիի 1.45:
10. Մոսիա 4.12:
11. Gerard Baker, “A Man for All Seasons at 100,” *Wall Street Journal*, Feb. 21, 2020, wsj.com.
12. See Ronald F. Inglehart, “Giving Up on God: The Global Decline of Religion,” *Foreign Affairs*, Sept./Oct. 2020, foreignaffairs.com; see also Christine Tamir, Aidan Connaughton, and Ariana Monique Salazar, “The Global God Divide,” Pew Research Center, July 20, 2020, especially infographic “Majorities in Emerging Economies Connect Belief in God and Morality,” pewresearch.org.
13. Վարդապետություն և Ուխտեր 93.2, տես նաև Մորոնի 7.16, 19:
14. Տես Բոյդ Կ. Փաբեր, «Քրիստոսի լույսը», *Լիսինուս*, ապրիլ 2005, 10, տես նաև D. Todd Christofferson, “Truth Endures,” *Religious Educator*, vol. 19, no. 3 (2018), 6:
15. «Կառը պտուղ» ասելով, ես օրինակ եմ բերում երեխաների համար հնարավոր բացասական հետևանքները և չի վերաբերում անձամբ երեխաներին: Աստծո յուրաքանչյուր զավակ թանկ է, և յուրաքանչյուր կյանք ունի անզին արժեք՝ անկախ ծնվելու հանգամանքներից:
16. Օրինակ՝ տես Pew Research Center, “The Changing Profile of Unmarried Parents,” Apr. 25, 2018, pewsocialtrends.org; Mindy E. Scott and others, “5 Ways Fathers Matter,” June 15, 2016, childtrends.org; and Robert Crosnoe and Elizabeth Wildsmith, “Nonmarital Fertility, Family Structure, and the Early School Achievement of Young Children from Different Race/Ethnic and Immigration Groups,” *Applied Developmental Science*, vol. 15, no. 3 (July–Sept. 2011), 156–70:
17. 2 Նեվիի 28.26, 28:
18. Ս Կորնթացիս 12.31
19. Տես Ավմա 33.22:
20. Տես Ավմա 4.6-19:
21. Stephen D. Nadauld, *Principles of Priesthood Leadership* (1999), 13; տես նաև Ավմա 31.5:
22. “Faith of Our Fathers,” *Hymns*, no. 84.
23. Տես Հովհաննես 3.16:
24. 2 Նեվիի 26.24–25, տես նաև 2 Նեվիի 26.33:
25. Վարդապետություն և Ուխտեր 100.7:



Եղբայր Ստիվեն Ջ. Լալն
Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահ

Գտնել ուրախություն քրիստոսում

Այս կյանքում ուրախություն գտնելու ամենահուսալի միջոցն է՝ միանալ քրիստոսին՝ օգնելով ուրիշներին:

Տերը չի խնդրում Ահարոնյան քահանայության մեր երիտասարդներին անել ամեն ինչ, բայց այն, ինչ Նա խնդրում է, հիացմունք է ներշնչում:

Մի քանի տարի առաջ մեր փոքրիկ ընտանիքն անցավ նրա միջով, ինչին բախվում են շատ ընտանիքներ այս ընկած աշխարհում: Մեր կրտսեր որդին՝ Թաներ քրիստիան Լանդը հիվանդացավ քաղցկեղով: Նա ինը տարեկան հրաշալի տղա էր: Նա ուրախ, չարաճճի և միևնույն ժամանակ հոգևորապես զգայուն երեխա էր: Չարաճճի, բայց հրեշտակ. անհնազանդ, բայց զեղեցիկ երեխա: Երբ փոքր էր, ամեն օր մեզ հունից հանում էր իր չարաճճիությամբ. մենք մտածում էինք, որ նա կդառնա կամ մարգարե կամ բանկ թալանող: Երկու դեպքում էլ թվում էր, թե նա պատրաստվում է հետք թողնել աշխարհի վրա:

Իսկ հետո նա լուրջ հիվանդացավ: Հաջորդ երեք տարիների ընթացքում ժամանակակից բժշկությունը հերոսական քայլերով փորձեց փրկել նրա կյանքը՝ կատարելով ոսկրածուծի երկու փոխպատվաստում, որի

ընթացքում նա հիվանդացավ թոքաբորբով և 10 շաբաթ անզիտակից վիճակում միացված էր արհեստական շնչառության սարքին: Հրաշքով, նա մի կարճ ժամանակով առողջացավ, բայց հետո նրա քաղցկեղը կրկնվեց:

Թաների մահից առաջ նրա քաղցկեղը թափանցել էր ոսկորները, և նույնիսկ ուժեղ ցավազրկող դեղամիջոցներով դեռ ցավում էր զգում: Նա հազիվ էր կարողանում վեր կենալ անկողնուց: Մի կիրակի



Թարթա դե Սերա, Սան Պատրո, Բրազիլիա

առավոտ, նախքան ընտանիքը կգնար եկեղեցի, նրա մայրը՝ Քալլին մտավ նրա սենյակը, որպեսզի ստուգի նրա վիճակը: Նա զարմացավ՝ տեսնելով, որ նա մի կերպ հագնվել և նստած էր իր մահճակալի եզրին ու ցավագին դեմքով փորձում էր կոճկել վերնաշապիկը: Քալլին նստեց նրա կողքին: «Թաներ,- ասաց նա,- վստահե՞ս ես, որ ուժ ունես եկեղեցի գնալու համար: Միգուցե այսօր պետք է տանը մնաս ու հանգստանաս»:

Նա հայացքը հառել էր հատակին: Նա սարկավազ էր: Նրա քվորումն իրեն էր սպասում: Եվ նա ուներ հանձնարարություն:

«Ես այսօր պետք է հաղորդությունը բաժանեմ»:

«Դե համոզված եմ, որ ինչ-որ մեկը կարող է դա քո փոխարեն անել»:

Նա ասաց. «Այո, բայց . . . ես տեսնում եմ, թե ինչպես են մարդիկ նայում ինձ, երբ ես հաղորդությունն եմ բաժանում: Կարծում եմ, որ դա օգնում է նրանց»:

Այսպիսով, Քալլին նրան օգնեց կոճկել վերնաշապիկը և կապել փողկապը, և նրանք մեքենայով գնացին եկեղեցի: Ակնհայտ է, որ ինչ-որ կարևոր բան էր տեղի ունենում:

Ես եկա եկեղեցի ավելի վաղ ժողովից հետո և շատ զարմացա, երբ տեսա Թաներին սարկավազների շարքում նստած: Քալլինը լուռ պատմեց ինձ, թե ինչու է որդին այնտեղ, և ինչ է նա ասել. «Դա օգնում է մարդկանց»:

Եվ ահա ես նայում էի, թե ինչպես են սարկավազները մոտենում հաղորդության սեղանին: Նա զգույշ հենվել էր մեկ այլ սարկավազի, մինչև քահանաները հացի սկուտեղները կփոխանցեին նրանց: Իսկ հետո Թաները ոտքերը քստքստացնելով գնաց իր նշանակված տեղը և հավասարակշռությունը պահելու համար բռնվեց նստարանի եզրից ու բաժանեց հաղորդությունը:

Թվում էր, թե հավաքատան բոլոր մարդիկ նայում էին նրան՝ հուզված նրա ցավով, երբ նա

կատարում էր իր պարզ դերը: Բայց ինչ-որ կերպ Թաները լուռ քարոզ կատարեց, երբ նա օրորվելով տեղափոխվեց շարքից շարք և ճառագող քրտնած գլխով ներկայացրեց Փրկիչին այնպես, ինչպես դա անում են սարկավազները: Այդ երբեմնի աննկուն սարկավազի թուլացած մարմինը, որն ինքնին մի փոքր կապտած, կոտրված և բզկտված էր, որպեսզի պատրաստակամորեն տառապելով ծառայի՝ Փրկիչի Քավության խորհրդանիշները բերելով մեր կյանք:

Տեսնելով, թե ինչպես նա մտածեց սարկավազ լինելու մասին, մեզ ստիպեց նաև այլ կերպ մտածել հաղորդության, Փրկիչի և սարկավազների, ուսուցիչների ու քահանաների մասին:

Ես զարմանում եմ այն անխոս հրաշքի վրա, որն այդ առավոտ նրան դրդել էր այդպիսի համարձակությամբ արձագանքել ծառայելու այդ մեղմ, հանգիստ կոչին, և մեր բոլոր աճող երիտասարդների ուժի և կարողությունների վրա, երբ նրանք կենտրոնացած ուժերով առաջ են շարժվում մարգարեի կոչին ընդառաջ՝ ընդգրկվելով Աստծո գումարտակներում և միանալով փրկության և վեհացման աշխատանքին:

Ամեն անգամ, երբ սարկավազը բռնում է հաղորդության սկուտեղը, մենք հիշում ենք Վերջին ընթրիքի, Գեթսեմանիի, Գողգոթայի և պարտեզի գերեզմանի սուրբ պատմությունը: Երբ Փրկիչն Իր առաքյալներին ասում էր «այս արեք իմ հիշատակի համար»,¹ Նա նաև դարերի միջով խոսում էր մեզանից յուրաքանչյուրի հետ: Նա խոսում էր այն անվերջ հրաշքի մասին, որը Նա ցույց կտար, երբ ապագա սարկավազները, ուսուցիչները և քահանաներն Իր խորհրդանիշները ներկայացնեն և հրավիրեն Իր զավակներին՝ ընդունելու քավության Իր պարզեր:

Հաղորդության արարողության բոլոր խորհրդանիշները մեզ մատնանշում են այդ պարզեր: Մենք մտածում ենք այն հացի մասին, որը Նա մի ժամանակ կտրեց, և

այն հացի մասին, որն իրենց հերթին քահանաներն այժմ մեր առջև կտրում են: Այն ժամանակ և հիմա մենք մտածում ենք սրբագործված հեղուկի նշանակության մասին, երբ այդ հաղորդության աղոթքների խոսքերը հանդիսավոր կերպով երիտասարդ քահանաների բերաններից փոխանցվում են մեր սրտերին և խոյանում երկինք՝ նորոգելով ուխտերը, որոնք կապում են մեզ Քրիստոսի փրկության նույն ուժերի հետ: Հաղորդության ժողովի ժամանակ մենք կարող ենք մտածել, թե ինչ է նշանակում, երբ սարկավազը սուրբ խորհրդանիշները փոխանցում է մեզ՝ կանգնելով այնպես, ինչպես Հիսուսը կկանգնե, եթե Նա այնտեղ լիներ և առաջարկելով թեթևացնել մեր բեռն ու ցավը:

Բարեբախտաբար, երիտասարդ տղամարդիկ և կանայք ստիպված չեն հիվանդանալ, որպեսզի հայտնաբերեն Փրկիչին ծառայելու ուրախությունն ու նպատակը:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է, որ միսիոներների նման աճելու և *դառնալու* համար, մենք պիտի անենք այն, ինչ միսիոներներն են *անում*, իսկ հետո, «տող առ տող, ցուցում առ ցուցում, . . . [մենք] աստիճանաբար կարող եք դառնալ այն միսիոները, որ Փրկիչն է ակնկալում, որ լինեք»:²

Նմանապես, եթե մենք ուզում ենք «նմանվել Հիսուսին»³, մենք պետք է անենք այն, ինչ Հիսուսն է անում, և մեկ զարմանալի նախադասությամբ Տերը բացատրում է, թե ինչ է Ինքն անում. Նա ասել է. «Քանզի ահա սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:⁴

Փրկիչի առաքելությունը միշտ և հավիտյան եղել է ծառայել Իր Հորը՝ փրկելով Նրա զավակներին:

Քրիստոսում ուրախություն գտնելու ամենահոստալի միջոցն է՝ միանալ Քրիստոսին՝ օգնելով ուրիշներին:

Սա այն պարզ ճշմարտությունն է, որը ոգեշնչել է Երեխաների և երիտասարդների ծրագրը:

Երեխաների և երիտասարդների բոլոր միջոցառումներն ու Երեխաների ու երիտասարդների ծրագրի բոլոր ուսմունքները վերաբերում են նրան, որ օգնենք երիտասարդներին ավելի նմանվել Հիսուսին՝ միանալով Նրան փրկության և վեհացման Իր աշխատանքում:

Երեխաների և երիտասարդների ծրագիրը մի գործիք է, որն օգնում է Երեխաների միության բոլոր երեխաներին և երիտասարդներին աճել աշակերտության մեջ և ձեռք բերել հավատքով լի տեսլական առ այն, թե ինչպիսին է երջանկության ճանապարհը: Նրանք կսպասեն և կկարոտեն ուխտի ուղու ճանապարհային կայաններին ու ցուցանակներին, որտեղ նրանք կմկրտվեն և կհաստատվեն Սուրբ Հոգու պարգևով և կլինեն քվորումների և երիտասարդ կանանց դասարաններում, և որտեղ նրանք կզգան ուրիշներին օգնելու ուրախությունը՝ Քրիստոսանման ծառայության գործողությունների հաջորդականությամբ: Նրանք մեծ ու փոքր նպատակներ կդնեն, որոնք հավասարակշռություն կմտցնեն նրանց կյանքում, երբ ավելի նմանվեն Փրկիչին: «Երիտասարդներին զորացնելու համար» համաժողովները, ամսագրերը, *Ընկեր*, և Gospel Living հավելվածը կօգնեն, որ նրանք կենտրոնանան Քրիստոսում ուրախություն գտնելու վրա: Նրանք կցանկանան կրել

սահմանափակ օգտագործման տաճարային երաշխավորագիր և Սուրբ Հոգու ազդեցության միջոցով կզգան Եղիայի ոգին, երբ հետամուտ լինեն տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի օրհնություններին: Նրանք կառաջնորդվեն հայրապետական օրհնություններով: Ժամանակի ընթացքում նրանք կտեսնեն, թե ինչպես են տաճար գնում, որ զորությամբ օժտվեն, ուրախություն գտնեն և ինչ էլ որ պատահի, հավերժ միանան իրենց ընտանիքի անդամների հետ:

Ընդդեմ համաճարակի և աղետի հողմերի՝ Երեխաների և երիտասարդների նոր ծրագրի լիակատար խոստումը կյանքի կոչելու աշխատանքը դեռևս ընթացքի մեջ է և այն հրատապ է: Մեր երիտասարդները չեն կարող սպասել, երբ աշխարհն ինքն իրեն կարգավորվի և մարդիկ ճանաչեն Փրկիչին: Ոմանք որոշումներ են կայացնում նույնիսկ հիմա, որոնք չէին կայացնի, եթե հասկանալի իրենց և Փրկիչի իսկական ինքնությունը:

Եվ այսպես, Աստծո գումարտակների վճռական ուսուցման շտապ կոչն է՝ «բոլորը դեպի տախտակամած»:

Մայրիկներ՝ և հայրիկներ՝, ձեր որդիներին անհրաժեշտ է, որ դուք աջակցեք նրանց այժմ այնքան ջերմեռանդ, որքան նախկինում, երբ նրանք հետաքրքրված էին քիչ կարևոր բաներով, օրինակ՝ կրծքանշաններով և գնդասեղներով: Մայրիկներ՝ և հայրիկներ՝, քահանայության և երիտասարդ կանանց ղեկավարներ՝, եթե ձեր երիտասարդները մաքառում են, Երեխաների ու երիտասարդների ծրագիրը կմտնեցնի նրանց Փրկիչին, և Փրկիչը նրանց խաղաղություն կպարգևի:⁵

Քվորումների և դասարանների նախագահություններ, առաջ եկեք և ձեր արժանի տեղը գրավեք Տիրոջ աշխատանքում:

Եպիսկոպոսներ՝, ձեր բանալիները միավորեք քվորումի նախագահների բանալիների հետ, և

ձեր քվորումներն ու ձեր ծխերը հավերժ կփոխվեն:

Աճող սերնդին վկայում եմ որպես մեկը, ով գիտի, որ դուք Աստծո սիրելի որդիներն ու դուստրերն *էք*, և որ Նա աշխատանք ունի ձեզ համար:

Երբ հասնեք ձեր կոչման վեհությանը, ձեր ամբողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով դուք կսիրեք Աստծուն և կպահեք ձեր ուխտերը և կվստահեք Նրա քահանայությանը, երբ աշխատեք օրհնել ուրիշներին՝ սկսած ձեր սեփական ընտանիքից:

Ես աղոթում եմ, որ դուք կրկնապատկված եռանդով փորձեք այս ժամանակաշրջանում արժանի ծառայել, հավատ գործադրել, ապաշխարել և կատարելագործվել ամեն օր, որպեսզի արժանանաք ստանալ տաճարային օրհնությունները և հարատև ուրախությունը, որը հնարավոր է միայն Հիսուս Քրիստոսի ավետարանի շնորհիվ: Ես աղոթում եմ, որ պատրաստվեք դառնալու այն ջանասեր միսիոները, հավատարիմ ամուսինը կամ կինը, սիրող հայրը կամ մայրը, որը ձեզ խոստացել են, և որը դուք, ի վերջո, կարող եք դառնալ՝ լինելով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը:

Օգնեք աշխարհին պատրաստվել Փրկիչի վերադարձին՝ հրավիրելով բոլորին գալ դեպի Քրիստոսը և ստանալ Նրա Քավության օրհնությունները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դուկաս 22.19:
2. David A. Bednar, “Becoming a Missionary,” *Liahona*, Nov. 2005, 46.
3. «Փորձում եմ լինել Հիսուսի նման, չեստուում եմ ես Նրան: Փորձում եմ գործերով և խոսքերով սիրել, ինչպես Նա» (“I’m Trying to Be like Jesus,” *Children’s Songbook*, 78-79):
4. Մովսես 1.39:
5. Ես անձամբ շնորհակալություն եմ հայտնում այն նվիրված ծնողներին և ղեկավարներին, ովքեր այդքան արիաբար օգնել են երիտասարդներին զարգանալ մեր ամբողջ պատմության ընթացքում: Ես ընդունում եմ, որ Երեխաների և երիտասարդների նոր ծրագիրը պարտական է դրան նախորդող միջոցառումների և առաջադիմության բոլոր ծրագրերին:



Ջայգբուրգ, Ավստրիա



Երեց Գերիթ Վ. Գոնգ
Տասներկու Առաքյալների Թվորումից

Բոլոր ազգերը, ցեղերը և լեզուները

*Մենք մեր ուրույն ձևով կարող ենք դառնալ
Տիրոջ մարգարեությունների և խոստումների
իրականացման մաս՝ աշխարհն օրհնող
ավետարանի մաս:*

Միրելի՛ եղբայրներ և քույրեր, վերջերս ես պաշտոնավարում էի տաճարային մի կնքում՝ հետևելով COVID-19-ի ցուցումներին: Հարսն ու փեսան վերադարձած միսիոներներ էին. նրանց հետ էին իրենց ծնողները և իրենց բոլոր քույրերն ու եղբայրները: Դա հեշտ չէր: Հարսը տասը երեխաներից իններորդն էր: Նրա ինը քույրերն ու եղբայրները նստել էին մեծից փոքր կարգով, իհարկե սոցիալական հեռավորությունը պահպանելով:

Ընտանիքը ձգտել էր լինել լավ հարևաններ, որտեղ էլ ապրել էին: Մակայն, մի համայնք անհյուրընկալ էր, որովհետև հարսի մայրն ասել էր, որ իրենց ընտանիքը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ էր:

Ընտանիքն ամեն ինչ անում էր դպրոցում ընկերանալու, աջակցելու և ընդունվելու համար, բայց ապարդյուն: Ընտանիքն աղոթում էր ու աղոթում, որ մարդկանց սրտերը փափկեին:

Մի գիշեր ընտանիքը զգաց, որ աղոթքներին պատասխան տրվեց, չնայած շատ տարօրինակ ձևով:

Նրանց տանը հրդեհ բռնկվեց, և տունն ամբողջությամբ այրվեց: Բայց մեկ ուրիշ բան տեղի ունեցավ: Կրակը փափկացրեց նրանց հարևանների սրտերը:

Նրանց հարևանները և տեղի դպրոցը հավաքեցին հագուստներ, կոշիկներ, այլ անհրաժեշտ իրեր, որոնց կարիքն ուներ ընտանիքը, քանի որ կորցրել էր ամեն ինչ: Բարությունը բացեց հասկացողության ուղին: Դա չէր այն ուղին, որով ընտանիքը հույս ուներ կամ սպասում էր իրենց աղոթքների պատասխանին:

Մակայն նրանք արտահայտեցին երախտագիտություն նրա համար, ինչ սովորեցին դժվար փորձությունների և սրտառու աղոթքների անսպասելի պատասխանների միջոցով:

Իրոք, նրանց համար, ովքեր ունեն

հավատարիմ սրտեր և տեսնելու աչքեր, Տիրոջ բարեգութ ողորմածությունները ցույց են տրվում կյանքի մարտահրավերների ընթացքում: Հավատարմորեն հաղթահարվող մարտահրավերները և գոհաբերությունները իսկապես բերում են երկնքի օրհնությունները: Այս մահկանացու կյանքում մենք գուցե կորցնենք կամ որոշ ժամանակ սպասենք ինչ որ բաների, բայց վերջում մենք կգտնենք ամենակարևորը:¹ Սա Նրա խոստումն է:²

Մեր 2020թ.-ի երկուհարյուրամյակի հոչակագիրը սկսվում է խորը, համապարփակ խոստումով, որ «Աստված սիրում է աշխարհի յուրաքանչյուր ազգի իր զավակներին»:³ Ամեն ազգից, ցեղից, լեզվից և ժողովրդից մեզանից յուրաքանչյուրին⁴ Աստված խոստանում է ուխտեր և հրավիրում մեզ գալ ու ճաշակել Իր առատ ուրախությունից և բարությունից:

Աստծո սերը բոլոր մարդկանց հանդեպ հաստատվում է սուրբ գրությունների միջոցով:⁵ Այդ սերն ընդգրկում է Աբրահամյան ուխտը, Նրա ցրված զավակների հավաքումը⁶ և Նրա երջանկության ծրագիրը:

Հավատքի ընտանիքում չպետք է լինեն անծանոթներ, օտարերկրացիներ,⁷ հարուստ և աղքատ⁸ և դրսի «ուրիշներ»: Որպես «համաքաղաքացիներ սրբերի հետ»,⁹ մենք հրավիրված ենք փոխելու աշխարհը դեպի ավելի լավը, ներսից դուրս, ամեն անգամ մեկ



անձնավորություն, մեկ ընտանիք, մեկ հարևանություն:

Մա տեղի է ունենում, երբ մենք ապրում ենք և կիսվում ավետարանով: Այս ժամանակաշրջանի վաղ օրերին Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացավ մի նշանավոր մարգարեություն, որ Երկնային Հայրը ցանկանում է, որ ամեն մեկը ամենուրեք հայտնաբերի Աստծո սերը և զգա Նրա զորությունը՝ անելու և փոխվելու համար:

Այդ մարգարեությունը նա ստացավ այստեղ՝ Սմիթների փայտաշեն տանը՝ Պալմիրայում (Նյու Յորք):¹⁰

Ավարտին հասնելով 1998թ.-ին, Սմիթների տունը վերակառուցվեց իր սկզբնական հիմքի վրա: Երկրորդ հարկի ննջարանը զբաղեցնում է նույն 18 x 30 x 10 ոտնաչափ (5.5 x 9 x 3m) ֆիզիկական տարածքը, որտեղ Մորոնին, որպես փառավորված սուրհանդակ, Աստծո կողմից եկավ պատանի Ջոզեֆի մոտ 1823թ.-ի սեպտեմբերի 21-ին:¹¹

Դուք հիշում եք, թե ինչ պատմեց Մարգարե Ջոզեֆը.

«Մորոնին» ասաց . . . Աստված աշխատանք ունի ինձ համար՝ կատարելու. և որ իմ անունը՝ որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ: . . .

[Մորոնին] ասաց, որ մի գիրք կար պահված, . . . որը պարունակում էր հավիտենական ավետարանի լրիվությունը:¹²

Այստեղ մենք կանգ ենք առնում: Մենք երկրպագում ենք Աստծուն՝ Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, ոչ թե Մարգարե Ջոզեֆին, ոչ էլ որևէ մահկանացու մարդու կամ կնոջ:

Սակայն ուշադրություն դարձրեք, թե ինչպես են իրագործվում Աստծո՝ Իր ծառաներին տված մարգարեությունները:¹³ Մի քանիսը իրագործվում են ավելի շուտ, մի քանիսն ավելի ուշ, բայց բոլորն իրագործվում են:¹⁴ Երբ մենք ականջ դնենք Տիրոջ մարգարեության ոգուն, մեր ուրույն ձևով կարող ենք դառնալ այդ

մարգարեությունների և խոստումների իրականացման մի մասը՝ աշխարհն օրհնող ավետարանի մաս:

1823 թվականին Ջոզեֆն անհայտ 17-ամյա մի պատանի էր և ապրում էր նոր անկախացած երկրի մի աննշան գյուղում: Եթե դա ճիշտ չլիներ, ինչպե՞ս նա կպատկերացներ, որ Աստծո ձեռքում գործիք էր լինելու և սուրբ գիրք էր թարգմանելու Աստծո պարզևով և զորությամբ, որը հայտնի էր դառնալու ամենուրեք:

Բայց, քանի որ այն ճշմարիտ է, ես և դուք կարող ենք վկայել, որ մարգարեությունը իրագործվում է, նույնիսկ, երբ մենք հրավիրվում ենք օգնել դրա իրականացմանը:

Եղբայրներ՝ և քույրեր՝ ամբողջ աշխարհում, մեզանից յուրաքանչյուրը, ով մասնակցում է 2020 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովին, գտնվում է ազգերի, ցեղերի և լեզուների մեջ, որոնց մասին խոսվում է:

Այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներն ապրում են 196 ազգերի մեջ և երկրներում, նրանցից 90-ի՝ Եկեղեցու 3446 ցեղերում:¹⁵ Մենք ներկայացնում ենք՝ ինչպես աշխարհագրական լայնություններ, այնպես էլ ուժի կենտրոններ:

1823 թվականին ով կարող էր պատկերացնել, որ 2020 թվականին կլինեն երեք երկրներ՝ յուրաքանչյուրում ավելի քան մեկ միլիոն այս Եկեղեցու անդամներով՝ Միացյալ Նահանգները, Մեքսիկան և Բրազիլիան:

Կամ 23 երկրներ, յուրաքանչյուրում ավելի քան 100,000 Եկեղեցու անդամներով՝ 3-ը Հյուսիսային Ամերիկայում, 14-ը Կենտրոնական և Հարավային Ամերիկայում, 1-ը Եվրոպայում, 4-ը Ասիայում և 1-ը Աֆրիկայում:¹⁶

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Մորմոնի Գիրքը կոչում է «հրաշագործ հրաշք»:¹⁷ Նրա վկայությունները վկայում են. «Թող հայտնի լինի բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին, և ժողովուրդներին»:¹⁸ Այսօր գերագույն համաժողովը մատչելի

է 100 լեզուներով: Նախագահ Նելսոնը վկայել է Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնած ավետարանի մասին 138 ազգերի մեջ և երկրներում:

Մորմոնի Գրքի առաջին հրատարակությունը սկսվել է 5000 տպագիր օրինակով 1830 թվականին, Մորմոնի Գիրքը ամբողջական տեսքով կամ մասերով հրատարակվել է 112 լեզուներով՝ 192 միլիոն օրինակով: Մորմոնի Գրքի թարգմանությունները մատչելի են նաև թվայնացված տարբերակով: Ներկայումս Մորմոնի Գրքի թարգմանությունները ներառում են 23 համաշխարհային լեզուների մեծ մասը, որով խոսում են 50 միլիոնից ավելի մարդ կամ տեղական լեզուներով՝ ընդամենը մոտ 4,1 միլիարդ մարդ:¹⁹

Մեզանից յուրաքանչյուրը հրավիրված է մասնակցելու փոքր և հասարակ բաների, որոնց միջոցով իրականացվում են մեծ բաները:

Օրինակ, ցցի մի համաժողովում Մոնրոյում (Յուտա), որի բնակչությունը 2200 մարդ է, ես հարցրի, թե քանիսն են ծառայել միսիայում: Գրեթե բոլորը ձեռք բարձրացրին: Վերջին տարիներին այդ նույն ցցից 564 միսիոներ է ծառայել Միացյալ Նահանգների բոլոր 50 նահանգներում և 53 երկրներում, ամեն մայրցամաքում, բացի Անտարկտիկայից:

Անտարկտիկայի մասին խոսելիս նույնիսկ Արգենտինայի հարավային ծայրում գտնվող Ուշուայում, ես տեսա, թե ինչպես են մարգարեությունները կատարվում, երբ մեր միսիոներները կիսվում էին Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով մի վայրում, որը կոչվում էր «երկրազնդի վերջը»:²⁰

*Մրբեղ*²¹ [գրքի] մեր քառահատորի շապիկներով ձևավորված որմնանկարը պատկերում է ավետարանական կյանքի պտուղների մի համաշխարհային գոբելեն, որոնք զալիս են հավատարիմ Սրբերին ամենուրեք: Մեր Եկեղեցու պատմությունը խարսխված է



Նայրոբի, Զենիա

յուրաքանչյուր անդամի ապրող վկայության և ավետարանի ճամփորդության վրա, ներառյալ՝ Մարի Ուիթմերը, այն հավատարիմ քույրը, ում Մորոնիին ցույց տվեց Մորոնիի Գրքի թիթեղները:²²

Ինչ վերաբերում է 2021 թվականի հունվարին, մեր Եկեղեցու երեք համաշխարհային ամսագրերը՝ *Ընկեր*, *Երիտասարդներին զոչասցնելու հասնար*, և *Լիստոնա*, հրավիրում են բոլորին պատկանել և կիսվել փորձառություններով և վկայությամբ հավատքի մեր համաշխարհային համայնքում:²³

Քույրե՛ր և եղբայրնե՛ր, երբ մենք մեծացնում ենք մեր հավատքը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ, ստանում օրհնությունները, որոնք գալիս են վերականգնված ավետարանի ճշմարտություններով ապրելուց, սրբազան ուխտերից և ուսումնասիրելուց, խորհելուց և շարունակվող Վերականգնման մասին կիսվելուց, մենք մասնակցում ենք մարգարեության իրականացմանը:

Մենք փոխում ենք ինքներս մեզ և աշխարհը ավետարանի ձևով, որն ամենուրեք կյանքեր է օրհնում:

Մի աֆրիկացի քույր ասում է. «Ամուսնուս քահանայության ծառայությունը դարձնում է նրան ավելի համբերատար և բարի: Իսկ ես դառնում եմ ավելի լավ կին և մայր»:

Այժմ մի հարզված միջազգային բիզնեսի խորհրդատու Կենտրոնական Ամերիկայում ասում է, որ մինչև իր կողմից Աստծո վերականգնված ավետարանի հայտնաբերումը, նա աննպատակ ապրում էր փողոցում: Այժմ նա և իր ընտանիքը գտել են ինքնություն, նպատակ և ուժ:

Մի փոքր տղա Հարավային Ամերիկայում ճտեր է աճեցնում և վաճառում է դրանց ձվերը՝ օգնելով պատուհաններ գնել տան համար, որն իր ընտանիքն է կառուցում: Նա առաջինը իր տասանորդն է վճարում: Նա բառացիորեն երկնքի պատուհանները բաց կտեսնի:

Ֆոր Քորներսի մի բնիկ ամերիկացիների ընտանիք աճեցնում է մի գեղեցիկ վարդի թուփ անապատում, որ ծաղկելու է որպես ավետարանի հավատքի և ինքնապահովման խորհրդանիշ:

Քաղաքացիական դառը պատերազմից փրկված՝ հարավարևելյան Ասայից մի եղբայր հուսահատված էր, որ կյանքն իմաստ չունի: Նա հույս գտավ մի երագում, որտեղ մի նախկին համադասարանցի բռնել էր մի հաղորդության սկյուտեղ և վկայում էր փրկող արարողությունների և Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

Երկնային Հայրը հրավիրում է մեզ ամենուրեք զգալ Իր սերը, սովորել և աճել կրթության, պատվաբեր աշխատանքի,

ինքնապահովող ծառայության և բարության ու երջանկության օրինակներով, որ մենք գտնում ենք Նրա վերականգնված Եկեղեցում:

Երբ մենք սկսում ենք վստահել Աստծուն, երբեմն աղերսելով մեր ամենախավար, ամենամիայնակ և ամենաանորոշ պահերին, մենք իմանում ենք, որ Նա մեզ ավելի լավ գիտի և մեզ ավելի շատ է սիրում, քան մենք ենք ճանաչում և սիրում մեզ:

Այդ պատճառով մենք Աստծո օգնության կարիքն ունենք՝ ստեղծելու արդարություն, հավասարություն, ազնվություն և խաղաղություն մեր տներում և համայնքներում: Մեր ամենաճշմարիտ, ամենախորը, ամենաանկեղծ պատմվածքը, վայրը և պատկանելությունը գալիս է, երբ մենք զգում ենք Աստծո փրկագնող սերը, որոնում շնորհ և հրաշքներ Նրա Որդու Քավության միջոցով, և հաստատում հարատև փոխհարաբերություններ սրբազան ուխտերի միջոցով:

Կրոնական առաքինություն և իմաստություն է անհրաժեշտ այսօրվա խառնաշփոթ, աղմկոտ, ապականված աշխարհում: Ուրիշ ի՞նչ կերպ կարող ենք թարմացնել, ոգեշնչել և կերտել մարդկային հոգին:²⁴

Ծառատունկը Հաիթիում միայն մեկն է այն հարյուրավոր օրինակներից, երբ մարդիկ միաբանվում են՝ բարիք գործելու համար: Տեղական համայնքը, ներառյալ մեր Եկեղեցու 1,800 անդամներ, ովքեր նվիրաբերեցին ծառեր, հավաքվեցին տնկելու մոտ 25,000 ծառ:²⁵ Անտառապատման այս բազմամյա նախագծի շրջանակներում արդեն տնկվել է ավելի քան 121,000 ծառ: Նախատեսվում է տնկել տասնյակ հազարավոր նոր ծառեր:

Այս միացյալ ջանքերը ապահովում են սովեր, պահպանում հողը, նվազեցնում ապագա ջրհեղեղները: Այն գեղեցկացնում է շրջակայքը, կառուցում համայնք, բավարարում ճաշակը և սնուցում հոգին: Եթե հարցնում եք հաիթցիներին, թե ով է հավաքելու բերքը

այդ ծառերից, նրանք ասում են. «Ով սոված է»:

Սշխարհի բնակչության ութ-սուն տոկոսը պատկանում է որևէ կրոնի:²⁶ Կրոնական համայնքները պատրաստակամորեն արձագանքում են բնական աղետներից առաջացած ուտելիքի, ապաստանի, կրթության, գրագիտության և մասնագիտական ուսուցման անմիջական կարիքներին: Ամբողջ աշխարհում մեր անդամները, ընկերները, Եկեղեցու օգնության համայնքները աջակցում են փախստականներին և ապահովում ջրով, սանիտարական պայմաններով, հաշմանդամների շարժունակությամբ, տեսողության խնամքով՝ մեկ անձ, մեկ գյուղ, մեկ ծառ ամեն անգամ:²⁷ Ամենուրեք մենք ձգտում ենք լինել լավ ծնողներ և լավ քաղաքացիներ, ներդրում կատարել մեր շրջակայքում և հասարակության մեջ՝ ներառյալ Վերջին Օրերի Սրբերի Գթության միջոցով:²⁸

Աստված տվել է մեզ ազատ կամք և բարոյական պատասխանատվություն: Տերը հայտարարում է. «Ես՝ Տեր Աստվածս, ազատ եմ դարձրել ձեզ, հետևաբար, [դուք] իսկապես ազատ եք»:²⁹ Հռչակելով «ազատություն գերյալներին»,³⁰ Տերը խոստանում է, որ Իր Քավության և ավետարանի ուղին կարող են ջարդել նյութական և հոգևոր կապանքները:³¹ Բարեբախտաբար, այս փրկագնող ազատությունը հասնում է նրանց, ովքեր հեռացել են մահկանացու կյանքից:

Մի քանի տարի առաջ մի քահանա Կենտրոնական Ամերիկայում ասաց ինձ, որ ուսումնասիրում էր Վերջին Օրերի Սրբերի «մահացած մարդկանց համար մկրտությունը»: «Դա իսկապես արդար է թվում, - ասաց քահանան, - որ Աստված հնարավորություն կընձեռի ամեն մարդու ստանալ մկրտություն, անկախ նրանից, երբ կամ որտեղ են ապրել, բացի փոքր երեխաներից, ովքեր «կենդանի են Քրիստոսում»:³² Պողոս առաքյալը, - նշեց քահանան, - խոսում է մահացածների մասին, ովքեր սպասում

են մկրտության և հարության»:³³ Փոխարինաբար կատարվող տաճարային արարողությունները խոստանում են «բոլոր ազգերին, ցեղերին և լեզուներին», որ ոչ ոք կարիք չունի «ստրուկ մնալ մահվանը, դժոխքին կամ գերեզմանին»:³⁴

Երբ մենք հայտնաբերում ենք Աստծուն, երբեմն աղոթքների անսպասելի պատասխանները փողոցներից տանում են մեզ դեպի համայնք, հալածում խավարը մեր հոգիներից և առաջնորդում մեզ՝ գտնելու հոգևոր ապաստան և պատկանելություն Նրա ուխտերի առաքինությանը և մշտագո սիրուն:

Մեծ բաները հաճախ սկսվում են փոքրից, բայց Աստծո հրաշքները բացահայտվում են ամեն օր: Որքան երախտապարտ ենք Սուրբ Հոգու գերագույն պարզևի համար, Հիսուս Քրիստոսի Քավության համար և Նրա հայտնի դարձած վարդապետության և ուխտերի համար, որոնք գտնվում են Նրա վերականգնված Եկեղեցում, որը կոչվում է Նրա անունով:

Թող որ մենք ուրախությամբ ընդունենք Աստծո հրավերը, որպեսզի ստանանք և օգնենք իրագործելու Նրա խոստացած և մարգարեացած օրհնությունները բոլոր ազգերում, ցեղերում և լեզուներում, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի սրբազան և սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. «Ձեր բոլոր կորուստները կվերականգնվեն ձեզ հարության ժամանակ, եթե շարունակեք հավատարիմ մնալ» (Եկեղեցու *Նախագահների ուսումնքները*, Չոզեֆ Սմիթ [2007], 51):
2. Տես Մոսիա 2.41:
3. «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության վերականգնում. Երկուստորամյակի հռչակագիր աշխարհին», ChurchofJesusChrist.org; տես նաև, օրինակի համար, Ալմա 26.37:
4. Տես Հայտնություն 14.6, 1 Նեփի 19.17, 22.28, 2 Նեփի 30.8, Մոսիա 3.20, 15.28, Ալմա 37.4-6; 3 Նեփի 28.29, Վարդապետություն և Ուխտեր 42.58; 133.37:
5. Տես Հովհաննես 3.16-17, 15.12, Հռովմայեցիս 8.35, 38-39:
6. Տես 1 Նեփի 22.3, 9, Վարդապետություն և Ուխտեր 45.24-25, 69, 71, 64.42:
7. Տես Եփեսացիս 2.19:

8. Տես Վարդապետություն և Ուխտեր 104.14-17:
9. Եփեսացիս 2.19:
10. Սմիթների տան հետևի բակից մի քանի հարյուր յարդ հեռավորության վրա կա ծառերի մի պուրակ, որը դարձավ մեր Սրբազան պուրակը «հազար ութ հարյուր քսան թվականի վաղ գարնան մի գեղեցիկ ու պարզ օրվա առավոտ» (Չոզեֆ Սմիթ—Պատմություն 1.14):
11. Հայտնի պատմական իրադարձության որոշակի, ֆիզիկական վայրում գտնվելը, կարող է հզոր ձևով կապել ժամանակն ու տեղը: Մինչդեռ հոգևոր է մեր վկայությունը սրբազան իրադարձությունների մասին, որոնք շրջապատում էին Մորոնիի հայտնությանը երիտասարդ Մարգարե Չոզեֆին:
12. Չոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33-34:
13. Տես Ամոս 3.7, Վարդապետություն և Ուխտեր 1.38:
14. Տես Ալմա 37.6, Վարդապետություն և Ուխտեր 64.33:
15. Եկեղեցու վիճակագրության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ, «Ազգան ու տարածքները» ներառում են այնպիսի կառույցներ, ինչպիսիք են Գուամը, Պուերտո Ռիկոն և Ամերիկյան Մամոնան
16. Միացյալ Նահանգներ, Մեքսիկա, Բրազիլիա, Ֆիլիպիններ, Պերու, Չիլի, Արգենտինա, Գվատեմալա, Էկվադոր, Բոլիվիա, Կոլումբիա, Կանադա, Միացյալ Թագավորություն, Հոնդուրաս, Լիզբերիա, Վենեսուելա, Ավստրալիա, Դոմինիկյան Հանրապետություն, Ճապոնիա, Էլ Սալվադոր, Նոր Զելանդիա, Ուրուգվայ, Եկվադոր, Ավստրալիան և նոր Զելանդիան ներառված են Ասիայի չորս երկրների մեջ ավելի քան 100,000 անդամներով: Պարագվայն ունի 96,000 Եկեղեցու անդամներ և կարող է լինել հաջորդը՝ միանալու 100,000 անդամներ ունեցող խմբին:
17. Ռասսել Մ. Նելսոն. «Մորմոնի Գիրքը. Հրաշագործ հրաշք», (address given at the seminar for new mission presidents, June 23, 2016).
18. «Երեք վկաների վկայությունը» և «Ութ վկաների վկայությունը», Մորմոնի Գիրքը:
19. Լրացուցիչ թարգմանությունները շարունակում են խոստումը, որ ամեն մարդ և կին կլսեն «ավետարանի լրիվությունն [իր] լեզվով . . . իր մայրենի լեզվով» (Վարդապետություն և Ուխտեր 90.11):
20. Տես Վարդապետություն և Ուխտեր 122.1:
21. *Միջեր* քառաստորի վերնագրերը գալիս են Մարգարե Վեթթորթի նամակում Չոզեֆ Սմիթի ոգեշնչված վկայության հռչակումից՝ *Ճշմարտության դրոշմը, Ոչ մի անսուրբ ձեռք, Հասարակական, Ազնվորեն, և Անկախ, և Կենտրոնական սկսանքում*:
22. Տես *Միջեր*. *Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում*, հ. 1, *Ճշմարտության չափանիշը, 1815-1846* (2018), 70-71:
23. Տես Առաջին Նախագահության նամակը, 14 օգոստ., 2020:
24. Տես Գերիթ Վ. Գոնգ, «Յոթ ուղիներ

- Կրոնական ներդրումները և արժեքները նպաստում են գործնական, սկզբունքային քաղաքականության մոտեցումներին» (address given at the G20 Interfaith Forum, June 8, 2019), newsroom. ChurchofJesusChrist.org:
25. Տես Ջեյտոն Սվենսեն, «ԼՕՍ Եկեղեցին տոնում է Հայիթիում հազարավոր ծառեր տնկելու 30 տարին», *Deseret News*, May 1, 2013, deseretnews.com.
 26. See Pew Research Center, “The Global Religious Landscape,” Dec. 18, 2012, pewforum.org. Այս «ավելի քան 230 երկրների և տարածքների ժողովրդագրական ուսումնասիրության. . . հաշվարկներով, ամբողջ աշխարհում կա 5,8 միլիարդ կրոնական փոխկապակցված մեծահասակ և երեխա, ինչը կազմում է 2010 թ.-ի աշխարհի բնակչության 84 տոկոսը՝ 6,9 միլիարդ մարդկանցից»:
 27. Կրոնական առաքինություններն ու արժեքները խարսխում և հարստացնում են քաղաքացիական հասարակությունը. ոգեշնչում համայնքին, քաղաքացիական ներգրավվածությանը, սոցիալական համախմբվածությանը, ծառայությանը և կամավորությանը, և յթախում արդարությունը, հաշտությունն ու ներողամտությունը՝ օգնելով մեզ իմանալ, թե երբ և ինչպես շարունակել պահել, և ինչը բաց թողնել, իմանալ, թե երբ, և ինչը հիշել, ինչը մոռանալ:
 28. Բացի իրենց Վերջին Օրերի Սրբերի բարեգործական կազմակերպությանը նվիրատվություններ կատարելուց (տես latterdaysaintcharities.org), որը ծառայում է որպես Եկեղեցու մարդասիրական ձեռք, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները միավորվում են իրենց հարևանների և համայնքների հետ՝ հատկացնելով ժամանակ և միջոցներ նախագծերի ծառայության միջոցով justserve.org և ChurchofJesusChrist.org/topics/humanitarian-service/helping-hands) և ծովի նվիրատվության զոհաբերությունների միջոցով (տես “Fasting and Fast Offerings,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org) Այս ջանքերից յուրաքանչյուրը պահանջում է նշանակալի առատաձեռնություն Եկեղեցու անդամներից և ընկերներից՝ օրհնելու հազարավորների ողջ աշխարհում:
 29. Վարդապետություն և Ուխտեր 98:8:
 30. Եսայիա 61.1, տես նաև Հովհաննես 8:36, Գաղատացիս 5,1, Վարդապետություն և Ուխտեր 88:86:
 31. Ազատության այս հույսը ներառում է նրանց, ովքեր ձգտում են հաղթահարել տկարացնող սովորությունները կամ կախվածությունները, ինքնահաղթահարող վարքագծերը, սերունդների մեղքը կամ ցանկացած վիշտ:
 32. Մորոնի 8.12, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 137:10:
 33. Տես Ս Կորնթացիս 15.29:
 34. “While of These Emblems We Partake,” *Hymns*, no. 173, verse 3.



Եպիսկոպոս Վ. Քրիստոֆեր Վադել
Նախագահող Եպիսկոպոսության առաջին խորհրդական

Հաց կար

Երբ մենք ձգտում ենք դառնալ նյութապես նախապատրաստված, մենք կարողանում ենք աճող վստահությամբ դիմակայել կյանքի փորձություններին:

Նախքան ներկա համավարակի ճամփորդական սահմանափակումները, ես տուն էի վերադառնում միջազգային մի հանձնարարությունից, և ժամանակացույցի խնդիրների հետ կապված՝ ուշացում եղավ կիրակի օրը: Ես ժամանակ ունեի թռիչքների միջև մասնակցելու հաղորդության ժողովին, որտեղ ես կարողացա նաև կիսվել համառոտ ուղերձով: Ժողովից հետո մի խանդավառ սարկավազ մոտեցավ ինձ և հարցրեց՝ արդյոք ես

ճանաչում էի Նախագահ Նելսոնին և արդյոք երբևէ հնարավորություն ունեցել էի սեղմելու նրա ձեռքը: Ես պատասխանեցի, որ ես իհարկե գիտեի նրան, որ ես սեղմել էի նրա ձեռքը և, որպես Նախագահող Եպիսկոպոսության անդամ, ես հնարավորություն էի ունեցել հանդիպելու Նախագահ Նելսոնի և նրա խորհրդականների հետ մի քանի անգամ ամեն շաբաթ: Այդ ժամանակ երիտասարդ սարկավազը, ով նստած էր աթոռին, ձեռքերը վեր բարձրացրեց



Պրոկ, Յուսա, ՍՄՆ

և գոչեց. «Մա իմ կյանքի ամենահիանալի օրն է»: Եղբայրներ՝ ր և քույրեր՝ ր, ես գուցե ձեռքերս չբարձրացնեմ և գոչեմ, բայց ես հավերժ երախտապարտ եմ ապրող մարգարեի համար և այն ուղղորդման համար, որ մենք ստանում ենք մարգարեներից, տեսանողներից, հատկապես մարտահրավերների այս ժամանակաշրջանում:

Ժամանակների սկզբից ի վեր Տերն ապահովել է ուղղորդում՝ Իր ժողովրդին հոգևորապես և նյութապես օգնելով աղետների և փորձությունների դեմ, որոնք Նա գիտի, որ գալու են՝ որպես այս մահկանացու փորձառության մաս: Այս աղետները կարող են լինել անձնական կամ ընդհանուր բնույթի, բայց Տիրոջ առաջնորդությունը կապահովի պաշտպանություն և աջակցություն այն դեպքում, երբ մենք ականջ դնենք և գործենք Նրա խորհրդի համաձայն: Ծննդոց գրքի պատմությունում մի հիանալի օրինակ է տրված, որտեղ մենք իմանում ենք Եգիպտոսից Հովսեփի մասին և փարավոնի երագի նրա ոգեշնչված մեկնաբանության մասին:

«Եվ Հովսեփին ասեց Փարաօնին, . . . Աստուած իր անելիքը յայտնեց Փարաօնին: . . .

«Ահա եօթը տարի են գալու, որ բոլոր Եգիպտոսի երկրումը մեծ առատութիւն կլինի:

Եւ նորանց ետեւից եօթը տարի սով կգայ, եւ Եգիպտոսի երկրի մէջ բոլոր առատութիւնը կմոռացվի»:¹

Փարավոնը լսեց Հովսեփին, արձագանքեց Աստծո կողմից երագում իրեն ցույց տվածին և անմիջապես սկսեց պատրաստվել նրան, ինչը պիտի գար: Սուրբ գրություններն այնուհետև ասում են.

«Եվ առատութեան եօթը տարիներումը եկիրը խիստ շատ արդիւնք տուաւ:

Եւ եօթը տարիներ բոլոր պաշարը որ Եգիպտոսի երկրումը եղաւ, ժողովեց: . . .

Եվ Հովսեփը ծովի ավազի չափ խիստ շատ ցորեն դիգեց՝ . . . այնչափ որ թուելը ձգեցին, որովհետեւ անթիւ էր:²

Երբ առատության յոթ տարին անցավ, մեզ ասվում է, որ «Հովսեփի ասածի պես սկսեցին գալ սովի եօթը տարին. Եւ բոլոր երկիրներումը սով եղաւ, բայց Եգիպտոսի երկրի մէջ հաց կար»:³

Այսօր մենք օրհնված ենք առաջնորդող մարգարեներով, ովքեր հասկանում են աղետների դեմ մեզ նախապատրաստելու անհրաժեշտությունը, «որոնք պիտի գան»,⁴ և ովքեր ճանաչում են նաև սահմանափակումներն ու կրճատումները, որոնց մենք գուցե հանդիպենք, երբ ձգտում ենք հետևել նրանց խորհրդին:

Կա հստակ ըմբռնում, որ COVID-19-ի ազդեցությունները, ինչպես նաև ամայացնող բնական աղետները խտրականություն չեն դնում մարդկանց միջև և անցնում են էթնիկ, սոցիալական և կրոնական սահմանները յուրաքանչյուր մայրցամաքում: Փակվել են աշխատատեղեր և եկամուտները կրճատվել են, քանի որ աշխատելու հնարավորությունը տուժել է արտադրության փակման հետևանքով, իսկ աշխատունակության վրա ազդել են առողջական և իրավական մարտահրավերները:

Բոլոր նրանց, ովքեր տուժել են, մենք հայտնում ենք մեր ըմբռնումը և մտահոգությունը ձեր իրավիճակի համար, ինչպես նաև ամուր համոզմունք, որ առջևում ավելի լավ օրեր են: Դուք օրհնված եք եպիսկոպոսներով և ճյուղի նախագահներով, ովքեր որոնում են իրենց համայնքի այն անդամներին, ովքեր նյութական կարիքներ ունեն, և նրանք հասանելիություն ունեն գործիքակազմին և միջոցներին, որոնք կարող են օգնել ձեզ վերահաստատել ձեր կյանքը և դնել ձեզ ինքնապահովման ուղու վրա, երբ դուք կիրառեք նախապատրաստության սկզբունքները:

Այսօրվա համավարակի միջավայրում, որն ավերել է ամբողջական տնտեսություններ,



Սանտո Դոմինգո, Դոմինիկյան Հանրապետություն

ինչպես նաև անձնական կյանքեր, անհետևողական կյանքեր կարեկից Փրկիչին ունենալով, անտեսել իրականությունը, որ շատերն են մաքառում, և խնդրել նրանց սկսել ստեղծել ուսելիքի և փողի պահուստ ապագայի համար: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ մենք պետք է ընդմիջտ անտեսենք նախապատրաստվելու սկզբունքները, միայն այդ սկզբունքները պետք է կիրառվեն «իմաստությամբ և կարգով»⁵ որպեսզի հետագայում կարողանանք ասել, ինչպես ասաց Հովսեփը Եգիպտոսից, «Հաց կար»:⁶

Տերը չի ակնկալում մեզանից անել ավելին, քան մենք կարող ենք անել, բայց Նա ակնկալում է մեզանից անել այն, ինչ կարող ենք անել, երբ մենք ի վիճակի ենք անել: Ինչպես Նախագահ Նելսոնը հիշեցրեց մեզ մեր անցած գերագույն համաժողովին. «Տերը սիրում է ջանքը»:⁷

Եկեղեցու ղեկավարները հաճախ են խրախուսել Վերջին Օրերի Սրբերին «պատրաստվել կյանքի ճախորդություններին՝ ունենալով սննդի և ջրի հիմնական պաշար, ինչպես նաև խնայված գումար»:⁸ Միևնույն ժամանակ մեզ խրախուսվում է «իմաստուն լինել»՝ «զգնալ ծայրահեղության»⁹ մեր ջանքերում՝ հաստատելով տնային պաշարի պահեստ և ֆինանսական խնայողություն: 2017 թ.-ին հրատարակված և ներկայումս Եկեղեցու կայքում 36 լեզուներով հրատարակված «Ինքնապահովման

անձնակալան ֆինանսներ» վերնագրով աղբյուրը սկսվում է Առաջին Նախագահության ուղերձով, որում ասվում է.

Տերը հայտարարել է. «Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին» [Վարդապետություն Ուխտեր 104.15]: Այս հայտնությունը մի խոստում է, որ Տերը կապահովի նյութական օրհնությունները և ուղի կբացի ինքնապահովման համար: . . .

Ընդունելով այս սկզբունքները և ապրելով դրանցով՝ հնարավորություն կունենաք ստանալ Տիրոջ խոստացած նյութական օրհնությունները:

Մենք հրավիրում ենք ձեզ ջանասիրաբար ուսումնասիրել և կիրառել այս սկզբունքները, ապա ուսուցանել դրանք ձեր ընտանիքի անդամներին: Երբ դա անեք, ձեր կյանքը կօրհնվի . . . [որովհետև] դուք մեր Երկնային Հոր զավակն եք: Նա սիրում է ձեզ և երբեք մենակ չի թողնի: Նա ճանաչում է ձեզ և պատրաստ է ձեզ տալու ինքնապահովման հոգևոր և նյութական օրհնությունները:¹⁰

Այս սկզբնաղբյուրը ներառում է գլուխներ, որոնք նվիրված են բյուջե ստեղծելուն և դրանով ապրելուն՝ պաշտպանելով ձեր ընտանիքը դժվարություններից, կառավարելով ֆինանսական ճգնաժամը և ներդնելով ապագայի համար, և ավելի շատ նյութեր հասանելի են ամենքի համար Եկեղեցու կայքէջում կամ ձեր տեղական ղեկավարների միջոցով:

Երբ մտածում ենք նախապատրաստության սկզբունքի մասին, մենք կարող ենք ոգեշնչման համար հետ նայել դեպի Հովսեփին Եգիպտոսից: Իմանալով, թե ինչ կպատահի, բավարար չէր լինի առատության տարիների ընթացքում առանց զոհաբերությունների անցնել «նիհար» տարիների միջով: Փոխանակ սպառելու այն ամենը, ինչ Փարավոնի ենթակալները կարողացել էին արտադրել, սահմանափակումներ դրվեցին և հետևեցին՝ ապահովելով բավականաչափ պաշար՝ ինչպես իրենց

անմիջական, այնպես էլ ապագա կարիքների համար: Բավական չէ իմանալ, որ դժվարին ժամանակներ են գալու: Երանք ստիպված էին գործել և նրանց ջանքի շնորհիվ «հաց կար»:¹¹

Մա հանգեցնում մի կարևոր հարցի. «Ուրեմն, ի՞նչ»: Սկսելու համար նախ պետք է հասկանանք, որ բոլոր բաները հոգևոր են Տիրոջ համար, և «ոչ մի անգամ» Նա չի տվել մեզ «օրենք, որը լինի ֆիզիկական»:¹² Այդ ժամանակ ամեն ինչ մատնացույց է անում Հիսուս Քրիստոսին՝ որպես հիմք, որի վրա մենք պետք է կառուցենք նույնիսկ մեր նյութական պատրաստվածությունը:

Լինել նյութապես պատրաստված և ինքնապահով, նշանակում է՝ «հավատալ, որ Հիսուս Քրիստոսի շնորհով կարող ենք ձեռք բերել հոգևոր և ֆիզիկական կյանքի բոլոր պահանջները, որոնք անհրաժեշտ են մեզ համար և մեր ընտանիքների համար»:¹³

Նյութական պատրաստվածության հոգևոր հիմքի լրացուցիչ տեսակետները ներառում են՝ իմաստությամբ և «կարգով գործելը»,¹⁴ որը նկատի ունի ուտելիքի պահուստի և ժամանակի ընթացքում խնայողությունների, ինչպես նաև «փոքր և հասարակ» միջոցների օգտագործումը,¹⁵ որը հավատքի դրսևորում է, որ Տերը կմեծացնի մեր փոքր, բայց հետևողական ջանքերը:

Ունենալով հոգևոր հիմքը իր տեղում, մենք կարող ենք հաջողությամբ կիրառել նյութական նախապատրաստության երկու կարևոր էլեմենտներ՝ ֆինանսների կառավարումը և տնային պահեստը:

Ձեր ֆինանսները պատշաճ կառավարելու հիմնական սկզբունքները ներառում են՝ տասանորդի և նվիրատվությունների վճարումը, պարտքի վերացումը և, հնարավորի սահմաններում, խուսափումը պարտքից՝ պատրաստվելով և ապրելով բյուջեի սահմաններում և խնայելով ապագայի համար:

Ընտանեկան պահեստի սկզբունքները ներառում են՝ սննդի պահեստավորում, ջրի պահեստավորում և այլ կենսական անհրաժեշտ ապրանքների պահեստավորում՝ ըստ անձնական և ընտանեկան պահանջների, այդ ամենը այն պատճառով, որ «լավագույն պահեստը»¹⁶ տունն է, որը դառնում է «ամենամատչելի պահուստը կարիքի դեպքում»:¹⁷

Երբ մենք ընդունում ենք հոգևոր սկզբունքներ և ոգեշնչում փնտրում Տիրոջից, մենք կառաջնորդվենք, որ գիտենանք Տիրոջ կամքը մեզ համար՝ ինչպես անհատապես, այնպես էլ որպես ընտանիքներ, և ինչպես լավագույնս կիրառենք նյութական պատրաստվածության կարևոր սկզբունքները: Ամենից կարևոր քայլը սկսելն է:



Չիրա, Ճապոնիա

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է այս սկզբունքը. «Գործողություն ձեռնարկելը հավատքի գործադրում է: . . . ճշմարիտ հավատքը կենտրոնացած է Տեր Հիսուս Քրիստոսի վրա ու միշտ առաջնորդում է դեպի գործողություն»¹⁸:

Եղբայրներ՝ և քույրեր՝, հավերժ փոփոխվող աշխարհում մենք պետք է պատրաստվենք անորոշություններին: Նույնիսկ առջևում ավելի լավ օրերի հույսով, գիտենք, որ մահկանացու կյանքի նյութական գազաթները և հովիտները կշարունակվեն: Երբ մենք ձգտում ենք պատրաստվել նյութապես, մենք կարող ենք դիմակայել կյանքի փորձություններին աճող վստահությամբ, խաղաղությամբ՝ մեր սրտերում և Եզրիպտոսից Հովսեփի նման, մենք կկարողանանք ասել, նույնիսկ լարված հանգամանքներում. «Հաց կար»:¹⁹ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Մեթյու Ա. Նոլլանդ
Յոթանասուկից

Որդու արտասովոր պարզևը

Հիսուս Քրիստոսի միջոցով մենք կարող ենք խուսափել մեր բարոյական չարչարանքներից, որոնց արժանացել ենք ձայնողումների պատճառով և հաղթահարել մեր մահկանացու դժբախտությունների չվաստակած չարչարանքները:

ՆՂՈՒՆՆԵՐ

1. Տես Օննդոց 41.25–30:
2. Օննդոց 41.47–49:
3. Օննդոց 41.54:
4. Վարդապետություն և Ուխտեր 1.17:
5. Մոսիա 4.27:
6. Օննդոց 41.54:
7. Ռասսել Մ. Նելսոն, Ջոյ Դ. Ջոնսի, «Մի հատուկ վեհ կոչում», *Լիստոնա*, մայիս 2020, 16:
8. *All Is Safely Gathered In: Family Home Storage* (pamphlet, 2007), 1.
9. *All Is Safely Gathered In*, 1.
10. Տես «Ուղերձ Առաջին Նախագահությունից» *Անձնական ֆինանսներ ինքնապահովության համար* (2017), դիմերեսի շապիկի ներքի էջը:
11. Օննդոց 41.54:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 29.34–35:
13. *Անձնական ֆինանսներ ինքնապահովման համար* 4:
14. Մոսիա 4.27:
15. Ալմա 37.6:
16. Գորդոն Բ. Հինքլի, «Եթե պատրաստված եք, դուք չեք վախենա», *Լիստոնա*, նոյ. 2005, 62:
17. “Emergency Preparedness,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org
18. Դեյվիդ Ա. Բեդնար, «Հավատք գործադրեք առ Քրիստոս» (տեսաֆիլմ), ChurchofJesusChrist.org/media:
19. Օննդոց 41.54:

Երբ անցած ամառ կարդում էի Մորմոնի գիրքը *Եկ, հետևիր ինձ* դասի համար, ես հանկարծակիի եկա Ալմայի խոսքերից, որ երբ նա լիովին գիտակցեց իր բոլոր մեղքերը, «չկար ոչինչ, որ այնպես ուժգին և այնպես դառն լինեի ինչպես [նրա] ցավերն էին»:¹ Ես խոստովանում եմ, որ խոսակցությունը ուժգին ցավերի մասին գրավեց իմ ուշադրությունը մասնավորապես այն ճակատամարտի պատճառով, որ այդ շաբաթ ունեցել էի յոթ միլիմետրանոց երիկամի քարի հետ: Երբեք ոչ մի տղամարդ չի զգացել այդպիսի «մեծ բաներ», երբ այդպիսի «փոքր և հասարակ բան» է «տեղի ունենում»:²

Ալմայի բառապաշարը նույնպես գրավեց իմ ուշադրությունը, որովհետև *ալտասուփոր* բառը Մորմոնի Գրքի անգլերեն թարգմանությունում սովորաբար նկարագրում է բացառիկ զեղեցկության կամ անզուգական շքեղության բաներ: Օրինակ՝ Ջոզեֆ Սմիթը նշել է, որ Մորմոնի

հրեշտակը կրում էր «շլացուցիչ ճերմակություն» մի պարեգոտ, մի ճերմակություն, որն. ըստ նրա, «երկրային ամեն բանից վեր էր», որ [նա] երբևէ տեսել էր:³ Մակայն *ալտասուփոր* բառը կարող է նաև հաղորդել ծայրահեղ ուժգնություն, նույնիսկ, սոսկալի բաների համար: Այսպիսով, Ալման և գլխավոր բառարանները կապում են *ուժգին ցավը* «պրկված», «տանջված», «տակնուվրա եղած», «ծայրաստիճան» լինելու հետ:⁴

Ալմայի նկարագրություններն արտացոլում են այն սթափեցնող իրականությունը, որ ինչ որ մի պահի մենք պետք է զգանք մեր կատարած տանջալից ամեն մեղքի լիակատար հանցանքը: Արդարադատությունն է պահանջում դա, և Աստված Ինքը չի կարող դա փոխել:⁵ Երբ Ալման հիշեց իր «բոլոր» մեղքերը՝ հատկապես նրանք, որոնք կործանել էին ուրիշների հավատքը, նրա ցավը փաստորեն անտանելի էր, և Աստծո առջև կանգնելու



Բենգալուրու, Չոկլաստակ

գաղափարը լցնում էր նրան «աննկարագրելի սոսկումով»: Նա տենչում էր «բնաջինջ լինել թե հոգով և թե մարմնով»:⁶

Այնուամենայնիվ, Ալման ասել է, որ ամեն ինչ սկսվեց փոխվել այն պահին, երբ իր «դատողությունը որսաց» «մի Հիսուս Քրիստոսի գալստյան վերաբերյալ» միտքը . . . քաղվելու աշխարհի մեղքերը, և նա գոչեց [իր] սրտում. Ո՛վ Հիսուս, դու, Աստծո Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ: Այդ մեկ մտքով և այդ մեկ աղերսանքով, Ալմայի Հոգին լցվեց «ուժգին» ուրախությամբ՝ «նույնքան սաստիկ, ինչպիսին [նրա] ցավն էր»:⁷

Մենք երբեք չպետք է մոռանանք, որ ապաշխարության բուն նպատակն է՝ վերցնել որոշակի թշվառությունը ու այն վերափոխել մաքուր երանության: Շնորհիվ Նրա «անմիջական բարության»,⁸ հենց այն *պահին*, երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոսը՝ հավատք դրսևորելով Նրա հանդեպ և սրտի իսկական փոփոխություն, մեր մեղքերի ջախջախիչ ծանրությունը սկսում է մեր մեջքից տեղափոխվել Նրա մեջքին: Սա հնարավոր է, որովհետև Նա, ով առանց մեղքի էր, տառապեց «անսահման և աննկարագրելի հոգեվարք»⁹ տիեզերքում Իր

արարչագործությունների ամեն մի մեղքի համար, բոլոր Իր արարչագործությունների համար, այնպիսի սաստիկ տառապանքով, որ Նրա ամեն մի ծակոտիկից արյուն էր հոսում: Ուղղակիորեն անձնական փորձառությունից ելնելով՝ Փրկիչը այսպես է նախագուշացնում մեզ ժամանակակից սուրբ գրություններում, որ մենք գաղափար չունենք, թե որքան «ուժգին» կլինեն մեր տառապանքները, եթե մենք չապաշխարենք: Իսկ հետո անսահման մեծահոգությամբ Նա նաև պարզաբանում է, որ. «Ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն»,¹⁰ ապաշխարություն, որը թույլ է տալիս մեզ «ճաշակել» այն «ուժգին ուրախությունից», որ Ալման ճաշակեց:¹¹ Հենց միայն այս վարդապետության համար, «Ես մնում եմ զարմացած»:¹² Սակայն զարմանալիորեն, Քրիստոսը առաջարկում է նույնիսկ ավելին:

Երբեմն ուժգին ցավը գալիս է ոչ թե մեղքից, այլ ազնիվ սխալներից, ուրիշների գործողություններից, կամ մեր վերահսկողությունից դուրս գտնվող ուժերից: Այդպիսի պահերին մենք, հնարավոր է, աղաղակենք արդար Սաղմոսողի պես.

«Իմ սիրտը դողաց ինձանում, և մահի սարսափը ընկաւ ինձ վերայ:

. . . Եվ սոսկում ծածկեց ինձ:

. . . Ոհ, թե թե ունենայի աղավնիի պես, որ թռչէի եւ հանգչէի»:¹³

Բժշկական գիտությունը, մասնագիտական խորհրդատվությունը կամ իրավական շտկումը կարող է օգնել թեթևացնել այդպիսի տառապանքը: Բայց հիշեք, բոլոր լավ պարզևները՝ ներառյալ սրանք, գալիս են Փրկիչից:¹⁴

Անկախ մեր ամենավատ ցավերի և կսկիծների պատճառներից, մեծագույն սփոփանքի աղբյուրը նույնն է՝ Հիսուս Քրիստոսը: Նա է միակը, որ պահում է լիակատար ուժը և բուժիչ բալասանը՝ ուղղելու ամեն սխալ, ճիշտ դարձնելու ամեն անիրավություն, ուղղելու ամեն թերություն, կապելու ամեն վերք և հասցնելու ամեն ուշացած օրհնություն: Հնադարյան վկաների պես ես վկայում եմ, որ մենք «ոչ թե այնպիսի քահանայապետ ունինք որ չկարողանայ մեր տկարություններին հետ կարեկից լինիլ»,¹⁵ այլ սիրառատ Քավիչ, ով իջավ Իր վերին գահից, առաջ գնաց՝ տանելով ցավեր և չարչարանքներ և փորձություններ ամեն տեսակի, . . . որպեսզի կարողանա իմանալ . . . ինչպես սատարել իր ժողովրդին»:¹⁶

Որևէ մեկի համար այսօր, ով այնպիսի ուժեղ և այնքան յուրահատուկ ցավեր ունի, և որը ոչ ոք չի կարող լիովին գնահատել, հնարավոր է, դուք ճիշտ եք: Չի կարող լինել ընտանիքի անդամ, ընկեր կամ քահանայության ղեկավար, որքան էլ զգայուն և բարեմիտ լինի, ով հստակ գիտի՝ ինչ եք զգում կամ ունի ճշգրիտ խոսքեր, որոնք կօգնեն ձեզ ապաքինվել: Բայց իմացեք՝ կա մեկը, ով կատարելապես հասկանում է, թե ինչ եք տանում, ով «ավելի գորեղ է, քան ողջ աշխարհը»¹⁷ և ով «առատութեամբ կարող է անել ամեն բաներից ավելի, քան որ [դուք] խնդրում եք կամ մտածում»:¹⁸ Գործընթացը կրնա նաև Նրա ուղիով և Նրա

ժամանակացույցով, բայց Քրիստոսը միշտ պատրաստ կանգնած է՝ բժշկելու ձեր հոգեվարքի ամեն մասնիկ ու ձև:

Երբ դուք թույլ տաք Նրան այդ անել, դուք կտեսնեք, որ ձեր տանջանքը զուր չէր: Խոսելով Աստվածաշնչի մեծագույն հերոսների և նրանց վշտերի մասին, Պողոս Առաքյալն ասել է, որ «Աստված . . . նրանց համար մի քանի ավելի լավ բաներ պատրաստեց իրենց տառապանքների միջոցով, քանի որ առանց տառապանքների նրանք չէին կարող կատարյալ դառնալ»:¹⁹ Դուք տեսնում եք՝ Աստծո բուն էությունը և մեր երկրային գոյության նպատակը երջանկությունն է,²⁰ մենք չենք կարող աստվածային ուրախությամբ կատարյալ էակներ դառնալ առանց փորձառությունների, որոնք ստուգում են մեզ, երբեմն՝ մինչև մեր հոգու խորքը: Ինչպես Պողոսն է հիշատակում, Փրկիչն Ինքը հավերժորեն դարձավ «կատարյալ [կամ ամբողջական] չարչարանքների միջոցով»:²¹ Այսպիսով, զգո՛ւ եղեք սատանայական շշուկներից, և եթե ավելի լավ անձնավորություն լինեիք, դուք կլսուսափեիք այդպիսի փորձություններից:

Դուք պետք է նաև դիմակայեք դրա հետ կապված այն ստին, որ ձեր տառապանքները ինչ-որ ձևով հուշում են, թե դուք կանգնած եք Աստծո ընտրյալների շրջանակից դուրս, ովքեր, կարծես, սահում են մի օրհնված վիճակից մյուսը: Փոխարենը, տեսե՛ք ձեզ այնպես, ինչպես Հովհաննես Հայտնողը անշուշտ տեսավ ձեզ վերջին օրերի վերաբերյալ իր փառահեղ հայտնությունում: Քանզի Հովհաննեսը տեսավ «մի շատ ժողովուրդ, որ ոչ ով չէր կարող համարել. ամեն ազգից եւ ցեղից եւ ժողովուրդներից եւ լեզուներից [ովքեր] կանգնած էին աթոռի առաջին և Գառի առաջին, և սպիտակ հանդերձներ հագած, . . . [ովքեր] աղաղակում էին բարձր ձայնով եւ ասում. Փրկութիւնը մեր Աստուծուն»:²²

Եվ երբ հարցրին. «Մրանք որ սպիտակ հանդերձներ են հագել՝ ո՞վ են և կամ որտեղի՞ց են եկել»: Հովհաննեսը ստացավ պատասխան. «Մորանք են որ գալիս են այն *մեծ նեղութիւնիցը*, և իրանց հանդերձները լուացին և սպիտակացրին Գառի արիւնովը»:²³

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, միշտ հիշե՛ք, տառապանքը արդարակեցության մեջ օգնում է ձեզ որակավորվել, այլ ոչ թե տարբերվել Աստծո ընտրյալներից: Եվ դա նրանց խոստումները դարձնում է ձերը: Համաձայն Հովհաննեսի՝ դուք «Այլ եւս ոչ կ'սովեք եւ ոչ կ'ծարաւեք, եւ չի ընկնիլ [ձեր], վերայ ոչ արեւը եւ ոչ մի տաքութիւն: Որովհետեւ Գառը՝ որ աթոռի մէջ է, կ'հովուէ [ձեզ] եւ կ'առաջնորդէ [ձեզ] դէպի կենդանի ջրերի աղբիւրները. Եւ Աստուած կ'սրբէ ամեն արտասուքը [ձեր] աչքերիցը»:²⁴

«Եւ մահն այլեւ չի լինիլ, ոչ սուգ, եւ ոչ աղաղակ, եւ ոչ մի ցաւ այլեւս չի լինիլ»:²⁵

Ես վկայում եմ ձեզ, որ Հիսուս Քրիստոսի ապշեցուցիչ բարության, Նրա կյանքի, ուսմունքների և քափչ զոհաբերության շնորհիվ մեր բարոյական ձախողումների հետևանքով առաջացած տանջանքներից կարելի է խուսափել և մեր մահկանացու դժբախտությունների չվաստակած տանջանքները հաղթահարել: Նրա ղեկավարության ներքո ձեր աստվածային ճակատագիրը կլինի անզուգական շքեղության և աննկարագրելի ուրախության ճակատագիր, այնքան ուժեղ և այնքան եզակի ձեզ համար, որ կթվա «երկրային ամեն բանից վեր»:²⁶ Որպեսզի դուք կարողանաք ճաշակել այդ երջանկությունից այժմ և լցվեք դրանով հավիտյան, ես հրավիրում եմ ձեզ անել այն, ինչ Ալման արեց, թող ձեր միտքն ամուր որսա *սարսառիոր* պարզևր Աստծո Որդու, ինչպես հայտնի է դարձվել Իր ավետարանի միջոցով, Նրա

ճշմարիտ և կենդանի այս Եկեղեցու միջոցով: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 36.21, շեշտադրումն ավելացված է:
2. Ալմա 37.6:
3. Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.31:
4. Օրինակ՝ համեմատեք Ալմա 36.11–17-ի նմանատիպ պարզ լեզուն *սարսառիոր* բառի հետ. *Oxford American Writer's Thesaurus*-ի քանի հրապարակումներից մեկը, որը կարող է տեղադրվել «Բառարան» բաժնում՝ ընդհանուր պարամետրերի վրա, որոշակի սարքերի վրա և այդպիսով հեշտությամբ կապվելով, մուտք գործել Gospel Library app. Շնորհակալություն Ռեյչլ Սանֆորդին հիշեցման համար:
5. Տես Ալմա 42.13:
6. Տես Ալմա 36.13–15:
7. Տես Ալմա 36.17–21:
8. Մոսիա 25.10:
9. See Orson F. Whitney, *Baptism—the Birth of Water and of Spirit* (1934), 5.
10. Վարդապետություն և ովստեր 19.15–16:
11. Տես Ալմա 36.24–26:
12. «Ես մնում եմ զարմացած», *Հիմներ և մանկական երգեր*, էջ 22:
13. Սաղմոս 55.4–6:
14. Տես Մորոնի 7.24:
15. Եբրայեցիս 4.15:
16. Ալմա 7.11–12:
17. 1 Նեփի 4.1:
18. Եփեսացիս 1.10:
19. Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Եբրայեցիս 11.40 (Եբրայեցիս 11.40, ծանոթագրություն *ս*):
20. Տես 2 Նեփի 2.25, Ալմա 41.11:
21. Եբրայեցիս 2.10, տես նաև Եբրայեցիս 5.8, Russell M. Nelson, “Perfection Pending,” *Ensign*, Nov. 1995, 86–88:
22. Հայտնություն 7.9–10:
23. Հայտնություն 7.13–14, շեշտադրումն ավելացված է:
24. Հայտնություն 7.16–17:
25. Հայտնություն 21.4:
26. Տես Եսայիա 61.3, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.31:



Սակտո Դոմինգո, Դոմինիկյան Հանրապետություն



Երեց Վիլյամ Կ. Չերսուն
Յոթանասունից

Քրիստոսի մշակույթը

Մենք կարող ենք փայփայել մեր երկրային անհատական մշակույթների լավագույն դրսևորումները և լիարժեք մասնակիցը լինել հավերժական մշակույթի, որը սերում է Հիսուս քրիստոսի ավետարանից:

Ինչպիսի՜ հոյակապ աշխարհում ենք մենք ապրում և միասին վայելում, որտեղ կա ժողովուրդների, լեզուների, սովորույթների և պատմությունների մեծ բազմազանություն՝ սփռված հարյուրավոր երկրների և հազարավոր լամբերի մեջ, յուրաքանչյուրը՝ հարուստ մշակույթով: Մարդկությունը հպարտանալու և տոնելու շատ բան ունի: Չնայած սովորական դարձած բարքերին, մեզ վրա

ներգործող մշակույթի ազդեցությունը, այնտեղ, որտեղ մենք մեծանում ենք, կարող է և՛ մեծ ուժ հաղորդել մեր կյանքին, և թե՛ դառնալ լուրջ խոչընդոտ: Կարող է թվալ, որ մշակույթն այնպես է արմատացել մեր մտածելակերպում և վարքում, որ այն անհնար է փոխել: Ի վերջո, դա հիմնականում այն է, ինչը, մեր կարծիքով, բնութագրում է մեզ և ինքնության զգացում պարզևում:

Դա կարող է լինել այնքան ուժեղ ազդեցություն, որ չկարողանանք տեսնել մեր սեփական մշակույթների արհեստածին թույլ կողմերը կամ թերությունները, ինչը կհանգեցնի նրան, որ չենք ցանկանա հրաժարվել «մեր հայրերի ավանդույթներից»: Մշակութային ինքնության վրա չափազանց կենտրոնանալը կարող է հանգեցնել արժանի, նույնիսկ աստվածային բաների մերժման՝ գաղափարների, հատկանիշների և վարքի:

Ոչ այնքան վաղուց ես ծանոթացել էի մի հիանալի պարոնի հետ, ով օգնեց պատկերավոր դարձնել մշակութային կարճատեսության այս համընդհանուր սկզբունքը: Առաջին անգամ ես նրան հանդիպել եմ Սինգապուրում, երբ նշանակվել էի լինելու նրա ընտանիքի տնային ուսուցիչը: Նա Մանսկրիտի և թամիլերենի նշանավոր պրոֆեսոր էր, արմատներով՝ Հնդկաստանի հարավից: Նրա հիանալի կինը և երկու որդիները եկեղեցու անդամ էին, բայց նա՝ չէր միացել, ոչ էլ առանձնապես լսում էր ավետարանի ուսմունքները: Նա գոհ էր իր կնոջ և որդիների զարգացման ուղուց և լիովին աջակցում էր նրանց իրենց նախաձեռնություններում և եկեղեցու պարտականություններում:

Երբ ես նրան առաջարկեցի, որ ուսուցանեմ ավետարանի սկզբունքները և կիսվեմ մեր հավատալիքներով, սկզբում նա հրաժարվեց: Որոշ ժամանակ պահանջվեց՝ հասկանալու համար, թե ինչու. նա մտածում էր, որ այդպիսով կղավաճանի իր անցյալին, իր ժողովրդին և պատմությանը: Ըստ իր մտածելակերպի՝ նա կժխտեր իր անձը, չէր լինի այնպիսին, ինչպիսին կար, ինչպիսին իր ընտանիքն էր ուսուցանել, որ պետք է լիներ, և իր հնդկական ժառանգությունը: Հաջորդ մի քանի ամիսների ընթացքում մենք կարողացանք գրուցել այդ հարցերի շուրջ: Ես ապշած էի (թեպետ՝ ոչ զարմացած), թե ինչպես Հիսուս քրիստոսի ավետարանը բացեց



Նայորի, Քենիա

նրա աչքերը՝ ունենալու մեկ այլ տեսակետ:

Մարդածին մշակույթների մեծ մասում կա և՛ բարին, և՛ չարը, և՛ կառուցողականը, և՛ կործանարարը:

Մեր աշխարհի խնդիրների մեծ մասը ուղիղ բխում են արդյունքն է, մարդկանց բխումների, ովքեր տարբեր գաղափարների և սովորույթների կրող են, ելնելով իրենց մշակույթից: Բայց իրականում բոլոր հակառակություններն ու խառնաշփոթը արագ կվերանային, եթե աշխարհն ընդուներ միայն իր «նախնական մշակույթը», որը մենք բոլորս ունենք ոչ այնքան վաղուց: Այս մշակույթը սկսվել է մեր նախաերկրային գոյությունից: Սա Ադամի և Ենովքի մշակույթն էր: Սա ժամանակների զագաթնակետում Փրկիչի ուսմունքների վրա հիմնված մշակույթն էր, և այն մեկ անգամ ևս մատչելի է բոլոր կանանց և տղամարդկանց մեր օրերում: Այն եզակի է: Այն «բոլոր մշակույթներից մեծագույնն է» և սերում է երջանկության մեծ ծրագրից, որը հեղինակել է Աստված և պաշտպանել է Քրիստոսը: Այն միավորում է, ոչ թե՛ բաժանում: Այն բուժում է, ոչ թե՛ վնասում:

Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանում է մեզ, որ նպատակ կա կյանքում: Մեր այստեղ



Վիլլա Ալենաս, Մեծ Վալպարաիսո, Չիլի

գտնվելը տիեզերական մեծ վթար չէ կամ սխալմունք: Մենք այստեղ ենք որոշակի նպատակի համար:

Այս մշակույթը հիմնված է այն վկայության վրա, որ մեր Երկնային Հայրը գոյություն ունի, Նա իրական է և սիրում է մեզանից յուրաքանչյուրին՝ անհատապես: Մենք ենք Նրա «գործը և [Նրա] փառքը»:՝¹ Այս մշակույթը պաշտպանում է հավասար արժեքի գաղափարը: Կաստաների կամ դասերի դասակարգում չկա: Ի վերջո, մենք եղբայրներ և քույրեր ենք, բառացիորեն մեր Երկնային ծնողների հոգևոր զավակները: «Բոլոր մշակույթներից մեծագույն»-ում չկա նախապաշարմունք կամ «մենք ընդդեմ նրանց» մտածելակերպը: Բոլորս «մենք» ենք: Բոլորս «նրանց» ենք: Մենք հավատում ենք, որ պատասխանատու և հաշվետու ենք ինքներս մեր, միմյանց, Եկեղեցու և մեր աշխարհի համար: Պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը մեր աճի կարևոր գործոններն են:

Գթասրտությունը, քրիստոսանման իսկական հոգատարությունը, այս մշակույթի հիմնաքարն է: Մենք սրտանց մտահոգվում ենք մեր մերձավորների աշխարհիկ և հոգևոր կարիքների համար և գործում ենք այդ զգացմունքներով դրդված: Դա ցրում է նախապաշարմունքն ու ատելությունը:

Մենք վայելում ենք հայտնության մշակույթը, որը կենտրոնացած է մարգարեների ստացած Աստծո խոսքի վրա (և որի մասին յուրաքանչյուրս կարող է հավաստիանալ Սուրբ Հոգու միջոցով): Ամբողջ մարդկությունը կարող է իմանալ Աստծո կամքն ու միտքը:

Այս մշակույթը պաշտպանում է ազատ կամքի սկզբունքը: Ընտրելու ունակությունը չափազանց կարևոր է մեր զարգացման և երջանկության համար: Խելամիտ ընտրելը կարևոր է:

Սա սովորելու և ուսումնասիրելու մշակույթ է: Մենք ձգտում ենք ունենալ գիտելիք, իմաստություն և բոլոր բաներում՝ լավագույնը:

Սա հավատքի և հնազանդության մշակույթ է: Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը մեր մշակույթի առաջին սկզբունքն է, իսկ հնազանդությունը՝ Նրա ուսմունքներին և պատվիրաններին՝ արդյունքն է: Այս բաները նպատակում են ինքնատիրապետման զարգացմանը:

Սա աղոթքի մշակույթ է: Մենք հավատում ենք, որ Աստված ոչ միայն կլսի մեզ, այլև՝ կօգնի:

Սա ուխտերի և արարողությունների, բարձր բարոյական չափանիշների, գոհաբերության, ներման ու ապաշխարության, և մեր մարմինների տաճարների հանդեպ հոգատարության մշակույթ է: Այս բոլոր բաները վկայում են Աստծո հանդեպ մեր պարտավորվածության մասին:

Սա մշակույթ է, որը ղեկավարվում է քահանայությամբ, որն Աստծո անունից գործելու իշխանություն է, Աստծո զորությունն է՝ Իր զավակներին օրհնելու համար: Այն վեհացնում է և հնարավորություն է տալիս անհատներին լինել ավելի լավ մարդիկ, ղեկավարներ, մայրեր, հայրեր և զուգընկերներ, և այն սրբացնում է տունը:

Իրական հրաշքներն առատ են այստեղ՝ բոլոր մշակույթներից հնագույնում՝ որոնք կատարվել են Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, քահանայության զորության, աղոթքի, ինքնակատարելագործման, ճշմարիտ դարձի և ներման միջոցով:

Սա միսիոներական աշխատանքի մշակույթ է: Հոգիների արժեքը մեծ է:

Քրիստոսի մշակույթում կանայք բարձրացվել են, հայտնվելով իրենց պատշաճ և հավերժական կարգավիճակում: Նրանք ենթակա չեն տղամարդկանց, ինչպես այսօրվա աշխարհի շատ մշակույթներում, այլ լիարժեք և հավասար գործընկերներ են այստեղ և զալիք աշխարհում:

Այս մշակույթը պաշտպանում է ընտանիքի սրբությունը: Ընտանիքը հավերժության հիմնական



Փենսիլվանիա, Վալպարաիսո, Չիլի

միավորն է: Ընտանիքի կատարելությունը արժե ցանկացած գոհաբերություն, որովհետև, ինչպես ուսուցանվել է. «ոչ մի այլ հաջողություն չի կարող փոխհատուցել տանը ունեցած ձեր ձախողումը»:² Տունն այն վայրն է, որտեղ կատարում ենք մեր լավագույն աշխատանքը և որտեղ ձեռք ենք բերում մեր մեծագույն երջանկությունը:

Քրիստոսի մշակույթում կա հեռանկար, հավերժական ուղղվածություն և ուղղորդում: Այս մշակույթը կապ ունի բաների հետ, որոնք տևական արժեք ունեն: Դա գալիս է Հիսուս Քրիստոսի ավետարանից, որը հավերժ է և պատասխանում է մեր գոյության «ինչո՞ւ», «ի՞նչ» և «ո՞ւր» հարցերին: (Այն ներառող է, ոչ՝ բացառող): Քանի որ այս մշակույթը մեր Փրկիչի ուսմունքների կիրառման արդյունքն է, այն բուժիչ բալասան է տալիս, որի ծայրահեղ կարիքն ունի մեր աշխարհը:

Ինչպիսի՞ օրհնություն է՝ լինել այս մեծ ու ազնվագարմ կենսակերպի մասնիկը: Բոլոր մշակույթներից մեծագույնի մասը լինելու համար փոփոխություն է պահանջվում: Մարգարեներն ուսուցանել են, որ անհրաժեշտ է թողնել այն, ինչ մեր հին մշակույթներում է,

ինչն անհամատեղելի է Քրիստոսի մշակույթի հետ: Բայց դա չի նշանակում, որ մենք պետք է թողնենք *ամեն ինչ*: Մարգարեները նաև շեշտել են, որ մենք՝ յուրաքանչյուրս, հրավիրվում ենք բերել մեզ *հետ* մեր հավատը, տաղանդներն ու գիտելիքները, մեր կյանքում և անհատական մշակույթում առկա բոլոր լավ կողմերը, և թույլ տանք, որ եկեղեցին «ավելացնի դրան» ավետարանի ուղերձի միջոցով:³

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին դժվար է կոչել «արևմտյան» հասարակություն կամ ամերիկյան մշակութային երևույթ: Այն միջազգային եկեղեցի է, ինչպես միշտ էր նախատեսված, որ այդպիսին լիներ: Դեռ ավելին՝ այն աստվածային է: Աշխարհի տարբեր ծայրերից նոր անդամներն իրենց հետ հարստություն, բազմազանություն և ոգևորություն են բերում մեր անընդհատ աճող ընտանիքին: Վերջին օրերի սրբերն ամենուրեք շարունակում են մեծարել և հարգել իրենց ժառանգությունն ու հերոսներին, բայց այժմ նրանք նաև մաս են կազմում շատ ավելի վեհ մի բանի: Քրիստոսի մշակույթն օգնում է, որ տեսնենք ինքներս

մեզ այնպիսին, ինչպիսին կանք իրականում, և երբ նայում ենք հավերժության ոսպնյակի միջով, գուգորդված արդարությամբ, այն կարող է մեծացնել մեր ունակությունը, ուղղված երջանկության մեծ ծրագրի իրականացմանը:

Եվ այսպես, ի՞նչ եղավ իմ ընկերոջ հետ: Դե, նա մասնակցեց դասերին և միացավ եկեղեցուն: Դրանից հետո նրա ընտանիքը Սիդնեյի Ավստրալիայի տաճարում կնքվեց ժամանակի և հավերժության համար: Նա քիչ բանից հրաժարվեց, բայց ձեռք բերեց ամեն ինչ ունենալու նախադրյալ: Նա հասկացավ, որ կարող է շարունակել մեծարել իր պատմական անցյալը, հպարտանալ իր ծագումնաբանությամբ, ազգային երաժշտությամբ, պարով և գրականությամբ, կերպարներով, իր երկրով և երկրի ժողովրդով: Նա գիտակցեց, որ խնդիր չկա՝ իր տեղական մշակույթի լավագույն դրսևորումները ներառելու բոլոր մշակույթներից մեծագույնում: Նա հայտնաբերեց, որ իր հին կյանքից դեպի նորը բերելով այն, ինչը համահունչ է ճշմարտությանն ու արդարությանը, նպաստում է սրբերի հետ իր ընկերակցության ամրապնդմանը և երկնային համայնքում բոլորին միավորելուն:

Մենք բոլորս, իրոք, կարող ենք փայլալույսի մեր երկրային անհատական մշակույթների լավագույն դրսևորումները և այնուհանդերձ լիարժեք մասնակիցը լինել բոլոր մշակույթներից հնագույնի՝ նախնական և վերջին, հավերժական մշակույթի, որը սերում է Հիսուս Քրիստոսի ավետարանից: Ի՞նչ հրաշալի ժառանգություն ունենք մենք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39:
2. J. E. McCulloch, in *Teachings of Presidents of the Church: David O. McKay* (2011), 154.
3. See *Teachings of Presidents of the Church: George Albert Smith* (2011), xxviii; Gordon B. Hinckley, “The Marvelous Foundation of Our Faith,” *Liahona*, Nov. 2002, 78–81.



Երեց Դիտեր Տ. Ուխորթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Աստված աներևակայելի մի բան կանի

Աստված Իր զավակներին և Իր Եկեղեցին նախապատրաստել է այս ժամանակաշրջանի համար:

Սուր Լեյքի հովիտ ժամանելուց ոչ շատ անց Վերջին Օրերի Սրբերը սկսեցին իրենց սուրբ տաճարի կառուցումը: Նրանք զգում էին, որ վերջապես գտել են մի վայր, որտեղ կարող են խաղաղ երկրպագել Աստծուն և գերծ լինել հետապնդումներից:

Այնուամենայնիվ, տաճարի հիմքի կառուցման ավարտին, Միացյալ Նահանգների բանակը զինվորներով մոտեցավ, որպեսզի բռնի կերպով նոր նահանգապետ նշանակի:

Քանի որ Եկեղեցու ղեկավարները չզիտեին, թե որքան թշնամական է տրամադրված բանակը, Բրիգամ Յանգը Սրբերին հրամայեց տարածքը մաքրել և հողով ծածկել տաճարի հիմքը:

Համոզված եմ, որ Եկեղեցու որոշ անդամներ մտահոգված էին, թե Աստծո արքայությունը կառուցելու իրենց ջանքերը ինչու էին անընդհատ խափանվում:

Ի վերջո, վտանգն անցավ և տաճարի հիմքերը պեղեցին և ստուգեցին: Այդ ժամանակ էր, որ ռահվիրա շինարարները հայտնաբերեցին, որ բնօրինակ ավազաքարերից մի քանիսը ճաքել

էին՝ ոչ պիտանի դարձնելով հիմքը:

Հետևաբար, Բրիգամը հանձնարարեց վերանորոգել հիմքը, որպեսզի համարժեք հենարան լինի Սուր Լեյք Միթիի հրաշագեղ տաճարի գրանիտե¹ պատերի համար:² Վերջապես, Սրբերը կարող էին երգել «Ինչ ամուր է հիմքը»³ օրհներգը և իմանալ,

որ սուրբ տաճարը կառուցվել է հաստատուն հիմքի վրա, որը կհարատևի սերնդե-սերունդ:

Այս պատմությունը մեզ սովորեցնում է, թե Աստված ինչպես է օգտագործում ծախտորդությունները՝ Իր նպատակներն իրականացնելու համար:

Համաշխարհային համավարակ

Եթե սա համահունչ է այժմյա մեր իրավիճակին, ապա այն պատճառով է, որ հանգամանքները նման են:

Համոզված եմ, որ չկա մարդ, որ լսում է իմ ձայնը կամ կարդում իմ խոսքերը, ում վրա չի ազդել համաշխարհային համաճարակը:

Մենք սգում ենք նրանց հետ, ովքեր սգում ենք ընտանիքի անդամի և ընկերների կորուստը: Աղոթում ենք, որ Երկնային Հայրը մխիթարի և սփռվի ձեզ:

Այս վարակը ավելի երկարատև հետևանքներ ունի, որ անցնում են ֆիզիկական առողջության սահմաններից: Շատ ընտանիքներ կորցրել են եկամուտները, և նրանց սպառնում է սով, անորոշություն ու երկյուղ: Մենք հիանում ենք շատ մարդկանց անձնուրաց ջանքերով, ովքեր կանխում են այս հիվանդության տարածումը: Խոնարհվում ենք



Լո Նարվանգ, Վալպարաիսո, Չիլի

այն մարդկանց լուռ զոհաբերության ու ազնիվ ջանքերի առջև, ովքեր վտանգել են իրենց անվտանգությունը, որպեսզի օգնեն, բուժեն և աջակցեն կարիքավոր մարդկանց: Մեր սիրտը լի է երախտագիտությամբ ձեր բարության և կարեկցանքի համար:

Ձորությամբ աղոթում ենք, որ Աստված բացի երկնքի պատուհանները և ձեր կյանքը լցնի Աստծո հավերժական օրհնություններով:

Մենք սերմերն ենք

Այս վիրուսի մասին անհայտ բաներ դեռ շատ կան: Բայց մի բան հաստատ գիտեմ, որ այս վիրուսը անակնկալ չէ Երկնային Հոր համար: Նա ստիպված չի եղել հրեշտակների գումարտակներ հավաքել, շտապ խորհրդակցություն անցկացնել ու արարչագործության բաժանմունքից պաշարներ վերահասցեագրել՝ անսպասելի կարիքը բավարարելու համար:

Իմ ուղերձն այն է, որ չնայած մենք չենք խնդրել, ոչ էլ սպասել ենք այս համավարակին, այնուամենայնիվ, Աստված պատրաստել է Իր գավակներին և Իր Եկեղեցին այս ժամանակի համար:

Մենք կդիմակայենք դրան, այո՛: Բայց մենք դա չենք անի

ատամները սեղմած, կանգնելով ու սպասելով հին գնացքի վերադարձին: Այլ առաջ կշարժվենք և արդյունքում ավելի լավը կլինենք:

Կարելի է մեզ նմանեցնել սերմի: Որպեսզի սերմը իր ներուժին հասնի, նրան պետք է հողի մեջ թաղել, որ ծիլ տա: Վկայում եմ, որ չնայած երբեմն կարող ենք զգալ, թե թաղված ենք կյանքի փորձությունների մեջ կամ զգացմունքային խավարը պատել է մեզ, Աստծո սերը և Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի օրհնությունները աներևակայելի մի պտուղ կտան:

Դժվարությունից օրհնություններ են գալիս

Ավետարանի տնտեսություններից յուրաքանչյուրը բախվել է ժամանակի իր փորձությանը և դժվարություններին:

Ենովքը և իր ժողովուրդը ապրում էին չարության, պատերազմների և արյունահեղության ժամակաշրջանում: «Բայց Տերը եկավ ու բնակվեց իր ժողովրդի հետ»: Նա մտքում աներևակայելի բան ուներ նրանց համար: Նա օգնեց նրանց Սիոն հաստատել՝ մարդիկ, որ «մեկ սրտի և մեկ մտքի էին», ովքեր «բնակվում էին արդարության մեջ»:⁴

Երիտասարդ Հովսեփին՝ Հակոբի որդուն, զուբը գցեցին, ստրկության վաճառեցին, դավաճանեցին և լքեցին:⁵ Գուցե Հովսեփը մտածում էր՝ արդյոք Աստված մոռացել էր իրեն: Իսկ Աստված մտքում աներևակայելի բան ուներ Հովսեփի համար: Փորձության այս ժամանակաշրջանում՝ Նա ամրապնդեց Հովսեփի բնավորությունը և հասցրեց մի դիրքի, որ Հովսեփը փրկեց իր ընտանիքը:⁶

Մտածեք Լիբերթիի բանտում բանտարկված Ջոզեֆ Մմիթ Մարգարեի մասին, երբ նա աղոթում էր տառապող Սրբերի համար: Նա գուցե մտածում էր, թե ինչպես կարող էր Սիոնը հիմնադրվել նման պայմաններում: Բայց Տերը խաղաղություն խոսեց նրա մտքին և դրան հաջորդած փառահեղ հայտնությունը խաղաղություն բերեց Սրբերին և շարունակում է խաղաղություն բերել ինձ և ձեզ:⁷

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաջին տարիներին քանի՞ անգամ են Սրբերը հուսահատվել և մտածել՝ արդյոք Աստված մոռացել է իրենց: Բայց հալածանքների, վտանգների և ոչնչացման սպառնալիքների մեջ Իսրայելի Տեր Աստվածը մտքում այլ բան ուներ



Մոնտեգրոտո Թերմե, Պադուա, Իտալիա

Իր փոքրիկ հոտի համար: Ինչ-որ աներևակայելի բան:

Ի՞նչ ենք սովորում այս օրինակներից և սուրբ գրությունների հարյուրավոր օրինակներից:

Առաջին՝ արդարներին տրված չէ սովերի հովիտները անարգել շրջանցելու արտոնագիր: Բոլորս պետք է անցնենք դժվար ժամանակների միջով, քանի որ ձայնորդությունների ժամանակ ենք սովորում սկզբունքներ, որոնք ամրապնդում են մեր բնավորությունը և ստիպում մեզ ավելի շատ մոտենալ Աստծուն:

Երկրորդ՝ մեր Երկնային Հայրը գիտի, որ մենք տառապում ենք, և քանի որ մենք նրա զավակներն ենք, նա չի լքի մեզ:⁸

Մտածեք կարելից Փրկիչի մասին, որն իր կյանքի մեծ մասն անցկացրեց՝ ծառայելով հիվանդներին, միայնակներին, կասկած և հուսահատություն ապրողներին:⁹ Ի՞նչ եք կարծում, մի՞թե Նա այսօր ավելի քիչ է մտահոգված ձեզանով:

Իմ թանկագին՝ բարեկամներ, սիրելի՛ իմ եղբայրներ և քույրեր, Աստված ձեր խնամակալն ու ձեր հովիվը կլինի անորոշության ու վախի այս ժամանակաշրջանում: Նա ճանաչում է ձեզ: Նա լսում է ձեր աղոթքները: Նա հավատարիմ է և վստահության արժանի: Նա կկատարի իր խոստումները:

Աստված մտքում աներևակայելի մի բան ունի անհատապես ձեզ համար և հավաքական Եկեղեցու համար՝ մի զարմանալիք և զարմանք:

Փառք քեզ Տեր, Մարգարեի համար

Մեր լավագույն օրերը առջևում են, ոչ թե հետևում: Ահա թե ինչու է Աստված մեզ տվել *ժամանակակից* հայտնություններ: Կյանքը առանց հայտնությունների նման է օդում պտտվող ինքնաթիռին, որ սպասում է, թե մշուշը երբ պիտի ցրվի, որ կարողանա վայրեջջ կատարել: Տիրոջ նպատակները մեզ համար ավելի բարձր են, քան օդում պտտվելը: Քանի որ սա կենդանի Քրիստոսի Եկեղեցին է, և քանի որ Նա առաջնորդում է Իր

մարգարեներին, մենք թռչում ենք առաջ և դեպի վեր՝ դեպի այն վայրերը, ուր երբեք չենք եղել, դեպի աներևակայելի բարձունքներ:

Ասածս չի նշանակում, որ մահկանացու կյանքի թռիչքի ժամանակ մենք չենք հանդիպի օդային հոսանքների: Ոչ էլ նկատի ունեմ, որ բոլոր սարքերը անխափան կաշխատեն, կամ չեն լինի մեխանիկական թերացումներ ու եղանակի դաժան պայմաններ: Իրականում, նախքան իրավիճակի լավանալը, կարող է ավելի վատ լինել:

Որպես զինվորական օդաչու և քաղաքացիայի կապիտան՝ ես սովորել եմ, որ չնայած ես չէի կարող ընտրել թռիչքի ընթացքում սպասվող դժվարությունները, ես կարող էի ընտրել, թե ինչպես եմ պատրաստվում և ինչպես եմ արձագանքում տվյալ իրավիճակին: Այն, ինչ անհրաժեշտ է ճգնաժամի պահին, հանդարտությունն է և պարզամիտ վստահությունը:

Ինչպե՞ս ենք այն ձեռք բերում: Մենք բախվում ենք փաստերին և վերադառնում ենք հիմունքներին՝ ավետարանի առաջնային սկզբունքներին՝ ամենակարևոր բաներին: Ամրապնդեք ձեր անձնական կրոնական վարքը՝ աղոթքն ու սուրբ գրությունների ուսումնասիրությունը և Աստծո պատվիրանները պահելը: Որոշումները կայացրեք լավագույնս փորձված գործերի հիման վրա:

Կենտրոնացեք գործերի վրա, որ կարող եք անել, ոչ թե նրա վրա, ինչը չեք կարող անել:

Վարժեցրեք ձեր հավատքը: Լսեք դեպի անվտանգություն տանող Տիրոջ առաջնորդող խոսքը և Նրա մարգարեին:

Հիշեք, սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է՝ դեկի մոտ Նա է:

Մտածեք միայն անցած տասնամյակում եկեղեցում տեղի ունեցած բազում ոգեշնչված բարեփոխումների մասին: Նշեմ միայն մի քանիսը.

- Հաղորդությունը վերստին շեշտվեց որպես Հանգստության

օրվա մեր երկրպագության առանցք:

- *Եկ, հետևիր ինձ* ծրագիրը պատրաստվեց որպես անհատներին ու ընտանիքներին ամրապնդելու տնակենսարոն և եկեղեցու կողմից աջակցվող գործիքակազմ:
- Մենք սկսեցինք ավելի վսեմ և ավելի սրբազան ձևով սպասավորել բոլորին:
- Ավետարանը տարածելու և Տիրոջ աշխատանքը կատարելու համար Եկեղեցում մեծ տարածում է գտել տեխնոլոգիայի կիրառումը:

Անգամ գերագույն համաժողովի այս նիստերը իրականություն չէին դառնա առանց տեխնոլոգիական հրաշալի սարքերի:

Եղբայրներ՝ և քույրեր՝, քանի որ դեկի մոտ Քրիստոսն է, գործերը ոչ թե լավ կլինեն, այլ կլինեն աներևակայելի:

Իսրայելի հավաքման գործը առաջ է ընթանում

Սկզբում կարող է թվալ, որ համավարակը արգելք է դառնալու Տիրոջ աշխատանքի համար: Օրինակ՝ ավետարանով կիսվելու ավանդական մեթոդները անհնարին են դարձել: Ինչևէ, համավարակի պայմաններում բացահայտվում են ազնիվ սրտին հասնելու նոր և ավելի ստեղծագործ ուղիներ: Իսրայելի հավաքման աշխատանքը աճում է զորությամբ և ոգևորությամբ: Հարյուրավոր և հազարավոր պատմություններ վկայում են այդ մասին:

Գեղեցիկ Նորվեգիայում ապրող մի լավ ընկեր ինձ և կնոջս գրել է վերջերս ամկա մկրտությունների աճի մասին: «Այն վայրերում, որտեղ Եկեղեցին փոքր է, – գրել է նա, – խմբերը դառնում են ճյուղեր՝, իսկ ճյուղերը՝ ծխեր՝»:

Լատվիայում մի կին, որ համացանցի զովագրի սեղմումով հայտնաբերել է Եկեղեցին, այնքան էր ոգևորվել՝ իմանալով Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, որ մեկ ժամ շուտ էր

ներկայացել միսիոներների հետ հանդիպմանը և նախքան առաջին դասի ավարտը խնդրել էր մկրտվելու ամսաթիվ նշանակել:

Արևելյան Եվրոպայում միսիոներներից զանգ ստացած մի կին բացականչել է. «Քույրե՛ր, ինչո՞ւ ավելի շուտ չէիք զանգահարում: Ես սպասում էի ձեր զանգին»:

Մեր միսիոներների մեծ մասն ավելի զբաղված է, քան երբևէ: Շատերը ավելի շատ դասեր են սովորեցնում մարդկանց, քան երբևէ: Անդամների և միսիոներների միջև կապը ավելի է լավացել:

Նախկինում գուցե այնքան կապված էինք ավանդական մոտեցումներին, որ մեր աչքերը բացելու համար համաճարակ էր պահանջվում: Հավանաբար, գրանիտե քարեր ունենալով, մենք դեռ ավազաքարերով էինք կառուցում: Անհրաժեշտությունից ելնելով՝ այժմ մենք սովորում ենք բնականոն և բնական ձևերով մարդկանց հրավիրելու բազմազան մեթոդներ, ներառյալ տեխնոլոգիայի կիրառումը, որ գան և տեսնեն, որ գան և օգնեն, և որ գան և մասը դառնան:

Նրա աշխատանքը, Նրա ուղիները

Սա Տիրոջ աշխատանքն է: Նա մեզ հրավիրում է գտնել այն կատարելու Իր ուղիները, իսկ դրանք կարող են մեր անցյալի փորձից տարբերվել:

Նման բան տեղի ունեցավ նաև Միմոն Պետրոսի և մյուս աշակերտների հետ, ովքեր զննացել էին Տիրքերայի ծով՝ ձկնորսության:

«Եւ այն գիշերը ոչինչ չ'բռնեցին: Երբոր արդէն առաւօտ եղաւ, Յիսուսը ծովի եզրումը կանգնած էր,

Նա էլ ասեց նորանց. Ուռկանը նախ [մրտա] կողմը զցեցէք, եւ կ'գտնէք:

Նրանք զցեցին և ձկների բազմութիւնից չէին կարողանում այն դուրս քաշել»:¹⁰

Աստված տվել է հայտնություններ և շարունակ բացահայտելու

է Իր ամենագոր ձեռքը: Գալու է օրը, երբ մենք հետադարձ հայացք կզգենք և կնկատենք, որ դժվարությունների այս ժամանակաշրջանում Աստված մեզ օգնում էր գտնել ավելի լավ ուղիներ՝ Իր ուղիները, որպեսզի ամուր հիմքի վրա կառուցի Իր թագավորությունը:

Ես վկայում եմ, որ սա Աստծո աշխատանքն է, և Նա շարունակելու է բազում աներևակայելի գործեր կատարել Իր զավակների մեջ՝ Իր ժողովրդի մեջ: Աստված մեզ պահում է Իր հոգատար և կարեկից ձեռքերի փակում:

Վկայում եմ, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Աստծո մարգարեն է մեր օրերում:

Որպես Տիրոջ առաքյալ՝ ես հրավիրում և օրհնում եմ ձեզ, որ «ուրախությամբ [անեք] ամեն բան, որ [ձեր] ուժի սահմաններում է. և հետո, թող [դուք կանգնեք] հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը»:¹¹ Եվ ես խոստանում եմ, որ Տիրոջ օգնությամբ դուք կտեսնեք ձեր արդար ջանքերի աներևակայելի արդյունքները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Կվարցի մոնզոնիտը, որ նման էր գրանիտին, բերվում էր Քաթոնսկոյի կիրճի գետաբերանի քարհանքից՝ քաղաքից 32 կմ հարավ-արևելք:
2. Պատմությանը ավելի մանրամասն ծանոթանալու համար, տես *Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 2, *No Unhallowed Hand, 1846–1893* (2020), chapters 17, 19, and 21:
3. Տես «Աստծո Սրբեր» *Հիմնքեր և մանկական երգեր*, էջ 6:

Այս փառահեղ օրհներգի խոսքերը կարող են կարգախոս ծառայել մեր ժամանակների համար, և երբ երգի բառերը լսում ենք նորովի, այն պատկերացում է տալիս մեր առջև ծառայած մարտահրավերների մասին.
Ամեն ժամանակ, առողջ եք, թե հիվանդ, շարժաստ եք չափազանց, թե անչափ սոքաստ, Տանը, թե դրսում, ցանաբոս, թե ծովում, Ձեզ համար Աստծուց կգա օրհնություն: Մի վախեցի՛ր, ես քեզ հետ եմ, մի վիսամվոր, Քանզի ես Աստվածն եմ և դեռ կօգնեմ քեզ,

Ես կգործացնեմ քեզ, ես կօգնեմ քեզ, և ոտքի կհանեմ քեզ, Պաշտպանելով իմ աղոթար, ամենագոր ձեռքով:

Երբ խոր ջրերով կանչում եմ ձեզ անցնել,

Երբեք չե՛ն ծածկի ձեզ գետերը տիրություն:

Կօրհնեմ ես ձեզ, կլինեմ միշտ ձեզ հետ, . . .

Ձեզ կարբազործեմ ես, ձեր վիշտը խորին:

Երբ փորձությունները ձեզ ցույց տան սխալ ուղի,

Ձեզ հետ կլինեմ, կօգնեմ կողմնորոշվել:

Կողման, որպեսզի կրակը չալլի ձեզ. . . Միայն կոզեմ մարտել ձեզ . . . և ոսկին ձեր մեջ գտել:

Հոգին, որ Հիսուսին է սպասվինել հանգիստ առնելու,

Ես չեմ կարող թողնել ոտխներին կրա, Այն հոգուն, եթե լույսիակ դժոխքը ողջ դողա,

Բայց երբեք նրան միայնակ ես չեմ թողնի:

4. Տես Մովսես 7.13–18:
5. Հովսեփը երևի դեռ 17 տարեկան էր, երբ եղբայրները վաճառեցին նրան ստրկության (տես Օճնդոց 37.2): Նա 30 տարեկան էր, երբ ծառայության անցավ փարավոնի մոտ (տես Օճնդոց 41.46): Պատկերացնո՞ւմ եք, թե որքան դժվար էր ծաղկուն երիտասարդի համար տեսնել դավաճանություն, վաճառվել ստրկության, կեղծ մեղադրվել, իսկ հետո բանտարկվել: Հովսեփը, անշուշտ, կատարելատիպ է ոչ միայն Եկեղեցու երիտասարդության համար, այլև յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի համար, ով ցանկանում է իր խաչը վերցնել և հետևել Փրկչին:
6. Տես Օճնդոց 45.4–11, Մովսես 50.20–21: Կարդում ենք Մաղմուս 105.17–18, հատվածներում. «Նորանց առաջից մարդ ուղարկեց. Յովսեփը ծառայութեան մեջ ծախսեցաւ: Չարչարեցին նորա ոտները կապանքի մեջ. Նորա անձը երկաթի մեջ մտաւ: Անզերեն մեկ այլ թարգմանության մեջ 18-րդ հատվածում ասվում է. «Նրա ոտքերը կապանքներով նեղեցին, և նրա անձը երկաթով ծակեցին» (Young's Literal Translation): Սա ինձ հուշում է, որ Հովսեփի դժվարությունները նրա հոգին երկաթի պես ամուր և դիմացկուն դարձրին՝ հատկանիշ, որը նրան պետք կլիներ մեծ և աներևակայելի ապագայի համար, որ Տերը պահել էր նրա համար:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 121–123:
8. Եթե Աստված իր երեխաներին պատվիրում է տեղյակ լինել և կարեկցել սոված, կարիքավորներին, մերկերին, հիվանդներին և տառապանքներին, անշուշտ, Նա տեղյակ կլինի և ողորմած մեր՝ իր երեխաների հանդեպ (տես Մորմոն 8.39):
9. Տե՛ս Ղուկաս 7.11–17:
10. Տես Հովհաննես 21.1–6:
11. Վարդապետություն և Ուխտեր 123.17:



Շերոն Յուբենկ
*Սփոփող Միության Գերագույն Նախագահության առաջին
խորհրդական*

Զգացմունքների միասնականությամբ մենք զորություն ենք ձեռք բերում Աստծո հետ

*Եթե մենք փնտրենք զգացմունքների
միասնականություն, մենք կհրավիրենք Աստծո
զորությունը՝ ավելի լիարժեք դարձնելով մեր
ջանքերը:*

Գորդոնի մայրն ասաց նրան, որ եթե ավարտեր իր գործերը, կարկանդակներ կպատրաստեր նրա համար: Նրա սիրած կարկանդակները: Միայն իր համար: Գորդոնը զննեց ավարտին հասցնելու անհրաժեշտ գործերը, իսկ մայրիկը սկսեց կարկանդակներ պատրաստել: Նրա մեծ քույրը՝ Քեյթին, տուն եկավ իր ընկերներից մեկի հետ: Նա տեսավ կարկանդակները և խնդրեց, որ ինքն ու ընկերը մի-մի կարկանդակ վերցնեն:

«Ոչ,- ասաց Գորդոնը,- Դրանք իմ կարկանդակներն են: Մայրիկը դրանք ինձ համար է պատրաստել, և ես վաստակել եմ դրանք»:

Քեյթին զայրացած նայեց փոքր եղբորը: Նա այնքան եսակենտրոն և ժլատ էր: Ինչպե՞ս կարող էր բոլորը պահել իրեն:

Մի քանի ժամ անց, երբ Քեյթին բացեց մեքենայի դուռը, որպեսզի

ընկերոջը տուն տաներ, տեսավ երկու զեղեցիկ ծալված անձեռոցիկ՝ վրան պատառաքաղներ, ինչպես նաև ավսեի մեջ դրված երկու մեծ կարկանդակ: Քեյթին

պատմեց այս ամենը Գորդոնի թաղման ժամանակ, ցույց տալով, թե նա որքան պատրաստակամ էր փոխվելու և սեր ցուցաբերելու նրանց հանդեպ, ովքեր ոչ միշտ էին դրան արժանի:

1842 թվականին Մրբերը ջանասիրաբար աշխատում էին կառուցել Նավոյի Տաճարը: Մարտին Սփոփող միությունը հիմնելուց հետո Մարգարե Ջոզեֆը հաճախ գալիս էր նրանց ժողովներին, որպեսզի պատրաստեր նրանց սրբազան, միավորող ուխտերի համար, որոնք նրանք շուտով կապելու էին տաճարում:

Հունիսի 9-ին Մարգարեն «ասաց, որ քարոզելու էր ողորմածության մասին»[:] Պատկերացրեք, որ Հիսուս Քրիստոսը [և] հրեշտակները մեզ չսիրեին չնչին բաների համար, ի՞նչ կլինեիր մեզ հետ: Մենք պետք է ողորմած լինենք և չնկատենք փոքր բաները: Նախագահ Սմիթը շարունակել է. «Ինձ վշտացնում է, որ չկա լիարժեք ընկերություն. եթե անդամներից մեկը տառապում է, դա բոլորը զգում են. զգացմունքների միասնականությամբ մենք զորություն ենք ձեռք բերում Աստծո հետ»:¹

Այդ փոքր նախադասությունը կայծակի պես հարվածեց ինձ: *Զգացմունքների միասնականությամբ մենք զորություն ենք ձեռք բերում Աստծուց:* Այս աշխարհին այնպիսին չէ, ինչպիսին ես եմ



Սանտո Դոմինգո, Դոմինիկյան Հանրապետություն

ուզում՝ այն լինի: Կան շատ բաներ, որոնց վրա ես ուզում եմ ազդել և ավելի լավը դարձնել: Եվ, անկեղծ ասած, շատ մեծ հակադրության են հանդիպում այն բաներում, որոնց հույսը ես ունեմ, և երբեմն ես ինձ անգոր եմ զգում: Վերջերս ես ինքս ինձ որոնողական հարցեր եմ տալիս. Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ հասկանալ ինձ շրջապատող մարդկանց: Ինչպե՞ս կարող եմ ստեղծել այդ «զգացմունքների միասնականությունը», երբ մարդիկ այդքան տարբեր են: Ի՞նչ գործություն կարող եմ ստանալ Աստուծուց, եթե մի փոքր ավելի միասնական դառնամ ուրիշների հետ: Քննելով իմ հոգին՝ ես ունեմ երեք խորհուրդ: Գուցե դրանք նաև օգտակար լինեն ձեզ:

Եղեք ողորմած

Հակոբի 2.17 հատվածում կարդում ենք. «Մտածեք ձեր եղբայրների (և քույրերի) մասին, ինչպես ինքներդ ձեր մասին և բարյացակամ եղեք բոլորի հանդեպ և առատաձեռն՝ ձեր ունեցվածքով, որ նրանք կարողանան լինել հարուստ, ինչպես դուք»: Եկեք *ունեցվածք* բառը փոխարինենք *ողորմածություն* բառով. առատաձեռն՝ ձեր *ողորմածությանը*, որ նրանք կարողանան լինել հարուստ, ինչպես դուք:



Ունեցվածք, Սյոահո, ՄՄՆ

Հաճախ ունեցվածք ասելով մենք հասկանում ենք ուտելիք կամ փող, սակայն մենք բոլորս անշուշտ ավելի շատ ունենք ողորմածությամբ սպասավորելու կարիք:

Իմ Սփոփող Միության նախագահը վերջերս ասաց. «Ես ձեզ . . . խոստանում եմ . . . մի բան, որ ապահով կպահեն ձեր անունը: . . . Ես կփորձեմ տեսնել ձեր լավագույն կողմերը: . . . Ես երբեք ձեր մասին չեմ ասի որևէ անբարյացակամ բան, որը ձեզ չի բարձրացնի: Ես խնդրում եմ ձեզ անել նույնը ինձ համար, քանի որ, անկեղծ ասած, վախենում եմ ձեզ հուսահատեցնել»:

Ջոզեֆ Սմիթը 1842 թվականի հունիսին քույրերին ասել է.

«Երբ մարդիկ նվազագույն չափով իսկ բարություն և սեր են դրսևորում իմ հանդեպ, Օ՛, ինչպիսի հզոր ազդեցություն է այն թողնում ինձ վրա: . . .

. . . Որքան ավելի շատ մոտենանք մեր Երկնային Հորը, ավելի շատ տրամադրված կլինենք կարեկցանքով նայել կործանվող հոգիների վրա, [մենք կզգանք, որ կամենում ենք] վերցնել նրանց մեր ուտերին և նետել նրանց մեղքերը մեր մեջքին: [Իմ ելույթը վերաբերում է] այս ողջ Միությանը. եթե ուզում եք, որ Աստված ողորմություն ունենա ձեզ վրա, ողորմություն ունեցեք մեկը մյուսի հանդեպ»:²

Այս խորհուրդը հատկապես վերաբերում էր Սփոփող միությանը: Եկեք չդատենք միմյանց կամ թույլ տանք մեր խոսքով խայթել: Եկեք ապահով պահենք միմյանց անունները և տանք ողորմության պարզևր:³

Ճոճեք ձեր նավակը

Վաշինգտոնի համալսարանի թիավարների ոչ այնքան հայտնի մի թիմ 1936 թվականին մեկնեց Գերմանիա՝ մասնակցելու Օլիմպիական խաղերին: Դա Մեծ ճզնաժամի ամենավատթար տարին էր: Այդ տղաները բանվոր դասակարգից էին, որոնց հանքարդյունաբերական քաղաքները

մի փոքր գումար էին նվիրաբերել, որպեսզի նրանք կարողանային մեկնել Բեռլին: Հուսադրող ոչ մի փաստ չկար, բայց մրցման ժամանակ ինչ-որ բան տեղի ունեցավ: Թիավարները այն կոչում են «ճոճք»: Լսեք այս նկարագրությունը, որը վերցված է *Տղաները նախակում* գրքից.

Կա մի բան, որը երբեմն պատահում է, որին դժվար է հասնել և դժվար է սահմանել: Այն կոչվում է «ճոճք»: Դա տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ բոլորը թիավարում են այնքան կատարյալ միասնականությամբ, որ ոչ մի շարժում չի վրիպում ճիշտ ընթացքից:

Թիավարները պետք է վերահսկեն իրենց անկախությունը և միևնույն ժամանակ առավելագույնս գործի դնեն իրենց անհատական ունակությունները: Մրցումների հաղթանակի գրավականը միանմանությունը չէ: Լավ թիմը լավ համադրություն է. մեկը ղեկավարն է, մեկը պահեստային խաղացողն է, մեկը հիմնական պայքարը մղողն է, մեկը խաղաղություն հաստատելու համար է: Ոչ մի թիավարող ավելի արժեքավոր չէ, քան մյուսը, նավում յուրաքանչյուրն ունի իր առավելությունը, բայց որպեսզի նրանք միասին լավ թիավարեն, յուրաքանչյուրը պետք է հարմարվի մյուսների կարիքներին և հնարավորություններին. կարճ ձեռքեր ունեցողը փորձում է առավելագույնս երկարել իր ձեռքը, երկար ձեռք ունեցողը մի փոքր հետ է պահում իրեն:

Տարբերությունները թերության փոխարեն կարող են առավելություն դառնալ: Միայն այդ ժամանակ այնպիսի տպավորություն կստեղծվի, ասես նավն ինքն իրեն է շարժվում: Միայն այդ ժամանակ է ցավն ամբողջությամբ իր տեղը գիջում վեհացմանը: Լավ «ճոճքը» նման է պոեզիայի:⁴

Անկախ անհաղթահարելի թվացող խոչընդոտներից՝ այս թիմը կատարյալ ճոճք կատարեց և հաղթեց: Օլիմպիական ոսկին ոգևորիչ էր, բայց այն միասնությունը, որի

փորձառությունն այդ օրն ունեցավ մասնակիցներից յուրաքանչյուրը, սուրբ պահ էր, որը նրանց հուշերում մնաց ամբողջ կյանքում:

Մաքրեք վատը՝ լավի աճելու հետ մեկտեղ

Հակոբի 5-րդ գլխի այլաբանությունում այգու Տերը լավ ծառ տնկեց լավ հողում, սակայն ծամանակի ընթացքում այն ապականվեց և առաջ բերեց վայրի պտուղ: Այգու Տերը ութ անգամ ասում է. «Ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ այս ծառը»:

Ծառան այգու Տիրոջն ասում է. «Խնայիր [ծառը] ևս մի քիչ: Եվ Տերն ասաց. Այո՛, ես կյնայեմ նրան մի քիչ էլ»:⁵

Ապա տրվում են հրահանգներ, որոնք կարող են վերաբերել մեզանից յուրաքանչյուրին, ով փորձում է փորել և լավ պտուղ գտնել մեր իսկ փոքրիկ այգում. «Դուք պետք է մաքրեք վատը՝ լավի աճելու հետ մեկտեղ»:⁶

Միասնությունը հրաշքով չի հայտնվում. այն պահանջում է աշխատանք: Երբեմն առաջ է գալիս խառնաշփոթ, անհարմարավետություն և աստիճանաբար ենք հասնում նրան, որ մաքրենք վատը՝ լավի աճելու հետ մեկտեղ:

Մենք երբեք միայնակ չենք լինի միասնություն ստեղծելու մեր ջանքերում: Հակոբ 5-րդ գլխում շարունակվում է. «Ծառաները գնացին և աշխատեցին իրենց զորությամբ. և այգու Տերը նույնպես աշխատում էր նրանց հետ»:⁷

Մեզանից յուրաքանչյուրն էլ ունենալու է խորապես վշտացնող փորձառություններ, բաներ, որոնք երբեք չպիտի պատահեին: Մեզանից յուրաքանչյուրը նաև բազմիցս թույլ է տալու, որ հպարտությունն ու գոռոզությունն ապականեն մեր պտուղները: Սակայն Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է բոլոր բաներում: Նրա զորությունը հասնում է ամեն տեղ և հուսալի է, երբ մենք կանչում ենք Նրան: Մենք բոլորս մտրում ենք ողորմություն մեր մեղքերի և սխալների համար: Նա առատորեն տալիս է այն: Եվ նա

խնդրում է մեզ, որ մենք այդ նույն ձևով ողորմած լինենք միմյանց հանդեպ և հասկանանք միմյանց:

Հիսուսը հատակ ասել է. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»:⁸ Բայց եթե մենք մեկ ենք, եթե մենք կարող ենք կիսվել մեր կարկանդակներով կամ մեր անձնական տաղանդները գործածել, որպեսզի ճոճվենք կատարյալ միասնությամբ, այդ դեպքում մենք Նրանն ենք: Եվ Նա կօգնի մաքրել վատը՝ լավի աճելու հետ մեկտեղ:

Մարգարեական խոստումներ

Գուցե մենք դեռ չենք հասել այնտեղ, որտեղ ուզում ենք լինել, և մենք չգիտենք, թե որտեղ կլինենք: Ես կարծում եմ, որ փոփոխությունները, որոնք մենք փնտրում ենք մեր մեջ և խմբերի մեջ, որոնց պատկանում ենք, ավելի քիչ կզանակտիվիստ լինելու միջոցով և ավելի շատ, երբ մենք ակտիվորեն փորձենք ամեն օր հասկանալ միմյանց: Ինչո՞ւ: Քանի որ մենք կառուցում ենք Միոնը՝ «մեկ սրտի և մեկ մտքի» ժողովուրդը:⁹

Որպես ուխտի կանայք, մենք ունենք մեծ ազդեցություն: Այդ ազդեցությունը կիրառվում է ամեն օր և ամեն պահի, երբ սովորում ենք ընկերոջ հետ, երեխաներին անկողին ուղեկցում, ավտոբուսում զրուցում մեր կողքի նստողի հետ, գործընկերոջ հետ շնորհանդեսի պատրաստվում: Մենք զորություն ունենք հեռացնելու նախատրամադրվածությունը և կառուցելու միասնություն:

Մփոփող Միությունը և Երիտասարդ կանայք պարզապես դասարաններ չեն: Դրանք կարող են նաև անմոռանալի փորձառություններ լինել, որտեղ շատ տարբեր կանայք միասին նստում են մի նավում և թիավարում, մինչև մենք գտնում ենք մեր *ճոճքը*: Ես հղում եմ այս հրավերը. եղեք միասնական ուժի մի մասը, որը փոխում է աշխարհը դեպի լավը: Մեր ուխտի հանձնարարությունն է՝ սպասավորել, բարձրացնել ընկած ձեռքերը, պայքարող մարդկանց դնել մեր ուսերին կամ տանել մեր ձեռքերի

վրա: Դժվար չէ իմանալ, թե ինչ անենք, սակայն այն հաճախ դեմ է մեր եսասիրական հետաքրքրություններին, և մենք պետք է փորձենք: Եկեղեցու կանայք ունեն հասարակությունը փոխելու ամենամեծ ներուժը: Ես ունեմ լիարժեք հոգևոր վստահություն, որ եթե մենք փնտրենք զգացմունքների միասնականություն, մենք կիրավիրենք Աստծո զորությունը՝ ավելի լիարժեք դարձնելով մեր ջանքերը:

Երբ Եկեղեցին նշում էր քահանայության վերաբերյալ 1978 թվականի հայտնությունը, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հղեց զորեղ մարգարեական օրհնություն. «Իմ աղոթքն ու *օրհնությունը*, որ ես թողնում եմ յուրաքանչյուրի վրա, ով լսում է, այն է, որ մենք կարողանանք հաղթահարել նախապաշարմունքի ցանկացած բեռ և ուղիղ քայլենք Աստծո և միմյանց հետ՝ կատարյալ խաղաղությամբ և ներդաշնակությամբ»:¹⁰

Թող որ մենք օգտվենք այս մարգարեական օրհնությունից և օգտագործենք մեր անհատական և համատեղ ջանքերը՝ մեծացնելու միասնությունը աշխարհում: Ես թողնում եմ իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի խոսնարի հավերժական աղոթքի բառերով. «Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, եւ ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մեկ լինեն»:¹¹ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "Minutes and Discourse, 9 June 1842," 61, Joseph Smith Papers, josephsmithpapers.org/paper-summary/minutes-and-discourse-9-june-1842/1.
2. "Minutes and Discourse, 9 June 1842," 62, Joseph Smith Papers, josephsmithpapers.org/paper-summary/minutes-and-discourse-9-june-1842/2.
3. Cree-L Kofford, "Your Name Is Safe in Our Home," *Liahona*, July 1999, 96–98.
4. Daniel James Brown, *The Boys in the Boat: Nine Americans and Their Epic Quest for Gold at the 1936 Berlin Olympics* (2013), 161, 179.
5. Հակոբ 5.50–51:
6. Հակոբ 5.66:
7. Հակոբ 5.72:
8. Վարդապետություն և Ուխտեր 38.27:
9. Մովսես 7.18:
10. Russell M. Nelson, "Building Bridges," *Liahona*, Dec. 2018, 51; emphasis added.
11. Հովհաննես 17.21:



Բեգի Քրեյվեն
 Երիտասարդ կանանց գերագույն նախագահության
 երկրորդ խորհրդակալ

Պահեք տարբերությունը

*Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ ուժ է տրվում
 տևական փոփոխություններ կատարելու համար:
 Երբ մենք խոնարհաբար դիմենք Նրան, Նա
 կմեծացնի փոխվելու մեր ունակությունը:*

Քույրե՛ր, մեծ ուրախություն է լինել ձեզ հետ:

Պատկերացրեք, որ մեկը գնում է խանութ՝ գնումներ կատարելու: Եթե վաճառողին տալիս են ապրանքների արժեքից ավել գումար, վաճառողը նրանց է վերադարձնում տարբերությունը:

Բենիամին թագավորը հնադարյան Ամերիկայում սովորեցրեց հրաշալի օրհնությունների մասին, որոնք մենք ստանում ենք մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից: Նա ստեղծել է երկինքները և երկիրը, և ամեն գեղեցիկ բան, որ մենք վայելում ենք:¹ Իր սիրառատ Քավությանը՝ Նա մեզ համար ճանապարհ է պատրաստում, որպեսզի ազատվենք մեղքից և մահից:² Երբ մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում Նրան, ջանասիրաբար ապրելով Նրա պատվիրաններով, Նա անմիջապես օրհնում է մեզ, և մենք շարունակ մնում ենք Նրան պարտապանը:

Նա մեզ շատ բան է տալիս, ավելին, քան մենք երբևէ կկարողանանք վերադարձնել: Ուստի, մենք ի՞նչ կարող ենք տալ Նրան, ով վճարեց մեր մեղքերի անհաշվելի գինը: Մենք կարող ենք տալ Նրան *տարբերությունը*: Մենք

կարող ենք ցույց տալ Նրան, որ *տարբերվում ենք հին մարդուց*: Այդ տարբերությունը կարող է անդրադառնալ մեր մտքերի, արարքների և մեր ընտրած ուղու վրա: Յուրաքանչյուրիս համար կատարած Իր անգին վճարի դիմաց Տերը մեզանից սրտի փոփոխություն է խնդրում: Փոփոխությունը, որը Նա պահանջում է մեզանից, Նրա օգտի համար չէ, այլ՝ մեր: Այսպիսով, մինչ գնորդը հետ է վերցնում իրեն պատկանող տարբերությունը, սիրո, ողորմության և շնորհի

Տերը, պարզապես հորդորում է մեզ *պահել տարբերությունը* կամ այլ կերպ ասած՝ փոփոխությունը:

Բենիամին թագավորի խոսքերը լսելուց հետո նրա ժողովուրդը բացականչեց, հայտարարելով, որ իրենց սրտերը փոխվել էին, ասելով. «Ամենակարող Տիրոջ Հոգու շնորհիվ, որը մեր մեջ կամ մեր սրտերում մի զորեղ փոփոխություն է առաջացրել, . . . մենք այլևս հակված չենք գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք»:³ Սուրբ գրությունները չեն ասում, որ նրանք անմիջապես կատարյալ դարձան, այլ որ նրանց փոխվելու ցանկությունը մղեց նրանց գործել: Նրանց սրտերի փոփոխությունը նշանակում է՝ հանել բնական տղամարդուն կամ կնոջը և, Հոգուն ենթարկվելով, ձգտել ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին:

Նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանում է. «Ճշմարիտ դարձը կախված է ազատ հավատքով փնտրելուց՝ մեծ ջանքերով և որոշակի ցավով: Ապա միայն Տերը կարող է շնորհել . . . մաքրագործման և փոփոխության հրաշքը»:⁴ Մեր ջանքերը միավորելով մեզ փոխելու Տիրոջ ունակության հետ՝ մենք դառնում ենք նոր արարածներ:

Երբ ես ավելի երիտասարդ էի, ես պատկերացնում էի, թե ինչպես եմ քայլում ուղղահայաց արահետով վեր՝ դեպի իմ նպատակը՝



Գվատեմալա Սիթի, Գվատեմալա



Մորիենա, Կալիֆորնիա, ԱՄՆ

հավերժական կյանքը: Ամեն անգամ, երբ ինչ-որ բան սխալ էի անում կամ ասում, զգում էի, թե ինչպես եմ ցած սահում արահետով, որպեսզի նորից սկսեմ իմ ճանապարհը: Դա նման էր մանկական «Մահանքներ և սանդուղքներ» խաղի այն կետին, որտեղից վայրէջք կատարելով, տախտակի վերևից հասնում եք խաղի սկզբին: Դա հիասթափեցնող էր: Սակայն, երբ ես սկսեցի հասկանալ Քրիստոսի վարդապետությունը⁵ և ինչպես այն ամեն օր կիրառել իմ կյանքում, ես հույս գտա:

Հիսուս Քրիստոսը մեզ տվել է փոխվելու շարունակական բնույթ կրող օրինաչափություն: Նա հրավիրում է մեզ հավատալ Իրեն, ինչն էլ ոգեշնչում է մեզ ապաշխարել. «հավատք ու ապաշխարություն, որը սրտի փոփոխություն է բերում»:⁶ Երբ մենք ապաշխարում և մեր սրտով դառնում ենք Նրան, ձեռք ենք բերում սրբազան ուխտեր և դրանցով ապրելու ավելի մեծ ցանկություն: Մենք համբերում ենք միևնույն վերջ՝ շարունակելով կիրառել այդ սկզբունքները մեր ողջ կյանքի ընթացքում և հրավիրելով Տիրոջը փոխել մեզ: Մինչև վերջ համբերել նշանակում է *փոխվել* մինչև վերջ: Այժմ ես հասկանում եմ, որ ամեն չհաջողված փորձից հետո ես ոչ թե նորից եմ սկսում, այլ ամեն փորձից հետո ես շարունակում եմ փոխվելու իմ գործընթացը:

Մի ոգեշնչված արտահայտություն կա Երիտասարդ կանանց թեմայում. «Ես փայփայում եմ ապաշխարության պարզեր և ձգտում եմ կատարելագործվել ամեն օր»:⁷ Ես աղոթում եմ, որ մենք փայփայենք այդ գեղեցիկ պարզեր և մենք նպատակապես կերպով փոփոխություն փնտրենք: Փոփոխությունները, որոնք մենք պետք է կատարենք, երբեմն կապված են լուրջ մեղքի հետ: Սակայն հիմնականում մենք ձգտում ենք կատարելագործել մեր բնավորությունը՝ համապատասխանեցնելով այն Հիսուս Քրիստոսի հատկանիշներին: Մեր ամենօրյա ընտրությունները կա՛մ կօզնեն, կա՛մ կլիսանգարեն մեր առաջընթացին: Փոքր, բայց կայուն, կշռադատված փոփոխությունները կօզնեն մեզ բարելավվել: Մի՛ հուսահատվեք: Փոխվելու գործընթացը պետք է շարունակվի ողջ կյանքում: Ես երախտապարտ եմ, որ փոխվելու մեր պայքարի ընթացքում Տերը համբերատար է մեզ հետ:

Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ ուժ է տրվում տևական փոփոխություններ կատարել: Երբ մենք խոնարհաբար դիմենք Նրան, Նա կմեծացնի փոխվելու մեր ունակությունը:

Ի լրացում մեր Փրկիչի Քավության վերափոխող գործությանը, Մուրբ Հոգին կաջակցի և կառաջնորդի մեզ, երբ մենք ջանքեր գործադրենք: Նա կարող է նույնիսկ օգնել մեզ իմանալ, թե ինչ փոփոխություններ պետք է կատարենք: Մենք կարող ենք նաև օգնություն և քաջալերանք գտնել քահանայության օրհնությունների, աղոթքի, ծոմի և տաճար այցելելու միջոցով:

Նմանապես, ընտանիքի վստահելի անդամները, ղեկավարները և ընկերները կարող են օգնել մեզ փոխվելու մեր ջանքերում: Երբ ես ութ տարեկան էի, ես և իմ ավագ եղբայրը՝ Լին, ժամանակ էինք անցկացնում մեր ընկերների հետ՝ խաղալով մեր բակի ծառի ճյուղերին: Մենք սիրում էինք միասին ժամանակ անցկացնել մեր ընկերների հետ այդ ծառի ստվերում:

Մի օր Լին ընկավ ծառից ու կտրեց ձեռքը: Կտրված ձեռքով նա դժվարանում էր ինքնուրույն մագլցել ծառը: Իսկ ծառի վրա կյանքը առանց նրա հետաքրքիր չէր: Ուստի, մեզանից մի քանիսը հրում էին նրան հետևից, մինչդեռ մյուսները քաշում էին առողջ ձեռքից, և առանց մեծ ջանքերի Լին վերադառնում էր ծառի վրա: Նրա ձեռքը դեռ կտրված էր, սակայն նա կրկին մեզ հետ էր և վայելում էր մեր ընկերակցությունը՝ մինչ ապաքինվում էր:

Ես հաճախ մտածել եմ ծառի վրա խաղալու իմ փորձառության մասին՝ որպես Հիսուս Քրիստոսի ավետարանում մեր գործունեության տիպարի: Ավետարանի ճյուղերի ստվերում մենք վայելում ենք բազմաթիվ օրհնություններ՝ կապված մեր ուխտերի հետ: Ոմանք գուցե շեղվել են իրենց ուխտերի ապահովությունից և ունեն մեր օգնության կարիքը՝ կրկին բարձրանալու ավետարանի ապահով ճյուղերի վրա: Գուցե դժվար է նրանց համար ինքնուրույն վերադառնալ: Արդյոք կարո՞ղ ենք զգուշությամբ օգնել նրանց բարձրանալ և ապաքինվել, մինչ նրանք վայելում են մեր ընկերակցությունը:

Եթե դուք տառապում եք սայթաքելու պատճառով, խնդրում եմ, թույլ տվեք ուրիշներին օգնել ձեզ վերադառնալ ձեր ուխտերին և դրանց առաջարկված օրհնություններին: Փրկիչը կարող է օգնել ձեզ ապաքինվել և փոխվել, մինչ շրջապատված եք ձեզ սիրող մարդկանցով:

Ես հաճախ հանդիպում եմ ընկերների, որոնց երկար տարիներ չեմ տեսել: Երբեմն նրանք ասում են. «Դու ընդհանրապես չես փոխվել»: Ամեն անգամ դա լսելիս ես մի փոքր տխրում եմ, քանի որ հույս ունեմ, որ տարիների ընթացքում *ես փոխվել եմ*: Հուսով եմ, որ ես փոխվել եմ նույնիսկ երեկվա համեմատ: Հուսամ, որ ես ավելի բարյացակամ եմ, ավելի քիչ դատապարտող և ավելի շատ կարեկցող: Հուսամ, որ ավելի արագ եմ արձագանքում

ուրիշների կարիքներին, և հուսով եմ, որ մի փոքր ավելի համբերատար եմ:

Ես սիրում եմ մազլցել իմ տան մոտակայքում գտնվող սարերը: Հաճախ մազլցելիս կոշիկիս մեջ փոքրիկ քար է հայտնվում: Ի վերջո, ես կանգնում և թափ եմ տալիս կոշիկս: Սակայն ես զարմանում եմ, թե որքան երկար եմ հանդուրժում ցավ զգալով մազլցելը, նախքան ես կանգ կառնեմ և կազատվեմ ինձ նյարդայնացնող քարից:

Մինչ մենք ճամփորդում ենք ուխտի արահետով, երբեմն քարեր են հայտնվում մեր կոշիկների մեջ՝ նման վատ սովորությունների, մեղքերի կամ վերաբերմունքի: Որքան շուտ կյանքում ազատվենք դրանցից, այնքան ուրախ կանցնի մեր մահկանացու ճամփորդությունը:

Փոփոխության պահպանումը ջանքեր է պահանջում: Ես չեմ կարող պատկերացնել, որ կանգ կառնեմ ճանապարհին միայն այն բանի համար, որ կրկին կոշիկիս մեջ դնեմ նյարդայնացնող և ցավ պատճառող խճաքարը, որը հենց նոր էի հանել: Ես չեի ցանկանա երբևէ նորից անել դա, ինչպես գեղեցիկ թիթեռնիկը չէր ցանկանա վերադառնալ իր բոժոժը:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք *կարող ենք* փոխվել: Մենք կարող ենք հարմարեցնել մեր սովորությունները, փոխել մեր մտքերը և կատարելագործել մեր բնավորությունը, որպեսզի ավելի շատ նմանվենք Նրան: Եվ Նրա օգնությամբ մենք կարող ենք *պահել փոփոխությունները*: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. Տես Մոսիա 4.9:
2. Տես Մոսիա 3.5-12:
3. Մոսիա 5.2:
4. Հենրի Բ. Այրինգ, «Մենք պետք է բարձրացնենք մեր հայացքները», *Ensign*, սեպտ. 2004, 18:
5. Տես 2 Նեփի 31.21, 3 Նեփի 27.13-21:
6. Հեկաման 15.7:
7. Երիտասարդ կանանց թեմա, ChurchofJesusChrist.org:



Քրիստինա Բ. Ֆրանկո
Երեխաների Միության գերագույն նախագահության
երկրորդ խորհրդակալ

Հիսուս Քրիստոսի բժշկող զորությունը

Երբ մենք գալիս ենք Հիսուս Քրիստոսի մոտ՝ հավատք գործադրելով Նրա հանդեպ, ապաշխարելով, կապելով և պահելով ուխտեր, մեր կոտրված հոգին, անկախ պատճառից, կարող է բժկվել:

Այս տարվա հենց սկզբից մենք բախվում ենք բազմաթիվ անսպասելի իրադարձությունների հետ: Համավարակի պատճառով կյանքերի և եկամուտների կորուստը լուրջ ազդեցություն է թողել համաշխարհային համայնքի և տնտեսության վրա:

Երկրաշարժերը, հրդեհները և ջրհեղեղները աշխարհի տարբեր

մասերում, ինչպես նաև եղանակային այլ աղետները մարդկանց ստիպում են իրենց զգալ անօգնական, անհույս և կոտրված սրտով մտածել, թե արդյո՞ք կյանքը մի օր կվերականգնվի:

Թույլ տվեք պատմել ձեզ կոտրված հոգու մասին իմ անձնական պատմությունը:

Երբ մեր երեխաները փոքր էին, նրանք որոշեցին, որ ցանկանում են դաշնամուրի դասերի հաճախել: Ես ու ամուսինս՝ Ռուդին, ցանկանում էինք այդ հնարավորությունը տալ մեր երեխաներին, բայց դաշնամուր չունեինք: Մենք չէինք կարող մեզ թույլ տալ նոր դաշնամուր գնել, ուստի, Ռուդին սկսեց փնտրել օգտագործված գործիք:

Այդ տարվա սուրբ ծննդյան օրը նա բոլորիս անակնկալ արեց՝ բերելով դաշնամուրը, և տարիներ շարունակ մեր երեխաները սովորում էին նվագել:

Երբ մեր որդիները մեծացան և առանձնացան, հին դաշնամուրը պարզապես փոշի էր հավաքում, ուստի, մենք վաճառեցինք այն: Մի քանի տարի անց մենք



Բելֆաստ, Հյուսիսային Իռլանդիա

որոշակի գումար էինք տնտեսել: Մի օր Ռուդին ասաց. «Կարծում եմ, ժամանակն է, որ մենք նոր դաշնամուր գնենք»:

Ես հարցրի. «Ինչո՞ւ նոր դաշնամուր գնենք, եթե երկուսս էլ չենք նվագում»:

Նա ասաց. «Այո՛, բայց մենք կարող ենք ձեռք բերել ինքնուրույն նվագող դաշնամուր: IPad-ի օգնությամբ կարելի է ծրագրավորել դաշնամուրը, որ ավելի քան 4000 երգ նվագի, այդ թվում՝ օրհներգեր, Թաբերնաքլի երգչախմբի երգերը, Երեխաների միության բոլոր երգերը և այլն»:

Ռուդին, մեղմ ասած, հիանալի համոզող է:

Մենք գնեցինք մի գեղեցիկ նոր դաշնամուր, և մի քանի օր անց երկու աժդահա տղամարդիկ առաքեցին այն:

Ես ցույց տվեցի, թե որտեղ տանեն գործիքը, և մի կողմ գնացի ճանապարհից:

Դա մանկական ծանր ու մեծ դաշնամուր էր, և այն դռնից ներս մտցնելու համար նրանք առանձնացրին ոտքերը և կողաշրջելով դրեցին այն իրենց հետ բերած շարժասայլակի վրա:

Մեր տունը տեղակայված էր լանջի վրա, և, ցավոք, ավելի վաղ այդ օրը ձյուն էր տեղացել՝ բակը դարձնելով թաց ու սայթաքուն: Կռահում եք, չէ՞, թե ինչ էր լինելու:

Երբ տղամարդիկ դաշնամուրը բարձրացնում էին լանջն ի վեր, այն սայթաքեց, և ես լսեցի շատ ուժեղ ճայթյուն: Այն ընկել էր շարժասայլակի վրայից և այնպիսի ուժգնությամբ էր հարվածել գետնին, որ մեր մարգագետնում մի մեծ խոռոչ էր առաջացել:

Ես ասացի. «Օ՛հ, ո՛չ: Դուք լա՞վ եք»:

Բարեբախտաբար, տղամարդկանց ոչինչ չէր պատահել:

Նրանք լայն բացած աչքերով նայում էին մեկը մյուսին, հետո նայեցին ինձ և ասացին. «Ցավում ենք կատարվածի համար: Մենք այն հետ կտանենք՝ խանութ և կլիանդրենք մեր մենեջերին զանգել ձեզ»:

Քիչ անց մենեջերը խոսում էր Ռուդիի հետ՝ նոր դաշնամուրի առաքման հարցով: Ռուդին բարի ու ներողամիտ մարդ է և ասաց մենեջերին, որ հարմար կլիներ, եթե նրանք պարզապես վերանորոգեին նույն դաշնամուրը և բերեին, բայց մենեջերը պնդեց, որ մենք նորը կստանանք:

Ռուդին արձագանքեց, ասելով. «Այն այդքան վատ վիճակում չէր: Միայն վերանորոգեք և բերեք»:

Մենեջերն ասաց. «Փայտը կտորված է, իսկ երբ փայտն է կտորվում, այն այլևս նույն կերպ չի հնչում: Դուք նոր դաշնամուր կստանաք»:

Քույրե՛ր և եղբայրնե՛ր, մի՞թե մենք բոլորս նման չենք այս դաշնամուրին՝ մի փոքր կտորված, ճաքած ու վնասված, ունենալով այն զգացումը, որ այլևս երբեք նույնը չենք լինի: Այնուամենայնիվ, երբ մենք գալիս ենք Հիսուս Քրիստոսի մոտ՝ հավատք գործադրելով Նրա հանդեպ, ապաշխարելով, կապելով և պահելով ուխտեր, մեր կտորված հոգին, անկախ պատճառից, կարող է բժշկվել: Այս գործընթացը, որը մեր կյանք է հրավիրում Փրկիչի բուժող զորությունը, ոչ միայն վերականգնում է մեզ մեր նախկին վիճակին, այլև ավելի լավն է դարձնում, քան երբևէ եղել ենք: Ես գիտեմ, որ մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով մենք բոլորս կարող ենք նորոգվել, ամբողջանալ և իրականացնել մեր նպատակը՝ ինչպես գեղեցիկ հնչող բոլորովին նոր դաշնամուրը:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Երբ գալիս են դառն փորձությունները, ժամանակն է խորացնել մեր հավատն առ Աստված, ջանասիրաբար աշխատել և ծառայել մյուսներին: Ապա, Նա կբուժի մեր կտորված սրտերը: Նա մեզ կտա անձնական խաղաղություն և մխիթարություն: Այդ մեծ պարգևները չեն ոչնչանա, նույնիսկ մահը չի ոչնչացնի դրանք»:¹

Հիսուսն ասել է.

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:



Պրովո, Յուտա, ԱՄՆ

Ձեզ վերայ առեք իմ լուծը եւ ինձանից սովորեցեք. Որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. Եւ ձեր անձերի համար հանգստութիւն կ'զտնէք:

Որովհետեւ իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս 11.28-30):

Որպեսզի բժշկենք կտորված հոգին՝ գալով Նրա մոտ, մենք պետք է հավատք ունենանք առ Հիսուս Քրիստոսը: «Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք ունենալ նշանակում է ամբողջովին ապավինել Նրան, վստահել Նրա անսահման զորությանը . . . և սիրուն: Դա ներառում է հավատալ Նրա ուսմունքներին: Դա նշանակում է հավատալ, որ, թեև մենք չենք հասկանում բոլոր բաները, Նա հասկանում է: Քանի որ Նա կրել է մեր բոլոր ցավերը, տառապանքներն ու տկարությունները, Նա գիտի, թե ինչպես օգնի մեզ, որ հաղթահարենք մեր ամենօրյա դժվարությունները»:²

Գալով Նրա մոտ, «մենք կարող ենք լցված լինել ուրախությամբ, խաղաղությամբ և մխիթարությամբ: Այն ամենը, ինչ անարդար է կյանքում, կարող է շտկվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով»:³ Նա մեզ հորդորել է. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք» (Վարդապետություն և Ուխտեր 6.36):



Սան Պաուլո, Բրազիլիա

Մորմոնի Գրքում, երբ Ալման և նրա ժողովուրդը գրեթե ջախջախված էին այն բեռի տակ, որը նրանց մեջքին էր դրվել, մարդիկ օգնություն էին աղերսում: Տերը չվերացրեց բեռը, սակայն խոստացավ նրանց.

«Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին, նույնիսկ մինչև դուք ճորտության մեջ եք. և սա ես կանեմ, որպեսզի հետագայում դուք կարողանաք կանգնել որպես վկաներ ինձ համար, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ:

Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ալմայի ու նրա եղբայրների վրա, թեթևացան. այո՛, Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին» (Մոսիա 24.14-15):

Բժշկելու և բեռը թեթևացնելու Փրկիչի ունակության մասին երեց Թեդ Ռ. Քալիսթերն ասել է.

«Քավության օրհնություններից մեկն այն է, որ մենք կարող ենք ստանալ Փրկիչի աջակցող զորությունները: Եսայիան բազմիցս խոսել է Տիրոջ բժշկող, հանգստացնող ազդեցության մասին: Նա վկայել է, որ Փրկիչը «ապաստան

եղավ աղքատին, . . . նորա նեղության մեջ, ապաւեն՝ փոթորիկից, հովանի՝ տաքութիւնից» (Եսայիա 25.4): Ինչ վերաբերում է նրանց, ովքեր վշտի մեջ են, Եսայիան հայտարարել է, որ Փրկիչն ունի զորություն «բոլոր սգաւորներին մխիթարելու» (Եսայիա 61.2), և «պիտի ջնջէ արտասուքը ամեն երեսից» (Եսայիա 25.8, տես նաև Հայտնություն 7.17), որ «խոնարհների հոգին կենդանացնի» (Եսայիա 57.15), և «կոտրած սիրտ ունեցողներին բժշկի» (Եսայիա 61.1, տես նաև Դուկաս 4.18, Մադմոս 147.3): Նրա աջակցող ուժն այնքան ընդարձակ էր, որ կարող էր փոփոխություններ կատարել, որ «փառք տրուի մոխրի տեղ, ուրախութեան իւր՝ սուգի տեղ, գովութեան պատմութեան՝ հանգուած սրտի տեղ» (Եսայիա 61.3):

Ինչպիսի՛ հույս է ճախրում այդ խոստումների մեջ . . . Նրա հոգին բժշկում է, այն գտնում է, մխիթարում է, նոր կյանք է հաղորդում անհույս սրտերին: Այն զորություն ունի վերափոխելու այս կյանքի տզեղ, արատավոր և անարժեք բաները՝ դարձնելով դրանք վեհ և փառավոր: Նա զորություն ունի մահկանացության մոխիրը վերածելու հավերժական գեղեցկության»:⁴

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր սիրող Փրկիչն է, մեր Քավիչն է, Բժշկող Տերը և մեր հավատարիմ ընկերը: Եթե մենք դառնանք դեպի Քրիստոսը, Նա կբուժի մեզ և կրկին ամբողջական կդարձնի: Ես վկայում եմ, որ սա Նրա Եկեղեցին է, և Նա պատրաստվում է կրկին վերադառնալ՝ թագավորելու զորությամբ և փառքով՝ այս երկրի վրա: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆԵՐ

1. Russell M. Nelson, “Jesus Christ—the Master Healer,” *Liahona*, Nov. 2005, 87.
2. “Faith in Jesus Christ,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org.
3. *Քարոզիչ Իմ ավետարանը. Միսիոններական ծառայության ձեռնարկ*, խմբ. հրատ. (2018), 52, ChurchofJesusChrist.org:
4. Tad R. Callister, *The Infinite Atonement* (2000), 206–7.



ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Դավիթ Հ. Օոփս
Առաջին խորհրդակալ



Ռասմել Ա. Նեյտն
Նախագահ



Հենրի Բ. Այրիկ
Երկրորդ խորհրդակալ

ՏԱՆՆԵՐԿՈՒ ԱՌԱՋՅԱՆՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ



Մ. Ռասմել Բարլարյո



Ջեֆրի Ռ. Հոլլանտ



Դիտեր Ֆ. Ուկարոֆ



Դեյվիդ Ա. Բեթլար



Քվենթին Լ. Քուք



Դ. Թոդ Թրիստոֆերսոն



Նիլ Լ. Արեղումն



Ռոնալդ Ա. Ռաբբանո



Գարի Ի. Սթիվենսոն



Դեյլ Գ. Ոնելանտ



Ջեֆրի Վ. Գոլգ



Ուլիսես Ստարեն

ՅՈԹԱՆԱՍՏՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



Պատրիկ Թրոն



Քարլ Բ. Քուք



Ուրբերտ Ս. Գայ



Տրիան Ս. Վիստն



Հոսե Ա. Քեքսելար




























































































































































Կարոս Ա. Գորյո






Բրենթ Հ. Նիլսոն

ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆԱԿՈՐ ՅՈՒՑԱՆԱՍՏՈՒՆԱԿԱՆՆԵՐ








(այբբնական կարգով)

								
Սարգիս Ա. Սյուրախչյան	Վաղերի Կ. Զորոտ	Վրթես Զ. Գրանցյան	Վրթես Զ. Գրանցյան	Վրթես Զ. Գրանցյան	Վրթես Զ. Գրանցյան	Վրթես Զ. Գրանցյան	Վրթես Զ. Գրանցյան	Վրթես Զ. Գրանցյան
								
Ռուբեն Վ. Այի	Ջ. Բեկ Քոմուրչ	Քոմուրչ Գ. Գրանցյան	Քոմուրչ Գ. Գրանցյան	Քոմուրչ Գ. Գրանցյան	Քոմուրչ Գ. Գրանցյան	Քոմուրչ Գ. Գրանցյան	Քոմուրչ Գ. Գրանցյան	Քոմուրչ Գ. Գրանցյան
								
Հուն Լ. Արստ	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան	Ջիգն Ի. Գրանցյան
								
Խորեն Ս. Այվազյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան	Աբգար Ռ. Գրանցյան
								
Յան Ա. Արմեն	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան	Դյան Ա. Դյանյան
								
Սթյոն Ռ. Բանդուքչյան	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն	Սարգիս Ռ. Զեյն
								
Վ. Սարկ Բաճեք	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն	Բենյամին Ռե. Զեյն
								
Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան	Դավիթ Պ. Բաճաճյան
								
Խորեն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան	Ջեյն Ռ. Բաճաճյան
								
Ռաֆայել Կ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք	Վահագն Ջ. Բենեք
								
Հասն Ռ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ	Դեյվիդ Ֆ. Բոճ
								
Շեն Ս. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ	Ռեյնոլդ Գ. Բոճ
								
Սարկ Ս. Բրեճ	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան	Էրուստի Գալստյան
								
Մարկ Ս. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ	Ստեփան Գ. Բրեճ
								
Մարտին Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան	Ջեյն Լ. Բարիսյան
								
Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո
								
Վեյդերիկո Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո	Քոնստանտին Ք. Բլաշչենկո

ՆԱԽԱԳԱՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՏՈՒԹՅՈՒՆ

		
Վ. Բրիգատչյան Մաթթևոս Խորենյան	Ջեյն Կոնստանտին Երկրորդ Նախագահի Նախկին	Լ. Թոր Բարե Երկրորդ Խորենյան

ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԱՆՆԵՐ

										
Սիդոն Վանդուկ Մաթթևոս Մաթթևոս	Սարկ Լ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին	Սարկ Գ. Քոնստանտին





Նախագահ Շենրի Բ. Այրիկզ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդակալ

Սիոնի քույրերը

Դուք կդառնաք Էական ուժ Իսրայելի հավաքման և Սիոն ժողովրդի ստեղծման գործում:

Իմ սիրելի՛ քույրեր, ես օրհնված եմ, որ խոսեցու եմ աշխարհի պատմության այս հիանալի ժամանակաշրջանում: Օրեցօր մոտենում ենք այն փառահեղ պահին, երբ Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, նորից երկիր կգա: Մենք որոշ բան գիտենք այն սարսափելի իրադարձությունների մասին, որոնք նախորդելու են Նրա գալուստին, բայց մեր սրտերն ուռչում են ուրախությունից և վստահությունից՝ իմանալով նաև այն փառահեղ խոստումների մասին, որոնք կկատարվեն մինչև Նրա վերադարձը:

Որպես Երկնային Հոր սիրված դուստրեր և որպես Տեր Հիսուս Քրիստոսի դուստրեր Նրա թագավորությունում,¹ դուք վճռական դեր կխաղաք առաջիկա կարևոր ժամանակներում: Մենք գիտենք, որ Փրկիչը կգա մի ժողովրդի մոտ, ովքեր հավաքվել և պատրաստվել են ապրել այնպես, ինչպես մարդիկ ապրում էին Ենովքի քաղաքում: Այնտեղ մարդիկ միավորված էին Հիսուս Քրիստոսի հավատքում և դարձել էին այնքան մաքուր, որ երկինք բարձրացվեցին:

Սիա Տիրոջ տված նկարագրությունը, թե ինչ կպատահի Ենովքի ժողովրդի հետ և ինչ տեղի կունենա ժամանակների լրության այս վերջին տնտեսության մեջ.

«Եվ կգա մի օր, երբ երկիրը կհանգստանա, բայց նախքան այդ օրը երկինքները պիտի խավարեցվեն, և խավարի վարագույրը պիտի ծածկի երկիրը. և երկինքները պիտի ցնցվեն, և նմանապես երկիրը. և մեծ նեղություններ պիտի լինեն մարդկանց զավակների մեջ, բայց իմ ժողովրդին ես կպահպանեմ.

«Եվ ես արդարություն ցած կուղարկեմ երկնքից. և ճշմարտություն առաջ կուղարկեմ երկրից, որ վկայություն բերի իմ Միածնի մասին. մեռելներից նրա հարության մասին. այո՛, և նաև բոլոր մարդկանց հարության մասին. և արդարությունով ու ճշմարտությունով ես կսրբեմ երկիրը, ասես ջրհեղեղով, որպեսզի հավաքեմ իմ ընտրյալներին աշխարհի չորս կողմերից մի վայրում, որը ես կպատրաստեմ, մի Սուրբ քաղաք, որ իմ ժողովուրդը կարողանա գոտեպնդել իր մեջքը և սպասել իմ գալալի ժամանակին. Քանզի այնտեղ կլինի իմ խորանը, և այն կկոչվի Սիոն՝ Նոր Երուսաղեմ:

Եվ Տերն ասաց Ենովքին. Այն ժամանակ դու և քո ողջ քաղաքը կդիմավորեք նրանց այնտեղ, և մենք կընդունենք նրանց մեր ծոցը, և նրանք կտեսնեն մեզ. և մենք նրանց վզով կընկնենք, և

նրանք մեր վզով կընկնեն, և մենք կհամբուրենք միմյանց.

Եվ այնտեղ կլինի իմ բնակավայրը, և այն կլինի Սիոն, որն առաջ կգա բոլոր արարչագործությունների միջից, որոնց ես արարել եմ. և հազար տարի շարունակ երկիրը կհանգստանա»:²

Դուք՝ քույրեր, ձեր դուստրերը, ձեր թոռները և ձեր սնուցած կանայք կլինեն այն մարդկանց հասարակության ստեղծման հիմքում, ովքեր կմասնակցեն Փրկիչի հետ փառահեղ ընկերակցությանը: Դուք կդառնաք Էական ուժ Իսրայելի հավաքման և Սիոն ժողովրդի ստեղծման գործում, որոնք խաղաղ կապրեն Նոր Երուսաղեմում:

Տերն Իր մարգարեների միջոցով խոստում է տվել ձեզ: Սփոփող Միության ստեղծման սկզբում Մարգարե Ջոզեֆ Մմիթն ասաց քույրերին. «Եթե դուք ապրեք ըստ ձեր արտոնությունների, հրեշտակները մշտապես կընկերակցեն ձեզ»:³

Այդ զարմանահրաշ ներուժը ձեր մեջ է, և դուք պատրաստվել եք դրան:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

«Քույրեր . . . դուք երկրորդական տեղ չեք զբաղեցնում մեր Հոր՝ հավերժական երջանկության և Նրա զավակների բարօրության համար ծրագրում: Դուք այդ ծրագրի բացարձակ կարևոր մասն եք:

Առանց ձեզ ծրագիրը չէր կարող գործել: Առանց ձեզ ողջ ծրագիրը կձախողվեր: . . .

Ջեզանից յուրաքանչյուրն Աստուծո դուստրն է՝ օժտված աստվածային անդրանիկությամբ»:⁴

Մեր ներկայիս մարգարեն՝ նախագահ Ռասել Մ. Նելսոնը, տվել է այս նկարագրությունն այն դերի մասին, որը դուք ունեք Փրկիչի գալուստին պատրաստվելիս.

«Անհնար է չափել ազդեցությունը, որ այդ կանայք ունեն, ոչ միայն իրենց ընտանիքներում, այլև Տիրոջ Եկեղեցում՝ որպես կանայք, մայրեր և տատիկներ,

որպես քույրեր և մորաքույր-ներ, որպես ուսուցիչներ և ղեկավարներ, և հատկապես՝ որպես հավատքի օրինակներ և բարեպաշտ պաշտպաններ:

Այդպես է եղել Ադամի և Եվայի օրերից ի վեր՝ ավետարանի յուրաքանչյուր տնտեսության մեջ: Սակայն այս տնտեսության կանայք տարբերվում են մյուս բոլոր տնտեսությունների կանանցից, քանի որ այս տնտեսությունը տարբերվում է մյուսներից: Այդ առանձնահատկությունը բերում է թե՛ արտոնություններ և թե՛ պատասխանատվություններ:⁵

Այս տնտեսությունը տարբերվում է նրանով, որ Տերը մեզ կառաջնորդի, որպեսզի պատրաստվենք և նմանվենք Ենովթի քաղաքին: Նա իր առաքյալների և մարգարեների միջոցով նկարագրել է, թե Միոնի ժողովրդի այդ վերափոխումն ինչ հետևանքներ կունենա:

Երեց Բոյուս Ռ. Մակքոնկին ուսուցանել է.

«[Ենովթի] օրոք ամբարիշտության և չարության օրեր էին, խավարի և ապստամբության օրեր էին, պատերազմի ու ամայացման օրեր էին, երկիրը ջրով մաքրելու օրեր էին:

Ենովթը, սակայն, հավատարիմ էր: Նա «տեսավ Տիրոջը» և խոսեց նրա հետ «դեմ առ դեմ», ինչպես մարդը խոսում է այլ մարդու հետ (Մովսես 7.4: Տերը նրան ուղարկեց, որ ապաշխարություն աղաղակի աշխարհով մեկ և պատվիրեց նրան «մկրտել անունով Հոր, և Որդու, որը լի է շնորհով ու ճշմարտությամբ, և Մուրբ Հոգու, որը վկայում է Հոր և Որդու մասին» (Մովսես 7.18): Ենովթը ուխտեր կապեց և հավաքեց ճշմարիտ հավատացյալներին, որոնք բոլորն այնքան հավատարիմ *դարձան*, որ «Տերը եկավ ու բնակվեց իր ժողովրդի հետ, և նրանք բնակվեցին արդարության մեջ» և օրհնվեցին բարձրից: «Եվ Տերն իր ժողովրդին կոչեց Միոն, որովհետև նրանք մեկ սրտի և մեկ մտքի էին, և բնակվում

էին արդարության մեջ. և ոչ մի աղքատ չկար նրանց մեջ» (Մովսես 7.18):

Այն բանից հետո, երբ Տերը իր ժողովրդին կոչեց Միոն, սուրբ գրություններում ասվում է, որ Ենովթը «կառուցեց մի քաղաք, որը կոչվում էր Սրբության քաղաք, նույնիսկ Միոն», որ Միոնը «բարձրացվեց երկինք, որտեղ «Աստված վերցրեց այն իր ծոցը. և այն ժամանակից տարածվեց այս խոսքը՝ Միոնը փախել է» (Մովսես 7.19, 21, 69):

«Նույն Միոնը, որը երկինք է բարձրացվել, կվերադառնա. . . երբ Տերը վերադարձնի Միոնը, և նրա բնակիչները միանան նոր Երուսաղեմին, որն այդ ժամանակ կստեղծվի»:⁶

Եթե անցյալը նախաբան է գալիք իրադարձությունների համար, ապա Փրկիչի գալստյան պահին այն դուստրերը, ովքեր խորապես հավատարիմ են Աստծո հետ կապած իրենց ուխտերին, կլինեն նրանց կեսից ավելին, ովքեր պատրաստ են ողջունել Նրան, երբ Նա գա: Բայց անկախ թվերից, այդ Միոնի համար պատրաստված մարդկանց մեջ միասնություն ստեղծելու գործում ձեր



Չիրա, Ճապոնիա

ներդրումը կլինի կեսից շատ ավելին:

Ես ձեզ կասեմ, թե ինչու եմ հավատում, որ այդպես կլինի: Մորմոնի Գրքում պատմվում է Միոն ժողովրդի մասին: Դուք հիշում եք, որ երբ հարություն առած Փրկիչն ուսուցանեց, սիրեց և օրհնեց նրանց, որ «չկար ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում»:⁷

Իմ փորձն ինձ սովորեցրել է, որ Երկնային Հոր դուստրերն օժտված են պարզամտ՝ փարատել հակառակությունը և արդարություն խթանել Աստծո հանդեպ իրենց սիրով և Աստծո սերը սերմանել նրանց մեջ, ում ծառայում են:

Ես դա տեսել եմ իմ պատանեկության տարիներին, իմ մանկության փոքրիկ ճյուղում: Ես ու եղբայրս Սհարոնյան քահանայության միակ կրողն էինք, հայրս՝ Մելքիսեդեկյան քահանայության միակ կրողը: Սփոփող միության նախագահը նորադարձ էր, որի ամուսինը ուրախ չէր Եկեղեցում իր կնոջ ծառայության համար: Բոլոր անդամները մեծահասակ քույրեր էին, որոնց ընտանիքում չկար քահանայություն կրող: Ես հետևում էի, թե ինչպես են մայրս և այդ քույրերն աննկուն ձևով սիրում, բարձրացնում և հոգ տանում միմյանց մասին: Ես հիմա հասկանում եմ, որ ինձ շնորհվել էր Միոնի վաղ պատկերացում:

Հավատարիմ կանանց ազդեցության վերաբերյալ իմ ուսումը շարունակվեց Նյու Մեքսիկոյի Ալբուկերկե քաղաքի Եկեղեցու մի փոքր ճյուղում: Ես հետևում էի, թե ինչպես են ճյուղի նախագահի կինը, շրջանի նախագահի կինը և Սփոփող միության նախագահը ջերմացնում յուրաքանչյուր նորեկի և նորադարձի սիրտը: Այդ կիրակի օրը, երբ պետք է հեռանայի Ալբուկերկեից, կազմավորվեց առաջին ցիցը, որտեղ երկու տարի հետևում էի այնտեղ ապրող քույրերի ազդեցությանը:

Այժմ Տերը տաճար է բարձրացրել այնտեղ:

Ես տեղափոխվեցի Բոստոնի մոտակայքը, որտեղ ծառայում էի շրջանի նախագահությունում, որը նախագահում էր երկու նահանգներում սփռված փոքր ճյուղերը: Կային վիճաբանություններ, որոնք մեկ անգամ չէ, որ լուծվեցին սիրող և ներողամիտ կանանց կողմից, ովքեր օգնեցին մեղմել սրտերը: Կիրակի օրը, երբ հեռացա Բոստոնից, Առաջին Նախագահության անդամը կազմավորեց Մասաչուսեթսի առաջին ցիցը: Այժմ այնտեղ մի տաճար կա՝ այն տարածքին մոտ, որտեղ ժամանակին բնակվում էր շրջանի նախագահը: Նա դարձավ Եկեղեցու ակտիվ անդամ, իսկ այնուհետև նրան կանչեցին ծառայելու որպես ցցի նախագահ, իսկ հետո միսիայի նախագահ՝ հավատարիմ և սիրող կնոջ ազդեցության շնորհիվ:

Քույրե՛ր, ձեզ տրվել է հատուկ պարգևներով Աստծո դուստրեր կոչվելու օրհնությունը: Դուք մահկանացու կյանք եք եկել ուրիշներին սնուցելու և նրանց դեպի վեր՝ այն սերն ու մաքրությունը բարձրացնելու հոգևոր կարողությամբ, որը նրանց իրավունք կտա ապրելու Միոնի հասարակությունում: Պատահական չէ, որ Սփոփող միությունը՝ Եկեղեցու առաջին կազմակերպությունը, որը հատուկ նախատեսված է Երկնային Հոր դուստրերի համար, ունի իր կարգախոսը՝ «Գթությունը երբեք չի խափանվում»:

Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է: Նրա հանդեպ հավատքի ու Նրա անսահման քավության հետևանքների շնորհիվ, դուք և նրանք, ում սիրում ու ծառայում եք, կարծանանաք այդ զերագույն պարգևին՝ ապրելու երկար սպասված և խոստացված Միոնի այդ հասարակության մեջ: Միոնում դուք կլինեք քույրեր, անձամբ սիրված Տիրոջ և նրանց կողմից, ում դուք օրհնել եք:

Ես վկայում եմ, որ դուք երկրի վրա Տիրոջ արքայության քաղաքացիներ եք: Դուք սիրող




Սան Լուկաս Սակատեպեքվես, Գվատեմալա

Երկնային Հոր դուստրերն եք, ով ձեզ աշխարհ ուղարկեց անզուգական պարգևներով, որոնք խոստացել եք օգտագործել ուրիշներին օրհնելու համար: Ես խոստանում եմ ձեզ, որ Տերը կառաջնորդի ձեր ձեռքը բռնած՝ Սուրբ Հոգու միջոցով: Նա կգնա ձեր առջևից, երբ դուք օգնեք Նրան նախապատրաստել Իր ժողովրդին՝ դառնալու Իր խոստացած Միոնը: Ես դա վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 25.1:
2. Մովսես 7.61-64, շեղագրումն ավելացված է:
3. *Եկեղեցու նախագահների ուսման քննարկը*. Զոզեֆ Սմիթ (2007), 454, շեղադրումն ավելացված է:
4. Gordon B. Hinckley, "Women of the Church," *Ensign*, Nov. 1996, 67.
5. Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Լիստնես*, նոյեմբեր 2015, 95-96, շեղադրումն ավելացված է:
6. Bruce R. McConkie, "Building Zion," *Tambuli*, Sept. 1977, 13; emphasis added.
7. 4 Նեփի 1.15:



Նախագահ Դավիթ Ն. Օնուպ
Առաջին Նախագահության առաջին խորհրդակալ

Ուրախ եղեք

Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վարդապետության հանդեպ մեր անսասան հավատն առաջնորդում է մեր քայլերը և ուրախություն է պարգևում մեզ:

Իր մահկանացու կյանքի վերջին օրերին Հիսուս Քրիստոսն Իր Առաքյալներին պատմեց այն հալածանքների և դժվարությունների մասին, որոնք կգային նրանց վրա:¹ Նա եզրափակեց այս հրաշալի հավաստիացումով. «Աշխարհքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես յաղթել եմ աշխարհքին» (Հովհաննես 16.33): Դա Փրկիչի ուղերձն է մեր Երկնային Հոր բոլոր զավակներին: Մեր մահկանացու կյանքում դա ամենաբարի լուրն է յուրաքանչյուրիս համար:

«Ուրախ լինելը» նաև անհրաժեշտ հավաստիացումն էր այն աշխարհում, որտեղ հարություն առած Քրիստոսն ուղարկեց Իր առաքյալներին: «Ամեն բանի մեջ նեղված ենք», - Պողոս առաքյալն ավելի ուշ ասել է կորնթացիներին, - «բայց չենք ճնշուած. կարօտ ենք, բայց չենք տարակուսել. Հավածուած, բայց երեսից չ'ընկած. վայր ընկած, բայց չ'կորած» (2 Կորնթացիս 4.8-9):

Երկու հազար տարի անց մենք կրկին «ամեն բանի մեջ նեղված ենք», և մեզ նույնպես անհրաժեշտ է չիուսահատվելու, այլ ուրախ լինելու ուղերձը: Տերն առանձնահատուկ ձևով սիրում

և հոգ է տանում Իր թանկագին դուստրերի մասին: Նա տեղյակ է ձեր ցանկությունների, ձեր կարիքների և ձեր վախերի մասին: Տերն ամենագոր է: Վստահեք Նրան:

Մարգարե Զոգեֆ Մմիթն ուսուցանել է, որ «Աստծո գործերը և ծրագրերը և նպատակները չեն կարող խափանվել, ոչ էլ կարող են ոչնչանալ» (Վարդապետություն և Ուխտեր 3.1): Իր մաքառող զավակներին Տերը տվեց այս հրաշալի հավաստիացումները.

«Ահա, սա Տիրոջ խոստումն է ձեզ, ո՛վ դուք, իմ ծառանե՛ր:

Ուստի, ուրախ եղեք, և մի վախեցեք, քանզի ես՝ Տերս, ձեզ հետ եմ, և ես կանգնելու եմ ձեր կողքին. և դուք պիտի վկայություն բերեք իմ մասին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի, որ ես կենդանի Աստծո Որդին եմ» (Վարդապետություն և Ուխտեր 68.5-6):

Տերը կանգնած է մեր կողքին և Նա ասել է.

«Ինչ ես ասում եմ մեկին, ասում եմ բոլորին. Ուրախ եղեք, փո՛քր երեխաներ. քանզի ես ձեր մեջ եմ, և ես չեմ լքել ձեզ» (Վարդապետություն և Ուխտեր 61.36):

Քանզի շատ նեղությունից հետո գալիս են օրհնությունները՝

(Վարդապետություն և Ուխտեր 58.4):

Քույրե՛ր, ես վկայում եմ, որ հալածանքների և անձնական ողբերգությունների ժամանակ տրված այս խոստումները վերաբերում են ձեզանից յուրաքանչյուրին՝ ձեր այսօրվա դժվարին հանգամանքներում: Դրանք արժեքավոր են և հիշեցնում են յուրաքանչյուրիս, որ պետք է քաջալերվել և ուրախություն ունենալ ավետարանի լրիվության մեջ, երբ առաջ ենք շարժվում մահկանացու մարտահրավերների միջով:

Նեղություններն ու դժվարությունները մահկանացու կյանքի համընդհանուր փորձություններն են: Ընդդիմությունը զարգանալու աստվածային ծրագրի էական մասն է,² և այդ գործընթացում Աստված վստահեցնում է, որ հավերժության տեսանկյունից ընդդիմությանը թույլ չի տրվի հաղթել մեզ: Նրա օգնությամբ, մեր հավատարմությամբ և տոկունությամբ մենք կհաղթենք: Ինչպես մահկանացու կյանքը, որի մասն են կազմում նրանք, այնպես էլ բոլոր նեղությունները ժամանակավոր են: Աղետալի պատերազմին նախորդած հակասությունների ժամանակ Միացյալ Նահանգների նախագահ Աբրահամ Լինքոլնը իմաստուն կերպով իր հանդիսատեսին հիշեցրեց հին իմաստության մասին, որ «սա նույնպես կանցնի»:³

Ինչպես գիտեք, այն մահկանացու ճախորդությունները, որոնց մասին ես խոսում եմ և որը դժվարացնում է ուրախություն գտնել այս կյանքում, պատահում են շատերիս հետ, ինչպես միլիոնավոր մարդկանց, ովքեր այժմ պայքարում են COVID-19 համաճարակի կործանարար հետևանքներից մի քանիսի դեմ: Նմանապես, Միացյալ Նահանգներում միլիոնավոր մարդիկ տառապում են թշնամանքի և վիճարանության այս օրերին, որը կարծես միշտ տեղի է ունենում նախագահական



Պրովո, Յուսա, ԱՄՆ

ընտրություններին ընդառաջ, բայց այս անգամ այն ամենադաժանն է նրանցից, որոնք կարող են հիշել մեզանից ամենատարեցները:

Մեզանից յուրաքանչյուրն անհատապես պայքարում է մահկանացու կյանքի բազմաթիվ դժվարությունների դեմ, ինչպիսիք են՝ աղքատությունը, ռասիզմը, առողջական վիճակը, աշխատանքի կորուստը կամ հիասթափությունները, կամակոր երեխաները, վատ ամուսնությունները կամ չամուսնացած վիճակը և մեղքի հետևանքները՝ մեր սեփական կամ այլոց:

Այնուամենայնիվ, այս ամենի մեջ մենք ունենք այդ երկնային խորհուրդը՝ քաջալերվել և ուրախություն գտնել ավետարանի սկզբունքների և խոստումների ու մեր աշխատանքի պտուղների մեջ:⁴ Այդ խորհուրդը միշտ էլ այդպիսին է եղել մարգարեների և բոլորիս համար: Մենք այդ մասին գիտենք մեր նախորդների փորձերից և նրանց ուղղված Տիրոջ խոսքերից:

Հիշեք Մարգարե Զոգեֆ Սմիթի հանգամանքները: Նայելով ձախորդությունների ոսպնյակի միջով, նա իր կյանքն ապրեց

աղքատության, հալածանքների, հիասթափության, ընտանեկան վշտերի մեջ, իսկ վերջում՝ նահատակվեց: Երբ նա բանտարկվեց, նրա կինը, երեխաները և մյուս սրբերն անհավանական դժվարություններ կրեցին, երբ նրանց վտարեցին Միսսուրիից:

Երբ Զոգեֆը սփոփանք էր աղերսում, Տերը պատասխանեց.

«Որդիս, խաղաղություն քո հոգուն. քո ձախորդություններն ու քո չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ.

Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի. դու կհաղթես քո բոլոր թշնամիներին» (Վարդապետություն և Ուխտեր 121.7-8):

Սա անձնական, հավերժական խորհուրդ էր, որն օգնեց Մարգարե Զոգեֆին պահպանել իրեն բնորոշ ուրախ բնավորությունը և իր ժողովրդի սերն ու հավատարմությունը: Այդ նույն հատկություններն ուժ տվեցին նրան հաջորդող ղեկավարներին և ռահվիրաներին և կարող են նաև զորացնել ձեզ:

Մտածեք այդ վաղ օրերի անդամների մասին: Նրանք անընդհատ տեղից տեղ էին քշվում: Ի վերջո, նրանք

բախվեցին անապատում իրենց տները և Եկեղեցին հիմնելու դժվարություններին:⁵ Երբ ռահվիրաների առաջին խումբը երկու տարի անց հասավ Սուրբ Լեյքի Մեծ հովիտը, այդ խորթ տարածքում գոյատևելու նրանց ունակությունը դեռևս վտանգավոր էր: Անդամների մեծ մասը դեռ ճամփորդում էր հարթավայրերով կամ դժվարանում էր միջոցներ գտնել այդ ճանապարհին անցնելու համար: Այնուամենայնիվ, ղեկավարներն ու անդամները դեռ հույս ունեին և ուրախ էին:

Թեպետ Սրբերը չէին հաստատվել իրենց նոր տներում, 1849 թվականի հոկտեմբերին կայացած գերագույն համաժողովում միսիոներների նոր խումբ ուղարկվեց Սկանդինավիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և Իսպանիա օվկիանոսի հարավային տարածքներ:⁶ Տխուր և հուսահատ լինելու փոխարեն ռահվիրաները կարողացան մեծ բարձունքների հասնել: Եվ ընդամենը երեք տարի անց ևս 98 հոգի կանչվեցին, որպեսզի սկսեն հավաքել ցրված Իսրայելը: Եկեղեցու ղեկավարներից մեկն այն ժամանակ բացատրեց, որ այդ



Սան Պատուր, Բրազիլիա

առաքելությունները «սովորաբար երկար չեն տևի. հավանաբար 3-7 տարի տղամարդիկ կբացակայեն իրենց ընտանիքներից»:⁷

Քույրե՛ր, Առաջին Նախագահությունը մտահոգված է ձեր խնդիրներով: Մենք սիրում ենք ձեզ և աղոթում ենք ձեզ համար: Միևնույն ժամանակ, մենք հաճախ շնորհակալություն ենք հայտնում, որ մեր ֆիզիկական մարտահրավերները, բացի երկրաշարժերից, հրդեհներից, ջրհեղեղներից և փոթորիկներից, սովորաբար ավելի պակաս են, քան մեր նախնիներն ունեցել են:

Դժվարությունների մեջ Աստված միշտ վստահեցնում է՝ «ուրախ եղեք, քանզի ես ձեր ուղեկիցը կլինեմ: Արքայությունը ձերն է և նրա օրհնությունները ձերն են, և հավերժության հարստությունները ձերն են» (Վարդապետություն և Ուխտեր 78.18): Դա ինչպե՞ս է տեղի ունենում: Դա ինչպե՞ս տեղի ունեցավ ռահվիրաների համար: Դա ինչպե՞ս տեղի կունենա Աստծուն հավատացող այսօրվա կանանց հետ: Մեր մարզաբեական առաջնորդությանը հետևելով՝ «դժխտի դարպասները մեզ չեն հաղթի», ասել է Տերը 1830 թվականի հայտնության մեջ: Նա ասել է. «Այո, . . . Տեր Աստված ձեր առջևից կցրի խավարի գորությունները և այնպես կանի, որ երկինքները

կցնցվեն ձեր բարիքի և իր անվան փառքի համար» (Վարդապետություն և Ուխտեր 21.6): «Ուստի, մի վախեցիր, փոքրի՛կ հոտ. բարիք գործիր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել» (Վարդապետություն և Ուխտեր 6.34):

Տիրոջ խոստումներով մենք «բարձրացնում ենք [մեր] սրտերը և ցնծում» (Վարդապետություն և Ուխտեր 25.13), և «ուրախ սրտով և զվարթ դեմքով» (Վարդապետություն և Ուխտեր 59.15) գնում ենք առաջ ուխտի արահետով: Մեզանից շատերն օրհասական որոշումներ չեն կայացնում, լքում իրենց տներն ու վտարանդի դառնում անհայտ երկրում: Հիմնականում մեր որոշումներն առնչվում են առօրյա կյանքին, բայց ինչպես Տերն է ասել. «մի ձանձրացեք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի: Փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է» (Վարդապետություն և Ուխտեր 64.33):

Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վարդապետության մեջ անսահման գորություն կա: Այդ վարդապետության հանդեպ մեր անսասան հավատն առաջնորդում է մեր քայլերը և ուրախություն է պարգևում մեզ: Այն լուսավորում է մեր միտքը և

ուժ ու վստահություն է հաղորդում մեր գործողություններին: Այդ առաջնորդությունը, լուսավորությունն ու գորությունը խոստացված պարգևներն են, որոնք մենք ստացել ենք մեր Երկնային Հորից: Հասկանալով և մեր կյանքն ապրելով ըստ այդ վարդապետության և ապաշխարության աստվածային պարգևի, մենք կարող ենք ուրախ լինել, երբ առաջ ենք ընթանում դեպի մեր հավերժական ճակատագիրը՝ վերամիավորվելու և վեհանալու մեր սիրառատ երկնային ծնողների հետ:

«Հնարավոր է, դուք բախվում եք անհաղթահարելի մարտահրավերների», - ուսուցանել է երեց Ռիչարդ Գ. Սքոթը: «Երբեմն դրանք այնքան շատ են, այնքան անողորմ, որ դուք ի վիճակի չեք վերահսկել դրանք: Մի՛ դիմագրավեք աշխարհին միայնակ: «Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր» [Առակաց 3.5]: . . . Նախատեսված էր, որ կյանքը դժվար լինի ոչ թե նրա համար, որ կձայնողվենք, այլ որ հաղթահարելու միջոցով կարողանանք հաջողության հասնել»:⁸

Այդ բոլորը Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ծրագրի մի մասն է, որի մասին ես վկայում և աղոթում եմ, որ մենք բոլորս շարունակենք ձգտել մեր երկնային նպատակակետին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ԶՂՈՒՆԵՐ

1. Տես Հովհաննես 13-16:
2. Տես 2 Նեփի 2.11:
3. Abraham Lincoln, address to the Wisconsin State Agricultural Society, Milwaukee, Sept. 30, 1859, in John Bartlett, *Bartlett's Familiar Quotations*, 18th ed. (2012), 444.
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.31:
5. Տես Lawrence E. Corbridge, "Surviving and Thriving like the Pioneers," *Ensign*, July 2020, 23-24:
6. Տես "Minutes of the General Conference of 6 October 1849," General Church Minutes Collection, Church History Library, Salt Lake City:
7. George A. Smith, in *Journal History of The Church of Jesus Christ of Latter-day Saints*, Aug. 28, 1852, 1, Church History Library, Salt Lake City.
8. Ռիչարդ Գ. Սքոթ, *Գտնել խաղաղություն, երջանկություն և ուրախություն* (2007), 248-49:

հայտարարություններին: Պարզ, բայց ցնցող հավաստիացմամբ Տերն ասել է. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա»:⁷

Բնչսյխի՝ խոստում: Դա մի խոստում է, որը կարող է բառացիորեն փոխել այն, թե մենք ինչպես ենք տեսնում մեր ապագան: Վերջերս ես լսեցի մի կնոջ անկեղծ վկայությունն այն մասին, որ համավարակը և Մոլթ Լեյթի հովտում տեղի ունեցած երկրաշարժն օգնել էին իրեն հասկանալ, որ ինքն այդքան էլ պատրաստ չէ, որքան կարծում էր: Երբ ես հարցրի, թե արդյոք նա նկատի ունի իր սննդի պահեստը *կամ* վկայությունը, նա ժպտաց և ասաց «այո»:

Եթե նախապատրաստությունն այս տնտեսությունը և մեր ապագան հավատքով ընդունելու մեր բանալին է, ապա ինչպե՞ս կարող ենք լավագույնս պատրաստվել:

Տասնամյակներ շարունակ Տիրոջ մարգարեները հորդորել

են մեզ պահեստավորել սնունդ, ջուր և ստեղծել ֆինանսական պահուստներ նեղ օրերի համար: Ներկայիս համավարակն ամրապնդեց այդ խորհրդի իմաստությունը: Ես ձեզ հորդորում եմ քայլեր ձեռնարկել նյութապես պատրաստ լինելու համար: Բայց ես ավելի շատ մտահոգված եմ ձեր հոգևոր և հուզական պատրաստվածությամբ:

Դրա վերաբերյալ շատ բան կարող ենք սովորել գորապետ Մորոնիից: Լինելով նեփիական գորքերի հրամանատար, նա բխվեց հակառակորդի գորքերին, որոնք ավելի ուժեղ էին, քանակով ավելի շատ էին ու չար: Այսպիսով, Մորոնին իր ժողովրդին պատրաստեց երեք կարևոր եղանակով:

Նախ՝ նա նրանց օգնեց ստեղծել տարածքներ, որտեղ նրանք ապահով կլինեին և կոչեց դրանք «պաշտպանության վայրեր»:⁸ **Երկրորդ՝** նա պատրաստեց

«ժողովրդի միտքը՝ հավատարիմ լինելու Տիրոջը»:⁹ Եվ **երրորդ՝** նա երբեք չդադարեց նախապատրաստել իր ժողովրդին ֆիզիկապես և հոգևորապես:¹⁰ Եկեք քննարկենք այս երեք սկզբունքները:

Սկզբունք համար մեկ. ստեղծել պաշտպանության վայրեր:

Նեփիացիների բոլոր քաղաքները Մորոնին ամրացրեց՝ կառուցելով ամրոցներ և պատեր:¹¹ Երբ լամանացիները հարձակվեցին, նրանք «ապշած էին մնացել *իլեկնց հասնար պաշտպանության տեղեր* պատրաստելու նեփիացիների իմաստության պատճառով»:¹²

Նմանապես, երբ *մեյր* շուրջը խառնաշփոթ է տիրում, մենք պետք է ստեղծենք այնպիսի վայրեր, որտեղ *մենք* ապահով կլինենք և՛ ֆիզիկապես, և՛ հոգևորապես: Երբ ձեր տունը դառնում է հավատի անձնական սրբավայր, մի վայր, որտեղ բնակվում է Հոգին, ձեր տունը դառնում է պաշտպանության առաջին գիծը:

Նմանապես, Միոնի ցցերը «ապաստան են փոթորիկներից»,¹³ քանի որ նրանք առաջնորդվում են նրանց կողմից, ովքեր ունեն քահանայության բանալիներ և քահանայության իշխանություն: Երբ շարունակեք հետևել նրանց խորհուրդներին, ովքեր առաջնորդում են ձեզ Տիրոջ լիազորությամբ, դուք ավելի մեծ պաշտպանություն կզգաք:

Տաճարը՝ Տիրոջ տունը, պաշտպանության մի վայր է՝ ի տարբերություն մյուս վայրերի: Քույրե՛ր, սուրբ քահանայության ուխտերի միջոցով տաճարում դուք օժտված եք քահանայության զորությամբ:¹⁴ Այնտեղ ձեր ընտանիքները կնքվում են հավերժության համար: Նույնիսկ այս տարի, երբ մեր տաճարների մուտքը խիստ սահմանափակ էր, ձեր օժտման շնորհիվ դուք անընդհատ կարող էիք ստանալ Աստծո զորությունը, քանի որ պատվել էիք Նրա հետ կապած ձեր ուխտերը:

Պարզ ասած՝ անվտանգության վայրն *այն վայրն* է, որտեղ



Բենգալուրու, Նորկաստան

դուք կարող եք զգալ Սուրբ Հոգու ներկայությունը և առաջնորդվել Նրա կողմից:¹⁵ Երբ Սուրբ Հոգին ձեզ հետ է, դուք կարող եք ճշմարտություն սովորեցնել, նույնիսկ, եթե դա հակասում է տարածված կարծիքներին: Եվ հայտնության համար բարենպաստ միջավայրում դուք կարող եք մտածել ավետարանի վերաբերյալ անկեղծ հարցերի շուրջ:

Իմ սիրելի՛ քույրեր, ես հրավիրում եմ ձեզ ստեղծել մի տուն, որը պաշտպանության վայր կլինի: Եվ ես նորից եմ հղում իմ հրավերը, որ ավելացնեք ձեր հասկացողությունը քահանայության զորության և տաճարային ուխտերի ու օրհնությունների վերաբերյալ: Պաշտպանության վայրերը, որտեղ կարող եք պատասպարվել, կօգնեն ձեզ հավատքով ընդունել ապագան:

Սկզբունք համար երկու. պատրաստեք ձեր միտքը՝ հավատարիմ լինելու Աստծուն:

Մենք ձեռնարկեցինք մի խոշոր նախագիծ, որպեսզի երկարացնենք Սուրբ Լեյքի տաճարի կյանքն ու կարողությունը:

Ոմանք կասկածի տակ առան նման արտասովոր միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, երբ այս տարվա սկզբին Սուրբ Լեյքի հովտում տեղի ունեցավ 5.7 բալ ուժգնությամբ երկրաշարժ, այս հինավուրց տաճարն այնքան ուժեղ ցնցվեց, որ Մորոնի հրեշտակի արձանի շեփոթն ընկավ:¹⁶

Ինչպես Սուրբ Լեյքի տաճարի ֆիզիկական հիմքը պետք է լինի այնքան ամուր, որ կարողանա դիմակայել բնական աղետներին, այնպես էլ մեր *հոգևոր* հիմքերը պետք է ամուր լինեն: Սպա, երբ փոխաբերական երկրաշարժերը ցնցեն մեր կյանքը, կկարողանանք «հաստատուն և անսասան» կանգնել մեր հավատքի շնորհիվ:¹⁷

Տերը մեզ ուսուցանել է, թե ինչպես մեծացնենք մեր հավատքը՝ փնտրելով *«սուսուս*, նույնիսկ ուսումնասիրելով և նաև հավատքով»:¹⁸ Մենք ամրապնդում ենք



Սան Պաուլո, Բրազիլիա

մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ, երբ ջանում ենք պահել Նրա պատվիրանները և «միշտ հիշել նրան»:¹⁹ Բացի այդ, մեր հավատքը մեծանում է ամեն անգամ, երբ մենք *գործադրում* ենք մեր հավատը Նրա հանդեպ: Դա է հավատով սովորելը:

Օրինակ՝ ամեն անգամ, երբ մենք հավատ ենք ցուցաբերում և հնազանդվում Աստծո օրենքներին, նույնիսկ այն ժամանակ, երբ ժողովրդական կարծիքները նսեմացնում են մեզ, կամ ամեն անգամ, երբ դիմադրում ենք ուխտի խախտումը ողջունող զվարճանքներին կամ գաղափարախտություններին, մենք *գործադրում* ենք մեր հավատը, որն իր հերթին *մեծացնում* է մեր հավատքը:

Բացի այդ, հավատն ավելի շատ է ամրապնդվում, երբ կանոնավոր կերպով ընկղմվում ենք Մորոնի Գրքի մեջ. շատ քիչ բան է դրանից առավել ամրապնդում հավատը: Ոչ մի այլ գիրք այդպիսի գործությամբ և պարզությամբ չի վկայում Հիսուս Քրիստոսի մասին: Նրա մարգարեները, ոգեշնչված Տիրոջ կողմից, տեսան մեր օրերը և ընտրեցին այն վարդապետությունն ու ճշմարտությունները, որոնք առավելագույնս կօգնեն *մեզ*: Մորոնի Գիրքը մեր գոյատևման ուղեցույցն է *վերջին օրերի* համար:

Իհարկե, մենք առավելագույնս պաշտպանվում ենք այն ժամանակ, երբ մոտենում ենք

Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: *Սուսուց* Աստծո կյանքը՝ վախով լի կյանք է: Աստծո *հետ* կյանքը՝ խաղաղությամբ լի կյանք է: Դա այն պատճառով է, որ հոգևոր օրհնությունները գալիս են հավատարիմներին: Անձնական հայտնությունն այդ օրհնությունների մեծագույններից մեկն է:

Տերը խոստացել է, որ եթե մենք խնդրենք, մենք կարող ենք ստանալ «հայտնություն հայտնության վրա»:²⁰ Ես խոստանում եմ, որ երբ դուք մեծացնեք հայտնություն ստանալու ձեր կարողությունը, Տերը կօրհնի ձեզ և ձեր կյանքում կտա ավելի մեծ առաջնորդություն և կօրհնի Հոգու անսահման պարզաներով:

Սկզբունք համար երեք. երբեք մի դադարեք պատրաստվել:

Նույնիսկ, երբ ամեն ինչ *լավ* էր ընթանում, գորավար Մորոնին շարունակում էր պատրաստել իր ժողովրդին: Նա երբեք կանգ չէր առնում: Նա *երբեք* ինքնաբավ չէր դառնում:

Հակառակորդը երբեք չի դադարում հարձակվել: Այսպիսով, մենք *չենք* դադարի պատրաստվել: Որքան ավելի շատ նյութապես, հուզական առումով և հոգևորապես ինքնապահով լինենք, այնքան ավելի պատրաստ կլինենք տապալել սատանայի անողորմ հարձակումները:



Գվատեմալա Սիթի, Գվատեմալա

Հարգելի՛ քույրեր, դուք հնուտ եք ձեր և ձեր սիրած մարդկանց համար պաշտպանության վայրեր ստեղծելու գործում: Բացի այդ, դուք օժտված եք Աստծուց, որը ձեզ հնարավորություն է տալիս համոզիչ կերպով կառուցել հավատը ուրիշների մեջ:²¹ Եվ դուք երբեք կանգ չեք առնում: Դուք այս տարի ևս մեկ անգամ ցույց տվեցիք դա:

Խնդրում եմ շարունակեք: Երբ զգոնություն ցուցաբերեք ձեր տները պաշտպանելու հարցում և հավատք սերմանեք ձեր սիրելիների սրտերում, դուք կքաղեք պտուղները սերունդներ շարունակ:

Իմ սիրելի՛ քույրեր, մենք *այնքան շատ* ակնկալիքներ ունենք: Տերը ներկայումս ձեզ այստեղ է նշանակել, քանի որ Նա գիտեր, որ դուք կկարողանաք հաղթահարել այս վերջին օրերի վերջին մասի բարդությունները: Նա գիտեր, որ դուք կընկալեք Նրա աշխատանքի վեհությունը և կցանկանաք այն կյանքի կոչել:

Ես չեմ ասում, որ ամառիկա օրերը հեշտ կլինեն, բայց ես խոստանում եմ ձեզ, որ ապագան փառավոր կլինի նրանց համար,

ույրեր պատրաստ են և շարունակում են պատրաստվել, որպեսզի գործիքներ դառնան Տիրոջ ձեռքում:

Իմ սիրելի՛ քույրեր, եկեք պարզապես *շիջանաձև* այս ներկայիս ժամանակաշրջանում: Եկե՛ք *հավատքով ընդունենք ապագան*: Անհանգիստ ժամանակները հոգևորապես զարգանալու հնարավորություններ են: Դրանք ժամանակներ են, երբ մեր ազդեցությունը կարող է շատ ավելի ազդեցիկ լինել, քան հանգիստ ժամանակներում:

Ես խոստանում եմ, որ երբ մենք ստեղծենք պաշտպանության վայրեր, պատրաստենք մեր միտքը՝ հավատարիմ լինելու Աստծուն և երբեք չդադարենք նախապատրաստվել, ապա Աստված կօրհնի մեզ: Նա «կազատի մեզ. այո, այնպես որ նա խաղաղություն [կլստի] մեր հոգիներին, և մեծ հավատք [կշնորհի] մեզ, և այնպես [կանի], որ մենք հուսանք մեր ազատմանը նրանով»:²²

Երբ դուք պատրաստվեք հավատքով ընդունել ապագան, այս խոստումները *կլինեն* ձերը: Ես այդ մասին վկայում եմ,

արտահայտելով իմ սերը ձեր *հանդեպ* և իմ վստահությունը ձեր *հանդեպ*, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», ChurchofJesusChrist.org: Այս հայտարարությանը կից իր ուղերձում նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասաց քույրերին. «Ես երախտապարտ եմ ձեր ունեցած ուժի և ձեր հավատարմության, ձեր հավատի ու ձեր սիրո համար: Ես երախտապարտ եմ ձեր հոգու վճռականության համար, որով դուք պահում եք հավատքը և պատվիրանները, ընտրում եք ճիշտը՝ բոլոր ժամանակներում և բոլոր հանգամանքներում» («Stand Strong against the Wiles of the World,» *Ensign*, Nov. 1995, 98–99):
2. Դուկաս 21.26, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.26:
3. Տես Մատթեոս 24.24, Ջոզեֆ Մմիթ-Մատթեոս 1.22:
4. Վարդապետություն և Ուխտեր 1.35:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.17: Պողոս Առաքյալը մարգարեացել է, որ «յետի օրերումը չար ժամանակներ կան»: Դա մեր օրերը հոգևորապես նենգ կդարձնի: (Տես Բ Տիմոթեոս 3.1-5:)
6. *Եկեղեցու Նախագահների Ուսումնասիրող. Ջոզեֆ Մմիթ* (2007), 512:
7. Վարդապետություն և Ուխտեր 38.30:
8. Տես Ալմա 49.5, 50.4:
9. Ալմա 48.7:
10. Տես Ալմա 49-50:
11. Տես Ալմա 48.8:
12. Ալմա 49.5, շեղագրերն ավելացված են:
13. Վարդապետություն և Ուխտեր 115.6:
14. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Հոգևոր գանձեր», *Լիստինա*, նոյեմբեր 2019, 76-79:
15. Էլիզա Ռ. Մնտուն ուսուցանել է Սուրբ Հոգին «բավարարում և լցնում է մարդկային սրտի ամեն ցանկություն: . . . Երբ ես լցվում եմ այդ Հոգով, իմ հոգին հագնում է, և ես կարող եմ լրջորեն ասել, որ օրվա մանրուքները կարծես բոլորովին չեն խանգարում ինձ»: . . . Արդյո՞ք մեր արտոնությունը չէ այնպես ապրել, որ այն անընդհատ հոսի մեր հոգիները» («*Իմ արքայության դաստիարակը*», *Սիոնիոյ Միության պատմությունը և աշխատանքը* [2011], 46):
16. See Daniel Burke, “Utah Earthquake Damages Mormon Temple and Knocks Trumpet from Iconic Angel Statue,” Mar. 18, 2020, cnn.com.
17. Մոսիա 5.15:
18. Վարդապետություն և Ուխտեր 88.118, շեշտադրումն ավելացված է:
19. Մորոնի 4.3:
20. Վարդապետություն և Ուխտեր 42.61:
21. Պողոս Առաքյալն ազդարարեց այս իրողությունը, երբ նա Տիմոթեոսի անպարտ հավատը վերագրեց նրա մորը (Եվնիկե) և նրա տատիկին (Լոիլա) (տես 2 Տիմոթեոս 1.5):
22. Ալմա 58.11:



Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Արթուն կացեք և ամեն ժամանակ աղոթք արեք

Այսօր իմ աղոթքի կոչն են հղում աշխարհի բոլոր երկրների բոլոր մարդկանց:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, Իր մահկանացու ծառայության վերջին շաբաթվա ընթացքում Հիսուսը ուսուցանեց իր աշակերտներին. «Ուրեմն աղթո՛ւն կացե՛ք ու ամեն ժամ աղոթե՛ք, որ արժանի լինեք փրկվելու այն ամենից, որ տեղի է ունենալու, և կանգնելու Մարդու Ռդդու առաջ»:¹

Նրա Երկրորդ գալուստին նախորդող իրադարձություններից են՝ «պատերազմները և պատերազմների լուրերը. . . սովերը եւ մահտարժամներ՝ եւ տեղ տեղ երկրաշարժությունները»:²

Վարդապետություն և Ուխտերում Փրկիչն ասել է. «Եվ բոլոր բաները կլինեն խառնաշփոթության մեջ. . . քանզի երկրորդ կայստի բոլոր մարդկանց»:³

Իհարկե, մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որտեղ ամեն ինչ խառնաշփոթի մեջ է: Ըստ մարդիկ վախենում են ապագայից, և շատ սրտեր շրջվել են Աստծո և Նրա Ռդդո՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքից:

Լրավամիջոցները լի են բռնության մասին հաղորդումներով: Համացանցով բարոյական գրպարտանք է տարածվում:

Գերեզմանները, եկեղեցիները, մզկիթները, ժողովարանները և կրոնական սրբավայրերը վայրագությունների են ենթարկվում:

Համաշխարհային համաճարակը հասել է երկրի գրեթե բոլոր անկյուններին. միլիոնավոր մարդիկ վարակվել են, մեկ միլիոնից ավել մարդ է մահացել: Խափանվել են ավարտական միջոցառումները, եկեղեցական պաշտամունքի ծառայությունները, ամուսնությունները, միսիոներական ծառայությունը և բազմաթիվ այլ կարևոր իրադարձություններ:



Նայրոբի, Քենիա

Բացի այդ, անթիվ մարդիկ մնացել են միայնակ և մեկուսացված:

Տնտեսական ցնցումները մարտահրավերներ են առաջացրել շատերի համար, հատկապես մեր Երկնային Հոր զավակներից ամենախոցելի խմբերի համար:

Մենք ականատես ենք, թե ինչպես են մարդիկ եռանդուն օգտվում խաղաղ բողոքի ակցիայի իրենց իրավունքից, ինչպես նաև տեսել ենք զայրացած ամբոխների խռովություն:

Միևնույն ժամանակ, մենք շարունակում ենք զինված բախումներ տեսնել ամբողջ աշխարհում:

Ես հաճախ եմ մտածում նրանց մասին, ովքեր տառապում են, անհանգստացած են, վախենում կամ իրենց մեռակ են զգում:

Վստահեցնում եմ յուրաքանչյուրիդ, որ Տերը ձեզ ճանաչում է, որ տեղյակ է ձեր անհանգստությունների և տառապանքի մասին, և որ նա սիրում է ձեզ մտերմորեն, անձնապես՝ խորը և հավիտենական սիրով:

Ամեն երեկո, երբ աղոթում եմ, ես խնդրում եմ Տիրոջը օրհնել բոլոր մարդկանց, ովքեր ծանրաբեռնված են վշտով, ցավով, միայնությամբ և տխրությամբ: Գիտեմ, որ եկեղեցու մյուս ղեկավարները ևս նման աղոթքներ են ասում: Թե՛ անհատապես, թե՛ հավաքականորեն մեր սրտերը ուղղված են ձեզ, իսկ աղոթքները առ Աստված՝ հանուն ձեզ:

Անցյալ տարի մի քանի օր անցկացրի Միացյալ Նահանգների հյուսիսարևելյան տարածաշրջանում՝ այցելելով ամերիկայի և եկեղեցու պատմական վայրերը, հանդիպումներ անցկացնելով մեր միսիոներների և անդամների հետ և շփվելով կառավարության ու բիզնեսի տարբեր ղեկավարների հետ:

Հոկտեմբերի 20-ին՝ շաբաթ օրը, Բոստոնում (Մասաչուսեթս) ես խոսեցի մի մեծ հավաքի ժամանակ: Խոսելիս ես ոգեշնչում զգացի ասել. «Ես աղաչում եմ ձեզ . . . աղոթել այս երկրի համար՝ մեր ղեկավարների, մեր ժողովրդի և

այն ընտանիքների համար, որոնք ապրում են Աստծո կողմից հիմնադրված այս մեծ ազգի մեջ»:⁴

Ես ասացի նաև, որ Ամերիկան և երկրագնդի ազգերից շատերը անցյալի պես գտնվում են վճռական և մեկ դարձակետի վրա և ունեն մեր աղոթքների կարիքը:⁵

Խնդրանքս իմ պատրաստած ելույթի մասը չէր: Այդ խոսքերը եկան միտքս, երբ զգացի, որ Հոգին հուշում է ինձ հրավիրել ներկաներին աղոթել իրենց երկրի և իրենց ղեկավարների համար:

Այսօր իմ աղոթքի կոչն են հղում աշխարհի բոլոր երկրների բոլոր մարդկանց: Անկախ նրանից, թե ինչպես եք աղոթում կամ ում եք աղոթում, խնդրում եմ գործադրել ձեր հավատը, ինչպիսին էլ որ լինի այն, և աղոթել ձեր երկրի և ձեր ազգի առաջնորդների համար: Ինչպես ասել եմ անցյալ հոկտեմբերին Մասաչուսեթսում, մենք այսօր կանգնած ենք պատմության գլխավոր խաչմերուկում, և երկրի ժողովուրդները աստվածային ներշնչանքի և առաջնորդության սաստիկ կարիք ունեն: Խոսքը քաղաքական հայացքների կամ քաղաքականության մասին չէ: Մա խաղաղության և ապաքինման մասին է, որը կարող է գալ Խաղաղության իշխանի և բոլոր բժշկությունների աղբյուրի՝ Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով՝ ինչպես անհատներին, այնպես էլ երկրների հոգուն՝ նրանց քաղաքներին և գյուղերին:

Անցած մի քանի ամիսների ընթացքում ինձ մոտ տպավորություն էր ստեղծվել, որ աշխարհի ներկա իրավիճակին օգնելու լավագույն միջոցն այն է, որ բոլոր մարդիկ լիովին ապավինեն Աստծուն և անկեղծ աղոթքով իրենց սրտերը դարձնեն Նրան: Այս անհանգստացնող ժամանակներում մեր մարտահրավերներին դիմանալու կամ դրանք հաղթահարելու ամենաապահով և ամենաստույգ ճանապարհը կլինի՝ խոնարհեցնել մեզ և փնտրել երկնքի ոգեշնչումը:

Սուրբ գրությունները կարևորում են Իր մահկանացու ծառայության ընթացքում Հիսուսի հղած աղոթքները, ինչպես նաև աղոթքի վերաբերյալ Նրա ուսմունքները: Դուք կհիշեք Տերունական աղոթքը.

«Մեր Հայր, որ երկնքումն ես. սուրբ լինի քո անունը.

«Քո արքայությունը գալ: Քո կամքը թող կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»:

Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր:

Եվ ներիր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք ենք ներում մեր պարտապաններին:

Ես մի տանիր մեզ փորձութեան մեջ. այլ ազատիր մեզ չարիցը. Որովհետև քոնն է թագավորությունը եւ գորութիւնը եւ փառքը յաւիտեանս: Ամեն»:⁶

Այս նպատակաուղղված, գեղեցիկ աղոթքը, որ հաճախ է կրկնվել ողջ քրիստոնեության ընթացքում, պարզ է դարձնում, որ մեզ հուզող հարցերի պատասխանների համար պատշաճ է ուղղակիորեն դիմել երկնքում գտնվող մեր հորը: Ուստի եկեք աղոթենք աստվածային առաջնորդության համար:

Ես հրավիրում եմ ձեզ անդադար աղոթել:⁷ Աղոթեք ձեր ընտանիքի համար: Աղոթեք ձեր ազգի ղեկավարների համար: Աղոթեք այն համարձակ մարդկանց համար, ովքեր մարտերի առաջնագծում են՝ ներկայիս սոցիալական, բնապահպանական, քաղաքական և կենսաբանական պատուհասների դեմ, որոնք ազդում են աշխարհի բոլոր մարդկանց՝ հարուստների ու աղքատների, երիտասարդների ու ծերերի վրա:

Փրկիչը մեզ սովորեցրել է չսահմանափակել մեր աղոթքները: Նա ասել է. «Միբեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին. բարի արեք ձեզ ստողներին. եւ աղօթք արեք ձեզ չարչարողների եւ ձեզ հալածողների համար»:⁸

Գողգոթայի խաչի վրա, որտեղ Հիսուսը մահացավ մեր մեղքերի համար, Նա կիրառեց այն, ինչ ուսուցանում էր աղոթքի մասին.

«Հայր, թողիր դորանց. որովհետև չ՛գիտեն թե ի՛նչ են անում»:⁹

Անկեղծորեն աղոթելով նրանց համար, ովքեր կարող են համարվել մեր թշնամիներ, ցույց ենք տալիս մեր հավատքը, որ Աստված կարող է փոխել ինչպես մեր, այնպես էլ ուրիշների սրտերը: Նման աղոթքները պետք է ամրապնդեն մեր կյանքում, ընտանիքում և համայնքներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու անհրաժեշտ վճռականությունը:

Անկախ նրանից, թե որտեղ եք ապրում, ինչ լեզվով եք խոսում, և որոնք են ձեր առջև ծառայած մարտահրավերները, Աստված լսում և պատասխանում է ձեզ՝ իր ձևով և իր ժամանակին: Քանի որ Նրա զավակներն ենք, մենք կարող ենք մոտենալ Նրան, որ աշխարհում դրական փոփոխություն կատարելու համար օգնություն, սփոփանք և նորացված ցանկություն խնդրենք:

Հաճախ բավարար չէ միայն արդարության, խաղաղության, աղքատների և հիվանդների համար աղոթելը: Աղոթքի համար *ծուկ* դնելուց հետո պետք է ուրիշ կանգնենք և անենք՝ ինչ կարող ենք, որ օգնենք ինչպես մեզ, այնպես էլ ուրիշներին:¹⁰

Սուրբ գրությունները լի են հավատքի մարդկանց օրինակներով, ովքեր աղոթքը համատեղում էին գործերի հետ՝ իրենց և ուրիշների կյանքում փոփոխություն մտցնելու համար: Մորմոնի Գրքում, օրինակ, մենք կարդում ենք Ենովսի մասին: Կա նկատառում, որ «նրա կարճ գրքի մոտ երկու երրորդը աղոթքի կամ աղոթքների շարքի նկարագրություն է, իսկ մյուս մասը պատմում է, թե ինչ է նա արել ստացված պատասխանների արդյունքում»:¹¹

Մենք բազում օրինակներ ունենք, թե ինչպես է աղոթքը փոփոխություն բերել Եկեղեցու մեր պատմության մեջ 1820 թվականի գարնանից սկսած, երբ Ջոզեֆ Սմիթը առաջին բարձրաձայն աղոթքն ասաց իր ծնողների

փայտաշեն տան մոտակայքի անտառապատ բացատում: Ներում և հոգևոր ուղղություն փնտրելով՝ Ջոզեֆի աղոթքը բացեց երկինքները: Այսօր մենք Մարգարե Ջոզեֆի և Վերջին Օրերի մյուս հավատարիմ սուրբ տղամարդկանց և կանանց շահառուներն ենք, ովքեր աղոթել և գործել են՝ օգնելով հիմնել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին:

Հաճախ եմ մտածում այնպիսի հավատարիմ կանանց աղոթքների մասին, ինչպես Մերի Ֆիլդինգ Սմիթը, ով Աստծո օգնությամբ իր ընտանիքը համարձակ առաջնորդեց հետապնդումներից դեպի անվտանգություն՝ Իլինոյսից մինչև այս հովիտ, որտեղ նրա ընտանիքը հոգևոր և նյութական բարգավաճում ապրեց: Ծունր դրած անկեղծորեն աղոթելուց հետո նա քրտնաջան աշխատում էր, որպեսզի հաղթահարեր իր մարտահրավերները և օրհներ իր ընտանիքը:

Աղոթքը մեզ կբարձրացնի և մեզ կմոտեցնի որպես անհատներ, ընտանիքներ, եկեղեցի և աշխարհ: Աղոթքը կազդի գիտնականների վրա և կօգնի նրանց պատվաստանյութեր և դեղամիջոցներ հայտնաբերել, որոնք վերջ կդնեն այս համավարակին: Աղոթքը կմխիթարի նրանց, ովքեր հարազատ են կորցրել: Այն կօգնի իմանալ, թե ինչ պետք է անենք անձնական պաշտպանության համար:

Եղբայրներ՝ և քույրեր՝, կոչ եմ անում կրկնապատկել աղոթելու ձեր պարտավորվածությունը: Ես ձեզ հորդորում եմ աղոթել ձեր սենյակներում, ձեր առօրյա քայլերում, ձեր տներում, ձեր ծխերում և մշտապես ձեր սրտերում:¹²

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ղեկավարների անունից շնորհակալություն եմ հայտնում ձեզ, որ աղոթում եք մեզ համար: Հորդորում եմ ձեզ անդադար աղոթել, որ մենք ոգեշնչվում և հայտնություն ստանանք՝ այս դժվարին

ժամանակաշրջանում Եկեղեցին առաջնորդելու համար:

Աղոթքը կարող է փոխել մեր իսկ կյանքը: Անկեղծ աղոթքով մղված՝ մենք կարող ենք ինքներս աճել և ուրիշներին օգնել, որ աճեն:

Անձնական փորձից գիտեմ աղոթքի զորության մասին: Վերջերս մենակ էի գրասենյակում: Հենց նոր բժշկական միջատություն էր կատարվել ձեռքիս վրա: Ձեռքս սևացել, կապտել, այտուցվել էր և ցավում էր: Մեղանի մոտ նստած՝ չէի կարողանում կենտրոնանալ կարևոր և վճռորոշ գործերի վրա, որովհետև ցավը ինձ շեղում էր:

Ես ծնկի իջա աղոթելու և խնդրեցի Տիրոջը, որ օգնի ինձ կենտրոնանալ, որ կարողանայի կատարել իմ աշխատանքը: Ես կանգնեցի և վերադարձա սեղանիս կիտված թղթերին: Գրեթե անմիջապես պարզություն և կենտրոնացում մտավ միտքս, և ես կարողացա ավարտել իմ առջև դրված հրատապ խնդիրները:

Աշխարհի ներկայիս քառասյին իրավիճակում, տեսնելով խնդիրների և մարտահրավերների բազմությունը, հնարավոր է, ճնշված զգանք: Բայց ես ջերմեռանդորեն վկայում եմ, որ եթե աղոթենք և Երկնային Հորը խնդրենք անհրաժեշտ օրհնություն և առաջնորդություն տա, մենք կիմանանք, թե ինչպես կարող ենք օրհնել մեր ընտանիքները, հարևաններին,



Թեմեկուլա, Կալիֆորնիա, ԱՄՆ

համայնքները և նույնիսկ երկիրը, որտեղ ապրում ենք:

Փրկիչը աղոթում էր, ապա «ման [գալիս] բարի անելով»,¹³ կերակրելով աղքատներին, քաջալերելով ու աջակցելով կարիքավորներին և սիրո, ներողամտության, խաղաղության և հանգստության ձեռք մեկնելով բոլոր նրանց, ովքեր գալիս էին Իր մոտ: Նա շարունակում է մեզ օգնության ձեռք մեկնել:

Ես հրավիրում եմ Եկեղեցու բոլոր անդամներին, ինչպես նաև աշխարհի մյուս հավատացյալ խմբերի մեր հարևաններին ու ընկերներին վարվել այնպես, ինչպես Փրկիչը խորհուրդ տվեց Իր աշակերտներին. «Աղթուն կացէք և ամեն ժամանակ աղոթք արէք»¹⁴ խաղաղության, մխիթարություն, անվտանգության և միմյանց ծառայելու հնարավորությունների համար:

Շատ մեծ է աղոթքի զորությունը և շատ մեծ է առ Աստված և Նրա Սիրելի Որդին մեր հավատքով աղոթքների անհրաժեշտությունը: Եկեք հիշենք և զնահատենք աղոթքի զորությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դուկաս 21.36, շեշտադրումն ավելացված է:
2. Մատթեոս 24.6, 7:
3. Վարդապետություն և Ուլստեր 88.91, շեշտադրումն ավելացված է:
4. M. Russell Ballard, in Sarah Jane Weaver, "President Ballard Pleads with Latter-day Saints to 'Pray for This Country' as United States Is at 'Another Crossroad,'" *Church News*, Oct. 21, 2019, thechurchnews.com.
5. See Weaver, "President Ballard Pleads with Latter-day Saints."
6. Մատթեոս 6.9–13: Notice that the Joseph Smith Translation clarifies verse 13: "And *suffer* [permit] us not to be led into temptation, but deliver us from evil" (Joseph Smith Translation, Matthew 6:14 [in Matthew 6:13, footnote a]).
7. Տես Դուկաս 18.1–8, 21.36, Եփեսացի 6.18, 2 Նեփի 32.9, 3 Նեփի 18.15, 18–21, Վարդապետություն և Ուլստեր 10.5, 19.38, 33.17, 61.39, 88.126, 90.24:
8. Մատթեոս 5.44:
9. Դուկաս 23.34:
10. Տես Ալմա 34.27–29:
11. Sharon J. Harris, *Enos, Jarom, Omni: A Brief Theological Introduction* (2020), 18.
12. Տես Ալմա 33.3–11, 34.17–27:
13. Գործք 10.38:
14. Դուկաս 21.36, ավելացված շեշտադրում, տես նաև 3 Նեփի 18.15:



Լիզա Լ. Շարլյեսու
Երեխաների միության գերագույն նախագահության
առաջին խորհրդակալ

Լռիր, պապանձվիր

*Փրկիչն ուսուցանում է մեզ, թե ինչպես զգալ
խաղաղություն և հանգստություն, նույնիսկ, երբ
սաստիկ քամիները մոլեգնում են մեր շուրջը և
փրփրադեզ ալիքները սպառնում են խորտակել մեր
հույսերը:*

Երբ մեր երեխաները փոքր էին, մեր ընտանիքը մի քանի օր անցկացրեց մի գեղեցիկ լճի ափին: Մի օր կեսօրին մի քանի երեխաներ հագան փրկարար օղակներ նախքան տախտակամածից ջրի մեջ ցատկելը: Մեր փոքր աղջիկը նայում էր՝ տատանվելով, ուշադիր հետևելով իր եղբայրներին և քույրերին: Իր ողջ քաջությունը հավաքելով՝ նա մի ձեռքով փակեց իր քիթն ու ցատկեց: Նա անմիջապես դուրս եկավ և մի քիչ տազնապած ձայնով կանչեց. «Օգնեք ինձ: Օգնեք ինձ»:

Այդ պահին նա որևէ մահացու վտանգի մեջ չէր, փրկարար օղակն անում էր իր գործը, և նա ապահով լողում էր: Մենք կարող էինք հասնել և հետ քաշել նրան տախտակամածի վրա՝ առանց մեծ ջանքեր գործադրելու: Մակայն իր տեսանկյունից նա կարիք ուներ օգնության: Հավանաբար ջրի սառնությունն էր կամ փորձառության նորությունը: Ամեն դեպքում նա հետ մազլցեց տախտակամած, որտեղ մենք նրան փաթաթեցինք չոր սրբիչով և հաճոյախոսություն արեցինք նրա քաջության առթիվ:

Անկախ նրանից՝ մենք մեծ ենք, թե փոքր, մեզանից շատերը փորձանքի պահերին արտաբերում են հրատապ բառեր, ինչպես օրինակ «Օգնեք ինձ» «Փրկեք ինձ» կամ «Խնդրում եմ, պատասխանիր իմ աղոթքին»:

Այդպիսի դեպք պատահեց Հիսուսի աշակերտների հետ Նրա մահկանացու ծառայության ընթացքում: Մարկոսի ավետարանում մենք կարդում ենք, որ Հիսուսը «սկսեց ծովի մոտ սովորեցնել և շատ ամբոխ հաւաքուեցաւ նորա մօտ»:¹ Ամբոխն այնքան շատացավ, որ Հիսուսը «մտավ նաւի մեջ»² և խոսեց տախտակամածից: Ամբողջ օրվա ընթացքում Նա առակներ ուսուցանեց ժողովրդին, երբ նրանք նստած էին ափին:

«Եւ այն օրը երբ, որ իրիկուն էր լինում, նորանց ասեց. «Եկեք անցնենք այն կողմը: Եվ երբ ժողովրդին բաց թողեցին»³ նրանք հեռացան ափից և անցան Գալիլեայի ծովով: Մի տեղ գտնելով նավի հետնամասում Հիսուսը պառկեց և արագ քնեց: Շուտով «քամու մեծ փոթորիկ բարձրացավ եւ ալիքները թափում էր նաւի

մեջ, մինչև որ [համարեա] արդեն լցվում էր»⁴ ջրով:

Հիսուսի շատ աշակերտներ փորձառու ձկնորսներ էին և գիտեին, թե ինչպես կառավարել նավը փոթորիկի ժամանակ: Նրանք իսկապես Նրա վստահելի, Նրա սիրելի աշակերտներն էին: Նրանք թողել էին իրենց աշխատանքը, անձնական հետաքրքրությունները և ընտանիքը՝ հետևելու Հիսուսին: Նրա հանդեպ նրանց հավատքն ակնհայտ էր նավում իրենց ներկայության միջոցով: Եվ այժմ նրանց նավը փոթորիկի մեջ էր և սուզվելու վտանգի եզրին:

Մենք չգիտենք, թե որքան ժամանակ նրանք պայքարեցին նավը ջրի երեսին պահելու համար փոթորիկի մեջ, բայց նրանք արթնացրին Հիսուսին իրենց ձայնի մեջ մի փոքր խուճապի մատնված՝ ասելով.

«Վարդապետ հոգո չէ՞, որ կորչում ենք»:⁵

«Տեր, փրկիր մեզ, կորչում ենք»:⁶

Նրանք կոչեցին Նրան «Վարդապետ», և այդ Նա է: Եվ Նա նաև «Հիսուս Քրիստոսն է, Աստծո Որդին, երկնքի և երկրի Հայրը, բոլոր բաների Արարիչը ի սկզբանե»:⁷

Հիսուսը նավի Իր տեղից բարձրացավ և սաստեց քամիում և սասց մոլեգնած ծովին. «Լռիր, պապանձվիր»: Եվ քամին լղաղարեց և մեծ խաղաղություն եղավ»:⁸ Ընդմիջու Վարդապետ Ուսուցիչ, Հիսուսն այնուհետև ուսուցանեց Իր աշակերտներին երկու պարզ, բայց սիրալիք հարցեր: Նա հարցրեց.

«Ի՞նչու այդպես վախկոտ էք»⁹

«Ի՞նչպես հաւատք չունիք»:¹⁰

Կա մի մահկանացու միտում. երբ մենք գտնվում ենք փորձությունների, վշտերի և չարչարանքների մեջ, գայթակղվում ենք աղաղակել. «Տեր, հոգո չէ՞, որ կորչում եմ: Փրկիր ինձ»: Նույնիսկ Ջոզեֆ Սմիթն աղերսեց սոսկալի բանտից. «Ով Աստված, որտե՞ղ ես դու: Եվ ո՞րտեղ է տաղավարը, որ ծածկում է քո թաքնված տեղը»:¹¹

Իհարկե, աշխարհի Փրկիչը

հասկանում է մեր մահկանացու սահմանափակումները, քանզի Նա ուսուցանում է մեզ, թե ինչպես զգալ խաղաղություն և հանգստություն, նույնիսկ, երբ սաստիկ քամիներ են մոլեգնում մեր շուրջը և կատաղի ալիքները սպառնում են խորտակել մեր հույսերը:

Նրանց, ովքեր ապացուցված հավատքով են, մանկական հավատքով կամ նույնիսկ հավատքի փոքրագույն մասնիկով,¹² Հիսուսը հրավիրում է՝ ասելով. «Եկեք ինձ մոտ»:¹³ «Հավատացեք իմ անունին»:¹⁴ «Մովորեք իմ մասին և լսեք իմ խոսքերը»:¹⁵ Նա մեղմորեն պատվիրում է. «Ապաշխարեք և մկրտվեք իմ անունով»,¹⁶ «Իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի»,¹⁷ և «միշտ հիշեք ինձ»:¹⁸ Նա հավաստիացնում է՝ բացատրելով. «Այս բաները խոսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղություն ունենաք»: Աշխարհքում նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին»:¹⁹

Կարող եմ պատկերացնել, որ Հիսուսի աշակերտները փոթորկից քշված նավում անհրաժեշտությունից ելնելով, զբաղված էին իրենց տախտակամածին փլվող ալիքներին նայելով և ջուրը դուրս թափելով: Ես պատկերացնում եմ, թե նրանք ինչպես էին կառավարում թիակներով և փորձում պահպանել որոշ վերահսկողության հավասարակշռություն իրենց փոքրիկ նավի վրա: Նրանց ուշադրությունը կենտրոնացած էր այդ պահին գոյատևման վրա, և նրանց անհապաղ օգնության աղերսն անկեղծ էր:

Մեզանից շատերը մեր օրերում ոչնչով չենք տարբերվում: Երկրագնդի շուրջ և մեր ազգերում, համայնքներում և ընտանիքներում տեղի ունեցած վերջին իրադարձությունները փլվեցին մեզ վրա անկանխատեսելի փորձություններով: Խառնաշփոթ իրավիճակներում մեր հավատքը կարող է ձգվել՝ մեր տոկունության և հասկացողության սահմանների մինչև վերջին կետը: Վախի

ալիքները կարող են շեղել մեզ՝ ստիպելով մեզ մոռանալ Աստծո բարությունը, այդպիսով կարճատես թողնելով մեր հեռանակարը և կիզակետից դուրս: Այնուամենայնիվ, մեր ճանապարհի այս կոպիտ հատվածներում է, որ մեր հավատքը կարող է և՛ փորձվել, և՛ ամրացվել:

Անկախ մեր հանգամանքներից, մենք կարող ենք միտումնավոր ջանքեր գործադրել՝ կառուցելով և մեծացնելով մեր հավատքը առ Հիսուս Քրիստոս: Այն գորացվում է, երբ մենք հիշում ենք, որ մենք Աստծո զավակներն ենք, և որ Նա սիրում է մեզ: Մեր հավատքն աճում է, երբ մենք փորձարկում ենք Աստծո խոսքի վրա հույսով և ջանասիրությամբ, փորձելով այն ամենը, ինչ կարող ենք՝ հետևելու Քրիստոսի ուսմունքներին: Մեր հավատքն աճում է, երբ ընտրում ենք ավելի շուտ հավատալ, քան կասկածել, ավելի շուտ ներել, քան դատել, ավելի շուտ ապաշխարել, քան ապստամբել: Մեր հավատքն ավելի է զտվում, երբ մենք համբերությամբ ապավինում ենք Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմածությանը և շնորհին:²⁰

«Չնայած հավատքը կատարյալ գիտելիք չէ», Երեց Նիլ Ա.Մաքսվելն ասել է. «այն խորին վստահություն է բերում առ Աստված, ում գիտելիքը կատարյալ է»:²¹ Նույնիսկ ցնցումնային ժամանակներում հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս հաստատական և ճկուն է: Այն օգնում է մեզ մաղել անկարևոր շեղումները: Այն խրախուսում է մեզ շարունակել առաջ շարժվել ուխտի արահետով: Հավատքը մեզ առաջ է հրում հուսահատության միջով և թույլ է տալիս մեզ հանդիպել ապագային՝ վճռական և թիկնեղ ուսերով: Այն հուշում է մեզ խնդրել փրկություն և սփոփանք, երբ աղոթում ենք Հորը՝ Իր Որդու անունով: Եվ երբ աղոթքով լի աղերսանքները, թվում է, գնում են անպատասխան, մեր հաստատուն հավատքն առ Հիսուս Քրիստոս առաջացնում է համբերություն, համեստություն և ունակություն՝ ակնածանքով

արտաբերելու խոսքերը. «Քո կամքով թող լինի»:²²

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.

«Բայց մենք չպետք է թույլ տանք, որ մեր երկյուղը տեղահան անի մեր հավատքը: Մենք կարող ենք մարտնչել այդ երկյուղների դեմ՝ զորացնելով մեր հավատքը:

«Սկսեք ձեր երեխաներից: . . . Թույլ տվեք, որ նրանք զգան ձեր հավատքը, նույնիսկ երբ ցավագին փորձություններ են ընկնում ձեզ վրա: Թող ձեր հավատքը կենտրոնացած լինի ձեր սիրառատ Երկնային Հոր և և Նրա սիրելի Որդի՝ Տեր Հիսուս Քրիստոսի վրա: . . . Ուսուցանեք յուրաքանչյուր թանկագին տղայի կամ աղջկա, որ նա Աստծո զավակն է՝ ստեղծված Նրա պատկերով, սրբազան նպատակով և ներուժով: Յուրաքանչյուրը ծնվել է մարտահրավերներով, որոնք պիտի հաղթահարվեն, և հավատքով, որը պետք է զարգացվի»:²³

Վերջերս ես լսեցի, որ երկու չորս տարեկան երեխաներ կիսվում էին իրենց հավատքով առ Հիսուս Քրիստոսը, երբ նրանք պատասխանում էին հարցին՝ «Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսն օգնում ձեզ»: Առաջին երեխան ասաց. «Ես գիտեմ Հիսուսը սիրում է ինձ, որովհետև Նա մահացել է ինձ համար: Նա սիրում է նաև մեծահասակներին: Երկրորդ երեխան ասաց. «Նա օգնում է ինձ, երբ ես տխուր եմ կամ դժկամ: Նա օգնում է ինձ նաև, երբ ես սուզվում եմ»:

Հիսուսը հայտարարեց. «Հետևաբար, ով որ ապաշխարում է և գալիս ինձ մոտ, ինչպես մի փոքր երեխա, նրան ես կընդունեմ, քանզի այդպիսիներին է Աստծո արքայությունը»:²⁴

«Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի, այլ յաւիտեանական կեանքն ունենայ»:²⁵

Վերջերս Նախագահ Նելսոնը խոստացավ «որ վախի նվազում և հավատքի մեծացում կհետևի», երբ մենք սկսեք նորովի *խոսապետ*

լսել, ուշք դարձնել և հետևել Փրկիչի խոսքերին»:²⁶

Քույրե՛ր և եղբայրնե՛ր, մեր ներկա դժվարին հանգամանքները մեր վերջնական հավերժական նպատակակետը չէ: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք մեզ վրա ենք վերցրել Հիսուս Քրիստոսի անունը ուխտի միջոցով: Մենք ունենք հավատք Նրա փրկագնող ուժի և հույս՝ Նրա մեծ և թանկագին խոստումների հանդեպ: Մենք ուրախանալու ամեն առիթ ունենք, քանի որ մեր Տերն ու Փրկիչը խորապես տեղյակ է մեր վշտերին, մտահոգություններին և ցավերին: Ինչպես Հիսուսը հնում իր աշակերտների հետ էր, Նա նաև մեր նավում է: Նա տվել է Իր կյանքը, որպեսզի ես և դուք չկործանվենք: Թող որ մենք վստահենք Նրան, հնազանդվենք Նրա պատվիրաններին և հավատքով լսենք Նրա խոսքը. «Լռիր, պապանձվիր»:²⁷ Հիսուս Քրիստոսի սուրբ ու նվիրական անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆՆԵՐ

1. Մարկոս 4.1:
2. Մարկոս 4.1:
3. Մարկոս 4.35–36:
4. Մարկոս 4.37:
5. Մարկոս 4.38:
6. Մատթեոս 8.25:
7. Մոսիա 3.8:
8. Մարկոս 4.39:
9. Մարկոս 4.40:
10. Դուկաս 8.25:
11. Վարդապետություն և Ուխտեր 121.1:
12. Տես Մլմա 32.27:
13. Մատթեոս 11.28:
14. Եթեր 3.14:
15. Վարդապետություն և Ուխտեր 19.23:
16. 3 Նեփի 18.11:
17. Հովհաննես 13.34:
18. 3 Նեփի 18.7:
19. Հովհաննես 16.33:
20. Տես 2 Նեփի 2.8:
21. Neal A. Maxwell, “Lest Ye Be Wearied and Faint in Your Minds,” *Ensign*, May 1991, 89.
22. Դուկաս 11.2:
23. Ռասսել Մ. Նելսոն, «Ապագային հանդիպեք հավատքով», *Հիստորիա*, մայիս 2011, 34:
24. 3 Նեփի 9.22:
25. Հովհաննես 3.16:
26. Ռասսել Մ. Նելսոն, «Առաջ գնացեք հավատքով», *Հիստորիա*, մայիս 2020, 114:
27. Մարկոս 4.39:



Երեց Ուլիսես Սուարես
Տասներկու Առաքյալների Քվորումից

Փնտրեք Քրիստոսին ձեր բոլոր մտորումներում

Գայթակղության դեմ պայքարը պահանջում է աշխատասիրություն և հավատարմություն անբողջ կյանքի ընթացքում: Բայց խնդրում են, իմացեք, որ Տերը պատրաստ է աջակցել մեզ:

Իր բանաստեղծական օրհներգում Մադոնսերգուն հայտարարել է.

«Տեր, դու քննում ես ինձ և ճանաչում ես ինձ:

Դու գիտես իմ նստիլն ու վեր կենալը, հեռուանց իմանում ես իմ մտածմունքները:

Իմ գնալն ու պառկելը քննում ես. Եւ իմ բոլոր ճանապարհները գիտես».¹

Այս բանաստեղծության իմաստային զուգահեռության մեջ Մադոնսերգուն գովաբանում է Տիրոջ՝ ամենագետ լինելու աստվածային հատկությունը, որովհետև Նա իսկապես գիտի մեր հոգիների բոլոր տիրույթները:² Տեղյակ լինելով այն ամենի մասին, ինչ մեզ անհրաժեշտ է այս կյանքում, Փրկիչը մեզ հրավիրում է փնտրել



Վիլլա Ալենանա, Մեծ Վալպարաիսո, Չիլի

Իրեն բոլոր մտորումներում և մեր ողջ սրտով հետևել Իրեն:³ Սա մեզ խոստանում է, որ մենք կարող ենք քայլել Նրա լույսի ներքո, և որ Նրա առաջնորդությունը կանխում է խավարի ազդեցությունը մեր կյանքում:⁴

Բոլոր մտորումներում Քրիստոսին փնտրելու և ամբողջ սրտով Նրան հետևելու համար պահանջվում է, որ մեր միտքը և ցանկությունները համապատասխանեցնենք Նրա մտքի և ցանկությունների հետ:⁵ Սուրբ գրություններն անդրադառնում են այս համապատասխանեցմանը որպես՝ «հաստատ կացեք Տերումը»:⁶ Գործողությունների այս ծրագիրը ենթադրում է, որ մենք միշտ վարում ենք Քրիստոսի ավետարանին ներդաշնակ կյանք և ամեն օր կենտրոնանում ենք այն ամեն վրա, ինչը բարի է:⁷ Միայն այդ ժամանակ մենք կհասնենք «Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է» և որը «կ'պահպանէ [մեր] սրտերն ու միտքերը Քրիստոս Յիսուսումը»:⁸ 1831 թվականի փետրվարին Փրկիչն Ինքը հրահանգեց Եկեղեցու երեցներին. «Գանձեք այս բաները ձեր սրտերում, և թող հավերժության հանդիսավոր բաները հանգչեն ձեր մտքերում»:⁹

Չնայած Տիրոջը փնտրելու մեր շարունակական ջանքերին, անպատշաճ մտքեր կարող են թափանցել մեր միտքը: Երբ թույլ ենք տալիս, որ այդպիսի մտքերն ընթացք ունենան, դրանք կարող են ազդել մեր սրտի ցանկությունների վրա և առաջնորդել մեզ դառնալու այն, ինչ կդառնալինք այս կյանքում, և ի վերջո, այն, ինչը մենք ժամանակելու ենք հավերժության համար:¹⁰ Երեց Նիլ Ա. Մաքսվելը այսպես է ձևակերպել այս սկզբունքը. «Ցանկություններն են . . . որոշում արդյունքների աստիճանակարգերը, ներառյալ այն, թե ինչու «շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված»:¹¹

Մեր հնադարյան և ժամանակակից մարգարեներն անընդհատ

հիշեցնում են մեզ դիմակայել գայթակղությանը, որպեսզի խուսափենք կյանքում մեր հոգևոր սթափությունը կորցնելուց և մոլորվելուց, ապակողմնորոշվելուց և հիասթափվելուց:

Փոխաբերական իմաստով՝ գայթակղությանը տրվելը նման է մետաղական առարկայով մագնիսին մոտենալուն: Մագնիսի անտեսանելի ուժը գրավում է մետաղական առարկան և ամուր պահում է այն: Մագնիսը դրա վրա կորցնում է իր գործությունը միայն այն ժամանակ, երբ մետաղական առարկան նրանից հեռու է դրվում: Հետևաբար, ինչպես մագնիսը ի վիճակի չէ ուժ գործադրել հեռավոր մետաղական առարկայի վրա, ճիշտ այդպես էլ, երբ մենք դիմակայում ենք գայթակղությանը, այն մարում է և կորցնում է իր ուժը մեր մտքի ու սրտի վրա, և, համապատասխանաբար, մեր գործողությունների վրա:

Այս նմանությունն ինձ հիշեցնում է մի փորձառություն, որով Եկեղեցու շատ հավատարիմ մի անդամ վերջերս կիսվեց ինձ հետ: Այդ անդամն ինձ ասաց, որ մի առավոտ, երբ արթնացավ, անսպասելիորեն մի անպատշաճ միտք ծագեց իր գլխում, որը նախկինում երբեք չէր ունեցել: Չնայած նա շատ զարմացավ, սակայն շատ արագ արձագանքեց իրավիճակին՝ ինքն իրեն և այդ մտքին ասելով. «Ո՛չ», ապա այն փոխարինեց մի լավ մտքով, որպեսզի շեղվի իր համար անցանկալի մտքից: Նա ասաց ինձ, որ երբ ինքն արդարությամբ գործադրեց իր բարոյական ազատությունը, այդ պատահական բացասական միտքն անմիջապես անհետացավ:

Երբ Մորոնիին կոչ արեց մարդկանց հավատալ Քրիստոսին և ապաշխարել, նա հորդորեց նրանց Փրկիչի մոտ գալ իրենց ողջ սրտով՝ հանելով իրենցից ամեն անմաքրությունը: Ավելին, Մորոնիին հրավիրեց նրանց անկուտրում վճռականությամբ

խնդրել Աստծուց, որ նրանք գայթակղության մեջ չընկնեն:¹² Այս սկզբունքների կիրառումը մեր կյանքում ավելին է պահանջում, քան զուտ հավատք. դա պահանջում է մեր մտքերն ու սրտերը հարմարեցնել այս աստվածային սկզբունքներին: Փրկիչին ապավինելուց բացի՝ նման հարմարեցումը պահանջում է ամենօրյա և մշտական անձնական ջանքեր, քանի որ մեր մահկանացու հակումներն ինքնին չեն վերանա: Գայթակղության դեմ պայքարը պահանջում է աշխատասիրություն և հավատարմություն ամբողջ կյանքի ընթացքում: Բայց խնդրում եմ, իմացեք, որ Տերը պատրաստ է աջակցել մեզ մեր անձնական ջանքերում և խոստանում է հրաշալի օրհնություններ, եթե մենք տոկանք մինչև վերջ:

Հատկապես մի դժվարին ժամանակաշրջանում, երբ Ջոզեֆ Մմիթն ու իր ընկերակից բանտարկյալները Լիբերթիի բանտում ոչ մի տեսակի ազատություն չունեին՝ բացի իրենց մտորումներից, Տերը նրանց օգտակար խորհուրդ և խոստում տվեց, որոնք կիրառելի են բոլորիս համար.

«Թող քո որովայնը գթությամբ լցված լինի բոլոր տղամարդկանց [և կանանց], հանդեպ և հավատքի ընտանիքի հանդեպ, և թող առաքիությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծու ներկայության մեջ. . . .

«Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան»:¹³

Երբ այդպես վարվենք, սուրբ մտքերը անընդհատ կզարդարեն մեր միտքը, և մաքուր ցանկությունները մեզ կառաջնորդեն դեպի արդար գործողություններ:

Մորոնիին նույնպես հիշեցրեց իր ժողովրդին՝ չվատնվել իրենց ցանկությունների վրա:¹⁴ *Ցանկություն* բառը վերաբերում է բռուն ցանկությանը և ինչ-որ բանի անպատշաճ ցանկությանը:¹⁵ Այն ընդգրկում է ցանկացած խավար

մտորում կամ չար ցանկություն, որը ստիպում է անհատին ավելի շատ կենտրոնանալ եսասիրական գործելակերպի կամ աշխարհիկ ունեցվածքի վրա, քան թե բարիք գործելու, բարի լինելու և Սատծո պատվիրանները պահելու և այլնի վրա: Այն հաճախ դրսևորվում է հոգու առավել մարմնական զգացմունքների միջոցով: Պողոս Առաքյալը բացահայտել է այս զգացմունքներից մի քանիսը՝ պղծությունը, հեշտասիրությունը, . . . թշնամությունը, . . . բարկությունը, հակառակությունը, . . . նախանձը . . . և նման այլ բաներ:¹⁶ Ցանկության բոլոր կործանարար կողմերից բացի, մենք չենք կարող մոռանալ, որ թշնամին այն օգտագործում է որպես գաղտնի և խաբուսիկ զենք մեր դեմ, երբ մեզ գայթակղում է ինչ-որ սխալ բան անել:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ երբ մենք ապավինում ենք փրկության վեմին՝ մեր հոգու Փրկիչին, և հետևում ենք Մորոնիի խորհրդին, մեր մտքերը կառավարելու մեր ունակությունը էապես կբարձրանա: Ես կարող եմ հավաստիացնել ձեզ, որ մեր հոգևոր հասունությունը մեծանալու է աճող տեմպերով՝ փոխելով մեր սիրտը, մեզ ավելի նմանեցնելով Հիսուս Քրիստոսին: Բացի այդ՝ Սուրբ Հոգու ազդեցությունն ավելի բուռն ու շարունակական կլինի մեր կյանքում: Այդ ժամանակ թշնամու գայթակղությունները քիչ-քիչ կկորցնեն իրենց գործությունը մեզ վրա՝ հանգեցնելով ավելի երջանիկ և ավելի մաքուր ու սրբադասված կյանքի:

Նրանց համար, ովքեր անկախ պատճառից գայթակղության մեջ են ընկնում և շարունակաբար մտածում կամ կատարում են անարդար գործողություններ, ես հավատացնում եմ ձեզ, որ կա հետդարձի ճանապարհ, որ հույս կա Քրիստոսում: Մի քանի տարի առաջ ես հնարավորություն ունեցա այցելելու Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի

Եկեղեցու մի սիրելի անդամի, ով մեծ մեղք գործելուց հետո անցնում էր իր կյանքի շատ դժվարին ժամանակաշրջան: Երբ ես առաջին անգամ տեսա նրան, նկատեցի նրա աչքերի տխրությունը, որն ուղեկցվում էր դեմքի հույսի պայծառությամբ: Դեմքի այդ արտահայտությունն արտացոլում էր խոնարհ և փոփոխված սիրտ: Նա նվիրված քրիստոնյա էր և մեծապես օրհնված էր Տիրոջ կողմից: Այնուամենայնիվ, նա թույլ էր տվել, որ մի անպատշաճ միտք ներխուժի իր միտքը, որը հետո հանգեցրել է ուրիշ մտքերի: Քանի որ նա մշտապես այսպիսի մտքեր էր թույլ տալիս, շուտով դրանք արմատավորվեցին նրա մտքում և սկսեցին խորանալ նրա սրտում: Նա, ի վերջո, գործեց ըստ այդ անարժան ցանկությունների, ինչը նրան ստիպեց որոշումներ կայացնել՝ հակառակ այն ամենին, ինչն ամենաթանկն էր իր կյանքում: Նա ասաց ինձ, որ եթե սկզբում ինքը տեղ չտար այդ հիմար մտքին, չէր դառնա խոցելի և ենթակա թշնամու գայթակղություններին. գայթակղություններ, որոնք այդքան տխրություն էին բերել նրա կյանք՝ գոնե որոշակի ժամանակահատվածով:

Բարեբախտաբար, Ղուկասի ավետարանի հայտնի առակի անառակ որդու նման, «ինքն իրան եկավ» և արթնացավ այդ մոճավանջից:¹⁷ Նա նորոգեց իր վստահությունը Տիրոջ հանդեպ և զգաց ճշմարիտ վիշտ և, ի վերջո, ցանկություն ունեցավ վերադառնալ Տիրոջ հոտը: Այդ օրը երկուսս էլ զգացինք Փրկիչի քավիչ սերը մեր հանդեպ: Մեր կարճատև այցի ավարտին երկուսս էլ հուզված էինք, և ես մինչ օրս հիշում եմ, որ նրա դեմքը փայլում էր ուրախությունից, երբ նա լքեց իմ աշխատասենյակը:

Իմ սիրելի՛ ընկերներ, երբ մենք դիմադրենք փոքրիկ գայթակղություններին, որոնք հաճախ անսպասելի են գալիս մեր կյանք, մենք ավելի լավ զինված կլինենք՝ խուսափելու լուրջ

օրինազանցություններից: Ինչպես ասել է Մպենսեր Վ. Քիմբալը. «Մարդը հազվադեպ է ավելի խորը հանցանքի մեջ մտնում, առանց նախապես ենթարկվելու ավելի փոքրերին, որոնք դուռ են բացում դեպի ավելի մեծերը: . . . Մաքուր դաշտը չի կարող հանկարծակի ծածկվել մոլախոտերով»:¹⁸

Պատրաստվելով իրականացնել իր աստվածային առաքելությունը երկրի վրա՝ Փրկիչ Հիսուս Քրիստոսը ցույց տվեց, թե որքան կարևոր է անընդհատ դիմակայել այն ամենին, ինչը կարող է խանգարել մեզ իրականացնել մեր հավերժական նպատակը: Թշնամու կողմից մի քանի անհաջող գրոհներից հետո, որոնք փորձեցին շեղել Նրան Իր առաքելությունից, Փրկիչը կտրակալապես հեռացրեց սատանային՝ ասելով. «Դե՛ն գնա, սատանայ. . . . Այն ժամանակ սատանան թողեց նորան, եւ ասե՛հա հրեշտակներ մօտ եկան եւ ծառայում էին նորան»:¹⁹

Պատկերացնո՞ւմ եք, իմ եղբայրներ և քույրեր, թե ինչ կլինեն, եթե մենք Փրկիչից ուժ և խիզախություն քաղեինք և անառողջ մտքերին ասեինք՝ «Ոչ» և «Դե՛ն գնա» առաջին իսկ վայրկյանին, երբ դրանք հայտնվեին մեր մտքում: Ինչպիսի՞ն կլինի ազդեցությունը մեր սրտերի ցանկությունների վրա: Արդյունքում ստացված գործողությունները մեզ ինչպե՞ս մոտ կպահեին Փրկիչին և թույլ կտային Սուրբ Հոգու շարունակական ազդեցությունը մեր կյանքում: Ես գիտեմ, որ Հիսուսի օրինակին հետևելով մենք կխուսափենք բազմաթիվ ողբերգություններից և անցանկալի վարքից, որոնք կարող են հարուցել ընտանեկան խնդիրներ և տարածայնություններ, բացասական հույզեր և հակումներ, անարդարություններ և չարաշահումներ, ստրկություն՝ կործանարար կախվածություններից և ցանկացած այլ բան, ինչը դեմ կլինի Տիրոջ պատվիրաններին:

Այս տարվա ապրիլի պատմական և հուզիչ ուղերձում մեր



սիրելի մարգարեն՝ նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոստացավ, որ բոլոր նրանք, ովքեր պատրաստ են «լսել Նրան»՝ լսել Հիսուս Քրիստոսին և հնազանդվել Նրա պատվիրաններին, «ավելի մեծ ուժ կստանան՝ պայքարելու զայթակողության, դժվարության և թուլության դեմ», և որ ուրախություն

զգալու մեր կարողությունը կաճի, նույնիսկ ներկայիս աճող խռովությունների ընթացքում:²⁰

Ես վկայում եմ ձեզ, որ մեր սիրելի մարգարեի տված խոստումները հենց Փրկիչի կողմից տրված խոստումներն են: Ես հրավիրում եմ մեզ բոլորիս «լսել Նրան» բոլոր մտորումներում և

ամբողջ սրտով հետևել Նրան, որպեսզի ուժ և քաջություն ստանանք «Ոչ» և «Դե՛ն գնա» ասելու այն բոլոր բաներին, որոնք կարող են դժբախտություն բերել մեր կյանք: Եթե այդպես վարվենք, ես խոստանում եմ, որ Տերը կուղարկի Իր Սուրբ Հոգու ավելի մեծ չափաբաժինը՝ զորացնելու և մխիթարելու մեզ, և մենք կարող ենք անհատներ դառնալ՝ «Տիրոջ սրտի համեմատ»:²¹

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսն ապրում է, և Նրա միջոցով մենք կարող ենք հաղթել թշնամու չար ազդեցությունները և արժանի լինել հավերժ ապրելու Տիրոջ հետ և մեր սիրելի Երկնային Հոր ներկայությամբ: Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ իմ ամբողջ սիրով՝ ձեր և մեր զեղեցիկ Փրկիչի հանդեպ, ում անունին ես փառք ու պատիվ եմ տալիս և գովաբանում եմ հավիտյան: Ես ասում եմ այս ամենը Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մաղմուս 139.1-3:
2. Տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Ամենագետ», scriptures.ChurchofJesusChrist.org, տես նաև Մատթեոս 6.8, 2 Նեփի 2.24, 3 Նեփի 28.6, Վարդապետություն և Ուլստեր 6.16:
3. Տես Մաղմուս 119.2, Եսայիա 45.22, Մոսիա 7.33, Վարդապետություն և Ուլստեր 6.36:
4. Տես Հովհաննես 8.12:
5. Տես Վարդապետություն և Ուլստեր 68.4:
6. Փիլիպպեցիս 4.1:
7. Տես Փիլիպպեցիս 4.8:
8. Փիլիպպեցիս 4.7:
9. Վարդապետություն և Ուլստեր 43.34:
10. Տես Առակաց 23.7, Երեմիա 17.10, 2 Նեփի 9.39, Մոսիա 4.30, Ալմա 12.14, Վարդապետություն և Ուլստեր 137.9:
11. Neal A. Maxwell, "According to the Desire of [Our] Hearts," *Ensign*, Nov. 1996, 22, տես նաև Մատթեոս 22.14, Վարդապետություն և Ուլստեր 95.5:
12. Տես Մորմոն 9.27-29, տես նաև Մոսիա 2.41:
13. Վարդապետություն և Ուլստեր 121.45-46:
14. Տես Մորմոն 9.28:
15. Տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Ցանկանալ», scriptures.ChurchofJesusChrist.org:
16. Գաղատացիս 5.19-21:
17. Ղուկաս 15.17:
18. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 106, տես նաև Բ Թագավորաց 11:
19. Մատթեոս 4.10-11:
20. Ռասսել Մ. Նելսոն, «Լսիր Նրան», *Լիսինեսու*, մայիս 2020, 90:
21. Տես Ա Թագավորաց 13.14:



Երեց Կառլոս Ա. Գողոյ
Յոթանասունի Նախագահությունից

Ես հավատում եմ հրեշտակներին

Տերը տեղյակ է այն մարտահրավերներին, որոնց դուք դիմակայում եք: Նա գիտի ձեզ, Նա սիրում է ձեզ, և ես խոստանում եմ, որ Նա հրեշտակներ կուղարկի ձեզ օգնելու համար:

Եղբայրներ՝ և քույրեր՝, ես հավատում եմ հրեշտակներին և կկամենայի կիսվել ձեզ հետ նրանց հետ ունեցած իմ փորձառություններով: Այդ կերպ, ես հուսով եմ և աղոթում եմ, որ մենք կրնդունենք հրեշտակների կարևորությունը մեր կյանքում:

Ահա Երեց Ջեֆրի Ա. Հոլլանդի խոսքերը անցած մի գերագույն համաժողովից. «Երբ մենք խոսում ենք նրանց մասին, ովքեր գործիքներ են Աստծո ձեռքերում, մեզ հիշեցնում են, որ ոչ բոլոր հրեշտակներն են վարագույրի մյուս կողմից: Նրանցից ոմանց հետ մենք քայլում ենք և խոսում նրանց հետ, այստեղ, այժմ, ամեն օր: Նրանցից ոմանք բնակվում են մեր հարևանությամբ: Իսկապես, երկինքը երբեք ավելի մոտիկ չի թվում, քան երբ մենք տեսնում ենք Աստծո սերը, որը դրսևորվում է մարդկանց բարության և նվիրվածության մեջ, որն այնքան հիանալի է և ջինջ, որ *հրեշտակային* բառն է միայն գալիս մեր միտքը» («Հրեշտակների սպասավորում», *Լիստոնա*, նոյեմբեր 2008, 30):

Վարագույրի այս կողմում գտնվող հրեշտակների մասին է, որ ես կամենում եմ խոսել: Հրեշտակները, որոնք քայլում են մեր մեջ մեր ամենօրյա կյանքում, հզոր հիշեցումներ են մեր հանդեպ Աստծո սիրո մասին:

Առաջին հրեշտակները, որոնց ես կնշեմ, երկու քույր միսիոներներն էին, ովքեր, ուսուցանեցին ինձ ավետարանը, երբ ես պատանի էի՝ Քույր Վիվա Մոլինան և Քույր Իվոնետ Աիվիտին: Ես և իմ փոքր քույրերը հրավիրված էինք Եկեղեցու մի միջոցառման, որտեղ մենք հանդիպեցինք այդ երկու հրեշտակներին: Ես երբեք չպատկերացրի, թե որքան շատ էր այդ հասարակ միջոցառումը փոխելու իմ կյանքը:

Ծնողներս, քույրերս ու եղբայրներս այդ ժամանակ չէին ցանկանում ավելի շատ բան սովորել Եկեղեցու մասին: Նրանք նույնիսկ չկամեցան միսիոներներին ընդունել մեր տուն, այնպես որ ես միսիոներական դասերն անցա Եկեղեցու շենքում: Աղոթատան այդ փոքրիկ սենյակը դարձավ իմ «սրբազան պուրակը»:

Այդ հրեշտակներն ինձ ուսուցանեցին ավետարանը, և մեկ ամիս անց ես մկրտվեցի: Ես 16 տարեկան էի: Ցավոք, ես այդ սրբազան իրադարձության մասին նկար չունեմ, բայց ունեմ իմ և քրոջս լուսանկարն այն պահին, երբ մասնակցում էինք այդ միջոցառմանը: Ես պետք է պարզաբանեմ, թե ո՞վ է այս լուսանկարում: Ես բարձրահասակն եմ՝ աջից:

Ինչպես կարող եք պատկերացնել, Եկեղեցում ակտիվ մնալը դժվար էր դեռահասի համար, որի ապրելաճը հենց նոր էր փոխվել, և որի ընտանիքը չէր հետևում նույն ուղուն:

Երբ փորձում էի հարմարվել իմ նոր կյանքին, նոր մշակույթին և նոր ընկերներին, ես տեղս չէի գտնում: Ես շատ դեպքերում միայնակ էի զգում և հուսահատված: Ես գիտեի, որ Եկեղեցին ճշմարիտ էր, բայց ես դժվարանում էի ինձ զգալ նրա մասը: Չնայած անհարմար և անվստահ էի զգում, երբ փորձում էի հարմարվել իմ նոր կրոնին, ես քաջություն գտա մասնակցելու եռօրյա երիտասարդական համաժողովին, որը կարծում էի, կօգներ ինձ նոր ընկերներ ձեռք բերել: Այդ ժամանակ էր, որ հանդիպեցի ևս մեկ փրկարար հրեշտակի, որի անունը Մոնիկա Բրանդաո էր:

Նա նոր էր այդ տարածքում, տեղափոխվել էր Բրազիլիայի մեկ այլ մասից: Նա արագ գրավեց իմ ուշադրությունը և բարեբախտաբար ընդունեց ինձ որպես ընկեր:



Հրեշտակների շնորհիվ, որոնց ես հանդիպեցի Եկեղեցում իմ կարևոր առաջին տարիներին, ես բավականաչափ ուժ ստացա ովտի ուղու վրա մնալու համար:

Կարծում եմ, նա ինձ նայում էր ավելի շատ ներսից, քան դրսից:

Քանի որ նա ընկերացավ ինձ հետ, ինձ ծանոթացրեց իր ընկերների հետ, ովքեր հետո դարձան իմ ընկերները, քանի որ մենք վայելում էինք երիտասարդական շատ միջոցառումներ, որոնց հետագայում մասնակցեցի ես: Այդ միջոցառումներն այնքան կարևոր էին այս նոր կյանքին իմ ինտեգրման համար:

Այդ լավ ընկերները մեծ տարբերություն առաջացրին, բայց, քանի որ իմ ընտանիքը չէր աջակցում ավետարանի ուսուցումն իմ տանը, իմ շարունակվող դարձի գործընթացը դրվում էր վտանգի տակ: Եկեղեցում իմ ավետարանական փոխազդեցություններն ավելի կարևոր դարձան իմ աճող դարձի համար: Այնուհետև երկու լրացուցիչ հրեշտակներ ուղարկվեցին Տիրոջ կողմից՝ օգնելու համար:

Նրանցից մեկը Լեդա Վեթորին էր, վաղ առավոտյան իմ սեմինարիայի ուսուցիչը: Իր հանդուրժողական սիրո և ոգեշնչող դասերի միջոցով նա տալիս էր ինձ «Աստծո բարի խոսքի» ամենօրյա չափաբաժին (Մորոնի 6.4), որն այնքան հարկավոր էր իմ ողջ օրվա ընթացքում: Ծարունակելու համար սա օգնեց ինձ ձեռք բերել հոգևոր ուժ:

Մեկ այլ հրեշտակ, ով ուղարկվեց օգնելու ինձ՝ երիտասարդ տղամարդկանց նախագահ Մարկո Անտոնիո Ֆուսկոն էր: Նա նաև նշանակվեց իմ ավագ տնային ուսուցման գուզընկերը: Չնայած իմ փորձառության բացակայությանը և արտաքին տարբերությանը, նա ինձ հանձնարարություններ տվեց՝ ուսուցանելու մեր քահանաների քվորումի ժողովներում և տնային ուսուցման այցելությունների ժամանակ: Նա ինձ հնարավորություն տվեց գործելու և սովորելու, այլ ոչ թե պարզապես ավետարանի դիտորդ լինելու: Նա վստահեց ինձ ավելի շատ, քան ես ինքս էի վստահում ինձ:

Ընտրիվ այս բոլոր հրեշտակների և շատ ուրիշների, ում ես հանդիպեցի այդ առաջին կարևոր տարիների ընթացքում, ես

բավակաչափ ուժ ստացա՝ ուխտի արահետի վրա մնալու համար, քանի որ ես ձեռք բերեցի հոգևոր վկայություն ճշմարտության մասին:

Եվ ի միջի այլոց, այդ երիտասարդ հրեշտակ աղջիկը՝ Մոնիկան: Երբ երկուսս էլ ավարտեցինք ծառայությունը միասին, նա դարձավ իմ կինը:

Չեմ կարծում, թե զուգադիպություն էր, որ լավ ընկերները, Եկեղեցու պարտականությունները և Աստծո բարի խոսքով սնուցվելը այդ գործընթացի մասն էին կազմում: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է իմաստությամբ. «Հեշտ բան չէ այս Եկեղեցուն միանալու գործընթացը»: Դա նշանակում է խզել հին կապերը: Դա նշանակում է թողնել ընկերներին: Այն կարող է նշանակել նաև՝ մի կողմ թողնել փայփայած համոզմունքները: Այն կարող է պահանջել սովորությունների փոփոխություն և ախորժակի զսպում: Շատ դեպքերում այն նշանակում է մենակություն և վախ՝ անհայտի հանդեպ: Նորադարձի կյանքում պետք է լինի սնուցում և գորացում այդ դժվարին ժամանակի ընթացքում (“There Must Be Messengers,” *Ensign*, Oct. 1987, 5):

Հետագայում նա հավելել է. «Նրանցից յուրաքանչյուրը կարիք ունի երեք բանի՝ ընկերոջ, պարտականության և «Աստծո բարի խոսքով» սնուցման» (“Converts and Young Men,” *Ensign*, May 1997, 47):

Ինչո՞ւ եմ այս փորձառություններով կիսվում ձեզ հետ:

Առաջինը՝ որպեսզի ուղերձ ուղարկեմ նրանց, ովքեր անցնում են նույնատիպ գործընթացով հենց հիմա: Գուցե դուք նորադարձեք կամ Եկեղեցի վերադարձող, ով միաժամանակ թափառել է մոտակայքում, կամ ուղղակի մեկը, ով մաքառում է հարմարվելու համար: Խնդրում եմ, մի դադարեցրեք այդ մեծ ընտանիքի մասը լինելու ձեր ջանքերը: Մա Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին է:

Երբ խոսքը վերաբերում է ձեր երջանկությանն ու փրկությանը,

միշտ արժե ջանք թափել, որպեսզի շարունակեք փորձել: Արժե ջանք գործադրել՝ հարմարեցնելու ձեր ապրելակերպն ու սովորությունները: Տերը տեղյակ է այն մարտահրավերներին, որոնց դուք եք դիմակայում: Նա գիտի ձեզ, Նա սիրում է ձեզ, և ես խոստանում եմ, որ Նա հրեշտակներ կուղարկի ձեզ օգնելու համար:

Իր իսկ խոսքերում Փրկիչն ասել է. «Ես կգնամ ձեր առջից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր [արտերում], և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (Կարդապետություն և Ուխտեր 84.88):

Այդ փորձառություններով կիսվելու իմ երկրորդ նպատակն է ուղերձ ուղարկել Եկեղեցու բոլոր անդամներին՝ մեզ բոլորիս: Մենք պետք է հիշենք, որ նորադարձների, վերադարձող ընկերների և այլ կենսակերպ ունեցողների համար հեշտ չէ անմիջապես հարմարվել: Տերը տեղյակ է այն մարտահրավերներին, որոնց նրանք դիմակայում են, և Նա փնտրում է հրեշտակների, ովքեր կամենում են օգնել: Տերը միշտ փնտրում է պատրաստակամ կամավորների, որոնք հրեշտակներ կլինեն ուրիշների կյանքում:

Եղբայրներ՝ և քույրեր՝, կկամենայիք արդյո՞ք գործիք լինել Տիրոջ ձեռքում: Կկամենայի՞ք արդյոք լինել այդ հրեշտակներից մեկը: Լինել գաղտնի պատվիրակ՝ ուղարկված Աստծո կողմից՝ վարագույրի այս կողմից, մեկի համար, ում համար Նա անհանգստանում է: Նա ձեր կարիքն ունի: Նրանք ձեր կարիքն ունեն:

Իհարկե, մենք միշտ կարող ենք հույս դնել մեր միսիոներների վրա: Նրանք միշտ պատրաստ են առաջինները ցուցակագրվել այդ հրեշտակային աշխատանքի համար: Բայց նրանք բավական չեն:

Եթե շրջապատում ուշադիր նայեք, դուք կգտնեք շատերին, ովքեր հրեշտակային օգնության կարիք ունեն: Այդ մարդիկ գուցե չեն կրում ձերմակ վերնաշապիկներ, զգեստներ կամ կիրակնօրյա հագուստներ: Նրանք գուցե

նստած են մենակ՝ աղոթաւան կամ դասասենյակի հետնամասում: Միգուցե նրանց մազերի ոճր մի փոքր ծայրահեղական է, կամ նրանց բառապաշարը տարբեր է, բայց նրանք պատրաստ են և նրանք փորձում են:

Ումանք երկմտում են. «Արդյոք պե՞տք է շարունակեմ հետ գալ»: Արդյո՞ք պետք է շարունակեմ փորձել: Մյուսները գուցե երկմտում են՝ արդյո՞ք մի օր իրենք ընդունված և սիրված կզգան: Հրեշտակներն անհրաժեշտ են հենց հիմա, հրեշտակներ, ովքեր պատրաստ են թողնել իրենց հարմարավետության գոտին, որպեսզի ընդունեն նրանց. «[մարդիկ, ովքեր] այնքան բարի են և այնքան մաքուր, որ *հրեշտակային* բառը միակն է, որ գալիս է մեր միտքը [նրանց նկարագրելու համար]» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հրեշտակների սպասավորումը», 30):

Եղբայրներ՝ և քույրեր՝, ես հավատում եմ հրեշտակներին: Մենք բոլորս այստեղ ենք այսօր՝ հրեշտակների մի վիթխարի բանակ, ի սպաս դրված այս վերջին օրերի համար, որպեսզի սպասավորենք ուրիշներին՝ որպես սիրառատ Արարիչի ձեռքերի շարունակություն: Ես խոստանում եմ, որ եթե մենք կամենանք ծառայել, Տերը մեզ հնարավորություններ կտա լինել ծառայող հրեշտակներ: Նա գիտի, թե ովքեր ունեն հրեշտակների օգնության կարիքը: Ամեն օր Տերը մեր ճանապարհին դնում է նրանց, ովքեր հրեշտակների օգնության կարիքն ունեն:

Ես այնքան երախտապարտ եմ այն բազմաթիվ հրեշտակների համար, որոնց Տերը դրել է իմ կյանքի ճանապարհին: Ես ունեի նրանց կարիքը: Ես նաև երախտապարտ եմ Նրա ավետարանի համար, որն օգնում է մեզ փոխվել և հնարավորություն է տալիս ավելի լավ լինել:

Սա սիրո ավետարան է, ծառայության ավետարան: Մրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մենք խոսում ենք Քրիստոսի մասին

Քանի որ աշխարհը ավելի քիչ է խոսում Հիսուս Քրիստոսի մասին, եկեք մենք ավելի շատ խոսենք Նրա մասին:

Ես հայտնում եմ իմ սերը ձեր՝ մեր սիրելի ընկերների և հավատակիցների հանդեպ: Այս վերջին ամիսների ընթացքում ես հիացել եմ ձեր հավատով և քաջությամբ, քանի որ համաշխարհային այս համավարակը խաթարել է մեր կյանքը և խլել է ընտանիքի թանկագին անդամներին ու սիրելի ընկերներին:

Անորոշության այս ժամանակահատվածում ես անսովոր երախտագիտություն եմ զգացել իմ վստահ և որոշակի գիտելիքների համար, որ Հիսուսը Քրիստոսն է: Դուք երբևէ ունեցե՞լ եք այդպիսի զգացում: Դժվարություններ կան, որոնք ծանրանում են մեզանից յուրաքանչյուրի վրա, բայց միշտ մեր առջև կանգնած է Նա, ով խոնարհաբար հայտարարել է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»:¹ Չնայած մենք ապրում ենք ֆիզիկական մեկուսացման ժամանակաշրջանում, մենք չպիտի հոգևորապես մեկուսանանք Նրանից, ով սիրով թախանձում է մեզ. «Ինձ մօտ եկեք»:²

Ինչպես պարզ ու մութ երկնքում առաջնորդող աստղ՝ Հիսուս Քրիստոսը լուսավորում է մեր ճանապարհը: Նա աշխարհ եկավ

մի համեստ ավտոմոբիլով: Նա ապրեց կատարյալ կյանքով: Նա բժշկեց հիվանդներին, տեսողություն տվեց կույրերին և բարձրացրեց մեռյալներին: Նա մոռացվածների ընկերն էր: Նա մեզ սովորեցրեց բարիք գործել, հնազանդվել և սիրել միմյանց: Նա խաչվեց խաչի վրա, վեհաշուքորեն բարձրանալով երեք օր անց, թույլ տալով, որ մենք և նրանք, ում սիրում ենք, ապրեն մահից հետո: Իր անգուցական ողորմությամբ և շնորհով՝ Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերն ու տառապանքները՝ ներում բերելով, երբ մենք ապաշխարում ենք, և խաղաղություն՝ կյանքի փոթորիկներում: Մենք սիրում ենք նրան: Մենք երկրպագում ենք Նրան: Մենք հետևում ենք Նրան: Նա մեր հոգիների խաթիսխն է:

Հետաքրքիր է, որ մինչ այս հոգևոր համոզմունքն աճում է մեր մեջ, աշխարհում կան մարդիկ, ովքեր շատ քիչ բան գիտեն Հիսուս Քրիստոսի մասին, իսկ աշխարհի որոշ մասերում, որտեղ դարեր շարունակ հռչակվում է Նրա անունը, հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ նվազում է: Եվրոպայի անվեհեր Սրբերը տասնամյակների

ընթացքում տեսել են, թե ինչպես է իրենց երկրներում հավատը անկում ապրում:³ Ցավոք, այստեղ՝ Միացյալ Նահանգներում, հավատը նույնպես նահանջում է: Վերջերս կատարված ուսումնասիրությունը պարզել է, որ վերջին տասը տարիների ընթացքում ԱՄՆ-ում 30 միլիոն մարդ հեռացել է Հիսուս Քրիստոսի աստվածությանը հավատալուց:⁴ Ամբողջ աշխարհում անցկացված մեկ այլ ուսումնասիրություն կանխատեսում է, որ առաջիկա տասնամյակների ընթացքում Քրիստոնեությունից հեռանալու է երկու անգամ ավելի շատ մարդ, քան նրանք, ովքեր ընդունելու են այն:⁵

Մենք, իհարկե, հարգում ենք յուրաքանչյուրի ընտրության իրավունքը, այնուամենայնիվ, մեր երկնային Հայրը հայտարարել է. «Դա է իմ սիրելի Որդին. Դորան լսեցեք»:⁶ Ես վկայում եմ, որ կգա մի օր, երբ ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կխոստովանի, որ Հիսուսը Քրիստոսն է:⁷

Ինչպե՞ս պետք է արձագանքենք մեր փոփոխվող աշխարհին: Մինչ ոմանք անտեսում են իրենց հավատը, մյուսները փնտրում են ճշմարտությունը: Մենք մեզ վրա ենք վերցրել Փրկիչի անունը: Ուրիշ ի՞նչ կարող ենք անել:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի պատրաստությունը

Մեր պատասխանի մի մասը կարող է տրվել, երբ մենք վերանայենք, թե Տերն ինչպես է ուսուցանել Նախագահ Ռասսել Մ.



Եթե Փրկիչի մասին նոր ուսումնասիրությունը օգնեց նախագահ Նելսոնի պատրաստվել, մի՞թե չի կարող օգնել նաև մեզ պատրաստվել:

Նելսոնին՝ Եկեղեցու նախագահի իր կանչը ստանձնելու նախորդող ամիսներին: Իր կանչից մեկ տարի առաջ Նախագահ Նելսոնը հրավիրեց մեզ ավելի խորը ուսումնասիրել Թեմատիկ ուղեցույցում տրված Հիսուս Քրիստոսի անվան 2200 հիշատակումները:⁸

Ապրիլյան գերագույն համաժողովից երեք ամիս անց նա խոսեց այն մասին, որ նույնիսկ տասնամյակների իր նվիրված աշակերտությամբ հանդերձ, Հիսուս Քրիստոսի մասին այս ավելի խորը ուսումնասիրությունը մեծապես ազդել է իր վրա: Քույր Վենդի Նելսոնը հարցրել է նրան դրա ազդեցության մասին: Նա պատասխանել է. «Ես ուրիշ մարդ եմ»: Նա ուրիշ՞ մարդ էր: 92 տարեկանում ուրիշ՞ մարդ: Նախագահ Նելսոնը բացատրեց.

«Երբ մենք ժամանակ ենք ներդնում Փրկիչի և Նրա քավիչ գոհաբերության մասին սովորելու համար, մենք ձգտում ենք դեպի [Նա]: Մեր կենտրոնացումը բևեռվում է Փրկիչի ու Նրա ավետարանի վրա»:⁹

Փրկիչն ասել է. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում»:¹⁰

Աշխատանքի, հոգսերի և արժանի ջանքերի աշխարհում մենք պահում ենք մեր սիրտը, միտքը և խոհերը Նրա վրա, ով մեր հույսն ու փրկությունն է:

Եթե Փրկիչի մասին նոր ուսումնասիրությունը օգնեց Նախագահ Նելսոնին պատրաստվել, մի՞թե չի կարող նաև մեզ օգնել պատրաստվել:

Շեշտելով Եկեղեցու անունը, նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Եթե . . . մենք պետք է ունենանք Հիսուս Քրիստոսի Քավության զորությունը, որ մաքրի և բժշկի մեզ, ամբացնի և զորացնի մեզ և, ի վերջո, վեհացնի մեզ, ապա մենք, ականհայտորեն, պետք է ընդունենք Նրան՝ որպես այդ զորության աղբյուր»:¹¹ Նախագահ Նելսոնը մեզ սովորեցրեց, որ հետևողակա- նորեն օգտագործելով Եկեղեցու ճիշտ անունը, մի բան, որը կարող է փոքր թվալ, բուրդովին էլ փոքր չէ և կերտելու է աշխարհի ապագան:

Ձեր պատրաստության խոստումը

Ես խոստանում եմ ձեզ, որ երբ դուք պատրաստվեք՝ ինչպես նախագահ Նելսոնը պատրաստվեց, դուք նույնպես կփոխվեք՝ ավելի շատ մտածելով Փրկիչի մասին, ավելի հաճախ խոսելով Նրա մասին և ավելի քիչ տարակուսելով: Երբ դուք ավելի խորը ճանաչեք ու սիրեք Նրան, ձեր խոսքերն ավելի սահուն ընթացք կունենան, ինչպես դա տեղի է ունենում, երբ մենք խոսում ենք մեր երեխաներից մեկի կամ սիրելի ընկերոջ մասին: Ձեզ լսողներն ավելի քիչ կուզենան բանավիճել ձեզ հետ և հերքել ձեզ, և ավելի շատ կցանկանան սովորել ձեզանից:

Ես և դուք՝ մենք բոլորս, խոսում ենք Հիսուս Քրիստոսի մասին, բայց գուցե կարող ենք մի փոքր ավելի լավ անել դա: Եթե աշխարհը պատրաստվում է ավելի քիչ խոսել Նրա մասին, ապա ո՞վ է ավելի շատ խոսելու Նրա մասին: Մե՛նք: Մյուս նվիրյալ քրիստոնյաների հետ միասին:

Խոսենք Քրիստոսի մասին մեր տներում

Արդյո՞ք մեր տներում կան Փրկիչի նկարներ: Հաճախ ենք մեր երեխաների հետ խոսում Հիսուսի առակների մասին: «Հիսուսի պատմությունները նման են մեր երեխաների սրտերում հավատքի կայծը բորբոքող քամու»:¹² Երբ ձեր երեխաները ձեզ հարցեր են տալիս, գիտակցաբար ուսուցանեք այն, ինչ ուսուցանել է Փրկիչը: Օրինակ, եթե ձեր երեխան հարցնում է. «Հայրի՛կ, մենք ինչու՞ ենք աղոթում»: Կարող եք պատասխանել. «Հրաշալի հարց է: Դու հիշո՞ւմ ես՝ ինչպես էր Հիսուսն աղոթում: Արի խոսենք այն մասին, թե Նա ինչու էր աղոթում և ինչպես էր աղոթում»:

«Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, . . . որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրների կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:¹³

**Քրիստոսի մասին խոսենք
Եկեղեցում**

Այս նույն սուրբ գրությունը հավելում է, որ «մենք քարոզում ենք Քրիստոսի մասին»:¹⁴ Մեր երկրպագության ծառայություններում եկեք կենտրոնանանք Փրկիչ Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ զոհաբերության պարզևի վրա: Մա չի նշանակում, որ մենք չենք կարող պատմել սեփական կյանքի փորձը կամ կիսվել ուրիշների մտքերով: Չնայած մեր թեման կարող է վերաբերել ընտանիքներին կամ ծառայությանը, տաճարներին կամ վերջին միսիային, սակայն մեր երկրպագության մեջ ամեն ինչ պետք է մատնանջի Տեր Հիսուս Քրիստոսին:

Երեսուն տարի առաջ Նախագահ Դավիթ Հ. Օուքսը խոսեց մի նամակի մասին, որը ստացել էր «մի մարդուց, ով ասում էր, որ ինքը մասնակցել էր մի [հաղորդության] ժողովի և լսել տասնյոթ վկայություն՝ առանց Փրկիչի անվան հիշատակման»:¹⁵ Նախագահ Օուքսն այնուհետև նշեց. «Գուցե այդ նկարագրությունը չափազանցված է, [բայց] ես մեջբերում եմ, քանի որ դա ցայտուն հիշեցում է բոլորիս համար»:¹⁶ Հետո նա հրավիրեց մեզ մեր ելույթներում ու դասարանական քննարկումներում ավելի շատ խոսել Հիսուս Քրիստոսի մասին: Ես նկատել եմ, որ մեր Եկեղեցու ժողովներում մենք ավելի ու ավելի ենք կենտրոնանում Քրիստոսի վրա: Եկեք գիտակցաբար շարունակենք այս շատ դրական ջանքերը:


**Քրիստոսի մասին խոսենք
ուրիշների հետ**

Մեզ շրջապատողների հետ եկեք ավելի անկեղծ և ավելի պատրաստակամ խոսենք Քրիստոսի մասին: Նախագահ Նելսոնն ասել է. «Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտները պատրաստ են առանձնանալ, բարձրաձայնել և տարբերվել աշխարհի մարդկանցից»:¹⁷

Երբեմն մենք կարծում ենք, որ ինչ-որ մեկի հետ զրույցը պետք է հանգեցնի նրան, որ նա եկեղեցի գա կամ հանդիպի միսիոներների

հետ: Թող Տերն ուղղորդի նրանց, եթե նրանք պատրաստակամ են, մինչ մենք ավելի շատ մտածում ենք Նրա ձայնը հանդիսանալու մեր պատասխանատվության մասին՝ լինելով միշտ խորամիտ և բաց՝ մեր հավատքի վերաբերյալ: Երեց Դիտեր Ֆ. Ուլստորֆը մեզ սովորեցրել է, որ երբ ինչ-որ մեկը մեզ հարցնում է մեր հանգստյան օրերի մասին, մենք պետք է պատրաստ լինենք ուրախությամբ պատասխանել, որ սիրում ենք լսել Երեխաների միության երգը՝ «Ես փորձում եմ նմանվել Հիսուսին»:¹⁸ Եկեք բարությանբ վկայենք Քրիստոսի հանդեպ մեր հավատքի մասին: Եթե ինչ-որ մեկը խոսում է իր անձնական կյանքի որևէ խնդրի մասին, մենք կարող ենք ասել. «Ձո՛ն, Մե՛րի, դուք գիտեք, որ ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին: Ես մտածում էի Նրա խոսքերի մասին, որոնք կարող են օգնել ձեզ»:

Ավելի անկեղծ եղեք սոցիալական լրատվամիջոցներում՝ խոսելով Քրիստոսի հանդեպ ձեր վստահության մասին: Շատերը կհարգեն մեր հավատքը, բայց եթե մեկը քամահրական վերաբերմունք է դրսևորում, երբ խոսում եք Փրկիչի մասին, համարձակություն վերցրեք Նրա խոստումից. «Երանի ձեզ, երբ կնայաստեն ձեզ իմ պատճառով: . . . [Քանզի] ձեր վարձքը շատ



Երբ որպես Փրկիչի աշակերտներ՝ մեր իրական բնույթը բացահայտվի, մեր շրջապատից շատերը պատրաստ կլինեն լսել մեզ:

է երկնքումը»:¹⁹ Մենք ավելի շատ մտածում ենք Նրա հետևորդներ լինելու մասին, քան մտածում ենք դուր գալ մեր սեփական հետևորդներին: Պետք է խորհուրդ է տվել. «Եվ միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնել»:²⁰ Եկեք խոսենք Քրիստոսի մասին:

Մորմոնի Գիրքը հզոր վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Փաստորեն յուրաքանչյուր էջ վկայում է Փրկիչի և Նրա աստվածային առաքելության մասին:²¹ Մորմոնի Գրքի էջերը հազեցած են Նրա Քավության և շնորհի հասկացողությամբ: Որպես Նոր Կտակարանի ուղեկից՝ Մորմոնի Գիրքն օգնում է մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչու է Փրկիչը եկել մեզ փրկելու, և մենք ինչպես կարող ենք ավելի լիարժեք գալ Նրա մոտ:

Մեր ընկերակից քրիստոնյաներից ոմանք, երբեմն, անվստահություն են ցուցաբերում մեր համոզմունքների և դրդապատճառների հանդեպ: Եկեք անկեղծորեն ուրախանանք նրանց հետ Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած մեր ընդհանուր հավատքով և Նոր Կտակարանի սուրբ գրություններով, որոնք բոլորս սիրում ենք: Առաջիկա տարիներին նրանք, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին, միմյանց բարեկամության և աջակցության կարիքը կունենան:²²

Քանի որ աշխարհը ավելի քիչ է խոսում Հիսուս Քրիստոսի մասին, եկեք մենք ավելի շատ խոսենք Նրա մասին: Երբ մեր իրական բնույթը բացահայտվի՝ որպես Նրա աշակերտներ, մեր շրջապատից շատերը պատրաստ կլինեն լսել մեզ: Երբ մենք կիսվենք լույսով, որը ստացել ենք նրանից, Նրա լույսն ու փրկող բացառիկ զորությունը կփայլեն նրանց վրա, ովքեր պատրաստ են բացել իրենց սրտերը: Հիսուսն ասել է. «Ես . . . [որպես] լույս եկայ աշխարհիքը»:²³

**Մեծացնենք Քրիստոսի մասին
խոսելու մեր ցանկությունը**

Ոչինչ այնքան չի մեծացնում Քրիստոսի մասին խոսելու իմ

ցանկությունը, որքան նրա վերադարձը պատկերացնելը: Չնայած մենք չգիտենք, թե Նա երբ է գալու, Նրա վերադարձի իրադարձությունները ցնցող կլինեն: Նա կգա երկնքի ամպերի մեջ՝ վեհությամբ ու փառքով, Իր բոլոր սուրբ հրեշտակներով: Ոչ թե մի քանի հրեշտակ, այլ Նրա բոլոր սուրբ հրեշտակները: Մենք չենք խոսում Ռաֆայելի նկարած վարդագույն այտերով քերովբեների մասին, որոնք կան «Վալենտինի» օրվա քարտերի վրա: Սրանք դարերի հրեշտակներն են. հրեշտակներ, որոնք ուղարկվել են՝ առյուծների բերանը փակելու և²⁴ բանտի դռները բացելու համար,²⁵ ազդարարելու Նրա երկար սպասված ծնունդը և²⁶ Գեթսեմանիում Նրան սփռվելու համար,²⁷ հավաստիացնելու աշակերտներին Նրա Համբարձման ժամանակ,²⁸ և բացելու ավետարանի փառահեղ վերականգնումը:²⁹

Կարո՞ղ եք պատկերացնել, որ մենք «կհավշտակվենք» վեր, որ դիմավորենք» Նրան՝ վարագույրի այս կամ այն կողմում:³⁰ Դա Նրա խոստումն է արդարներին: Այդ փորձառությունը հավերժ ազդեցություն կթողնի մեր հոգիների վրա:

Որքան երախտապարտ ենք մեր սիրելի մարգարեի՝ նախագահ Ռասսել Մ. Նելսոնի համար, ով մեծացրել է Փրկիչին սիրելու և Նրա աստվածությունը հռչակելու մեր ցանկությունը: Ես վկա եմ, որ Տիրոջ ձեռքը նրա վրա է և վկա եմ հայտնության պարզվելին, որն առաջնորդում է նրան: Նախագահ Նելսոն, մենք անհամբեր սպասում ենք ձեր խորհրդին:

Իմ թանկագին՝ ընկերներ ամբողջ աշխարհում, եկեք խոսենք Քրիստոսի մասին՝ սպասելով Նրա փառավոր խոստմանը. «Ով որ ինձ մարդկանց առաջին դավանե, ես էլ նորան կդավանեմ իմ Հոր առաջին»:³¹ Ես վկայում եմ, որ Նա Աստծո Որդին է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՆԵՐ

1. Հովհաննես 14.6:
2. Մատթեոս 11.28:
3. Տես Niztan Peri-Rotem, "Religion and



Ոչինչ այնքան չի մեծացնում Քրիստոսի մասին խոսելու իմ ցանկությունը, որքան Նրա վերադարձը պատկերացնելը:

Fertility in Western Europe: Trends across Cohorts in Britain, France and the Netherlands," *European Journal of Population*, May 2016, 231–65; retrieved from ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4875064:

4. «Ամերիկացի մեծահասակների [վաթսուներեք տոկոսը] իրենց նկարագրում են որպես քրիստոնյաներ, երբ հարցնում են նրանց կրոնի մասին, ինչը վերջին տասնամյակում 12 տոկոսով նվազել է: Մինչդեռ, բնակչության կրոնական անկախ հատվածը, որը բաղկացած է այն մարդկանցից, ովքեր իրենց կրոնական ինքնությունը բնութագրում են որպես աթեիստ, ագնոստիկ կամ «մասնավորապես ոչ մի բան», այժմ կազմում է 26%, 2009 թ.-ի 17% -ի համեմատ» (Pew Research Center, "In U.S., Decline of Christianity Continues at Rapid Pace," Oct. 17, 2019, pewforum.org):
5. Տես Pew Research Center, "The Future of World Religions: Population Growth Projections, 2010–2050," Apr. 2, 2015, pewforum.org:
6. Մարկոս 9.7, Դուկաս 9.35, տես նաև Մատթեոս 3.17, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17:
7. Տես Փիլիպպեցիս 2.9-11:
8. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Մարգարեներ, առաջնորդություն և աստվածային օրենքներ» (Համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, 8 հունվարի 2017 թ.) broadcasts.ChurchofJesusChrist.org:
9. Ռասսել Մ. Նելսոն, «Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը», *Լիստնուս*, մայիս 2017, 40-41:
10. Վարդապետություն և Ուխտեր 6.36:
11. Ռասսել Մ. Նելսոն, «Եկեղեցու ճիշտ անունը», *Լիստնուս*, նոյեմբեր 2018, 88:
12. Նիլ Լ. Մնդերսեն, «Պատմիր ինձ Հիսուսի պատմությունները», *Լիստնուս*, մայիս 2010, 108:

13. 2 Նեփի 25.26:
14. 2 Նեփի 25.26:
15. Տես նաև "Another Testament of Jesus Christ" (Brigham Young University fireside, June 6, 1993), 7, speeches.byu.edu:
16. Dallin H. Oaks, "Witnesses of Christ," *Ensign*, Nov. 1990, 30.
17. Ռասսել Մ. Նելսոն, «Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զորությունը», 40:
18. Տես Դիտեր Ֆ. Ուլտորֆ, «Միսիոներական աշխատանք. Կիսելով այն՝ ինչ կա քո սրտում», *Լիստնուս*, մայիս 2019, 17; "I'm Trying to Be like Jesus," *Children's Songbook*, 78:
19. Մատթեոս 5.11-12:
20. Ա Պետրոս 3.15:
21. «Երբ [Մորմոնի Գրքի մարգարեական դպիրները] գրում էին իրենց վկայությունները խոստացված Մեսիայի մասին, միջինում յուրաքանչյուր 1,7 հատվածի վրա նրանք նշում էին նրա անվան որևէ ձև: [Նրանք] բառացիորեն 101 անգամ հիշատակել են Հիսուս Քրիստոսի անունը: . . . Երբ հասկանում ենք, որ մի հատված սովորաբար բաղկացած է մեկ նախադասությունից, թվում է, որ Մորմոնի Գրքում չենք կարող կարգալ միջին հաշվով երկու նախադասություն՝ չտեսնելով Քրիստոսի անվան որևէ ձև»: (Susan Easton Black, *Finding Christ through the Book of Mormon* [1987], 5, 15):
«Մինչ քալել և քալություն բառերը իրենց ցանկացած ձևով միայն մեկ անգամ են հայտնվում Նոր Կտակարանի Ջեյմս թագավորի թարգմանության մեջ, դրանք 35 անգամ հայտնվում են Մորմոնի Գրքում. Որպես Հիսուս Քրիստոսի մեկ այլ վկայություն, այն արժեքավոր լույս է սփռում Նրա Քավության վրա» (Russell M. Nelson, "The Atonement," *Ensign*, Nov. 1996.)
22. Միացյալ Նահանգներում Քրիստոնեությունից հրաժարվողները ավելի երիտասարդ են: «Silent Generation-ի տասից ութ անդամներից ավելին (1928-1945 թվականներին ծնվածները) իրենց նկարագրում են որպես քրիստոնյա (84%), այդպես է նաև Baby Boomers-ի երեք շառորդի (76%) դեպքում: Ալենհայտ հակադրությամբ, Millennials-ի միայն կեսն (49%) է իրենց նկարագրում որպես քրիստոնյա. տասից չորսը կրոնական «նոներ» են, իսկ Millennials-ի տասից մեկը նույնանուն են ոչ քրիստոնեական հավատքների հետ»: ("In U.S., Decline of Christianity Continues," pewforum.org):
23. Հովհաննես 12.46:
24. Տես Դանիել 6.22:
25. Տես Գործք Առաքելոց 5.19:
26. Տես Դուկաս 2.2-14:
27. Տես Դուկաս 22.42-43:
28. Տես Գործք 1.9-11:
29. Տես Վարդապետություն և Ուխտեր 13, 27.12-13, 110.11-16, Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.27-54:
30. Տես Ա Թեսաղոնիկեցիս 4.16-17, Վարդապետություն և Ուխտեր 88.96-98:
31. Մատթեոս 10.32:



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու
Նախագահ

Թող Աստված տնօրինի

Դուք պատրաստ եք թույլ տալ, որ Աստված տնօրինի ձեր կյանքը: Դուք պատրաստ եք թույլ տալ, որ Աստված ամենամեծ ազդեցությունն ունենա ձեր կյանքում:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, որքան երախտապարտ եմ ես այս համաժողովի հրաշալի ուղերձների և այժմ ձեզ հետ խոսելու իմ արտոնության համար:

Ավելի քան 36 տարի ես առաքյալ եմ, և Բարայելի հավաքման վարդապետությունը միշտ գրավել է իմ ուշադրությունը:¹ Ինձ հետաքրքրել է դրա հետ կապված *սալեն ինչ*, ներառյալ Աբրահամի, Իսահակի և Հակոբի ծառայություններն ու անունները,² նրանց կյանքն ու նրանց կանայք, ուխտը, որն Աստված կապել է նրանց հետ և տարածել է նրանց սերունդների վրա,³ տասներկու ցեղերի ցրումը և մեր օրերի հավաքման մասին բազմաթիվ մարգարեությունները:

Ես ուսումնասիրել եմ հավաքումը, աղոթել եմ դրա մասին, սնվել եմ դրան առնչվող յուրաքանչյուր սուրբ գրությունով և խնդրել եմ Տիրոջն ավելացնել իմ հասկացողությունը:

Ուստի պատկերացրեք իմ հրճվանքը, երբ վերջերս ես հանգեցի մի նոր գաղափարի: Երկու հրեա գիտնականների օգնությամբ իմացա, որ *Բարայել* բառի եբրայերեն իմաստներից մեկն է՝

«Թող Աստված տնօրինի»:⁴ Ուստի, գուտ *Բարայել* անունը վերաբերում է այն անձնավորությանը, ով *պատրաստ է* թույլ տալ, որ Աստված տնօրինի իր կյանքը: Այդ գաղափարը ոգեշնչում է իմ հոգին:

Պատրաստ բառը վճռորոշ է *Բարայել* բառի հենց այս մեկնաբանության համար:⁵ Մենք բոլորս ունենք մեր ազատ կամքը: Մենք կարող ենք ընտրել՝ լինել Բարայել, թե ոչ: Մենք կարող ենք ընտրել՝



Կորիտիբա, Պարանա, Բրազիլիա

թույլ տալ Աստծուն տնօրինել մեր կյանքը, թե՛ ոչ: Մենք կարող ենք ընտրել՝ թույլ տալ, որ Աստված ունենա ամենաազդեցությունը մեր կյանքում, թե՛ ոչ:

Մի պահ եկեք հիշենք Աբրահամի թոռան՝ Հակոբի կյանքի բեկումնային պահը: Այն վայրում, որը Հակոբն անվանեց *Փսևմեղ* (որը նշանակում է «Աստծո դեմքը»),⁶ նա հաղթեց լուրջ մարտահրավերի հետ գոտեմարտում: Նրա ազատ կամքը փորձվեց: Այս գոտեմարտի միջոցով Հակոբը ապացուցեց, թե ինչն է իր համար ամենակարևորը: Նա ցույց տվեց, որ պատրաստ է թույլ տալ, որ Աստված տնօրինի իր կյանքը: Ի պատասխան՝ Աստված Հակոբի անունը փոխեց *Բարայել*,⁷ ինչը նշանակում է՝ «Թող Աստված տնօրինի»: Հետո Աստված խոստացավ Բարայելին, որ *բոլոր* խոստումները, որոնք խոստացվել էին Աբրահամի սերունդներին, կլինեն նաև նրանը:⁸

Ցավոք, Բարայելի սերունդները խախտեցին իրենց ուխտերն Աստծո հետ: Նրանք քարկոծեցին մարգարեներին և *չէին* ցանկանում թույլ տալ, որ Աստված տնօրինի իրենց կյանքը: Հետագայում Աստված նրանց ցրեց աշխարհի բոլոր անկյուններով:⁹ Ողորմածորեն, Նա հետագայում խոստացավ հավաքել նրանց, ինչպես հայտնում է Եսայիան. «Մի փոքր վայրկեան քեզ թողեցի, բայց մեծ ողորմություններով քեզ պիտի ժողովեմ»:¹⁰

Հաշվի առնելով *Բարայելի* եբրայերեն սահմանումը՝ Բարայելի հավաքումը ստանում է լրացուցիչ իմաստ: Տերը հավաքում է նրանց, ովքեր պատրաստ են թույլ տալ, որ Աստված տնօրինի իրենց կյանքը: Տերը հավաքում է նրանց, ովքեր կնախընտրեն թույլ տալ, որ Աստված իրենց կյանքում ամենակարևոր ազդեցությունն ունենա:

Դարեր շարունակ մարգարեները կանխագուշակել են այս հավաքումը,¹¹ և այժմ այն տեղի է ունենում: Որպես Տիրոջ երկրորդ Գալուստի հիմնական նախադրյալ, դա աշխարհի *սալենակարևոր* աշխատանքն է:



Հազարամյակին նախորդող այս հավաքը միլիոնավոր մարդկանց համար հավատքի ընդլայնման և հոգևոր խիզախության անհատական պատմություն է: Եվ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու անդամներ կամ «վերջին օրերի ուխտի Իսրայել»,¹² մենք պարտավորվել ենք աջակցել Տիրոջը այս կարևոր աշխատանքում:¹³

Երբ մենք խոսում ենք Իսրայելը վարագույրի երկու կողմերում հավաքելու մասին, իհարկե, նկատի ունենք միսիոներական, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները: Մենք նաև նկատի ունենք հավատ և վկայություն կառուցել նրանց սրտերում, ում հետ ապրում, աշխատում և ծառայում ենք: Ամեն անգամ, երբ մենք ինչ-որ բան ենք անում, որն օգնում է ինչ-որ մեկին վարագույրի այս կամ այն կողմում Աստծո հետ ուխտեր կապելու և դրանք պահելու համար, . . . մենք օգնում եք հավաքել Իսրայելը:

Վերջերս մեր թոռներից մեկի կինը հոգևոր մաքառումների մեջ էր: Ես նրան կանվանեմ «Զիլ»: Չնայած ծոմապահությանը,

աղոթքին և քահանայության օրհնություններին, Զիլի հայրը մահանում էր: Նա համակված էր վախով, որ ինքը կկորցնի թե՛ հորը, թե՛ իր վկայությունը:

Մի օր ուշ երեկոյան իմ կինը՝ քույր Վենդի Նելսոնն ասաց ինձ Զիլի իրավիճակի մասին: Հաջորդ առավոտյան Վենդին հուշում ստացավ Զիլին ասել, որ իմ պատասխանը նրա հոգևոր պայքարին միայն մեկ բառ էր: Այդ բառն էր՝ *անհեռաւստություն*:

Ավելի ուշ Զիլը խոստովանեց Վենդիին, որ ի սկզբանե ինքը հուսահատված էր իմ պատասխանից: Նա ասել էր. «Ես հուսով էի, որ Պապիկն ինձ հրաշք կխոստանար իմ հայրիկի համար: Ես անընդհատ մտածում էի, թե նա ինչու էր ստիպված *անհեռաւստություն* բառն արտասանել»:

Հոր մահից հետո *անհեռաւստություն* բառը շարունակ նրա միտքն էր գալիս: Նա բացեց իր սիրտը, որպեսզի ավելի խորը հասկանար, որ *անհեռաւստություն* նշանակում է «կարճատեսություն»: Եվ նրա մտածողությունը սկսեց փոխվել: Հետո Զիլն ասաց. «*Անհեռաւստություն* բառը

ստիպեց ինձ կանգ առնել, մտածել և բժշկվել: Այժմ այդ բառն ինձ խաղաղությամբ է լցնում: Այն ինձ հիշեցնում է, որ ես պետք է ընդլայնեմ իմ հեռանկարը և փնտրեմ հավերժական օրհնությունները:

Դա ինձ հիշեցնում է, որ կա աստվածային ծրագիր, և որ հայրս դեռ ապրում է, սիրում և հսկում է ինձ: *Անհեռաւստությունը* առաջնորդեց ինձ դեպի Աստված»:

Ես շատ հպարտ եմ մեր թանկագին թոռնուհի հարսով: Իր կյանքի այս ծանր հուզական պահին մեր սիրելի Զիլը սովորում է ընդունել Աստծո կամքը իր հայրիկի համար՝ հավերժ հեռանկար ունենալով իր կյանքի համար: *Ընտրելով*, որ Աստված տնօրինի իրավիճակը, պարզում է նրան խաղաղություն:

Եթե մենք դա թույլ տանք, *Իսրայել* բառի այս մեկնաբանությունը կարող է օգնել մեզ բազմաթիվ եղանակներով: Պատկերացրեք, թե ինչպես կարող են փոխվել մեր աղոթքները մեր միսիոներների համար և Իսրայելի հավաքման մեր սեփական ջանքերի համար՝ հաշվի առնելով այս հայեցակարգը: Մենք հաճախ աղոթում

ենք, որ մենք և միսիոներները առաջնորդվենք նրանց մոտ, ովքեր պատրաստ են ստանալու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ճշմարտությունները: Հետաքրքիր է, ո՞ւմ մոտ կառաջնորդվենք մենք, երբ կյանդենք գտնել նրանց, ովքեր պատրաստ են թույլ տալ, որ Աստված տնօրինի իրենց կյանքը:

Գուցե մենք առաջնորդվենք նրանց մոտ, ովքեր երբեք չեն հավատացել Աստծուն կամ Հիսուս Քրիստոսին, բայց ովքեր այժմ փափագում են իմանալ Նրանց մասին և Նրանց երջանկության ծրագրի մասին: Մյուսները, գուցե, «ծնվել են ուխտի մեջ»¹⁴ բայց այդ ժամանակից ի վեր հեռացել են ուխտի արահետից: Նրանք այժմ կարող են պատրաստ լինել ապաշխարելու, վերադառնալու, և թողնելու, որ Աստված տնօրինի: Մենք կարող ենք աջակցել՝ դիմավորելով նրանց գրկաբաց և բաց սրտով: Եվ ոմանք, ում մոտ մենք պետք է առաջնորդվենք, գուցե միշտ զգացել են, որ իրենց կյանքում ինչ-որ բան պակասում է: Նրանք նույնպես փափագում են այն ամբողջականությունն ու ուրախությունը, որոնք գալիս են նրանց, ովքեր ցանկանում են թույլ տալ, որ Աստված տնօրինի իրենց կյանքը:

Ցրված Իսրայելը հավաքելու ավետարանի ցանցն ընդարձակ է: Տեղ կա յուրաքանչյուր մարդու համար, ով լիովին կրնադնի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Յուրաքանչյուր նորադարձ դառնում է Աստծո ուխտի զավակներից մեկը¹⁵ լինի ծնունդով, թե որդեգրմամբ: Յուրաքանչյուրը դառնում է լիակատար ժառանգն այն ամենի, ինչ Աստված խոստացել է Իսրայելի հավատարիմ զավակներին:¹⁶

Մեզանից յուրաքանչյուրն ունի աստվածային ներուժ, քանի որ յուրաքանչյուրն Աստծո զավակ է: Յուրաքանչյուրը հավասար է Նրա աչքում: Այս ճշմարտության հետևանքները խորն են: Եղբայրներ՝ և քույրեր՝, խնդրում եմ, ուշադիր լսեք, թե ինչ եմ ասելու հիմա: Աստված մի ռասային

ավելի պակաս չի սիրում, քան մյուսին: Նրա վարդապետությունն այս հարցում պարզ է: Նա հրավիրում է *բոլորին* գալ Իր մոտ՝ «սև թե սպիտակ, սարուկ թե ազատ, այր թե կին»:¹⁷

Վստահեցնում եմ ձեզ, որ Աստծո առջև ձեր արժանավոր լինելու հեռանկարը չի որոշվում ձեր մաշկի գույնով: Աստծուն սիրելը կամ չսիրելը կախված է Աստծո և Նրա պատվիրանների հանդեպ ձեր նվիրվածությունից, և ոչ թե ձեր մաշկի գույնից:

Ես ցավում եմ, որ ամբողջ աշխարհում մեր սևամորթ եղբայրներն ու քույրերը տառապում են ռասիզմի և նախապաշարմունքների ցավոտ խտրականությունից: Այսօր ես կոչ եմ անում մեր անդամներին ամենուր՝ հրաժարվել նախապաշարմունքների վերաբերմունքից և գործողություններից: Ես խնդրում եմ ձեզ հարգանք ցուցաբերել Աստծո բոլոր զավակների հանդեպ:

Մեզանից յուրաքանչյուրի համար հարցը նույնն է՝ անկախ ռասայից: *Դուք* պատրաստ եք թույլ տալ Աստծուն տնօրինել ձեր կյանքը: *Դուք* պատրաստ եք թույլ տալ, որ Աստված ամենամեծ ազդեցությունն ունենա ձեր կյանքում: Թույլ կտա՞ք, որ Նրա խոսքերը, Նրա պատվիրաններն ու ուխտերը ազդեն ձեր ամենօրյա քայլերի վրա: Թույլ կտա՞ք, որ Նրա ձայնը գերակշռի մյուս ձայների վրա: Դուք *պատրաստ* եք թույլ տալ, որ այն, ինչ Նա է ցանկանում, որ դուք անեք, ավելի կարևոր լինի ձեր մնացած բոլոր նպատակներից: Դուք *պատրաստ* եք, որ ձեր «կամքը կույզնազատ լինի Նրա կամքին»:¹⁸

Մտածեք, թե նման պատրաստականությունն ինչպես կարող է օրհնել ձեզ: Եթե դուք ամուսնացած չեք և հավերժական ողելից եք փնտրում, «Իսրայելից» լինելու ձեր ցանկությունը կօգնի ձեզ որոշել, թե ում հետ և ինչպես հանդիպել:

Եթե դուք ամուսնացած եք մեկի հետ, ով խախտել է իր ուխտերը, ձեր կյանքն Աստծո կողմից

տնօրինելու ձեր պատրաստականությունը թույլ կտա, որ ձեր ուխտերը Աստծո հետ անխախտ մնան: Փրկիչը կբժշկի ձեր կոտրված սիրտը: Երկինքները կբացվեն, երբ ձգտեք իմանալ, թե ինչպես առաջ շարժվել: Հարկավոր չէ, որ դուք մոլորվեք կամ զարմանաք:

Եթե անկեղծ հարցեր ունեք ավետարանի կամ Եկեղեցու վերաբերյալ, երբ ընտրում եք թույլ տալ, որ Աստված տնօրինի, ձեզ կառաջնորդեն գտնել և հասկանալ բացարձակ, հավերժական ճշմարտություններ, որոնք կուղղորդեն ձեր կյանքը և կօգնեն ձեզ ամուր մնալ ուխտի արահետի վրա:

Երբ բախվում եք զայթակողության, նույնիսկ եթե զայթակողությունը գալիս է, երբ դուք ուժասպառ եք, ձեզ մենակ եք զգում կամ ձեզ սխալ են հասկացել, պատկերացրեք, որ կարող եք զինվել քաջությամբ, երբ նախընտրեք թույլ տալ, որ Աստված տնօրինի ձեր կյանքը, և երբ խնդրեք Նրան գորացնել ձեզ:

Երբ ձեր մեծագույն ցանկությունն է՝ թույլ տալ, որ Աստված տնօրինի, որ լինեք Իսրայելի մի մասը, այնքա՛ն շատ որոշումներ դյուրին կդառնան: Շա՛տ հարցեր կդառնան անկարևոր: Դուք կիմանաք, թե ինչպես հաճելիորեն ներկայացնել ձեզ: Դուք կիմանաք, թե ինչ դիտել և կարդալ, որտեղ անցկացնել ձեր ժամանակը և ում հետ շփվել: Դուք կիմանաք, թե ինչ եք ուզում իրականացնել: Դուք կիմանաք, թե ինչպիսի մարդ եք ցանկանում դառնալ իրականում:

Այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, որպեսզի թույլ տաք, որ Աստված տնօրինի, պահանջվում է և՛ հավատք, և՛ համարձակություն: Ապաշխարելու և Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով բնական մարդուն հեռացնելու համար անհրաժեշտ է համառ ու ջանասեր հոգևոր աշխատանք:¹⁹ Հետևողական, ամենօրյա ջանքեր են պահանջվում, որպեսզի զարգանանք անձնական սովորություններ՝ ավետարանն ուսումնասիրելու, Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի

մասին ավելին իմանալու, անձնական հայտնություն փնտրելու և դրան պատասխանելու համար:

Այս վտանգավոր ժամանակներում, որոնց մասին մարգարեացավ Պողոս Առաքյալը,²⁰ սատանան այլևս չի էլ *փորձում* թաքցնել իր հարձակումներն Աստծո ծրագրի վրա: Բազմաթիվ չար գաղափարներ շատ տարածված են աշխարհում: Հետևաբար, հոգևոր գոյատևման միակ միջոցն է՝ վճռել թույլ տալ, որ Աստված տնօրինի մեր կյանքը, սովորել լսել Նրա ձայնը և օգտագործել մեր եռանդը՝ օգնելով Բարայելի հավաքմանը:

Այժմ, Տերն ինչպե՞ս է *վերաբերվում* նրանց, ովքեր թույլ կտան, որ Աստված տնօրինի իրենց կյանքը: Նեփին լավ է ամփոփել սա. «[Տերը] *սիրում է* նրանց, ովքեր ցանկանում են, որ նա լինի իրենց Աստվածը: Ահա, նա սիրում էր մեր հայրերին, և նա ուխտեց նրանց հետ, այո, հենց Աբրահամի, Իսահակի և Հակոբի. և նա հիշում էր ուխտերը, որ նա արել էր»:²¹

Եվ ի՞նչ է պատրաստվում Տերն *անել* Բարայելի համար: Տերը խոստացել է, որ Ինքը «կկոփի մեր պատերազմներում, և մեր երեխաների պատերազմներում, և մեր երեխաների երեխաների . . . մինչև երրորդ և չորրորդ սերունդը»:²²

Երբ հաջորդ վեց ամիսների ընթացքում դուք ուսումնասիրեք ձեր սուրբ գրությունները, խրախուսում եմ, որ կազմեք այն ամենի ցուցակը, որ Տերը խոստացել է անել ուխտի Բարայելի համար: Կարծում եմ, որ դուք շատ կզարմանաք: Խորհեք այս խոստումների շուրջ: Դրանց մասին խոսեք ձեր ընտանիքների և ընկերների հետ: Հետո ապրեք ու հետևեք, թե այդ խոստումներն ինչպես են կատարվում ձեր իսկ կյանքում:

Իմ թանկագին՝ եղբայրներ և քույրեր, երբ ընտրեք թույլ տալ, որ Աստված տնօրինի ձեր կյանքը, ինքներդ կզգաք, որ մեր Աստվածը «հրաշքների Աստված է»:²³ Որպես ժողովուրդ, մենք Նրա ուխտի զավակներն ենք, և մեզ կանչելու են Նրա անունով: Սրա մասին

ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՐՈՒՍԵՐ

1. Որպես առաքյալ իմ կոչման 36 տարիների ընթացքում Բարայելի մասին ես խոսել եմ իմ 800 ելույթներից առնվազն 378-ում:
2. Եբրայերենում *Աբրահամ* ազնվական անուն է, որը նշանակում է «վեհացած հայր»: Բայց երբ Աստված այդ անունը վերափոխեց *Աբրահամի*, այն ավելի մեծ նշանակություն ստացավ՝ «բազմության հայր»: Իսկապես, Աբրահամը պետք է լինի «շատ ազգերի հայր»: (Տես Օճնորոց 17.5, Նեփիա 9.7:)
3. Տեր Աստված Եհովան ուխտ կապեց Աբրահամի հետ, որ աշխարհի Փրկիչը ծնվելու է Աբրահամի սերնդի միջոցով, որոշ երկրներ կժառանգվեն, և բոլոր ազգերը կօրհնվեն Աբրահամի տոհմի միջոցով (տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Աբրահամ, Աբրահամի ուխտ»):
4. Տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Բարայել»:
5. *Բարայել* բառը սուրբ գրություններում կրկնվում է ավելի քան հազար անգամ: Այն կարող է վերաբերել Հակոբի (Բարայելի) ընտանիքի 12 որդիներին, ինչպես նաև դուստրերին (տես Օճնորոց 35.23–26, 46.7): Այսօր այն կարող է աշխարհագրորեն կիրառվել որպես վայր՝ Երկիր մուրակի վրա: Բայց դրա վարդապետական օգտագործումը վերաբերում է այն մարդկանց, ովքեր պատրաստ են թույլ տալ, որ Աստված տնօրինի իրենց կյանքը:
6. Տես Օճնորոց 32.30, կարդացվում է նաև *Փսալմեկ* Օճնորոց 32.31:
7. Տես Օճնորոց 32.28:
8. Տես Օճնորոց 35.11–12:
9. Լրացուցիչ ուսումնասիրման համար տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Բարայելի հավաքումը»:
10. Եսայիա 54.7:
11. Տես Եսայիա 11.11–12, 2 Նեփի 21.11–12, Մոսիա 15.11:
12. Տես *Encyclopedia of Mormonism* (1992), “Solemn Assemblies,” 1:330–31:
13. Մինչ մենք մասնակցում ենք Բարայելի հավաքին, Տերը հրաշալի եղանակով նկարագրում է հավաքվողներին: Նա մեզ հավաքականդներն դիմում է որպես «սեպիական ժողովուրդ» (Ելից 19.5, Մադմոս 135.4), որպես Իր «գոհարները» (Մադաքիա 3.17, Վարդապետություն և Ուխտեր 101.3), և որպես «սուրբ ժողովուրդ» (Ելից 19.6, տես նաև Երկրորդ Օրինաց 14.2, 26.18):
14. Այս արտահայտությունը վերաբերում է հենց այն ուխտին, որը Աստված կապեց Աբրահամի հետ, ասելով. «Քո սերունդների մեջ երկրի բոլոր ցեղերը պիտի օրհնվեն» (3 Նեփի 20.27): «Ուխտի մեջ ծնված» նշանակում է, որ մինչև մարդու ծնունդը, նրա մայրն ու հայրը կնքվել են տաճարում:
15. Նման խոստում Աստծո կողմից ուսուցանվել է Աբրահամին. «Բոլոր նրանք, ովքեր ստանում են այս Ավետարանը, ձեր անունով կկոչվեն, և ձեր սերունդը հաշվելու են, և հարություն կառնեն և կօրհնեն ձեզ,



Զալքրուրդ, Ավստրիա

- ինչպես իրենց հայրը» (Աբրահամ 2.10, տես նաև Հռովմայեցիս 8.14–17, Գաղատացիս 3.26–29):
16. Յուրաքանչյուր հավատարիմ անդամ կարող է խնդրել հայրապետական օրհնություն: Սուրբ Հոգու ներշնչմամբ հայրապետը հայտարարում է այդ մարդու տոհմը Բարայելի տանը: Այդ հայտարարությունը պարտադիր չէ, որ արտահայտի իր ցեղը, ազգությունը կամ գենետիկ կազմը: Փոխարենը, հայտարարված տոհմը նույնացնում է Բարայելի ցեղը, որի միջոցով այդ անհատը կստանա իր օրհնությունները:
 17. 2 Նեփի 26.33
 18. Տես Մոսիա 15.7: Բարայելից լինելը սրտից թույլ մարդկանց համար չէ: Որպեսզի ստանանք այն բոլոր օրհնությունները, որոնք Աստված պահում է Աբրահամի սերնդի համար, յուրաքանչյուրս կարող է ակնկալել, որ մեզ կարվի մեր յուրահատուկ «Աբրահամյան փորձությունը»: Ինչպես ուսուցանել է Մարգարե Զոզեֆ Սմիթը, Աստված կփորձի այնպես, որ կդիպչի մեր սրտի լարերին: (See recollection of John Taylor in *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 231.)
 19. Տես Մոսիա 3.19:
 20. Տես Բ Տիմոթեոս 3.1–13:
 21. 1 Նեփի 17.40, շեշտադրումն ավելացված է:
 22. Վարդապետություն և Ուխտեր 98.37, տես նաև Մադմոս 31.23, Եսայիա 49.25, Վարդապետություն և Ուխտեր 105.14:
 23. Մորմոն 9.11:



Նախագահ Հենրի Բ. Այրիկզ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդակալ

Փորձված, ստուգված և հղկված

Ամենամեծ օրհնությունը, որը կատանանք, երբ փորձությունների ժամանակ ապացուցենք, որ հավատարիմ ենք մեր ուխտերին, կլինի մեր էության փոփոխությունը:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես երախտապարտ եմ, որ հնարավորություն ունեմ այսօր ձեզ հետ խոսելու: Հուսով եմ, քաջալերել ձեզ այն ժամանակ, երբ կյանքն առավել դժվար և անորոշ է թվում: Ոմանց համար այդ ժամանակը հենց հիմա է: Եթե ոչ, միևնույնն է՝ այդպիսի պահեր կգան:

Դա հոռետեսական մտեցում չէ: Դա իրատեսական է, նույնիսկ՝ լավատեսական, հաշվի առնելով Աստծո նպատակը այս աշխարհի արարման հարցում: Այդ նպատակն էր՝ Իր զավակներին հնարավորություն տալ ստուգվելու՝ արդյո՞ք ունակ են և կամենում են ընտրել ճիշտը դժվարության ժամանակ: Այդպես վարվելով, նրանց էությունը կփոխվեր և նրանք ավելի կմամանվեին Նրան: Աստված գիտեր, որ դրա համար կպահանջվեր անսասան հավատք Իր հանդեպ:

Իմ գիտելիքների մեծ մասը ես ձեռք եմ բերել իմ ընտանիքում: Երբ ես մոտ ութ տարեկան էի, իմ իմաստուն մայրիկը խնդրեց ինձ և եղբորս, որ իր հետ քաղենք մեր

տան բակի մոլայտոտերը: Այժմ դա հեշտ առաջադրանք է թվում, բայց մենք ապրում էինք Նյու Ջերսիում: Այնտեղ հաճախ էին լինում անձրևներ: Հողը ծանր կավ էր: Մոլայտոտերն ավելի արագ էին աճում, քան բանջարեղենը:

Ես հիշում եմ հիասթափությունս, երբ մոլայտոտերը կոտրվում էին իմ ձեռքերում, իսկ արմատները ամուր խրված էին մնում թանձր ցելսի մեջ: Մայրս ու եղբայրս արագ առաջ էին ընկնում իրենց շարքերում: Որքան շատ ճիգեր էի գործադրում, այնքան ավելի էի հետ մնում նրանցից:

«Մա շա՛տ դժվար է»,- բացականչեցի ես:

Կարեկցելու փոխարեն մայրս ժպտաց և ասաց. «Այո՛, Հալ, անշուշտ, դժվար է: Պիտի որ դժվար լինի: Կյանքը ստուգարք է»:

Այդ պահին ես գիտեի, որ նրա խոսքերը ճշմարիտ էին և կշարունակեին ճշմարիտ լինել հետագայում:

Մայրիկի սիրալիկ ժպիտի պատճառը պարզ դարձավ տարիների անց, երբ ես կարդացի, թե

Երկնային Հայրն ու Նրա սիրելի Որդին ինչպես են խոսում այս աշխարհի ստեղծման Իրենց նպատակի և հոգևոր զավակներին մահկանացու կյանքի հնարավորություն տալու մասին.

«Եվ դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց.

Եվ նրանց, ովքեր պահում են իրենց առաջին վիճակը, կտրվի ավելին. իսկ նրանք, ովքեր չեն պահում իրենց առաջին վիճակը, փառք չեն ունենա այն նույն թագավորության մեջ, նրանց հետ, ովքեր պահում են իրենց առաջին վիճակը. և նրանք, ովքեր կպահեն իրենց երկրորդ վիճակը, նրանց գլխին փառք կավելացվի հավիտյանս հավիտենից»:¹

Ես և դուք ընդունել ենք փորձվելու և ստուգվելու այդ հրավերը, որ կպահենք Աստծո պատվիրանները, երբ այլևս չենք լինի մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

Մեր Երկնային Հոր այդ սիրալիկ հրավերի հետ մեկտեղ Լյուցիֆերը համոզեց հոգևոր զավակների մեկ երրորդին հետևել իրեն և մերժել Հոր ծրագիրը, որը մեր աճի և հավերժական երջանկության համար էր: Ապստամբության պատճառով սատանան և նրա հետևորդները վճռվեցին: Այժմ՝ այս մահկանացու կյանքում, նա փորձում է, որքան հնարավոր է, շատերին շեղել Աստծուց:

Նրանք, ովքեր ընդունեցին ծրագիրը, այդպես վարվեցին Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց հավատքի շնորհիվ, ով առաջարկեց դառնալ մեր Փրկիչն ու Քավիչը: Այն ժամանակ մենք պիտի որ հավատայինք, որ ինչ մահացու թուլություններ էլ ունենայինք, և ինչ չար ուժեր էլ որ լինեին մեր դեմ, բարու ուժերը անհամեմատ ավելի մեծ կլինեին:

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը գիտեն և սիրում են ձեզ: Նրանք ցանկանում են, որ դուք վերադառնաք Նրանց մոտ և նմանվեք Նրանց: Ձեր հաջողությունը

Նրանց հաջողությունն է: Դուք զգացել եք այդ սերը, որը հաստատել է Սուրբ Հոգին՝ այս խոսքերը կարդալիս կամ լսելիս. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:²

Աստված գործություն ունի մեր ճանապարհին ավելի հեշտ դարձնելու: Նա մանանայով կերակրեց իսրայելի զավակներին, երբ նրանք թափառում էին՝ փնտրելով խոստացված երկիրը: Տերն Իր երկրային առաքելության ժամանակ բժշկեց հիվանդներին, կենդանացրեց մահացածներին և հանդարտեցրեց ծովը: Իր Հարությունից հետո Նա բացեց «բանտը» նրանց համար, ովքեր բանտարկյալ էին»:³

Այնուամենայնիվ, մարգարե Ջոզեֆ Սմիթը՝ Աստծո մեծագույն մարգարեներից մեկը, տառապեց բանտում և սովորեց այն դասը, որից մենք էլ ենք օգուտ քաղում, և որի կարիքն ունենք մեր հավատքի կրկնվող փորձությունների ժամանակ. «Եվ եթե քեզ զգեն հորը կամ մարդասպանների ձեռքը, և մահվան դատավճիռն անցնի վրայովդ. եթե քեզ զգեն ջրանդունդը. եթե բարձրացող ալիքը դավ նյութի քո դեմ. եթե կատաղի քամիները դառնան քո թշնամին. եթե երկինքները մթնեն, և բոլոր տարրերը համախմբվեն՝ ճանապարհը խոչընդոտելու. և այդ ամենից բացի, եթե դժոխքի ծնոտները լայն բացեն երայսը, որպեսզի քեզ կույ տան, իմացիր, որդի՛ս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգուտի համար»:⁴

Գուցե մտածեք, թե ինչո՞ւ է սիրող և ամենագոր Աստված թույլ տալիս, որ մեր մահկանացու փորձությունն այդքան դժվար լինի: Պատճառն այն է, որ Նա գիտի, որ մենք պետք է աճենք հոգևոր մաքրության և ամբողջության մեջ, որպեսզի կարողանանք հավերժ ապրել ընտանիքներով Նրա ներկայության մեջ: Որպեսզի դա հնարավոր լինի, Երկնային Հայրը տվել է մեզ Փրկչին և գործություն, որ հավատքով



Զալգբուրգ, Ավստրիա

ինքնուրույն ընտրենք՝ պահել Նրա պատվիրանները, ապաշխարել և, այդպիսով, գալ Նրա մոտ:

Հոր երջանկության ծրագրի առանցքային նպատակն այն է, որ մենք ավելի նմանվենք Նրա Միրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Ամեն ինչում Փրկչի օրինակը մեր լավագույն ուղեցույցն է: Նա ազատված չէր ստուգվելու անհրաժեշտությունից: Նա տառապեց Երկնային Հոր բոլոր զավակների համար՝ վճարելով մեր բոլոր մեղքերի գինը: Նա զգաց բոլոր մարդկանց տառապանքները, ովքեր եկել են և կգան մահկանացու կյանք:

Երբ մտածում եք, թե որքան ցավի կարող եք դիմանալ, հիշեք Նրան: Նա տարել է այն ցավերը, որոնցով դուք եք տառապում, որպեսզի իմանա, թե ինչպես բարձրացնի ձեզ: Գուցե Նա չհեռացնի բեռը, բայց ձեզ ուժ, մխիթարություն և հույս կտա: Նա գիտի ուղին: Նա խմել է դառը բաժակից: Նա դիմացել է բոլորի ցավերին:

Միտո՞ղ Փրկչի՞նք ձեռք համար հոգ է տանում և մխիթարում է, Նա գիտի, թե ինչպես աջակցել ձեզ ցանկացած փորձության ժամանակ: Ավման ուսուցանել է.

«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և դա՛ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները:

Եվ նա իր վրա վեր կառնի մահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների»:⁵

Նրա օգնության եղանակներից մեկը կլինի հրավիրել ձեզ՝ միշտ հիշել Իրեն և գալ Իր մոտ: Նա մեզ հորդորել է.

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վերայ առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք»:⁶

Քրիստոսի մոտ գալու ուղին է՝ սնվել Նրա խոսքերով, հավատք գործադրել ապաշխարության համար, մկրտվել ու հաստատվել Նրա լիազորված ծառայի կողմից, և ապա՝ պահել Աստծո հետ կապած ուխտերը: Նա ուղարկում է Սուրբ Հոգուն, որ լինի ձեր ուղեկիցը, մխիթարիչն ու առաջնորդը:

Եթե այնպես ապրեք, որ արժանի լինեք Սուրբ Հոգու պարգևին, Տերը կարող է ուղղորդել ձեզ դեպի անվտանգություն, նույնիսկ, եթե չէք տեսնում այդ ճանապարհը: Իմ դեպքում Նա շատ հաճախ ցույց է տվել հաջող մեկ կամ երկու քայլերը, որոնք պետք է կատարելի: Ավելի հազվադեպ, Նա ինձ պատկերացում է տվել հեռավոր ապագայի մասին, բայց նույնիսկ այդ հազվադեպ պատկերացումներն առաջնորդում են առօրյա կյանքի իմ անելիքների ընտրությունը:

Տերը բացատրել է.



Բենգալուրու, Նորկաստան

«Ներկայումս, դուք ձեր բնական աչքերով չեք կարող տեսնել ձեր Աստծո ծրագիրը, այն բաների վերաբերյալ, որոնք ապագայում տեղի են ունենալու, և փառքը, որը պիտի գա շատ նեղությունից հետո:

Քանզի շատ նեղությունից հետո գալիս են օրհնությունները»:⁷

Ամենամեծ օրհնությունը, որը կատանանք, երբ փորձությունների ժամանակ ապացուցենք, որ հավատարիմ ենք մեր ուխտերին, կլինի մեր էության փոփոխությունը: Պահելով մեր ուխտերը, Հիսուս Քրիստոսի գործությունը և Նրա Քավության օրհնությունները կարող են գործարկվել մեր մեջ: Մեր սրտերը փափկում են, որ սիրենք, ներենք և հրավիրենք մյուսներին գալ Փրկիչի մոտ: Տիրոջ հանդեպ մեր վստահությունը մեծանում է: Նվազում են մեր վախերը:

Այժմ, նույնիսկ խոստացված այսպիսի օրհնությունների համար, որոնք կատանանք նեղությունների դիմաց, մենք նեղություններ չենք ուզում ունենալ: Մահկանացու փորձառության շրջանում մենք լայն հնարավորություն կունենանք ստուգում անցնելու, ունենալու այնպիսի փորձություններ, որ ավելի

նմանվենք Փրկիչին և մեր Երկնային Հորը:

Բացի այդ, մենք պարտավոր ենք նկատել մյուսների նեղությունները և փորձենք օգնել: Դա հատկապես դժվար կլինի, երբ մենք ինքներս լուրջ փորձության մեջ լինենք: Բայց մեկ ուրիշի բեռը թեկուզ մի փոքր թեթևացնելիս մենք կհայտնաբերենք, որ գոտեպնդվել ենք և մշուշի մեջ նշմարում ենք լույսը:

Այս բանում, Տերը մեր Օրինակն է: Գողգոթայի խաչի վրա, երբ Նա արդեն այնպիսի մեծ ցավից էր տառապել, որ պետք է մահացած լիներ, եթե Աստծո Միածին Որդին չլիներ, Հիսուսը նայեց Իր դահիճներին և ասաց Հորը. «Հայր, թողի՛ր դորանց. որովհետե՛ւ չ'գիտեն թե՛ ի՛նչ են անում»:⁸ Տանջվելով բոլոր նրանց համար, ովքեր երբևէ կապրեին, Նա խաչից նայեց Հովհաննեսին և վշտի մեջ գտնվող Իր մորը, և սպասավորեց մորը նրա փորձության ժամանակ.

«Յիսուսն էլ տեսնելով իր մօրը եւ այն աշակերտին՝ որ սիրում էր, որ մօտիկ կանգնած էր, իր մօրն ասեց. Ով կին, ահա քո որդին:

Յետոյ ասեց աշակերտին. Միաքո մայրը: Եւ այն ժամանակից այն աշակերտն իրան մօտ առաւ նորան»:⁹

Այդ ամենասրբազան օրերից մեկի ժամանակ Հիսուսն Իր գործողություններով ինքնակամ տվեց Իր կյանքը յուրաքանչյուրիս համար՝ օգնություն առաջարկելով ոչ միայն այս կյանքում, այլև ապագայում՝ հավիտենական կյանքում:

Ես տեսել եմ, թե ինչպես են մարդիկ զարմանալի գործեր կատարում՝ հաստատելով իրենց հավատարմությունը սաստիկ փորձությունների ժամանակ: Եկեղեցու շարքերում այսօր կան օրինակներ: Չախորդությունը ծնկի է բերում մարկանց: Իրենց հավատարիմ տոկոսությամբ և ջանքերով նրանք ավելի են նմանվում Փրկիչին և մեր Երկնային Հորը:

Ես իմ մայրիկից մեկ այլ դաս էլ եմ սովորել: Երիտասարդ ժամանակ նա հիվանդացել էր դիֆթերիայով և մահվան շեմին էր հայտնվել: Ավելի ուշ նրա մոտ առաջացել էր ողնաշարի մենինգիտ: Նրա հայրը երիտասարդ էր հեռացել կյանքից, և իմ մայրն ու նրա եղբայրները օգնել են մայրիկին:

Իր ամբողջ կյանքում նա զգացել է հիվանդություններից եկող փորձությունների ազդեցությունը: Կյանքի վերջին 10 տարիների ընթացքում նա բազմիցս



Սան Պաոլո, Բրազիլիա

վիրահատույն էր: Այդ ամենի միջոցով անցնելիս նա հավատարիմ մնաց Տիրոջը, նույնիսկ, երբ գամված էր անկողնուն: Նրա ննջասենյակի պատից կախված միակ նկարը Փրկիչի նկարն էր: Մահանալուց առաջ ինձ ուղղված նրա վերջին խոսքերն էին. «Հալ, դու ոնց-որ մրսում ես: Դու պետք է հոգ տանես քո մասին»:

Նրա հուղարկավորության ժամանակ, վերջին խոսնակը Երեց Սպենսեր Վ.Քիմբալն էր: Նրա փորձություններից և հավատարմությունից որոշ բաներ խոսելուց հետո, նա, ըստ էության, ասաց հետևյալը. «Քուցե ոմանք մտածեն, թե ինչո՞ւ պետք է Միլդրիդն այսքան շատ և այսքան երկար տառապեր: Ես կասեմ ձեզ՝ ինչու: Քանի որ Տերը ցանկանում էր նրան մի փոքր ավելի հղկել»:

Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում Հիսուս Քրիստոսի Եկեղեցու բազմաթիվ հավատարիմ անդամների համար, ովքեր կայուն հավատով կրում են իրենց բեռը և օգնում են ուրիշներին՝ կրել իրենցը, երբ Տերը ձգտում է նրանց մի փոքր ավելի հղկել: Ես նաև իմ սերն ու հիացմունքն եմ հայտնում աշխարհում բոլոր խնամատարների և ղեկավարների հանդեպ, ովքեր ծառայում են ուրիշներին, մինչ իրենք և իրենց ընտանիքները դիմանում են նման հղկման:

Ես վկայում եմ, որ մենք Երկնային Հոր զավակներն ենք, ով սիրում է մեզ: Ես զգում եմ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի սերը բոլորիս հանդեպ: Նա այսօր Տիրոջ մարգարեն է աշխարհում: Մա եմ ես վկայում Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՍՆԵՐ

1. Աբրահամ 3.25-26:
2. Մովսես 1.39:
3. Վարդապետություն և Ուխտեր 138.42:
4. Վարդապետություն և Ուխտեր 122.7:
5. Ալմա 7.11-12:
6. Մատթեոս 11.28-29:
7. Վարդապետություն և Ուխտեր 58.3-4:
8. Ղուկաս 23.34:
9. Հովհաննես 19.26-27:



Երեց Ջերեմի Ռ. Ջազի
Յոթանասուկից

Համբերությունը թող կատարեալ գործ ունենայ, և բոլորովին ուրախություն համարեցեք

*Երբ համբերատար ենք, մեր հավատքը
մեծանում է: Երբ մեծանում է մեր հավատքը,
մեծանում է նաև մեր ուրախությունը:*

Երկու տարի առաջ իմ կրտսեր եղբայրը՝ Չադը, անցավ վարագույրի մյուս կողմը: Նրա մահը դատարկ տեղ թողեց հարսիս՝ Ստեֆանիի, նրանց երկու փոքր երեխաների՝ Բրեյդրնի և Բելլայի ինչպես նաև ընտանիքի մնացած անդամների սրտերում: Մենք սփոփանք գտանք Երեց Նիլ Լ. Անդերսենի խոսքերում, որոնք հնչել էին Չադի մահից մեկ շաբաթ առաջ տեղի ունեցած զերագույն համաժողովում. «Երկրային փորձությունների խաչմերուկում համբերությամբ առաջ գնացեք և Փրկիչի բուժիչ ուժը կրեք լույս, հասկացողություն, խաղաղություն և հույս» («Խոցվածը», *Liahon*, նոյեմբեր 2018, 85):

Մենք հավատք ունենք Հիսուս Քրիստոսի հանդեպ, մենք գիտենք, որ կրկին կմիանանք Չադին, բայց

նրա ֆիզիկական բացակայությունը ցավ է պատճառում: Շատերն են կորցրել իրենց սիրելիների մարդկանց: Դժվար է համբերատար լինել և սպասել այն ժամանակին, երբ մենք նորից կմիանանք նրանց:

Նրա մահից մեկ տարի անց մենք այնպիսի զգացում ունեցինք, որ մութ ամպը ծածկել էր մեզ: Մենք ապաստան էինք փնտրում, ուսումնասիրելով սուրբ գրությունները, ավելի ջերմեռանդ աղոթելով և ավելի հաճախ այցելելով տաճար: Այս օրհներգի տողերը արտացոլում են այդ ժամանակ ունեցած մեր զգացմունքները. «Լույսը բացվում է, աշխարհն արթնանում է, գիշերվա մութ ամպերը փախչում են» (“The Day Dawn Is Breaking,” *Hymns*, no. 52):

Մեր ընտանիքը որոշեց, որ 2020 թվականը թարմության տարի

կլինի: 2019 թվականի նոյեմբերի վերջն էր: Մենք ուսումնասիրում էինք *Եկ, հետևիր ինձ* ծրագրի մեր դասը՝ Նոր կտակարանի Հակոբոսի գրքից, երբ մի թեմա բացահայտեցինք մեզ համար: Հակոբոսի գրքի 1-ին գլխի 2-րդ հատվածում կարդում ենք. «Եղբայրներ՛ս, բուրբոսի նորախոսություն համարեք, երբ շատ նեղությունների մեջ եք ընկնում» (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հակոբոս 1.2 [Հակոբոս 1.2, ծանոթագրություն *ա*]): Նոր տարին, նոր տասնամյակը նորախոսությամբ սկսելու ցանկությամբ հանդերձ, մենք որոշեցինք, որ 2020 թվականը «բուրբոսի նորախոսություն համարենք»: Մեր այդ ցանկությունն այնքան մեծ էր, որ անցյալ Սուրբ ծննդյան տոներին մենք մեր եղբայրներին ու քույրերին վերնաշապիկներ նվիրեցինք, որոնց վրա թավատառ գրված էր. «բուրբոսի նորախոսություն համարեք»: 2020 թվականն, անշուշտ, նորախոսության և նորախանայու տարի կլինի:

Եվ ահա, թե ինչ եղավ՝ հակառակ դրան, 2020 թվականը բերեց COVID-19 համավարակը, քաղաքացիական անկարգություններ, ավելի շատ բնական աղետներ և տնտեսական մարտահրավերներ: Մեր Երկնային Հայրը կարող է մեզ ժամանակ տալ մտածելու և խորհելու համբերության մասին մեր պատկերացման շուրջ և նորախոսությունն ընտրելու մեր գիտակցված որոշման մասին:

Այդ պահից սկսած Հակոբոսի գիրքը նոր իմաստ ստացավ մեզ համար: Հակոբոս, գլուխ 1, հատվածներ 3 և 4-ում շարունակվում է.

«Գիտենալով որ ձեր հաւատքի փորձառութիւնը համբերութիւն է գործում:

Իսկ համբերութիւնը թող կատարեալ գործ ունենայ. որ կատարեալ եւ ամբողջ լինիք, եւ ոչ մի բանի պակասութիւն չ'ունենաք»:

Երբ փորձում էինք նորախոսություն գտնել մեր փորձությունների կիզակետում, մենք մոռացել էինք, որ համբերությունն էր բանալին, որը թույլ կտար, որ այդ

փորձություններն աշխատեին մեր օգտի համար:

Բենիամին թագավորն ուսուցանել է մեզ, որ հանենք բնական մարդուն և դառնանք «սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ, և դառնալով ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին» (Մոսիա 3.19):

Քարոզիչ Իւ Ալեխանյանը ձեռնարկի 6-րդ գլխում ուսուցանվում է Քրիստոսի այն հատկանիշների մասին, որոնք մենք պետք է ընդօրինակենք. «Համբերությունը, առանց զայրանալու, հուսահատվելու կամ տագնապելու, արգելքի, նեղության, ընդդիմության կամ տառապանքի դիմանալու ունակությունն է: Դա Աստծո կամքը կատարելու և Նրա ժամանակացույցն ընդունելու մեր ունակությունն է: Երբ դուք համբերատար եք, դիմանում եք փորձություններին և կարողանում եք հանգիստ և հույսով դիմակայել ձայնորդությանը» (*Քարոզիչ Իւ Ալեխանյանը. Միսիոնայական ծառայության ուղեցույց*, խմբ. հրատ. [2019], 126):

Համբերության կատարյալ գործը պատկերված է նաև Քրիստոսի վաղեմի աշակերտներից մեկի՝ Սիմոն Կանանացու կյանքում: Չելոտները հրեա ազգայնականների խումբ էին, որոնք կտրականապես դեմ էին հռոմեական կառավարմանը: Չելոտական շարժումը բռնություն էր քարոզում հռոմեացիների, նրանց հրեա համագործակիցների և սաղուկեցիների հանդեպ: Նրանք մթերքի պաշարներ էին թալանում և հետապնդում այլ նպատակներ՝ հանուն իրենց գործի (տես *Encyclopedia Britannica*, “Zealot,” britannica.com): Սիմոն Կանանացին զելոտ էր (տես Ղուկաս 6.15): Պատկերացրեք, որ Սիմոնը փորձում էր համոզել Փրկչին զենք վերցնել, ղեկավարել զինված խումբ կամ քառսի վերածել Երուսաղեմը: Հիսուսն ուսուցանել է.

«Երանի հեզերին, որ նորանք կժառանգեն երկիրը: . . .

Երանի ողորմածներին, որ նորանք ողորմություն կգտնեն: . . .

Երանի խաղաղութիւն անողներին, որ նորանք Աստուծոյ որդիք կկոչվին» (Մատթեոս 5.5, 7, 9):

Սիմոնը գուցե նախանձախնդրորեն և կրքով էր ընդունում ու պաշտպանում իր փիլիսոփայությունը, բայց սուրբ գրություններն ասում են, որ Փրկչի ազդեցության և օրինակի շնորհիվ նրա մտադրությունը փոխվեց: Քրիստոսի աշակերտը դառնալու նպատակը դարձավ նրա կյանքի հիմնական ուղղվածությունը:

Երբ Աստծո հետ ուխտեր ենք կապում և պահում, Փրկչին օգնում է մեզ «վերստին ծնվել, այո, Աստծուց ծնվել, [մեր] մարմնական ու ընկած վիճակից փոխված դեպի արդարության մի վիճակի, փրկագնվելով Աստծո կողմից, դառնալով նրա որդիներն ու դուստրերը» (Մոսիա 27.25):

Մեր օրվա սոցիալական, կրոնական և քաղաքական բոլոր նախանձախնդիր ջանքերից, թող *Հիսուս Քրիստոսի աշակերտը* լինելու ջանքը լինի մեր ամենաակնառու և հավաստի պատկանելությունը: «Որովհետեւ ինչ տեղ որ ձեր գանձն է, այն տեղ կ'լինի եւ ձեր սիրտը» (Մատթեոս 6.21): Եկեք նաև չմոռանանք, որ նույնիսկ այն բանից հետո, երբ հավատարիմ աշակերտները «Աստուծոյ կամքն [արեցին], նրանց նույնպես «համբերութիւն է[ր] պէտք» (Եբրայեցիս 10.36):

Ինչպես մեր հավատքի փորձառությունն է համբերություն գործում մեր մեջ, այնպես էլ երբ մենք համբերություն ենք գործադրում, մեր հավատքը մեծանում է: Երբ մեծանում է մեր հավատքը, մեծանում է նաև մեր նորախոսությունը:

Այս անցած մարտ ամսին մեր երկրորդ դուստրը՝ Էմման, եկեղեցու շատ միսիոներների նման, պարտադիր մեկուսացման մեջ էր: Միսիոներներից շատերը վերադարձան տուն: Շատերը սպասեցին վերանշանակման: Նրանցից շատերը չստացան իրենց տաճարային օրհնությունները՝ նախքան

միսիա մեկնելը: Ընտրակալություն՝, երեցնե՛ր և քույրե՛ր: Մենք սիրո՞ւմ ենք ձեզ:

Էմման և Նրա զուգընկերուհին Նիդեռլանդներում շատ լարված էին այդ առաջին մի քանի շաբաթների ընթացքում. այնքան լարված՝ որ հաճախ արտասվում էին: Միայն կարճատև անհատական շփումների և տնից դուրս գալու սահմանափակ հնարավորությունների շնորհիվ Էմման ավելի շատ սկսեց ապավինել Աստծուն: Մենք առցանց աղոթեցինք Նրա հետ և հարցրինք, թե ինչով կարող էինք օգնել: Լա խնդրեց, որ առցանց կապ հաստատենք այն ընկերների հետ, ում նա ուսուցանում էր:

Մեր ընտանիքը սկսեց առցանց կապվել Նիդեռլանդներում գտնվող Էմմայի ընկերների հետ: Մենք նրանց հրավիրեցինք միանալ մեր ամենշաբաթյա ընտանեկան *Եկ, հետևիր ինձ* առցանց ուսումնասիրությանը: Ֆլորը, Լաուրան, Ռենսկեն, Ֆրիկը, Բենջամինը, Մթալը և Մուհամմադը՝ բոլորը դարձան մեր ընկերները: Նիդեռլանդների մեր ընկերներից շատերը ներս մտան «նեղ դռնով» (3 Նեվի 14.13): Մյուսներին ցույց է տրվել «արահետի անձկությունը և դռան նեղությունը, որով նրանք պետք է մտնեն» (2 Նեվի 31.9): Նրանք մեր եղբայրներն ու քույրերն են Քրիստոսում: Ամեն շաբաթ մենք «բոլորովին ուրախություն ենք համարում», երբ միասին աշխատում ենք ուխտի ուղու վրա մեր առաջընթացի համար:

Մենք թույլ ենք տալիս, որ «համբերությունը կատարեալ գործ ունենայ» (Հակոբոս 1.4), այն ժամանակ, երբ որպես ծխի ընտանիքներ, չենք կարող անձամբ հանդիպել միմյանց: Բայց մենք ուրախություն ենք համարում մեր ընտանիքի հավատքի աճը՝ նոր տեխնոլոգիաների և Մորմոնի Գիրքը *Եկ, հետևիր ինձ* ծրագրով ուսումնասիրելու շնորհիվ:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոստացել է. «Այս ուղղությամբ ձեր հետևողական ջանքերը, անգամ այն ժամանակ, երբ զգում

եք, թե հաջողության չեք հասնում, կփոխեն ձեր կյանքը, ձեր ընտանիքի կյանքը և ամբողջ աշխարհը» («Առաջ գնացեք հավատքով», *Լյախոնա*, մայիս 2020, 114):

Տաճարը, որտեղ մենք սուրբ ուխտեր ենք կապում Աստծո հետ, փակ է: Տունը, որտեղ մենք պահում ենք Աստծո հետ կապած մեր ուխտերը, բաց է: Տանը մենք հնարավորություն ունենք ուսումնասիրելու և խորհելու տաճարային ուխտերի բացառիկ գեղեցկության մասին: Նույնիսկ այդ սուրբ տարածք ֆիզիկապես մուտք գործելու անհնարինության պայմաններում, մեր «սրտերը մեծապես կցնձան այն օրհնությունների հետևանքով, որոնք պիտի թափվեն» (Վարդապետություն և Ուխտեր 110.9):

Շատերը կորցրել են աշխատանքը, մյուսները՝ հնարավորությունները: Այնուամենայնիվ, մենք ուրախանում ենք Նախագահ Նելսոնի հետ միասին, ով վերջերս հայտարարեց. «Մեր անդամների ծովի կամավոր նվիրատվությունները փաստացի աճել են, ինչպես նաև մեր հումանիտար ֆոնդերի հաշվին կատարվող կամավոր նվիրատվությունները: . . . Միասին մենք կհաղթահարենք այս դժվար ժամանակները: Տերը կօրհնի ձեզ, երբ դուք շարունակում

եք օրհնել մյուսներին» (Russell M. Nelson's Facebook page, post from Aug. 16, 2020, facebook.com/russell.m.nelson):

«Քաջ եղեք» խոսքերը պատվիրան են Տիրոջից, ինչպես նաև՝ «մի՛ վախենաք» (Մատթեոս 14.27):

Երբեմն անհամբեր ենք դառնում, երբ մտածում ենք, որ «ամեն ինչ ճիշտ ենք անում», և դեռ չենք ստանում մեր ուզած օրհնությունները: Ենովքը Աստծո հետ քայլեց 365 տարի, մինչ նա և իր ժողովուրդը վերցվեցին երկինք: Ամեն ինչ ճիշտ անելու երեք հարյուր վաթսուհինգ տարի տևած ձգտումներից հետո միայն դատեղի ունեցավ: (Տես Վարդապետություն և Ուխտեր 107.49):

Եղբայրս՝ Չադը մահացավ, երբ մի քանի ամիս էր անցել Յուտայի Օգդեն միսիայի նախագահությունից մեր ազատվելուց հետո: Հրաշք էր, որ մինչ մենք ապրում էինք Հարավային Կալիֆոռնիայում, բոլոր 417 միսիաներից, որոնց կարող էինք նշանակվել 2015 թվականին, մենք նշանակվել էինք հյուսիսային Յուտա: Միսիայի տնից մինչև Չադի տուն 30 րոպե մեքենայի ճանապարհ էր: Չադի քաղցկեղն ախտորոշվեց այն ժամանակ, երբ մենք արդեն ստացել էինք մեր միսիայի նշանակումը: Նույնիսկ ամենավատ հանգամանքներում մենք գիտեինք, որ մեր Երկնային Հայրը մտածում էր մեր մասին և օգնում էր մեզ ուրախություն գտնել:

Ես վկայում եմ Փրկիչ Հիսուս Քրիստոսի փրկագնող, սրբագործող, խոնարհեցնող և ուրախ գործության մասին: Ես վկայում եմ, որ եթե մենք աղոթենք մեր Երկնային Հորը Հիսուս Քրիստոսի անունով, Նա կպատասխանի մեզ: Ես վկայում եմ, որ լսելով, ականջ դնելով և ուշք դարձնելով Տիրոջ և Նրա կենդանի մարգարե՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի ձայնին, մենք թույլ կտանք, որ «համբերությունը կատարեալ գործ ունենայ» և «բոլորովին ուրախություն համարենք»: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Կուալա Լումպուր, Մալայզիա



Երեց Գարի Ի. Սթիվենսոն
Տասներկու Առաքյալների Զվորումից

Մեծապես հովանավորված լինելով Տիրոջ կողմից


*Չարչարանքների և հիասթափության
ժամանակները չեն շեղում Տիրոջ արթուն հայացքը,
մինչ Նա հովանավորի պես հսկում է՝ օրհնելով մեզ:*

Տարիներ առաջ, որպես երիտասարդ միսիոներներ ծառայելով Ամամի Օշիմայի (ճապոնիա) փոքրիկ կղզիներում, մի օր ես և զուգրուկերս ոգևորվեցինք, երբ իմացանք, որ Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալն այցելելու էր Ասիա, և ճապոնիայի բոլոր անդամներն ու միսիոներները մեկնելու էին Տոկիո՝ լսելու մարզարեին տարածաշրջանի համաժողովին: Ճյուղի անդամների հետ միասին ես և զուգրուկերս ոգևորությամբ սկսեցինք համաժողովի հետ կապված ծրագրեր կազմել: 12 ժամ նավով անցնել Արևելաչինական ծովով և հասնել ճապոնիայի մայրցամաքային հատվածը, ապա 15 ժամում գնացքով հասնել Տոկիո: Ցավոք, մեր ծրագրերը չիրականացան: Մեր միսիայի նախագահից լուր ստացանք, որ ես և զուգրուկերս հեռավորության և ժամանակի պատճառով չէինք կարող մասնակցել Տոկիոյի համաժողովին:

Մինչ մեր փոքրիկ ճյուղի անդամները մեկնեցին Տոկիո, մենք մնացինք: Հաջորդ օրերը թփում էին

լուռ ու դատարկ: Փոքրիկ աղոթատանը մենք միայնակ անցկացրինք հաղորդության ժողովը, մինչ ճապոնիայի Վերջին Օրերի Սրբերը և միսիոներները մասնակցեցին համաժողովին:

Իմ անձնական հիասթափությունը սրվեց նույնիսկ այն ժամանակ, երբ ես ուրախությամբ լսում



Օրեն, Յուսա, ՄՄՆ

էի ճյուղի անդամներին, ովքեր վերադարձել էին համաժողովից օրեր անց, հաղորդելով, որ Նախագահ Քիմբալը հայտարարեց Տոկիոյում կառուցվելիք տաճարի մասին: Նրանք, ուրախությունից հուզվելով, կիսվում էին իրենց երազանքի իրականացմամբ: Նրանք նկարագրեցին, թե ինչպես տաճարի հայտարարությունը լսելիս անդամներն ու միսիոներները չկարողացան զսպել իրենց ուրախությունը և ինքնաբերաբար սկսեցին ծափահարել:

Անցել են տարիներ, սակայն ես դեռևս հիշում եմ հիասթափությունը, որը զգացի այդ պատմական հավաքին չմասնակցելու պատճառով:

Վերջին ամիսներին ես խորհել եմ այս փորձառության շուրջ, երբ նկատել եմ ուրիշների խորը հիասթափությունը և վիշտը: շատ ավելի խորը, քան իմն էր՝ որպես երիտասարդ միսիոներ, որի պատճառը COVID-19 համավարակն է:

Այս տարվա սկզբին, երբ բռնկվեց համավարակը, Առաջին Նախագահությունը խոստացավ, որ «Եկեղեցին և նրա անդամները հավատարմորեն կցուցադրեն լավ քաղաքացիներ և լավ հարևաններ լինելու նվիրվածություն»¹ և «կլինեն չափազանց զգույշ»:² Այսպիսով, մենք ամբողջ աշխարհում կասեցրել ենք Եկեղեցու հավաքները, Եկեղեցու միսիոներների կեսից ավելին վերադարձել են իրենց հայրենիք և փակվել են Եկեղեցու բոլոր տաճարները: Ձեզանից հազարավորները պատրաստվում էին տաճար մտնել անձնական արարողությունների համար՝ ներառյալ տաճարային կնքումները: Ձեզանից ոմանք էլ՝ որպես միսիոներ, վաղաժամ ավարտել են իրենց ծառայությունը կամ ժամանակավորապես հետ են կանչվել և այլ ծառայության կանչվել:

Այս ընթացքում կառավարությունները և կրթության ղեկավարները փակեցին դպրոցները, ինչը, հետևաբար, ազդեց շրջանավարտների վրա և ստիպեց չեղյալ հայտարարել մարզական,

հասարակական, մշակութային և կրթական իրադարձություններն ու միջոցառումները: Ձեզանից շատերը պատրաստվել էին միջոցառումների, որոնց չհաճախեցին, ելույթների, որոնք չլավեցին կամ սպորտային մրցաշրջանների, որոնք տեղի չունեցան:

Էլ ավելի ցավալի է այն ընտանիքների վիճակը, որոնք այս ընթացքում կորցրել են իրենց սիրելիներին. շատերը չէին կարող թաղումներ կամ այլ կարևոր հավաքույթներ անցկացնել, որոնց հետ հույսեր էին կապել:

Կարճ ասած, ձեզանից շատ-շատերը բախվել են մեծ հիասթափության, վշտի և հուսահատության հետ: Այսպիսով, ինչպե՞ս կարող ենք բուժվել, համբերել և առաջ շարժվել, երբ ամեն բան այնքան անորոշ է:

Նեփի մարգարեն հասուն տարիքում սկսեց փորագրել փոքր թիթեղները: Երբ նա հետադարձ հայացք գցեց իր կյանքին և ծառայությանը, կարևոր անդրադարձ կատարեց Մորմոնի Գրքի հենց առաջին հատվածում: Այս հատվածը ընդգծում է կարևոր մի սկզբունք, որի շուրջ մենք պետք է խորհենք մեր օրերում: Մեզ այնքան ծանոթ՝ «Ես՝ Նեփիս, ծնված լինելով լավ ծնողներից . . .» արտահայտությունից հետո նա գրում է. «և տեսած լինելով շատ չարչարանքներ իմ օրերի ընթացքում, այնուամենայնիվ, մեծապես հովանավորված լինելով Տիրոջ կողմից իմ բոլոր օրերում»:³

Որպես Մորմոնի Գիրքն ուսումնասիրած մարդիկ, մենք ծանոթ ենք բազում չարչարանքների, որոնց մասին ակնարկում է Նեփին: Ինչևէ, իր օրերի ընթացքում չարչարանքներ ունենալու փաստի վերաբերյալ Նեփին իր ավետարանական հեռանկարն է տալիս՝ մեծապես հովանավորված լինելու Տիրոջ կողմից իր բոլոր օրերում: Չարչարանքների և հիասթափության ժամանակները չեն շեղում Տիրոջ արթուն հայացքը, մինչև Նա հովանավորի պես հսկում է մեզ՝ օրհնելով մեզ:



Գվատեմալա Սիթի, Գվատեմալա

Ես և Լիզան վերջերս վիրտուալ հանդիպում ունեցանք Ավստրալիայի մոտ 600 միսիոներների հետ, որոնցից շատերը որոշ չափով գտնվում էին մեկուսացման կամ սահմանափակումների մեջ COVID-19-ի պատճառով, և շատերն աշխատում էին իրենց տներից: Մենք միասին քննարկեցինք անհատների Նոր Կտակարանից, Մորմոնի Գրքից և Վարդապետություն և Ուխտերից, որոնց Տերն օրհնել է իրականացնելու մեծ գործեր ձայնորդությունների մեջ: Բոլորն ավելի շատ բնութագրվում էին այն բանով, ինչ նրանք կարողացել էին անել Տիրոջ օգնությամբ, քան այն բանով, ինչ նրանք չէին կարողացել անել իրենց մեկուսացման կամ սահմանափակումների պատճառով:

Մենք կարդում ենք Պողոսի և Շիղայի մասին, որ բանտում

կապանքների մեջ աղոթում էին, երգում, ուսուցանում, վկայում՝ նույնիսկ մկրտում բանտապետին:⁴

Եվ կրկին Պողոսի մասին. մինչև Հռոմում երկու տարի տնային կալանքի տակ էր, նա շարունակ «Աստուծոյ արքայութիւնը վկայութիւնով պատմում էր»⁵ «Տեր Յիսուս Քրիստոսի համար սովորեցնելով»:⁶

Նեփիի և Լեքիի՝ Հելամանի որդիների մասին, ովքեր ծեծվելուց և բանտարկվելուց հետո շրջապատվեցին պաշտպանիչ կրակով, մինչև Տիրոջ «կատարյալ մեղմության հանդարտ ձայնը . . . թափանցեց մինչև [նրանց բանտարկողների] հոգու խորքը»:⁷

Ալմայի և Ամոտեկի մասին Ամմոնիայում, ովքեր գտան շատերին, որ «հավատացին . . . և սկսեցին ապաշխարել ու քննել սուրբ գրքերը»,⁸ չնայած նրանց հետո ծաղրեցին, սոված, ծարավ

ու մերկ պահեցին՝ պարաններով կապված ու բանտում փակված:⁹

Եվ, ի վերջո, Ջոզեֆ Միֆի մասին, ով տառապում էր Լիբերթիի բանտում, զգալով լքված ու միայնակ, որից հետո լսեց Տիրոջ խոսքերը. «Այս բոլոր բաները . . . կլինեն քո օգտի համար»¹⁰ և «Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից»:¹¹

Նրանցից յուրաքանչյուրը հասկանում էր այն, ինչ Նեփին գիտեր. որ տեսած լինելով շատ չարչարանքներ իրենց օրերի ընթացքում, այնուամենայնիվ, նրանք մեծապես հովանավորված էին Տիրոջ կողմից:

Մենք նույնպես կարող ենք զուգահեռներ անցկացնել՝ որպես առանձին անդամներ և որպես եկեղեցի, թե ինչպես ենք մեծապես հովանավորվել Տիրոջ կողմից այն դժվարին ժամանակներում, որոնց բախվել ենք վերջին մի քանի ամիսների ընթացքում: Երբ ես բերում եմ այս օրինակները, թող դրանք նաև ամրապնդեն ձեր վկայությունը մեր կենդանի մարգարեի տեսանող լինելու վերաբերյալ, ով ճշգրտորեն պատրաստեց մեզ նախքան համավարակի վերաբերյալ որևէ ակնարկ կլինել, ինչը հնարավորություն տվեց մեզ դիմանալ գալիք մարտահրավերներին:

Առաջինը՝ ավելի տնակենտրոն և Եկեղեցու կողմից աջակցվող դառնալը:

Երկու տարի առաջ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Մենք վարժվել ենք մտածել «եկեղեցու» մասին որպես մի բանի, որը տեղի է ունենում մեր ժողովատներում, որին աջակցում է մեր տանը կատարվածը: Մենք պետք է ճշգրտումներ կատարենք այդ օրինաչափության մեջ: . . . *Տեսլիկնադրուն Եկեղեցու ժամանակն է*, որին աջակցում է այն, ինչ տեղի է ունենում մեր . . . շենքերի ներսում»:¹² Ինչպիսի՞ մարգարեական ճշգրտում: Ավետարանի տնակենտրոն ուսումնասիրությունը սկսվեց կիրառվել հավաքատների փակմանը զուգահեռ: Նույնիսկ

երբ աշխարհում սկսի ամեն բան կարգավորվել, և մենք վերադառնանք մեր աղոթատները, մենք կցանկանանք պահպանել համաճարակի ընթացքում զարգացրած օրինաչափությունները՝ կապված ավետարանի տնակենտրոն ուսումնասիրության հետ:

Տիրոջ կողմից մեծապես հովանավորվելու երկրորդ օրինակը հայտնությունը սպասավորելն է **ավելի բարձր և սուրբ եղանակով:**

Նախագահ Նելսոնը 2018 թվականին սպասավորությունը ներկայացրեց որպես ճշգրտում «միմյանց հանդեպ հոգ տանելու եղանակների վերաբերյալ»:¹³ Համավարակը բազմաթիվ հնարավորություններ է ներկայացրել սպասավորելու մեր հմտությունները կատարելագործելու համար: Սպասավորող եղբայրները և քույրերը, երիտասարդ աղջիկներն ու տղաները և մյուսները օգնության ձեռք են մեկնել՝ ապահովելով կապ, զրույց, բակի խնամք, սնունդ, հաղորդագրություն տեխնոլոգիայի միջոցով և հաղորդության արարողություն՝ օրինելու կարիքավորներին: Եկեղեցին ծառայել է ուրիշներին համավարակի ընթացքում՝ սնունդ պահեստներին, անօթևանների ապաստարաններին, ներգաղթյալների աջակցության կենտրոններին և աշխարհում քաղցի ամենաճգնաժամային իրավիճակում գտնվողներին ուղղված ծրագրերին տրամադրելով աննախադեպ քանակությամբ ապրանքներ: Միտոլոգիայի Միության քույրերն ու նրանց ընտանիքները արձագանքեցին առողջապահության աշխատողների համար միլիոնավոր դիմակներ պատրաստելու մարտահրավերին:

Չախորդությունների ընթացքում օրինված լինելու վերջին օրինակը **ավելի մեծ ուրախություն գտնելն է տաճարային արարողություններին վերադառնալու միջոցով:**

Մա լավագույնս նկարագրվում է հետևյալ պատմության մեջ: Երբ

Քույր Քեթլին Փալմերը անցած ապրիլին ստացավ իր միսիայի կանչը, նա շատ ուրախ էր որպես միսիոներ կանչվելու համար, սակայն նույնքան յուրահատուկ ու կարևոր էր համարում տաճար գնալը՝ իր օժտումը ստանալու և սրբազան ուխտեր կապելու համար: Իր օժտումը ծրագրելուց կարճ ժամանակ անց հայտարարվեց, որ բոլոր տաճարները ժամանակավորապես կփակվեն համավարակի պատճառով: Այս տխուր տեղեկությունը ստանալուց հետո նա նաև իմացավ, որ միսիոներների ուսուցման կենտրոն (ՄՈՒԿ) հաճախելու էր վիրտուալ՝ իր տնից: Անկախ այս հիասթափություններից՝ Քեթլինը կենտրոնացավ իր հոգեվիճակը բարձր պահելու վրա:

Այդ ամիսների ընթացքում Քույր Փալմերը երբեք չկորցրեց տաճար այցելելու հույսը: Նրա ընտանիքը ծոմ էր պահում և աղոթում, որ տաճարները բացվեին նրա մեկնելուց առաջ: Քեթլինը հաճախ տանը սկսում էր իր ՄՈՒԿ առավոտները, ասելով. «Արդյո՞ք այսօր կլինի այն օրը, երբ մենք հրաշքի ականատես կլինենք և տաճարները կրկին կբացվեն»:

Օգոստոսի 10-ին Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ Քեթլինի տաճարը կվերաբացվեր անձնական արարողությունների համար հենց այն օրը, երբ ծրագրված էր նրա միսիա մեկնելու վաղ առավոտյան թռիչքը: Նա չէր կարողանալու հաճախել տաճար և հասնել իր թռիչքին: Հաջողության փոքրիկ հույսով նրա ընտանիքը կապվեց տաճարի նախագահ Մայքլ Վելինգայի հետ, որպեսզի պարզի, թե կա՞ որևէ միջոց իրականացնելու հրաշքը, որի համար նրանք աղոթել էին երկար ժամանակ: Նրանց ծոմապահությունն ու աղոթքները գտան իրենց պատասխանը:

Գիշերը ժամը 2-ին, նրա թռիչքից մի քանի ժամ առաջ, Քույր Փալմերը և նրա ընտանիքը, արցունքներն աչքերին, ջերմ

ընդունելության արժանացան տաճարի դռների մոտ՝ տաճարի նախագահի կողմից, ով ժպտալով ասաց հետևյալ խոսքերը. «Բարի լույս, Փալմեր ընտանիք: Բարի գալուստ տաճար»: Երբ նա ավարտեց իր օժտումը, նրանց խրատաբանները արագացնել, քանի որ դռների մոտ սպասում էր հաջորդ ընտանիքը: Նրանք ուղիղ օդակայան մեկնեցին՝ ճիշտ ժամանակին հասնելով նրա միսիայի թռիչքին:

Տաճարային արարողությունները, որոնց մասնակցելու հնարավորությունը մենք չենք ունեցել ամիսներ շարունակ, ավելի քաղցր են թվում, քան նախկինում, մինչ տաճարները աշխարհով մեկ աստիճանաբար վերաբացվում են:

Եվ վերջում, խնդրում եմ, լսեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի խրատաբանը, ով խոսքերը: Մարդը երբեք չի կռահի, որ նա գրել է դրանք չարչարանքների և մեկուսացման ընթացքում, մեկուսացված և սահմանափակված Նավուում, թաքնված նրանցից, ովքեր ուզում էին ապօրինի կերպով ձեռք բերել նրան:

«Արդ, ի՞նչ ենք լսում այն ավետարանից, որը մենք ստացել ենք: Չայն ուրախության: Ողորմության ձայն երկնքից. ճշմարտության ձայն երկրից. ավետիք մահացածների համար. ուրախության ձայն ողջերի և մահացածների համար. մեծ ուրախության ավետիք: . . .

«. . . Արդյոք չպե՞տք է մենք շարունակենք այս մեծ գործը: Գնացե՛ք առաջ և ոչ թե հետ:



Դոն Կարրարե, Պաղոա, Իտալիա



Վիլլա Ալեմանա, Մեծ Վալպարաիսո, Չիլի

Քաջություն, . . . և առա՛ջ, առաջ դեպի հաղթանակ: Թող ձեր սրտերը ցնծան և մեծապես ուրախանան: Թող երկիրը երգով բռնկվի»:¹⁴

Եղբայրներ՝ և քույրեր՝, ես հավատում եմ, որ մի օր ձեր յուրաքանչյուրը հետադարձ հայացք կնետի չեղյալ հայտարարված իրադարձություններին, տխրությանը, հիասթափությանը և միայնությանը, որ զգում ենք այս դժվարին օրերին, տեսնելով դրանք ստվերված ամենաընտիր օրհնություններով և ավելի մեծ հավատով ու վկայություններով: Ես հավատում եմ, որ այս և գալիք կյանքում, ձեր չարչարանքները, ձեր Ամմոնիան և ձեր Լիբերթիի բանտը կնվիրագործվեն ձեր օգտի համար:¹⁵ Ես աղոթում եմ, որ Նեփիի նման մենք էլ կարողանանք մեր օրերի ընթացքում չարչարանքների մեջ նաև գիտակցել, որ մենք մեծապես հովանավորվում ենք Տիրոջ կողմից:

Վերջում ուզում եմ վկայել Հիսուս Քրիստոսի մասին, ով անձամբ

անցավ տառապանքների միջով և որպես իր անսահման Քալության մի մաս՝ իջավ ամեն բանից ցած:¹⁶ Նա հասկանում է մեր վիշտը, ցավը և հուսահատությունը: Նա մեր Փրկիչն է, մեր Քավիչը, մեր հույսը, մեր մխիթարությունը և մեր Ազատիչը: Այս մասին ես վկայում եմ Նրա՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Առաջին Նախագահության նամակ, ապրիլի 16, 2020:
2. Առաջին Նախագահության նամակ, մայիսի 19, 2020:
3. 1 Նեփի 1.1:
4. Տես Գործք Առաքելոց 16.24-33:
5. Գործք Առաքելոց 28.23:
6. Գործք Առաքելոց 28.32:
7. Հելաման 5.30:
8. Ավմա 14.1:
9. Տես Ավմա 14.22:
10. Վարդապետություն և Ուխտեր 122.7:
11. Վարդապետություն և Ուխտեր 122.9:
12. Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիստինա*, նոյեմբեր 2018, 7:
13. Ռասսել Մ. Նելսոն, «Եկեք առաջ շարժվենք», *Լիստինա*, մայիս 2018, 118:
14. Վարդապետություն և Ուխտեր 128.19, 22:
15. Տես 2 Նեփի 2.2:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 122.8:



Միլթոն Կամարզո
Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահության առաջին
խորհրդական

Խնդրեր, փնտրեր և թակեր

Երկնային Հոր ծրագրում կարևոր մաս է հանդիսանում ցանկացած ժամանակ Նրա հետ հաղորդակցվելու հնարավորությունը:

Չորս ամիս առաջ, սուրբ գրությունների իմ ուսումնասիրության ժամանակ, ես կարդում էի Ալմայի միսիայի մասին Ամմոնիայում, երբ ես հանդիպեցի այս առաջարկին *Եկ, հենակիր ինձ* ձեռնարկում. «Երբ կարդաք այն մեծ օրհնությունների մասին, որ Աստված տվել էր Նեփիի ժողովրդին Ալմա 9.19–23), խորհեք այն մեծ օրհնությունների մասին, որ Նա տվել է ձեզ»:¹ Ես որոշեցի Աստծո օրհնությունների մի ցուցակ կազմել ինձ համար և գրանցել դրանք իմ դասագրքի թվային տարբերակում: Բուպեների ընթացքում ես գրեցի 16 օրհնություններ:

Ամենագլխավորը՝ դրանց շարքում էին Փրկիչի ողորմածության և քավիչ գոհաբերության մեծ օրհնությունները ինձ համար: Ես նաև գրեցի այն օրհնության մասին, որ ունեցա՝ ներկայացնելու Փրկիչին որպես երիտասարդ միսիոներ Պորտոգալիայում, իսկ հետո Բրազիլիա Պորտո Ալեգրե Հարավային միսիայում, որտեղ իմ սիրելի հավերժական զուգրուկներ Պատրիցիայի հետ մենք ծառայեցինք 522 հզոր և սքանչելի միսիոներների: Խոսելով Պատրիցիայի

մասին, պետք է ասեմ, որ այդ օրը իմ գրանցած օրհնությունների մեծ մասը այն օրհնություններ են, որոնք մենք միասին վայելել ենք 40 տարիների ամուսնության ընթացքում՝ ներառյալ մեր կնքումը Ման Պաոլո Բրազիլիայի տաճարում, մեր երեք հիանալի երեխաները, նրանց կողակիցները և մեր 13 թոռնիկները:

Իմ մտքերն ուղղվեցին նաև դեպի իմ արդարակյաց ծնողները, ովքեր մեծացրին ինձ ավետարանի սկզբունքներով: Ես հիշեցի հատկապես մի պահ, երբ իմ սիրելի մայրիկը ծնկի իջավ ինձ հետ՝ աղոթելու իմ մահճակալի կողքին, երբ ես մոտ 10 տարեկան էի: Նա պետք է որ զգար, որ եթե իմ աղոթքները պետք է գնային և հասնեին իմ Երկնային Հորը, դրանք պետք է բարելավվեին: Այսպիսով նա ասաց. «Ես առաջինը կաղոթեմ, իսկ իմ աղոթքից հետո դու աղոթիր»: Նա շարունակեց այդ ձևով շատ գիշերներ, մինչև համոզվեց, որ ես սովորել էի սկզբունքով և գործնականում, թե ինչպես խոսելի Երկնային Հոր հետ: Ես հավիտյան երախտապարտ եմ նրան ինձ աղոթել սովորեցնելու

համար, քանի որ իմացա, որ իմ Երկնային Հայրը լսում է իմ աղոթքները և պատասխանում է դրանց:

Փաստորեն, դա մեկ այլ օրհնություն էր, որը ես ներառեցի իմ ցուցակում՝ Տիրոջ կամքը լսել կարողանալու և իմանալու պարզև: Երկնային Հոր ծրագրում կարևոր մաս է հանդիսանում ցանկացած ժամանակ Նրա հետ հաղորդակցվելու հնարավորությունը:

Հրավեր Տիրոջից

Երբ Փրկիչը այցելեց Ամերիկա մայրցամաք Իր Հարությունից հետո Նա կրկնեց մի հրավեր, որը Նա տվել էր Իր աշակերտներին Գալիլեայում: Նա ասաց.

«Խնդրեք, և ձեզ կտրվի փնտրեք, և դուք կգտնեք. թակեք, և ձեզ համար կբացվի»:

Քանզի անեն մեկը, որ խնդրում է, ստանում է, և նա, ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի» (3 Նեփի 14.7–8, տես նաև Մատթեոս 7.7–8):

Մեր մարգարե, նախագահ Ռասսել Մ. Նելսոնը տվել է մի նմանատիպ հրավեր մեր օրերում: Նա ասել է. «Աղոթեք Հիսուս Քրիստոսի անունով ձեր մտահոգությունների, ձեր երկյուղների, ձեր թուլությունների մասին, այո, ձեր սրտի բուն ձգտումների մասին: Իսկ հետո լսե՛ք: Գրեք խոհերը, որոնք ձեր միտքն են գալիս: Գրի առեք ձեր զգացմունքները և հետևեք, որ կատարեք ձեզ հուշված գործողությունները: Երբ կրկնեք այս գործընթացը օրեցօր, ամիս առ ամիս, տարեց տարի, դուք «կաճեք հայտնության սկզբունքի մեջ»:²

Նախագահ Նելսոնը նախագուշացրել է. «Գալիք օրերում հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես սփոփող ազդեցության»:³

Ինչո՞ւ է հայտնությունը այդքան կարևոր մեր հոգևոր գոյատևման համար: Որովհետև աշխարհը կարող է լինել շփոթեցնող և աղմկոտ, լի խաբեությամբ և շեղումներով: Հաղորդակցությունը

մեր Երկնային Հոր հետ հնարավորություն է ընձեռում մեզ տարբերակել, թե ինչն է ճշմարիտ և ինչն է կեղծ, ինչն է համապատասխանում Տիրոջ ծրագրին մեզ համար, և ինչը՝ ոչ: Աշխարհը կարող է լինել նաև կոպիտ և մտահոգիչ: Բայց, երբ մենք բացենք մեր սրտերը աղոթքով, կզգանք հանգստություն, որը գալիս է մեր Երկնային Հորից, և հավաստիացում, որ Նա սիրում և զնահատում է մեզ:

Հարցեր

Տերն ասել է, որ «ամեն խնդրող առնում է»: Խնդրելը թվում է պարզ և, այնուամենայնիվ, այն հզոր է, որովհետև բացահայտում է մեր ցանկությունները և մեր հավատքը: Սակայն, ժամանակ և համբերություն է պահանջվում, որ սովորենք հասկանալ Տիրոջ ձայնը: Մենք ուշադրություն ենք դարձնում մտքերին և զգացումներին, որոնք գալիս են մեր միտքն ու սիրտը, և մենք դրանք գրի ենք առնում՝ ինչպես մեր մարգարեն է խորհուրդ տվել մեզ անել: Ստանալու կարևոր մասն է տպավորությունների արձանագրումը: Այն օգնում է մեզ հիշել, վերանայել և վերզգալ այն, ինչ Տերն է ուսուցանում մեզ:

Վերջերս իմ սիրելի մարդկանցից մեկն ասաց ինձ. «Ես հավատում եմ, որ անձնական հայտնությունը ճշմարիտ է: Հավատում եմ, որ Մուրբ Հոգին ցույց կտա ինձ բոլոր բաները, որ պիտի անեմ»:⁴ Հեշտ է հավատալ, երբ զգում եմ, որ կուրծքս այրվում է չկասկածող համոզմունքով:⁵ Բայց ինչպե՞ս կարող եմ ունենալ Մուրբ Հոգին, որ միշտ խոսի ինձ հետ այս մակարդակում»:

Իմ սիրելիին և ձեզ բոլորիդ, ես կասեի, որ ես ևս կկամենայի անընդհատ զգալ այդ ուժեղ տպավորությունները Հոգուց և միշտ հստակ տեսնել արահետը՝ հետևելու համար: Բայց ես չեմ տեսնում: Սակայն, այն ինչը մենք ավելի հաճախ ենք զգում, Տիրոջ հանդարտ ցածր ձայնն է, որը շնչում է մեր մտքին և սրտին. «Ես այստեղ եմ: Ես սիրում եմ ձեզ: Գնա առաջ,



Լոտուպա, Սամոա

արա այն ամենը ինչ կարող ես: Ես կաջակցեմ քեզ: Միշտ չէ, որ մենք պետք է իմանանք ամեն ինչ կամ տեսնենք ամեն ինչ:

Հանդարտ ցածր ձայնը վերահաստատում է, խրախուսում և հանգստացնում է, և շատ դեպքերում, դա հենց այն է, ինչի կարիքը մենք ունենք այդ օրվա համար: Մուրբ Հոգին իրական է և Նրա տպավորություններն իրական են, ինչպես մեծերը, այնպես էլ փոքրերը:

Փնտրել

Տերը շարունակեց խոստանալ. «Եվ որոնողը գտնում է»: Փնտրելը ներառում է մտավոր և հոգևոր ջանք՝ խորհել, ստուգել, փորձել և ուսումնասիրել: Մենք փնտրում ենք, որովհետև վստահում ենք Տիրոջ խոստումներին: «Որովհետև Աստուծուն մօտեցողը պետք է հաւատայ, թե Նա կայ, եւ թե իրան խնդրողներին վարձահատույց կլինի» (Եբրայեցիս 11.6): Երբ մենք փնտրում ենք, մենք խոնարհաբար ընդունում ենք, որ մենք դեռ շատ

բան ունենք սովորելու, և Տերը կընդարձակի մեր հասկացողությունը՝ մեզ նախապատրաստելով ստանալ ավելի շատ: «Քանզի ահա, այսպես է ասում Տեր Աստված. Ես կտամ մարդկանց զավակներին տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ մի քիչ այնտեղ, . . . քանզի նրան, ով ընդունում է, ես կտամ ավելին» (2 Նեփի 28.30):

Թակեք

Ի վերջո Տերն ասաց. «Եւ դուռը թակողին կ'բացուի»: Թակել նշանակում է գործել հավատքով: Երբ մենք ակտիվորեն հետևում ենք Նրան, Տերը մեր առջև ճանապարհ է բացում: Կա մի գեղեցիկ հիմն, որն ուսուցանում է մեզ «արթնացիր և մի բան ավելի արա, քան երազելը [մեր] ապարանքի մասին վերևում: Բարին գործելը հաճույք է, չափից դուրս ուրախություն, պարտականության և սիրո մի օրհնություն»:⁶ Տասներկու Առաքյալների Քվորումից Գերիթ Վ. Գոնզը վերջերս բացատրեց, որ հայտնությունը հաճախ գալիս



Զայցբուրգ, Ավստրիա

է, երբ մենք բարի գործ անելու ընթացքի մեջ ենք: Նա ասաց. «Երբ մենք փորձում ենք հասնել օգնության՝ ծառայելով նրանց, ովքեր մեր շրջապատում են, կարծում եմ, Տերը տալիս է մեզ Իր սիրուց հավելյալ բաժին նրանց համար և հետևաբար մեզ համար»: Կարծում եմ, մենք լսում ենք Նրա ձայնը, մենք զգում ենք Նրան այլ ձևով, երբ աղոթում ենք՝ օգնելով նրանց, ովքեր մեր շրջապատում են, որովհետև դա այն աղոթքներից մեկն է, որին Նա ամենաշատն է կամենում պատասխանել»:⁷

Ալմայի օրինակը

Այդ հասարակ առաջարկը *Եկ, հետևիր ինձ* ձեռնարկում իմ օրհնությունների մասին մտածելու վերաբերյալ բերեց քաղցր ոգի և մի քանի անսպասելի հոգևոր ներըմբռնումներ: Երբ շարունակեցի կարդալ Ալմայի և Ամմոնիայում նրա ծառայության մասին, ես

հայտնաբերեցի, որ Ալման հիանալի օրինակ է տալիս, այն մասին, թե ինչ է նշանակում խնդրել, փնտրել և թակել: Մենք կարդում ենք, որ «Ալման շատ տքնեց հոգով, գոտեմարտելով Աստծո հետ հզոր աղոթքում, որպեսզի դուրս թափի իր Հոգին ժողովրդի վրա»: Այդ աղոթքի պատասխանը, այնուամենայնիվ, այն ձևով չէր, որ նա հույս ուներ, և Ալման դուրս նետվեց քաղաքից: «Կքված լինելով վշտից», Ալման մոտ էր հանձնվելուն, երբ մի հրեշտակ հանձնեց այս ուղերձը. «Օրհնված ես դու, Ալմա, հետևաբար, բարձրացրու գլուխդ և ուրախացիր, քանզի դու մեծ պատճառ ունես ուրախանալու»: Այնուհետև հրեշտակը պատվիրեց նրան վերադառնալ Ամմոնիա և կրկին փորձել, և Ալման «արագ վերադարձավ»:⁸

Ի՞նչ ենք սովորում Ալմայից՝ խնդրելու, փնտրելու և թակելու մասին: Մենք սովորում ենք, որ

աղոթքը պահանջում է հոգևոր աշխատանք և միշտ չէ, որ առաջնորդում է դեպի այն արդյունքը, որի համար մենք հույս ունենք: Բայց երբ մենք հուսահատված ենք զգում կամ վշտից կռացած, տարբեր ուղիներով Տերը տալիս է մեզ սփոփանք և ուժ: Նա գուցե չպատասխանի մեր բոլոր հարցերին, կամ լուծի մեր բոլոր խնդիրները հենց հիմա, ավելի շուտ Նա խրախուսում է մեզ շարունակել փորձել: Եթե մենք այնուհետև արագ համապատասխանեցնենք մեր ծրագիրը Նրա ծրագրին, Նա մեր առջև ճանապարհ կբացի, ինչպես արեց Ալմայի համար:

Իմ վկայությունն այս է, որ սա ավետարանի լրիվության ժամանակաշրջանն է: Մենք կարող ենք վայելել Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունները մեր կյանքում: Մենք ունենք սուրբ գրությունները, որոնք լայնորեն մատչելի են մեզ համար: Մենք առաջնորդվում ենք մարգարեների կողմից, ովքեր ուսուցանում են մեզ Տիրոջ կամքը դժվարին ժամանակների համար, որոնցում մենք ապրում ենք: Բացի այդ, մենք ուղիղ հասանելիություն ունենք դեպի մեր անձնական հայտնությունը, այնպես որ Տերը կարող է սփոփել և ուղեկցել մեզ անձնապես: Ինչպես հրեշտակն ասաց Ալմային, մենք «մեծ պատճառ ունենք ուրախանալու» (Ալմա 8.15): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկ, հետևիր ինձ՝ անհատների և ընտանիքների համար. Մոլմոնի Գիրք 2020* (2019), 91:
2. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Հիստորիա*, մայիս 2018, 95, մեջբերում *Եկեղեցու Նախագահների Ուսման Կրթություն. Չոզեֆ Սմիթ* (2007), 132:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», 96:
4. Տես 2 Նեփի 32.5:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր: 9.8:
6. «Արդյոք արե՞լ եմ այսօր ես բարիք», *Hymns*, no. 223:
7. «Ինչպե՞ս եմ ես լսում Նրան՝ Երեց Գերիի՞ Վ. Գոնգ» (տեսֆիլմ), ChurchofJesusChrist.org/media:
8. Տես Ալմա 8.10–18:



Երեց Դեյլ Գ. Ռեկլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Իրաւունք անել, ողորմութիւն սիրել, եւ խոնարհութեամբ վարուիլ Աստուծոյ հետ

«Իրավունք անել» նշանակում է պատվով գործել: Մենք պատվում ենք Աստծուն, երբ խոնարհութեամբ ենք վարվում Նրա հետ: Մենք պատվում ենք ուրիշներին, երբ սիրում ենք ողորմությունը:

Որպէս Հիսուս Քրիստոսի հետևորդներ և Վերջին Օրերի Սրբեր, մենք ձգտում ենք, և մեզ խրախուսում են ձգտել ավելի լավ գործել և ավելի լավ լինել:¹ Հավանաբար դուք, ինչպէս ես, խորհել եք, «Արդյո՞ք ես բավարար ջանքեր եմ գործադրում»: «Ուրիշ ի՞նչ կարող եմ անել» կամ «Ես, որպէս անկատար էակ, ինչպէս կարող եմ որակվել «բնակվել[ու] Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում»:²

Հին Կտակարանի մարգարե Միքիան հարցը ձևակերպել է այսպէս. «Ես ի՞նչով դիմատրեմ Տիրոջը, ընկնեմ Բարձրեալ Աստուծոյ առաջին»:³ Միքիան զավեշտով մտածում էր՝ գուցէ հենց մեծաթիվ զոհաբերությունները բավարար լինեն մեղքը փոխհատուցելու համար, ասելով. «Մի՞թէ Տէրը կհաճի հազարատու խոյերի, կամ


բիրատու իղի գետերի. Արդե՞օք իմ անդրանիկը տամ . . . իբրեւ իմ անձի մեղքի զոհ . . . »:⁴

Պատասխանն է՝ ոչ: Լավ գործերը բավարար չեն: Փրկությունը չեն վաստակում:⁵ Միքիան գիտեր, որ նույնիսկ ամենամեծ զոհաբերություններն անգամ չեն կարող փրկագնել ամենափոքր մեղքը: Երբ ապավինում ենք սեփական հնարավորություններին՝ Աստծո մոտ վերադառնալու և Նրա հետ ապրելու հեռանկարն անհուսալի է դառնում:⁶

Առանց Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի օրհնությունների՝ մենք երբեք չենք կարող ինքներս բավականաչափ անել կամ լինել: Բարի յուրը, ինչևէ, այն է, որ Հիսուս Քրիստոսի շնորհիվ և միջոցով մենք կարող ենք դառնալ բավականաչափ լավը:⁷ Բոլոր մարդիկ կփրկվեն ֆիզիկական

մահից Աստծո շնորհով՝ Հիսուս Քրիստոսի մահվան և Հարության միջոցով:⁸ Եվ եթէ մենք մեր սրտով դառնանք առ Աստված, հոգևոր մահից փրկվելը հնարավոր կլինի բոլորի համար «[Հիսուս] Քրիստոսի Քավության շնորհիվ . . . հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»:⁹ Մենք կարող ենք փրկագնվել մեղքից՝ անբիծ ու անարատ կանգնելու Աստծո առաջ: Ինչպէս բացատրել է Միքիան՝ «[Աստված] քեզ յայտնել է, ով մարդ, թէ ինչ է բարին. Եւ Տէրը ի՞նչ է ուզում քեզանից, այլ միայն իրաւունք անել, ողորմութիւն սիրել, եւ խոնարհութեամբ վարուիլ քո Աստուծոյ հետ»:¹⁰

Առ Աստված մեր սիրտը դարձնելու և փրկությանը արժանի դառնալու Միքիայի ուղին պարունակում է երեք փոխկապակցված տարրեր: *Իրաւունք անել* նշանակում է պատվել Աստծուն և այլ մարդկանց: Մենք պատվում ենք Աստծուն, երբ խոնարհութեամբ ենք վարվում Նրա հետ: Մենք պատվում ենք ուրիշներին, երբ սիրում ենք ողորմությունը: Հետևաբար, *իրաւունք անելը* առաջին և երկրորդ մեծ պատվիրանների գործնական կիրառում է՝ «Միբիր Տիրոջը քո Աստծուն քո ողջ սրտով, և քո ողջ հոգով և քո



Սան Լուկաս Սակատեպեքվես, Գվատեմալա

ողջ մտքով, . . . [և] սիրիր քո ընկերին քո անձի պես»:¹¹

«Իրախոնք անել և խոնարհություն և վարձույթ Աստուծոյ հետ» նշանակում է՝ միտումնավոր կերպով հեռացնել մեր ձեռքն անօրինությունից, գնալ Նրա օրենքներով և իսկապես հավատարիմ մնալ:¹² Արդար մարդը շրջվում է մեղքից և դառնում Աստծուն, ուխտեր է կապում Նրա հետ և պահում այդ ուխտերը: Արդար մարդն ընտրում է հնազանդվել Աստծո պատվիրաններին, ապաշխարում է սխալվելիս և շարունակում է փորձել:

Երբ հարություն առած Քրիստոսն այցելեց նեփիացիներին, Նա բացատրեց, որ Մովսեսի օրենքը փոխարինվել էր ավելի բարձր օրենքով: Նա հրահանգեց նրանց, որ «այլ . . . չպետք է մատուցեն . . . զոհեր և ողջակեզներ», այլ մատուցեն «կոտրված սիրտ և փշրված հոգի»: Նա նաև խոստացավ. «Եվ ով որ գալիս է ինձ մոտ կոտրված սրտով և փշրված հոգով, նրան ես կմկրտեմ կրակով և Մուրբ Հոգով»:¹³ Երբ մկրտվելուց հետո մենք ստանում և օգտագործում ենք Մուրբ Հոգու պարզեր, մենք կարող ենք վայելել Մուրբ Հոգու մշտական ընկերակցությունը և ուսուցանվել բոլոր բաները, որ մենք պետք է անենք,¹⁴ ներառյալ, թե ինչպես խոնարհաբար քայլել Աստծո հետ:

Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը մեղքի համար և փրկությունը հոգևոր մահից հասանելի են նրանց համար, ովքեր ունեն կոտրված սիրտ և փշրված հոգի:¹⁵ Կոտրված սիրտը և փշրված հոգին հուշում են մեզ ուրախությամբ ապաշխարել և փորձել ավելի նմանվել մեր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Երբ մենք դա անում ենք, ստանում ենք Փրկիչի մաքրագործող, բժշկող և ամրացնող զորությունը: Մենք ոչ միայն «իրավունք ենք անում և խոնարհությամբ վարվում Աստծո հետ», այլ նաև սովորում ենք ողորմություն սիրել այնպես, ինչպես Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը:

Աստված ողորմած է և ուրախանում է ողորմածությամբ: Համաձայն Եհովային ուղղված Միքիայի խոսքերի՝ «Ո՞վ է Աստուած քեզ նման, անօրէնութիւն վեր առնող, . . . մեզ պիտի ողորմէ» և «բոլոր մեղքերը . . . կզցես ծովի խորքերը»:¹⁶ Աստծո նման ողորմություն սիրելը անքակտելիորեն կապված է ուրիշների հետ արդարությամբ վարվելու և նրանց հետ վատ չվերաբերվելու հետ:

Ուրիշների հետ վատ չվերաբերվելու կարևորությունն ընդգծվում է հրեա գիտնական Հիլելի մասին մի ակնարկում, ով ապրել է Քրիստոսից առաջ առաջին դարում: Հիլելի ուսանողներից մեկին նյարդայնացնում էր Թորայի բարդությունը՝ Մովսեսի հինգ գրքերն իրենց 613 պատվիրաններով և ռաբիի մեկնաբանություններով: Ուսանողը մարտահրավեր նետեց Հիլելին, որ բացատրի Թորան այնքան ժամանակում, որքան Հիլելը կարող էր կանգնել մեկ ոտքի վրա: Հիլելը գուցե չունէր գերազանց հավասարակշռություն, սակայն ընդունեց մարտահրավերը: Նա մեջբերում կատարեց Ղևտացոց գրքից, ասելով. «Վրեժ չառնես, եւ քո ժողովրդի որդիներին ոխ չպահես, այլ քո ընկերին սիրես քո անձի պէս. ես եմ Եհովան»:¹⁷ Ապա Հիլելը եզրակացրեց. «Այն, ինչն ատելի է քեզ համար, մի՛ արա քո հարևանի նկատմամբ: Դա է ամբողջ Թորան. մնացածը մեկնաբանություններ են: Գնա և սովորիր»:¹⁸

Ուրիշների հանդեպ միշտ հարգալից լինելը ողորմություն սիրելու մի մասն է: Խորհեք մի գրույցի շուրջ, որը լսել եմ տասնամյակներ առաջ Միացյալ Նահանգների Բալթիմոր քաղաքի (Մերիլենդ) Ջոնս Հոֆֆինսի հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքում: Հիվանդը՝ պարոն Ջեքսոնը, քաղաքավարի, հաճելի մարդ էր, ում լավ էր ճանաչում հիվանդանոցի անձնակազմը: Նախկինում նա բազմիցս հոսպիտալացվել էր պլոնոլիվամի հետ կապված հիվանդությունների

բուժման համար: Այս անգամ պարոն Ջեքսոնը վերադարձել էր հիվանդանոց նախանշաններով, որոնք ախտորոշվեցին որպես ենթաստամոքսային գեղձի բորբոքում՝ ալկոհոլի ազդեցության պատճառով:

Իր հերթափոխի ավարտին աշխատասեր և հարգարժան բժիշկ Քոհենը քննեց պարոն Ջեքսոնին և հաստատեց, որ հոսպիտալացումը ճիշտ որոշում է: Բժիշկ Քոհենը հանձնարարեց բժիշկ Ջոնսին՝ հերթափոխի հաջորդ բժշկին, ընդունել պարոն Ջեքսոնին և վերահսկել նրա բուժումը:

Բժիշկ Ջոնսը ավարտել էր հեղինակավոր բժշկական համալսարան և նոր էր սկսում իր ուսումը ասպիրանտուրայում: Այս հոգնեցուցիչ պարապմունքները հաճախ պահանջում էին անքուն գիշերներ, ինչը, հավանաբար, նպաստեց բժիշկ Ջոնսի բացասական արձագանքին: Գիշերվա ընթացքում ընդունելով հինգերորդ հիվանդին՝ նա բարձրաձայն բողոքեց բժիշկ Քոհենին: Նա կարծում էր, որ անարդար է, որ ինքը ստիպված է շատ ժամեր ծախսել պարոն Ջեքսոնի մասին հոգ տանելու համար, քանի որ, ի վերջո, իր ծանր վիճակի մեղավորը հենց ինքն էր:

Բժիշկ Քոհենի ընդգծված պատասխանը գրեթե շուկով արտասանվեց: Նա ասաց. «Բժիշկ Ջոնս, դուք բժիշկ եք դարձել, որպեսզի հոգ տանեք մարդկանց մասին և աշխատեք բուժել նրանց: Դուք բժիշկ չեք դարձել նրանց քննադատելու համար: Եթե չեք հասկանում դրանց տարբերությունը, դուք իրավունք չունեք աշխատելու այս հաստատությունում»: Այդ ուղղումից հետո բժիշկ Ջոնսը հոսպիտալացման ընթացքում ջանասիրաբար հոգ էր տանում պարոն Ջեքսոնին:

Պարոն Ջեքսոնը շուտով մահացավ: Թե՛ բժիշկ Ջոնսը և թե՛ բժիշկ Քոհենը հաջողակ կարիերա ունեցան: Բայց իր ուսուցման վճռական պահին բժիշկ Ջոնսին հարկավոր էր

հիշեցում, որ «իրավունք անի, ողորմություն սիրի» և հոգ տանի պարոն Զեքսոնի մասին՝ առանց քննադատելու:¹⁹

Տարիների ընթացքում ես օգուտ եմ քաղել այդ հիշեցումից: Ողորմություն սիրել նշանակում է, որ մենք ոչ միայն սիրում ենք ողորմությունը, որն Աստված շնորհում է մեզ. մենք ուրախանում ենք, երբ Աստված նույն ողորմությունն է շնորհում ուրիշներին: Եվ մենք հետևում ենք Նրա օրինակին: «Բոլորը նույնն են Աստծո համար»²⁰ և բոլորիս անհրաժեշտ է հոգևոր հոգաձություն, որպեսզի օգնեն մեզ և բժշկեն:

Տերն ասել է. «Դուք մի մարմին չպիտի բարձր համարեք մեկ ուրիշից, կամ մարդ չպիտի իրեն բարձր համարի մեկ ուրիշից»:²¹

Հիսուս Քրիստոսն Իր օրինակով ցուց տվեց, թե ինչ է նշանակում իրավունք անել և ողորմություն սիրել: Նա ազատ շփվում էր մեղավորների հետ՝ պատվելով նրանց և հարգանք ցուցաբերելով: Նա ուսուցանեց Աստծո պատվիրանները պահելու ուրախության մասին և ձգտել բարձրացնել նրանց, այլ ոչ թե դատապարտել նրանց, ովքեր մաքառումների մեջ էին: Նա դատապարտում էր նրանց, ովքեր մեղադրում էին Նրան՝ իրենց կարծիքով անարժաններին ծառայելու համար:²² Նման ինքնարդարացումը հաճելի չէր Նրան և մինչ օրս էլ հաճելի չէ:²³

Քրիստոսանման լինելու համար մարդը պետք է «իրավունք անի», պատվի թե՛ Աստծուն և թե՛ այլ մարդկանց: Արդար մարդը քաղաքավարի խոսք և վարք ունի, նաև գիտակցում է, որ հայացքների կամ համոզմունքների տարբերությունները չեն բացառում բարյացակամությունն ու անկեղծ ընկերությունը: Անհատները, ովքեր «իրավունք են անում», «մեկը մյուսին վնասելու միտք չեն ունենա, այլ խաղաղությամբ ապրելու»²⁴ միմյանց հետ:

Քրիստոսանման լինելու համար մարդը սիրում է

ողորմությունը: Ողորմություն սիրող մարդիկ չեն դատում ուրիշներին. նրանք կարեկցանք են դրսևորում ուրիշների հանդեպ, հատկապես նրանց, ովքեր ավելի քիչ հաջողակ են. նրանք ողորմած են, բարի և հարգալից: Այս անհատները սիրով և ըմբռնումով են վերաբերվում յուրաքանչյուրին, հաշվի չառնելով ռասան, սեռը, կրոնական պատկանելությունը, սեռական կողմնորոշումը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և ցեղային, տոհմական կամ ազգային տարբերությունները: Դրանց փոխարինում է Քրիստոսանման սերը:

Քրիստոսանման լինելու համար մարդն ընտրում է Աստծուն,²⁵ խոնարհությամբ է վարվում Նրա հետ, ձգտում է գոհացնել Նրան և պահում Նրա հետ կապած ուխտերը: Աստծո հետ խոնարհությամբ վարվողները հիշում են, թե Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսն ինչ են արել իրենց համար:

Արդյո՞ք ես բավարար ջանքեր եմ գործադրում: Ուրիշ ի՞նչ կարող եմ անել: Գործողությունը, որը մենք անում ենք ի պատասխան այս հարցերի, կարևոր դեր ունի այս կյանքում և հավերժության մեջ մեր երջանկության համար: Փրկիչը չի ցանկանում, որ մենք սխալ ընկալենք փրկությունը: Նույնիսկ սրբազան ուխտեր կապելուց հետո հնարավոր է «շնորհից ընկնել և հեռանալ կենդանի Աստծուց»: Ուստի մարդը պետք է «զգուշանա և միշտ աղոթի», որպեսզի «զայթակղության մեջ» չընկնի:²⁶

Միևնույն ժամանակ, մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը չեն ցանկանում, որ անընդհատ անորոշ վիճակում լինելը մեզ շեղի մեր մահկանացու ճամփության ընթացքում, մտածելով, թե արդյո՞ք մենք բավարար ջանքեր ենք գործադրել փրկվելու և վեհացվելու համար: Նրանք, անկասկած, չեն ցանկանում, որ մեզ տանջեն սխալները, որոնց համար մենք զղջացել ենք,



Չիբա, Ճապոնիա

կարծելով, որ դրանք վերքեր են, որոնք երբեք չեն ապաքինվում,²⁷ կամ չափազանց վախենալ, որ մենք կարող ենք նորից սայթաքել:

Մենք կարող ենք գնահատել մեր սեփական առաջընթացը: Մենք կարող ենք իմանալ, որ «կյանքի ընթացքը [որին մենք հետևում ենք] Աստծո կամքին համապատասխան է»,²⁸ երբ մենք «իրավունք ենք անում, ողորմություն սիրում և խոնարհությամբ վարվում» մեր Աստծո հետ: Մենք ձուլում ենք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հատկությունները մեր բնավորության մեջ և սիրում ենք միմյանց:

Երբ դուք անեք այդ բաները, դուք կհետևեք ուխտի արահետին և արժանի կղաճնաք «բնակվել Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում»:²⁹ Ձեր հոգիները կլցվեն Աստծո փառքով և հավիտենական կյանքի լույսով:³⁰ Դուք կլցվեք անսահման ուրախությամբ:³¹ Ես վկայում եմ, որ Աստված ապրում է և, որ Հիսուսը Քրիստոսն է, մեր Փրկիչը և Քավիչը, ով սիրով և ուրախությամբ ողորմում է բոլորին: Արդյո՞ք դա հիանալի չէ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Մենք կարող ենք ավելի լավ գործել և ավելի լավ լինել», *Լիսինա*, մայիս, 2019, 67-69:
2. Մոսիա 2.41:
3. Միքիա 6.6:
4. Միքիա 6.7:
5. Տես Եփեսացիս 2.8; 2 Նեփի 31.19; Ալմա 22.14; 42.14; 3 Նեփի 18.32; Մորոնի 6.4; Վարդապետություն և Ուխտեր 3.20:
6. Տես 3 Նեփի 27.19:
7. Տես Ալմա 41.8; Մորոնի 10.32-33:
8. Տես Ա Կորնթացիս 15.22; Ալմա 11.42-45:
9. Հավատո Հանգանակ 1.3
10. Միքիա 6.8, տես նմանատիպ խրատներ. Ալմա 41.14, Վարդապետություն և Ուխտեր 11.12, Հավատո Հանգանակ 1.13:
11. Տես Մատթեոս 22.35-40: Առաջին և երկրորդ մեծ պատվիրանների շուրջ քննարկման համար տես. Russell M. Nelson, "Teach Us Tolerance and Love," *Ensign*, May 1994, 69-71, Դավիթ Հ. Օուքս, «Երկու մեծ պատվիրանները», *Լիսինա*, նոյեմբեր 2019, 73-76:
12. Տես Եզեկիել 18.8-9:
13. 3 Նեփի 9.19-20, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 59.8:
14. Տես 2 Նեփի 32.5:
15. Տես 2 Նեփի 2.7:
16. Միքիա 7.18-19
17. Ղևտացոց 19.18
18. Տես Babylonian Talmud, Shabbat 31a:6; տես նաև jewishvirtuallibrary.org/rabbi-hillel-quotes-on-judaism-and-israel: Ուշագրավ է, որ Հիլել Երեցը Գամաղիելի պապն էր, որի մասին նշված է Գործք Առաքելոց 5.34-ում: Գամաղիելը Տարսուսցի Պողոսի ուսուցիչն էր: Isidore Singer, ed., *The Jewish Encyclopedia* (1903), "Gamaliel I," 5:558-59.
19. Պարոն Ջեքսոնի, բժիշկ Քոհենի և բժիշկ Ջոնսի անունները մտացածին են:
20. 2 Նեփի 26.33:
21. Մոսիա 23.7:
22. Joseph Smith, "History, 1838-1856, volume D-1 [1 August 1842-1 July 1843]," 1459, josephsmithpapers.org.
23. Տես Ղուկաս 15.1-2:
24. Մոսիա 4.13:
25. Տես Մովսես 7.33:
26. Վարդապետություն և Ուխտեր 20.32-34:
27. Տես Բոյդ Ք.Փաքեր, «Երջանկության Օրագիրը», *Լիսինա*, մայիս 2015, 28: Նախագահ Փաքերն ասել է. «Երբ ապաշխարության գործընթացն ավարտվում է, ոչ մի սպի չի մնում Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: . . . Քավությունը . . . կարող է մաքուր վիճակում ամեն բիծ, անկախ նրանից, թե որքան դժվար, որքան երկար կամ որքան է կրկնվել: Քավությունը կարող է ձեզ ազատ դարձնել կրկին առաջ շարժվելու, մաքրությամբ և արժանավորությամբ, հետամուտ լինելով այն ուղուն, որ դուք ընտրել եք կյանքում»:
28. *Lectures on Faith* (1985), 38.
29. Մոսիա 2.41:
30. Տես Ալմա 19.6:
31. Տես Վարդապետություն և Ուխտեր 11.13:



Երեց Քելլի Ռ. Ջոնսոն
Յոթնասունից

Համբերության գործությունը

Միայն հավատքն ու Աստծո խոսքը, որոնք լցնում են մեր հոգին ներքուստ, բավարար են մեզ օգնելու և թույլ տալու, որ ունենանք Նրա գործությունը:

Վերընթերցելով մեր սիրելի մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի ուսմունքները, ես գտա մի բան, որը նա հաճախ է օգտագործել շատ ելույթներում: Այդ բանը *գոյությունն է*:

Առաքյալ հաստատվելուց հետո առաջին գերագույն համաժողովում Նախագահ Նելսոնը խոսել է գործության մասին:¹ Տարիների ընթացքում նա շարունակել է ուսուցանել, թե ինչ է գործությունը: Մկսած այն պահից, երբ մենք հաստատել ենք Նախագահ Նելսոնին որպես մեր մարգարե, նա ուսուցանել է գործության սկզբունքը, մասնավորապես՝ Աստծո գործության, և թե ինչպես այն կարող է հասանելի լինել մեզ համար: Նա ուսուցանել է, թե ինչպես կարող ենք ապավինել Աստծո գործությանը, երբ ուրիշների ենք ծառայում,² ինչպես է ապաշխարությունը մեր կյանք հրավիրում Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության գործությունը,³ և ինչպես է քահանայությունը՝ Աստծո գործությունն ու իշխանությունը, օրհնում բոլորին, ովքեր Նրա հետ ուխտեր են կապում և պահում:⁴ Նախագահ Նելսոնը վկայել է, որ Աստծո գործությունը հորդում

է նրանց վրա, ովքեր օժտվել են տաճարում և պահում են իրենց ուխտերը:⁵

Ինձ հատկապես հուզեց այն մարտահրավերը, որը Նախագահ Նելսոնը հնչեցրեց 2020 թվականի ապրիլի գերագույն համաժողովում: Նա հրահանգեց մեզ. «Ուսումնասիրեք և աղոթեք, որպեսզի ավելին իմանաք այն գործության և գիտելիքի մասին, որոնցով օժտվել եք, կամ որոնցով դեռ կօժտվեք»:⁶

Այս մարտահրավերին արձագանքելով՝ ես ուսումնասիրել, աղոթել և իմացել եմ որոշ օգտակար բաներ այն գործության և գիտելիքների մասին, որոնցով ես օժտվել եմ, կամ՝ դեռ կօժտվեմ:

Հեշտ չէ հասկանալ, թե մենք ինչ պետք է անենք, որպեսզի ունենանք Աստծո գործությունը մեր կյանքում, բայց ես հասկացել եմ, որ դա հնարավոր է՝ ուսումնասիրելով այն մեր մտքում և աղոթելով, որ Մուրբ Հոգին լուսավորի մեզ:⁷ Երեց Ռիչարդ Գ. Մքոթը հստակ ասումնալ է, թե որն է Աստծո գործությունը. դա «գործություն է՝ անելու ավելին, քան մենք կարող ենք անել ինքներս»:⁸

Մեր սիրտը և նույնիսկ հոգին Աստծո խոսքով լցնելը, ինչպես նաև Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի հիմքն ունենալն էական է, որպեսզի կարողանանք օգտվել Աստծո զորությունից, որը կօգնի մեզ այս դժվար ժամանակներում: Եթե Աստծո խոսքը և Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը չտանենք մեր սրտի խորքը, մեր վկայությունները և հավատքը կարող են ձախողվել, և մենք կարող ենք գրկվել այն զորությունից, որն Աստված ուզում է մեզ տալ: Մակերեսային հավատքը բավարար չէ: Միայն հավատքն ու Աստծո խոսքը, որոնք լցնում են մեր հոգին ներքուստ, բավարար են մեզ օգնելու և թույլ տալու համար, որ ունենանք Նրա զորությունը:

Մեր երեխաներին դաստիարակելիս ես և քույր Ջոնսոնը նրանց քաջալերեցինք, որ սովորեն նվազել որևէ երաժշտական գործիք: Բայց մենք երեխաներին ասացինք, որ թույլ կտանք հաճախել երաժշտության դասերին միայն այն դեպքում, եթե իրենք էլ կատարեն իրենց բաժինը և ամեն օր պարապեն գործիքով: Մի շաբաթ օր մեր դուստրը՝ Ջեյլինը, ոգևորված էր, քանի որ գնալու էր իր ընկերների հետ խաղալու, սակայն նա դեռ չէր պարապել դաշնամուրի դասը: Քանի որ պարտավորվել էր 30 րոպե պարապել, նա որոշեց ժամաչափ դնել, որովհետև չէր ուզում պարապել պահանջվածից նույնիսկ մեկ րոպե ավել:

Դաշնամուրին մոտենալիս, երբ անցնում էր միկրոալիքային վառարանի կողքով, նա կանգ առավ և մի քանի կոճակ սեղմեց: Բայց ժամաչափը դնելու փոխարեն, նա ծրագրավորեց միկրոալիքային վառարանի 30 րոպե եփելու կոճակը և սեղմեց «Մկիզբ»: Մոտ 20 րոպե պարապելուց հետո նա գնաց խոհանոց՝ ստուգելու, թե որքան ժամանակ է մնացել և տեսավ, որ միկրոալիքային վառարանը վառվում է:

Ապա նա վազեց դեպի բակ, որտեղ ես աշխատում էի՝ բղավելով, որ տունն այրվում է: Ես արագ



Կուլյա Լուսպուր, Մալայզիա

վազեցի տուն և, իրոք՝ միկրոալիքային վառարանը բոցավառվում էր:

Տունն այրվելուց փրկելու ջանքերում ես հոսանքից անջատեցի միկրոալիքային վառարանը, և հոսանքալարից քաշելով, հեռացրի այրվող վառարանը սեղանի վրայից: Հույս ունենալով հերոսանալ և փրկել օրն ու մեր տունը, ես հոսանքալարի օգնությամբ շրջանաձև պտտում էի բոցավառվող վառարանը, որ այն հեռու մնա իմ մարմնից, ապա հասնելով բակ, մեկ այլ ճոճող շարժումով նետեցի այն դեպի մարզերը: Այնտեղ, մենք կարողացանք ջրով մարել կրակը:

Ի՞նչն այնպես չզնայ: Միկրոալիքային վառարանն էներգիա կլանելու համար ինչ-որ բանի կարիք ունի, և երբ ներսում ոչինչ չկա դրված, վառարանը կլանում է սեփական էներգիան, տաքանում է, և կարող է բռնկվել՝ ինքնառջնաձևալով կրակի ու մոխրի կույտի մեջ:⁹ Մեր միկրոալիքային վառարանը բռնկվեց և այրվեց, քանի որ ներսում ոչինչ չկար դրված:

Նմանապես, այն մարդիկ, ովքեր իրենց սրտի խորքում ունեն հավատք և Աստծո խոսքը, կկարողանան կլանել ու հաղթահարել կրակոտ նետերը, որոնք հակառակորդը հաստատ կուղարկի՝

մեզ ոչնչացնելու համար:¹⁰ Հակառակ դեպքում, մեր հավատը, հույսը և համոզմունքը կարող են չդիմանալ, և մենք կարող ենք գոհ դառնալ, դատարկ միկրոալիքային վառարանի նման:

Ես հասկացել եմ, որ Աստծո խոսքն իմ հոգու խորքում ունենալը, զուգորդված Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ հավատքով, թույլ է տալիս ինձ ապավինել Աստծո զորությանը՝ հաղթահարելու հակառակորդին և այն ամենը, ինչ նա կարող է նետել ինձ վրա: Դժվարությունների հանդիպելիս մենք կարող ենք ապավինել Տիրոջ խոստմանը, որ ուսուցանել է Պողոսը. «Աստուած չ'տուաւ մեզ երկչոտութեան հոգի, այլ զօրութեան եւ սէրի եւ զգաստութեան»:¹¹

Մենք գիտենք, որ մանուկ հասակում Փրկիչը «աճում էր եւ զօրանում հոգիով՝ իմաստութիւնով լցուած. Եւ Աստուծոյ շնորհքը նորա վերայ էր»:¹² Մենք գիտենք, որ երբ մեծացավ, «Հիսուսը զարգանում էր իմաստութիւնով և հասակով, և շնորհքով՝ Աստուծոյ և մարդկանց մոտ»:¹³ Եվ մենք գիտենք, որ երբ Նրա ծառայությունը սկսվեց, Նրան լսողները «զարմանում էին նորա վարդապետութեան վերայ, որ նորա խօսքը իշխանութիւնով էր»:¹⁴

Պատրաստվելու միջոցով Փրկիչը անեց զորությամբ և կարողացավ դիմակայել սատանայի բոլոր գայթակղություններին:¹⁵ Երբ հետևում ենք Փրկիչի օրինակին և պատրաստվում՝ ուսումնասիրելով Աստծո խոսքը և խորացնելով մեր հավատքը, մենք նույնպես կարող ենք ապավինել Աստծո զորությանը՝ գայթակղություններին դիմակայելու համար:

Ժողովների սահմանափակումների այս ժամանակահատվածում, երբ անհնար է տաճարի կանոնավոր այցելությունը, ես իրականում որոշել եմ, որ շարունակեմ ուսումնասիրել և ավելին իմանալ Աստծո զորության մասին, որը ստանում ենք, երբ տաճարային ուխտեր ենք կապում և պահում: Ինչպես խոստացված է Կիրթլենդի տաճարի նվիրագործման աղոթքում, մենք տաճարից դուրս ենք գալիս՝ զինված Աստծո զորությամբ:¹⁶ Սպառման ժամկետ չկա այն զորության համար, որն Աստված տալիս է նրանց, ովքեր կապում և պահում են տաճարային ուխտեր, ոչ էլ կա որևէ սահմանափակում՝ համավարակի ընթացքում այդ զորությունից օգտվելու համար: Նրա զորությունը նվազում է մեր կյանքում միայն այն դեպքում, երբ մենք թերանում ենք պահել մեր ուխտերը և չենք ապրում այնպես, որ շարունակաբար արժանի լինենք ստանալ Նրա զորությունը:

Երբ ես և իմ սիրելի կինը ծառայում էինք որպես միսիայի ղեկավարներ Թաիլանդում, Լաոսում և Մյանմայում, մենք անմիջական ականատեսները եղանք Աստծո զորության, որը ստանում են նրանք, ովքեր տաճարում սուրբ ուխտեր են կապում և պահում: Տաճարի այցելուների օգնության ֆոնդը հնարավորություն տվեց, որ այս երեք երկրների սրբերից շատերը այցելեն տաճար՝ անձնական զոհաբերության և նախապատրաստության միջոցով հնարավոր ամեն բան անելուց հետո: Ես հիշում եմ, որ Թայլանդի

Բանգկոկի օդանավակայանում հանդիպեցինք լաոսցի 20 հավատարիմ սրբերից կազմված խմբի հետ, որպեսզի օգնեինք նրանց տեղափոխվել Բանգկոկի մեկ այլ օդանավակայան՝ դեպի Հոնկոնգ թռչելու համար: Այս անդամներն այնպիսի ոգևորությամբ էին լցված, քանի որ վերջապես գնալու էին Տիրոջ տուն:

Երբ մենք հանդիպեցինք այս բարի սրբերին վերադարձի ժամանակ, ակնհայտ ավելացել էր ավետարանի հետ կապված հասունությունը և այն զորությունը, որը կապված էր իրենց տաճարային օժտումը ստանալու և Աստծո հետ ուխտեր կապելու հետ: Այս սրբերը միանշանակ դուրս էին ելել տաճարից «Նրա զորությամբ զինված»:¹⁷ Այս զորությունը՝ անելու ավելին, քան նրանք կարող էին անել, նրանց ուժ տվեց դիմանալու իրենց հայրենի երկրում Եկեղեցու անդամության մարտահրավերներին և առաջ շարժվել, «չափազանց մեծ և փառավոր ավետիք տանել, ճշմարտությամբ»,¹⁸ Տիրոջ արքայությունը Լաոսում կառուցելու ճանապարհին:

Այն ժամանակ, երբ մենք չէինք կարող այցելել տաճար, արդյո՞ք յուրաքանչյուրս ապավինել ենք տաճարում կապած ուխտերին՝ մեր կյանքում հստակ, անփոփոխ ուղղություն սահմանելու համար: Այս ուխտերը, եթե պահվեն, մեզ տեսլական և սպասումներ են տալիս ապագայի վերաբերյալ և հստակ վճռականություն՝ արժանի լինել ստանալու այն ամենը, ինչ Տերը խոստացել է մեր հավատարմության դեպքում:

Ես հրավիրում եմ ձեզ փնտրել այն զորությունը, որն Աստված ցանկանում է տալ ձեզ: Ես վկայում եմ, որ ձգտելով ունենալ այս զորությունը, մենք կօրհնվենք՝ ավելի լավ հասկանալով այն սերը, որը մեր Երկնային Հայրը տաժում է մեր հանդեպ:

Ես վկայում եմ, որ քանի որ Երկնային Հայրը սիրում է ինձ և ձեզ, Նա ուղարկել է Իր սիրելի

Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ լինի մեր Փրկիչը և Քավիչը: Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի մասին, Նրա, ով ունի ողջ զորությունը,¹⁹ և դա անում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. See Russell M. Nelson, “Protect the Spiritual Power Line,” *Ensign*, Nov. 1984, 30-32.
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ապաստվորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», *Լիսինուս*, մայիս 2018, 68-75:
3. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ամփոփիչ ելույթ», *Լիսինուս*, մայիս 2019, 112:
4. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ապաստվորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», 68-69:
5. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Առաջ գնացեք հավատքով», *Լիսինուս*, մայիս 2020, 115:
6. Ռասսել Մ. Նելսոն, «Առաջ գնացեք հավատքով», 115:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 9.7-9:
8. Ռիչարդ Գ. Սքոթ, «Տան խաղաղության համար», *Լիսինուս*, մայիս 2013, 30:
9. «Միկրոալիքային վառարանում սնունդը կամ հեղուկները տաքացնելու համար օգտագործվում են միկրոալիքային վառարանի ձայնային էներգիայի ալիքները: Այս ալիքները կլանելու համար միկրոալիքային վառարանում պետք է ինչ-որ բան լինի: Հակառակ դեպքում, միկրոալիքային վառարանը փոխարենը կլանի ալիքները: Ալիքները տաքացնելու են միկրոալիքային վառարանի խոհանոցային խցիկը՝ փորձելով գտնել ինչ-որ բան կլանելու համար: Ալիքներն, ի վերջո, կհասնեն միկրոալիքային վառարանի մագնետրոնին, որը միկրոալիքային վառարանի աղբյուրն է: Մագնետրոնը չի կարող կառավարել հսկայական էներգիա, ուստի այն շարունակում է ուղարկել այն միկրոալիքային վառարանի այլ մասեր: Միկրոալիքային վառարանը, որի մեջ ոչինչ չկա, կվնասի մագնետրոնը և միկրոալիքային վառարանի մյուս մասերը: Վատագույն սցենարում միկրոալիքային վառարանի մասերը գերտաքացվելու են և հնարավոր է՝ վառվեն»: (Abacus Appliance Service Corporation, “Will I Destroy My Microwave If It Runs Empty?” Aug. 16, 2012, abacusappliance.com; see also Julie R. Thomson, “13 Things You Should Never Put in the Microwave,” June 13, 2014, huffpost.com).
10. Տես 1 Նեփի 15.24:
11. Բ Տիմոթեոս 1.7:
12. Ղուկաս 2.40:
13. Ղուկաս 2.52;
14. Ղուկաս 4.32:
15. Տես Մատթեոս 4.1-11, Ղուկաս 4.1-14, Վարդապետություն և Ուխտեր 20.22:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.22:
17. Վարդապետություն և Ուխտեր 109.22:
18. Վարդապետություն և Ուխտեր 109.23:
19. Տես Մատթեոս 28.18:



Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տիրոջ ապավինողները

Հավատալ՝ նշանակում է վստահել Աստծուն լավ և վատ ժամանակներում, եթե նույնիսկ դա ներառում է որոշ տառապանք, մինչև որ կտեսնենք մեզ համար Նրա բացահայտվող բազուկը:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մենք բոլորս անհամբեր սպասում ենք, և ես առավել ևս, լսելու մեր սիրելի մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի եզրափակիչ ելույթը: Մա հրաշալի համաժողով էր, սակայն երկրորդ անգամն է, որ COVID-19 համավարակը փոխեց մեր ավանդական հավաքի ձևը: Մենք այնքան ենք հոգնել այս վարակից, որ պատրաստ ենք պոկելու մեր մազերը: Եվ ինչպես տեսնում եք, իմ եղբայրներից ոմանք արդեն արել են դա: Խնդրում ենք, իմացեք, որ մենք շարունակ աղոթում ենք նրանց համար, ովքեր ինչ-որ ձևով տուժել են, հատկապես նրանց համար, ովքեր կորցրել են իրենց սիրելիների մարդկանց: Բոլորը համաձայն են, որ սա շատ ու շատ երկար է տևում:

Որքա՞ն մենք պետք է սպասենք, որ ազատվենք դժվարություններից, որոնց հանդիպում ենք: Իսկ ի՞նչ կասենք անձնական փորձություններին դիմանալու մասին, մինչ սպասում ու սպասում ենք, իսկ օգնությունը, կարծես, այնքան դանդաղ է գալիս: Ինչպե՞ս համբերել, երբ բեռներն ավելի ծանր են թվում, քան մենք կարող ենք տանել:

Նման հարցեր տալիս մենք կարող ենք, եթե փորձենք, լսել ուրիշի աղաղակը, որը արձագանքում է խոնավ, մութ բանտախցից՝ այդ տեղանքում գրանցված ամենացուրտ ձմեռներից մեկի ժամանակ:

«Ո՛վ Աստված, ո՞րտեղ ես դու», լսում ենք մենք Լիբերթիի բանտի խորքերից: «Եվ ո՞րտեղ է տաղավարը, որ ծածկում է քո թաքնված տեղը: Որքա՞ն պիտի քո ձեռքը ետ պահվի»:՝¹ Որքա՞ն, ո՛վ Տեր, որքա՞ն:

Այսպիսով, մենք առաջինը չենք և ոչ էլ վերջինը կլինենք, որ նման հարցեր կտանք, երբ վիշտը պատում է մեզ, կամ մեր սրտի ցավը շարունակվում է: Ես հիմա խոսում եմ ոչ թե համավարակների կամ բանտերի, այլ ձեր, ձեր ընտանիքի և ձեր հարևանների մասին, ովքեր բազմազան մարտահրավերների են բախվում: Ես խոսում եմ շատերի փափագի մասին, ովքեր ցանկանում են ամուսնանալ, բայց ամուսնացած չեն կամ ամուսնացած են և ցանկանում են, որ հարաբերությունները մի փոքր ավելի երկնային լինեն: Ես խոսում եմ նրանց մասին, ովքեր առողջական

լուրջ խնդիրներ ունեն, գուցե անբուժելի, կամ նրանց, ովքեր ողջ կյանքում պայքարում են գենետիկ արատի դեմ, որը չունի բուժում: Ես խոսում եմ էմոցիոնալ և հոգեկան խնդիրների հետ կապված շարունակական պայքարի մասին, որ ծանրացել է շատ մարդկանց հոգիների վրա և նրանց սիրողների ու նրանց հետ տառապողների սրտերի վրա: Ես խոսում եմ աղքատների մասին, որ Փրկիչը պատվիրեց երբեք չմոռանալ, և ես խոսում եմ ձեր մասին, ովքեր սպասում են երեխայի վերադարձին, անկախ տարիքից, ով ընտրել է ուղի, որը տարբերվում է ձեր աղոթքներում խնդրածից:

Ավելին, ես ընդունում եմ, որ նույնիսկ այն երկար ցանկը, որը վերաբերում է անձամբ մեզ, չի ներառում տնտեսական, քաղաքական և սոցիալական մեծ խնդիրները, որոնց բոլորս ենք բախվում: Մեր Երկնային Հայրը



Սան Լուկաս Սակատեպեքվես, Գվատեմալա

հստակ ակնկալում է, որ մենք լուծենք ինչպես հասարակական, այնպես էլ անձնական խնդիրները, բայց մեր կյանքում կլինեն ժամանակներ, երբ նույնիսկ մեր լավագույն հոգևոր ջանքերը և անկեղծ աղոթքները չեն տա այն հաղթանակները, որոնք մենք փափագում ենք, լինի դա համաշխարհային, թե փոքր խնդիրների վերաբերյալ: Ուստի, մինչ մենք աշխատում ենք և միասին սպասում մեր որոշ աղոթքների պատասխաններին, ես տալիս եմ ձեզ իմ առաքելական խոստումը, որ դրանք կլավեն և կստանան իրենց պատասխանը, չնայած, գուցե ոչ մեր ուզած ժամանակին կամ այնպես, ինչպես ուզում ենք: Սակայն դրանք *վիշտ* պատասխանվում են ժամանակին և այնպես, ինչպես ամենագետ ու հավերժ կարեկից ծնողը պետք է պատասխանի նրանց: Իմ թանկագին եղբայրներ և քույրեր, խնդրում եմ, հասկացեք, որ Նա, ով երբեք չի քնում կամ ննջում,² աստվածային բոլոր գործերից առաջ հոգ է տանում Իր զավակների երջանկության և վեհացման մասին: Նա մաքուր սեր է, փառահեղ անձնավորություն, և Գթասիրտ Հայր է Նրա անունը:

«Եթե դա այդպես է, - կարող եք ասել, - մի՞թե Նրա սերն ու ողորմությունը չպետք է պարզապես ճեղքեն մեր անձնական Կարմիր ծովերը և թույլ տան, որ մեր դժվարությունների միջով անցնենք չոր հողի վրայով: Արդյո՞ք չպետք է Նա 21-րդ դարի ճայեր ուղարկեր ինչ-որ տեղից թևածելու՝ 21-րդ դարի մեր բոլոր անհեթեթ ծղրիդներին ոչնչացնելու համար»:

Նման հարցերի պատասխանն է. «Այո, Աստված կարող է ակնթարթորեն հրաշքներ գործել, բայց վաղ թե ուշ մենք սովորում ենք, որ մեր մահկանացու ճամփորդության ժամանակներն ու եղանակները պատկանում են Նրան և ուղղորդվում միայն Նրա կողմից»: Նա այդ օրացույցը անհատապես վարում է մեզանից յուրաքանչյուրի համար:

Ակնթարթորեն բուժվող յուրաքանչյուր տկար մարդու կողքին, ով սպասում է մտնելու Բեթհեզդա ավազանը,³ կա մեկ ուրիշը, ով պետք է 40 տարի անցկացնի անապատում՝ սպասելով խոստումի երկիր մտնելուն:⁴ Յուրաքանչյուր Նեփիի և Լեփիի կողքին, ով Աստծո կողմից պաշտպանվում է կրակի օղակով՝ շնորհիվ իր հավատքի,⁵ մենք ունենք Աբիմադի, ով այրվում է կրակի բոցերում՝ շնորհիվ իր հավատքի:⁶ Եվ մենք հիշում ենք, որ Եղիան, ով մի ակնթարթում կրակ վայր բերեց երկնքից, Բահադի քահանաների դեմ վկայելու համար,⁷ այն նույն Եղիան է, ով տարիներ շարունակ համբերում էր, մինչ անձրև չկար, և ով որոշ ժամանակ կերակրվում էր այնքան սնունդով, որը տեղավորվում էր ագռավի ճանկերում:⁸ Իմ կարծիքով, դա չէր կարող լինել մի լավ համբուրգեր:

Ի՞նչ եմ ուզում ասել այս ամենով: Ուզում եմ ասել, որ հավատալ՝ նշանակում է վստահել Աստծուն լավ և վատ ժամանակներում, եթե նույնիսկ դա ներառում է որոշ տառապանք, մինչև որ կտեսնենք Նրա բացահայտվող բազուկը մեզ համար:⁹ Դա կարող է դժվար լինել մեր ժամանակակից աշխարհում, երբ շատերը սկսել են հավատալ, որ կյանքում ամենամեծ հաջողությունը բոլոր տառապանքներից խուսափելն է, որ ոչ ոք երբևէ չպիտի տառապի որևէ պատճառով:¹⁰ Սակայն այդ համոզմունքը երբեք չի հանգեցնի նրան, որ մենք աճենք «Քրիստոսի կատարեալ հասակի չափովը»:¹¹

Ներողություն խնդրելով Երեց Նիլ Ա. Մաքավելից, որ համարձակվում եմ լրացնել իր երբեմնի ասածը, ես նույնպես ընդունում եմ, որ «մեկի կյանքը . . . չի կարող լինել և՛ հավատով լի, և՛ առանց լարվածության»: Դուք պարզապես չեք կարող «անհոգ վայելել այս կյանքը» հյուսիս հերթական բաժակի պես, ասելով. «Տե՛ր, տուր ինձ Քո բոլոր ամենաընտիր առաքիլությունները, բայց միանշանակ



Ստանարա, Պարոնա, Իտալիա

ո՛չ տխրություն, ո՛չ վիշտ, ո՛չ ցավ, ո՛չ էլ հակադրություն: Խնդրում եմ, թույլ մի տուր, որ ինչ-որ մեկը չսիրի ինձ կամ դավաճանի ինձ, և ամենից առաջ՝ երբեք թույլ մի տուր, որ լքված զգամ Քո կամ նրանց կողմից, ում սիրում եմ: Բացի դրանից, զգուշությամբ ինձ հեռու պահիր այն բոլոր փորձառություններից, որոնք Քեզ աստվածային դարձրին: Բայց երբ մյուսներն ավարտեն իրենց դժվարին կյանքը, խնդրում եմ, թույլ տուր զամ և բնակվեմ Քեզ հետ, որտեղ ես կարող եմ պարծենալ, թե որքան նման եմ եղել մեր ուժեղ կողմերն ու բնավորությունները, մինչ ես վայելել եմ քրիստոնյայի իմ հարմարավետ կյանքը»:¹²

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, քրիստոնեությունը մխիթարող է, սակայն այն հաճախ հարմարավետ չէ: Դեպի սրբություն ու երջանկություն տանող ուղին, այս կյանքում և դրանից հետո, երկար, իսկ երբեմն քարքարոտ ուղի է: Դա ժամանակ և վճռականություն է պահանջում: Սակայն, իհարկե, այն անցնողները ստանում են մեծ ու կարևոր պարգև: Այս ճշմարտությունը հստակ և համոզիչ

կերպով ուսուցանվում է Մորմոնի Գրքի Ավա 32 գլխում: Այնտեղ քահանայապետը սովորեցնում է, որ եթե Աստծո խոսքը սերմանվում է մեր սրտերում, և եթե մենք հոգատարությամբ ջրում ու սնուցում ենք այն, ապա *սպասարկում* առաջ է բերում պտուղ, «որն ամենաթանկարժեքն է, . . . քաղցր է այն ամենից, ինչ քաղցր է», որով սնվողները այլևս չեն ծարավի և չեն քաղցի:¹³

Բազմաթիվ դասեր են ուսուցանվում այս ուշագրավ գլխում, բայց ամենակարևորն այն է, որ սերմը պետք է սնուցվի և մենք պետք է սպասենք, որ այն հասունանա՝ «հավատքի աչքով *սպասելով* դրա պտղին»:¹⁴ Ավան ասում է, որ մեր բերքահավաքը գալիս է «շուտով»:¹⁵ Չարմանալի չէ, որ նա ավարտում է իր ուշագրավ հրահանգները, երեք անգամ կրկնելով մեր սրտում Աստծո խոսքը սնուցելիս *ջանասեր* և *համբերասուսր* լինելու կոչը, «*սպասելով*», ինչպես նա է ասում, «երկայնամտությամբ . . . ծառին, որ պտուղ տա ձեզ համար»:¹⁶

COVID և քաղցկեղ, կասկած և վիստություն, ֆինանսական խնդիրներ և ընտանեկան փորձություններ: Ե՞րբ են վերցվելու այդ բեռները: Պատասխանն է՝ «շուտով»:¹⁷ Իսկ դա կարճ թե երկար ժամանակ կպահանջի, մենք չենք որոշում, բայց Աստծո շնորհով օրհնություններ կտրվեն նրանց, ովքեր ամուր կառչում են Հիսուս Քրիստոսի ավետարանից: Այդ հարցը որոշվել է Երուսաղեմում շատ տարիներ առաջ՝ մի մեկուսի պուրակում և բոլորին տեսանելի մի բլրի վրա:

Մինչ այժմ կլսենք այս համաժողովի եզրափակիչ ելույթը մեր սիրելի մարգարեի կողմից, թող որ հիշենք, ինչպես Ռասսել Նելսոնն իր օրինակով ցույց է տվել ողջ կյանքում. «*Տիրոջ սպասինողները* կնորոգուին ոյժով [և] թեւերով վեր կպանան արծիւների պէս, կվազեն եւ չեն վաստակիլ, . . . կզնան եւ չեն յոզնիլ»:¹⁸ Ես աղոթում եմ, որ «շուտով» վաղ թե



ուշ, այդ օրհնությունները տրվեն ձեզանից յուրաքանչյուրին, ով սփոփանք է փնտրում իր վշտին և ազատում փորձանքից: Ես վկայում եմ Աստծո սիրո և Նրա փառահեղ ավետարանի Վերականգնման մասին, որն ինչ-որ կերպով լուծում է առաջարկում այս կյանքում հանդիպած խնդիրներին: Տե՛ր Հիսուս Քրիստոսի փրկարար անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.1-2:
2. Տես Մաղմոս 121.4:
3. Տես Հովհաննես 5.2-9:
4. Տես Թվոց 32.13; Երկրորդ Օրինաց 2.7; Հեսու 5.6:
5. Տես Հելլաման 5.20-52:

6. Տես Մոսիա 17:
7. Տես Գ Թագավորաց 18.17-40:
8. Տես Գ Թագավորաց 17.1-7:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 123.17:
10. Rankin Wilbourne and Brian Gregor, "Jesus Didn't Suffer to Prove a Philosophical Point," *Christianity Today*, Sept. 20, 2019, christianitytoday.com.
11. Եփեսացիս 4.13
12. Elder Jeffrey R. Holland's modification of Elder Neal A. Maxwell's text; see Neal A. Maxwell, "Lest Ye Be Wary and Faint in Your Minds," *Ensign*, May 1991, 88.
13. Ավա 32.42:
14. Ավա 32.40, շղագրերն ավելացված են:
15. Ավա 32.42
16. Ավա 32.43, շղագրերն ավելացված են, տես նաև Ավա 32.41-42:
17. Ավա 32.42
18. Եսայիա 40.31, շղագրերն ավելացված է, տես նաև Եսայիա 40.28-30:



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու
Նախագահ

Նոր բնականոն կյանքը

*Ես ձեզ հրավիրում եմ ավելի ու ավելի շատ դարձնելի
ձեր սիրտը, միտքը և հոգին դեպի Երկնային Հայրը
և Նրա Որդի Հիսուս Քրիստոսը:*

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, գերագույն համաժողովի այս երկու օրերը հիանալի էին: Ես համաձայն եմ երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետ: Ինչպես նա նշեց, ուղերձները, աղոթքները և երաժշտությունը ներշնչված են Տիրոջից: Ես շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ բերել են իրենց մասնակցությունը:

Նիստերի ընթացքում ես պատկերացնում էի, թե ինչպես եք դուք լսում համաժողովը: Ես խնդրել եմ, որ Տերն օգնի ինձ հասկանալ, թե ինչ եք զգում, ինչի մասին եք անհանգստանում կամ ինչ խնդիր եք փորձում լուծել: Ես մտածել եմ, թե ինչ կարող եմ ասել այս համաժողովի ավարտին, որը ձեզ լավատեսորեն կտրամադրի այն ապագայի նկատմամբ, ինչը ես գիտեմ՝ Տերը ցանկանում է, որ դուք զգաք:

Մենք ապրում ենք փառահեղ դարաշրջանում, որը դարեր շարունակ կանխատեսել էին մարգարեները: Մա այն տնտեսությունն է, երբ ոչ մի հոգևոր օրհնություն հետ չի պահվի արդարներից:¹ Չնայած աշխարհի խառնաշփոթին,² Տերը կցանկանար, որ մենք «ուրախ ակնկալիքով» սպասեինք ապագային:³

Եկեք տեղում չդուրսնալ երեկվա հիշողությունների մեջ: Իսրայելի հավաքումն առաջ է շարժվում: Տեր Հիսուս Քրիստոսն առաջնորդում է Իր Եկեղեցու գործերը, և այն *կհասնի* իր աստվածային նպատակներին:

Իմ ու ձեր մարտահրավերն այն է, որ համոզվենք, որ *մեզանից* յուրաքանչյուրը կհասնի իր աստվածային ներուժին: Այսօր մենք հաճախ ենք լսում «նոր բնականոն կյանքի» մասին: Եթե դուք իսկապես ցանկանում եք ապրել նոր բնականոն կյանքով, ես ձեզ հրավիրում եմ ավելի ու ավելի շատ դարձնելի ձեր սիրտը, միտքը և հոգին դեպի Երկնային Հայրը և Նրա Որդի Հիսուս Քրիստոսը: Թող դա դառնա *ձեր* «նոր բնականոն կյանքը»:

Ամեն օր ապաշխարելով՝ ապրեք ձեր նոր բնականոն կյանքով: Չզոտեք ավելի մաքուր լինել՝ մտքի, խոսքի և գործի մեջ: Սպասավորեք ուրիշներին: Ունեցեք հավերժական հեռանկար: Մեծարեք ձեր կոչումները: Եվ ինչպիսիսի էլ լինեն ձեր

մարտահրավերները, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ամեն օր ապրեք այնպես, որ *դուք* ավելի պատրաստ լինեք հանդիպելու ձեր Արարիչին:⁴

Դրա համար մենք ունենք տաճարներ: Տիրոջ արարողություններն ու ուխտերը պատրաստում են մեզ հավերժական կյանքին՝ Աստծո բոլոր օրհնություններից մեծագույնին:⁵ Ինչպես գիտեք, COVID համավարակի պատճառով մեր տաճարները ժամանակավորապես փակվեցին: Այնուհետև մենք մեկնարկ տվեցինք մանրակրկիտ համակարգված և փուլային վերաբացմանը: Քանի որ շատ տաճարներում այժմ գործում է 2-րդ փուլը, հազարավոր զույգեր կնքվել են, և հազարավոր մարդիկ ստացել են իրենց անձնական օժտումները վերջին մի քանի ամիսների ընթացքում: Մենք անհամբեր սպասում ենք այն օրվան, երբ Եկեղեցու բոլոր



արժանի անդամները կրկին կկարողանան ծառայել իրենց նախնիներին և երկրպագել սուրբ տաճարներում:

Այժմ ես ուրախ եմ տեղեկացնել հետևյալ վայրերում վեց նոր տաճարների կառուցման ծրագրերի մասին՝ Թարավա (Կիրիբատի), Պորտ Վիլա (Վանուատու), Լինդոն (Յուտա), Գվատեմալա Մեծ քաղաք (Գվատեմալա) Արևելյան Սան Պաուլո (Բրազիլիա) և Սանտա Կրուզ (Բոլիվիա):


Կառուցելով և պահպանելով այս տաճարները՝ մենք աղոթում ենք, որ ձեզանից յուրաքանչյուրը կառուցի և պահպանի իր անձը, որպեսզի արժանի լինի մտնելու սուրբ տաճար:

Այժմ, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես օրհնում եմ ձեզ, որ լցվեք Տեր Հիսուս Քրիստոսի խաղաղությամբ: Նրա խաղաղությունը վեր է մահկանացու ամեն հասկացողությունից:⁶ Ես օրհնում եմ ձեզ Աստծո օրենքներին հնազանդվելու մեծ ցանկությամբ և ունակությամբ: Ես խոստանում եմ, որ դրա շնորհիվ ձեր վրա կտեղան օրհնություններ, այդ թվում՝ ավելի մեծ քաջություն, անձնական հայտնության ավելացում, ձեր տներում ավելի սիրառատ ներդաշնակություն և ուրախություն, նույնիսկ՝ անորոշության պայմաններում:

Թող որ մենք միասին առաջ գնանք և կատարենք մեր աստվածային պարտականությունը՝ ինքներս մեզ և աշխարհը նախապատրաստելով Տիրոջ Երկրորդ Գալուստին: Սա իմ աղոթքն է ձեր հանդեպ իմ սիրտ արտահայտությամբ, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.26-29:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.26, 88.91:
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 513:
4. Տես Ավմա 12.24, 34.32:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
6. Տես Փիլիպպեցիս 4.7:



Թաբա դե Սերա, Սան Պաուլո, Բրազիլիա

Հայտարարվել են ղեկավարների փոփոխություններ

2020 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ հայտարարվեց Յոթանասունի նախագահության մեկ նոր անդամ, մեկ բարձրագույն իշխանություն յոթանասունական, Նախագահող Եպիսկոպոսության մեկ նոր անդամ և չորս նոր Յոթանասունականներ:

Երեց Բրենթ Ն. Նիլսոնը հաստատվեց Յոթանասունի նախագահության անդամ և փոխարինեց Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնին, ում շնորհիվ պատվավոր անդամի կոչում: Երեց Պատրիկ Քիրոնն այժմ ծառայում է Յոթանասունի ավագ նախագահ պաշտոնում, որը նախկինում զբաղեցնում էր Երեց Քլեյթոնը:

Երեց Դին Մ. Դեյվիսը հաստատվեց բարձրագույն իշխանություն յոթանասունական՝ ազատվելով Նախագահող Եպիսկոպոսությունում առաջին խորհրդականի կոչումից: Եպիսկոպոս Վ. Քրիստոֆեր Վադելը հաստատվեց և փոխարինեց Երեց Դեյվիսին Նախագահող Եպիսկոպոսության առաջին խորհրդականի պաշտոնում, իսկ Եպիսկոպոս Լ. Թոդ Բադջը, ով ազատվեց բարձրագույն իշխանություն յոթանասունականի կոչումից, հաստատվեց Երկրորդ խորհրդական (Եպիսկոպոս Վադելի նախկին կոչումը):

Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլան և Երեց Ռիչարդ Ջ. Մենլոը նույնպես ազատվեցին բարձրագույն իշխանություն յոթանասունականի իրենց կոչումներից և նրանց շնորհիվ պատվավոր անդամի կոչում:

Նշված ղեկավարների կենսագրությունները կարելի է գտնել այս էջից սկսած: Հայտարարվել են նաև 47 տարածքային յոթանասունականների ազատման և 4 տարածքային յոթանասունականների կոչումների մասին (տես էջ 30): ■



Երեց Բրենթ Ն. Նիլսոն

Յոթանասունի նախագահություն

Երբ Երեց Բրենթ Ն. Նիլսոնի ընտանիքի անդամներից մեկը մի քանի տարով հեռացավ Եկեղեցուց, նա սովորեց այն կարևոր դասերից մեկը, որ Աստծո *բոլոր* զավակները Փրկիչի սիրո և Նրա Քավության բժշկող գործության կարիքն ունեն:

Իր ընտանիքի հետ Ղուկաս 15-րդ գլուխն ուսումնասիրելիս Երեց Նիլսոնը նորովի հասկացավ անառակ որդու առակը:

«Ինչ-որ կերպ ես միշտ ինձ համարում էի այն որդին, որ տանն էր մնացել: . . . Այդ առավոտ, ես հասկացա, որ ինչ-որ առումով *ես* անառակ որդին էի», - ասել է նա: «Մենք բոլորս զրկված ենք Հոր փառքից (տես Հռովմայեցիս 3.23): Մենք բոլորս մեզ բժշկող Փրկիչի Քավության կարիքն ունենք: Մենք բոլորս մոլորված ենք և մեզ գտնելու կարիքն ունենք»:¹

Երեց Բրենթ Հաչ Նիլսոնը Յոթանասունի նախագահության անդամ է հաստատվել 2020 թվականի հոկտեմբերի 3-ին, երբ փոխարինեց Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնին, ում շնորհիվ պատվավոր անդամի կոչում:

Երեց Նիլսոնը ծնվել է ԱՄՆ-ի Այդահո նահանգի Բրլի քաղաքում 1954 թվականի դեկտեմբերի 8-ին: Երիտասարդ տարիքում նա լիաժամկետ միսիա է ծառայել Ֆինլանդիայում: Նա ամուսնացավ Մարսիա Էն Բրեդֆորդի հետ 1978 թվականի հունիսին՝ Սուլթ Լեյքի տաճարում: Նրանք ունեն վեց երեխա:

1978 թվականին Երեց Նիլսոնը Բրիգամ Յանգ Համալսարանից ստացել է անգլերեն հումանիտար գիտությունների բակալավրի աստիճան: 1981 թվականին նա Յուտայի Համալսարանից ստացել է իրավագիտության դոկտորի աստիճան: Այնուհետև նա մոտ 30 տարի որպես փաստաբան և գործընկեր աշխատել է Այդահոյի (ԱՄՆ) Թվին Ֆոլսի փաստաբանական գրասենյակում:

Երեց Նիլսոնը որպես խորհրդական ծառայել է Խաղաղ օվկիանոսի և Ֆիլիպինների տարածաշրջանում, ինչպես նաև ծառայել է որպես Ֆիլիպինների տարածաշրջանի նախագահ: 2015-2020 թվականներին նա ծառայել է որպես Միսիոներական բաժանմունքի գործադիր տնօրեն:

2009 թվականի ապրիլին Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական կանչվելուց առաջ նա ծառայել է ծխի երիտասարդ տղամարդկանց նախագահ, Եպիսկոպոս, քահանայապետ, ցցի նախագահության խորհրդական, ցցի նախագահ և տարածքային յոթանասունական Այդահոյի տարածաշրջանում: ■

ՀՂՈՒՄ

1. Բրենթ Ն. Նիլսոն, «Մպասելով մոլորվածին», *Ensign* կամ



Երեց Դին Մ. Դեյվիս

Բարձրագույն Իշխանություն
Յոթանասունական

1989 թվականին աշխատանքից տուն գնալիս Ման Ֆրանցիսկոյում (Կալիֆորնիա, ԱՄՆ) Երեց Դին Մ. Դեյվիսը հայտնվեց երկրաշարժի գոտում, որն ուժգին ցնցեց նրա մեքենան: Հետագայում, երբ նա խորհում էր տարածքին հասցված վնասի մասին, հիշեց մեր կյանքն ամուր հիմքի վրա կառուցելու կարևորության մասին:

«Մեզանից ոչ ոք գիտակցաբար չէր կառուցի մեր տները, աշխատանքի վայրերը կամ պաշտամունքի սրբազան տները ավազի, փլատակների վրա կամ առանց համապատասխան ծրագրերի և նյութերի», - ասել է նա: «Եկե՛ք ընդունենք Իր մոտ գալու Փրկիչի հրավերը: Եկեք կառուցենք մեր կյանքը ապահով և ամուր հիմքի վրա»:¹

Երեց Դեյվիսը, ով ծառայում էր Նախագահող Եպիսկոպոսությունում 2012 թվականի ապրիլից, Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական հաստատվեց 2020 թվականի հոկտեմբերի 3-ին: Նախագահող Եպիսկոպոսությունում երեց Դեյվիսը ծառայել է Եպիսկոպոս Գարի Բ. Սթիվենսոնի երկրորդ խորհրդական, ով հաստատվեց 2015 թվականի հոկտեմբերի 3-ին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ: Այնուհետև, երեց Դեյվիսը հաստատվեց որպես Եպիսկոպոս Ժերալդ Կոսեի առաջին խորհրդական, ով փոխարինել էր երեց Սթիվենսոնին՝ նախագահող նոր Եպիսկոպոսի պաշտոնում:

Դին Մայրոն Դեյվիսը ծնվել է Մոլթ Լեյք Միթիում (Յուտա, ԱՄՆ) 1951 թվականին: Ուրուգվայ/Պարագվայ միսիայում ծառայելուց հետո նա 1973 թվականին Մոլթ Լեյքի Տաճարում ամուսնացավ Դարլա Ջեյմսի հետ: Նրանք ունեն 5 երեխա և 17 թոռ:

1955 թվականին հուլիսից նա սկսեց աշխատել Եկեղեցու համար, որտեղ նա Եկեղեցու հատուկ նախագծերի բաժնի գործադիր տնօրենն էր՝ պատասխանատու լինելով հատուկ նպատակներով անշարժ գույքի, տաճարային դիզայնի և տաճարների շինարարության համար: Եկեղեցու աշխատանքից առաջ երեց Դեյվիսը աշխատում էր High Industries, Inc. (Լանքասթեր, Պենսիլվանիա) և Bechtel Investments, Inc. (Ման Ֆրանցիսկո) ընկերություններում: Նա ստացել է Բրիգամ Յանգի համալսարանի գյուղատնտեսական տնտեսագիտության բակալավրի աստիճան և ավարտել է առաջատար գործադիր ծրագրերը Սթենֆորդի և Հյուսիսարևմտյան համալսարաններում:

Եպիսկոպոս Դեյվիսը ծառայել է որպես Պուերտո Ռիկո Ման Խուան միսիայի նախագահ, միսիայի նախագահի խորհրդական, ցցի նախագահ, ցցի նախագահի խորհրդական, ցցի գործադիր քարտուղար, քահանայապետ, մի քանի Եպիսկոպոսություններում: ■

ՀՂՈՒՄ

1. Տեա Դեան Մ. Դեյվիս, «Ամուր հիմք» *Ensign* կամ *Liahonou*, մայիս 2013, 9, 11:



Եպիսկոպոս Լ. Թոդ Բադջ

Նախագահող Եպիսկոպոսության երկրորդ
խորհրդական

18 ամիս Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական ծառայելուց հետո Եպիսկոպոս Լ. Թոդ Բադջը հաստատվել է որպես Նախագահող Եպիսկոպոսության երկրորդ խորհրդական: Նա փոխարինում է Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիսին, ով կանչվել է Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական:

Եպիսկոպոս Բադջը 1984 թվականին ավարտել է Բրիգամ Յանգի համալսարանը՝ տնտեսագիտության բակալավրի աստիճանով: Նա աշխատել է Bain & Company Japan, Citibank, N.A. և GE Capital ընկերության ճապոնիայի և Ատլանտայի (Ջորջիա, ԱՄՆ) մասնաճյուղերում: 2003 թվականին նա դարձավ Tokyo Star Bank Limited-ի նախագահը և գլխավոր գործադիր տնօրենը, և բանկի խորհրդի նախագահ աշխատեց 2008-2011 թվականներին: Նա նաև ծառայել է որպես Հավայան ավիատուրիզմի տնօրենների խորհրդի անդամ:

Իր կյանքի մի պահի, մինչ Եպիսկոպոս Բադջը մտածում էր կարիերան փոխելու մասին, նա մի քանի արժեքավոր խորհուրդ ստացավ: «Գործի մեջ մեզ նվիրված մարդիկ են պետք», - ասաց նրան մի մենթոր՝ ավելացնելով, որ նրա կարիերայի ուղին նրան շատ հնարավորություններ կտա մարդկանց խորհուրդ տալու և օգնելու համար:

Եպիսկոպոս Բադջի կարիերան, ըստ էության, նրան շատ հնարավորություններ տվեց բարի ազդեցություն ունենալ գործարար աշխարհում, այդ թվում՝ դռներ բացելով ճապոնիայում ավետարանով կիսվելու համար, որտեղ նա ավելի վաղ միսիոներ էր եղել ճապոնիայի Ֆուկուոկա միսիայում: Հետագայում նա ծառայեց որպես ճապոնիա Տոկիո միսիայի նախագահ:

Նա ուսուցանել է, որ «ավետարանի բարի լուրը ոչ թե վշտերից ու դժբախտություններից ազատ կյանքի խոստումն է, այլ նպատակով և իմաստով լի կյանքի խոստումն է. կյանք, որտեղ վշտերն ու չարչարանքները կարող են «կույ գնալ» Քրիստոսի ուրախության մեջ»[Արմա 31.38]:¹

Լորենս Թոդ Բադջը ծնվել է 1959 թվականի դեկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Պիտսբուրգ քաղաքում: Բրիգամ Յանգի համալսարանում իր առաջին տարեդարձի ժամանակ նա հանդիպեց Լորի Քալիների հետ: Նրանք ամուսնացան 1981 թվականին Լոզան Յուտայի տաճարում: Նրանք ունեն վեց երեխա:

Բարձրագույն Իշխանություն Յոթանասունական կանչվելուց առաջ երեց Բադջը ծառայել է տարածքային յոթանասունական, ցցի նախագահ, ցցի գործադիր քարտուղար, ցցի երիտասարդ տղաների նախագահ, Եպիսկոպոս և երեցների քվորումի նախագահ: ■

ՀՂՈՒՄ

1. Լ. Թոդ Բադջ, «Հաստատուն և անփիստ վստահություն», *Ensign* կամ *Liahonou*, նոյեմբեր 2019, 47:



Միսիոներների ուղղորդման համակարգ. Պարզ և արագ

Միսիոներական ուղղորդման համակարգի վերջին թարմացումների շնորհիվ անդամների համար ավելի պարզ և հեշտ է դառնում օգնել իրենց ընկերներին հանդիպել միսիոներների հետ: Ուղղորդման նորացված գործընթացը նախատեսված է միսիոներներին և ուղղորդող անդամներին միմյանց արագ կապելու համար, որպեսզի նրանք կարողանան ծրագրել, թե ինչպես լավագույնս օգնեն անդամների ընկերներին ներգրավվել ավետարանի դասերում, որոնք ներկայացնում են միսիոներները:

Սհա թե ինչպես է այն աշխատում.

1. Երբ ձեր ընկերը կամ ծանոթը համաձայնվում են հանդիպել միսիոներների հետ, դուք պարզապես Անդամների Գործիքներ հավելվածի միջոցով կամ ChurchofJesusChrist.org/referrals

կայքում լրացնում եք ուղղորդման ձևաթուղթը: Կարող եք նաև թողնել ձեր կոնտակտային տվյալները և գրություն միսիոներների համար:

2. Ձևաթուղթը ներկայացնելուց հետո մի քույր միսիոներ, ում հանձնարարված է օժանդակել անդամների ուղղորդումներին, կկապվի ձեզ հետ: Նա կգտնի ուղղորդման ճիշտ հասցեատիրոջը և կօգնի ձեզ կապվել տեղական միսիոներների հետ:
3. Տեղի միսիոներները նաև ուղղորդման հետ կստանան ձեր կոնտակտային տվյալները: Մա ձեզ հնարավորություն է տալիս միսիոներների հետ քննարկել ձեր կողմից ուղղորդված ընկերոջ իրավիճակն ու կարիքները: Կարող եք նրանց հետ խոսել այն մասին, թե ինչպես օգնել ձեր ընկերոջը հրաշալի փորձառություն ունենալ: Դուք նաև կարող

եք մասնակցել միսիոներական դասերին, որքան ցանկանում եք:

«Միսիոներներին ուսուցանվում է, որ անդամներից ստացված յուրաքանչյուր ուղղորդում պետք է համարել շատ արժեքավոր», - ասել է յոթանասունից երեք Մարկուս Բ. Նաշը: «Երբ միսիոներներն ուղղորդում են ստանում, նրանց ասվում է կապ հաստատել ձեզ հետ և հարցնել, թե ինչպես կարող են լավագույնս օգնել ձեր ընկերոջը: Երբ անդամներն ու միսիոներները միասին են աշխատում, Տերը նրանց ոգեշնչում է իմաստալի փորձառություն ստեղծել, որպեսզի օգնի ձեր ընկերներին մոտենալ Հիսուս Քրիստոսին»:

Այս նոր ինտերակտիվ գործիքը ներկայումս առաջարկվում է 33 լեզուներով: ■

Ավելի իմանալու կամ ուղղորդում ուղարկելու համար այցելեք ChurchofJesusChrist.org/referrals կայքը:

Փոփոխություններ Եկեղեցու ամսագրերում

2021 թվականի հունվարից սկսած մեծ փոփոխություններ տեղի կունենան Եկեղեցու ամսագրերում: *Լիստոնասն* կդառնա ամսագիր չափահաս ընթերցողների համար և կթողարկի *մեկ* հրատարակություն չափահասների համար ամբողջ աշխարհում: Երիտասարդների և երեխաների ամսագրերը, որպես անկախ հրատարակություններ, հասանելի կդառնան ամբողջ աշխարհում: Թվային նյութերը և տեղում ստեղծված նյութերով ներդիրները կընդլայնեն և կավելացնեն ավետարանի մասին հասկացողությունն ու աղբյուրները, որոնք հասանելի են Եկեղեցու անդամներին ամենուր:

Ensign անունը կհանվի, երիտասարդների ամսագիրն այժմ կկոչվի *Երիտասարդներին գործացնելու համար* (կփոխարինի *New Era*-ն), իսկ *Ընկեր* անունը կշարունակի մնալ վերնագիր երեխաների ամսագրի համար:

Ամսագրերի այս ճշգրտումները մի քանի օգուտներ կտան ամբողջ աշխարհի Վերջին Օրերի Սրբերին.

- Ոչ անգլախոս երկրներում գտնվող ընտանիքներն առաջին անգամ հնարավորություն կունենան բաժանորդագրվել ամսագրերին, որոնք հատուկ երեխաների և երիտասարդների համար են:
- Որոշ տարածքներում և լեզուներում նյութը կհրապարակվի ավելի հաճախ, քան անցյալում էր:
- Համաշխարհային եկեղեցու ընտանիքը կստանա նույն միավորող ուղերձները՝ համաշխարհային ամսագրերի միջոցով: ■

Այդ փոփոխությունների վերաբերյալ մեկնաբանությունները կարդացեք 39–40 էջերում:



Հայտարարվել են վեց նոր տաճարներ

Գերագույն համաժողովի կիրակնօրյա ցերեկային նիստի ժամանակ նախագահ Նելսոնը հայտարարեց վեց նոր տաճարների մասին: Տաճարներ հայտարարվեցին հետևյալ տարածքներում.

- **Տարավա, Կիրիբատի** Կիրիբատի երկիր է, որը բաղկացած է 32 կորալյան կղզիներից և գտնվում է Խաղաղ օվկիանոսում՝ գրոյական միջօրեակա-նի մոտ:
- **Պորտ Վիլա, Վանուատու** Վանուատուն երկիր է, որը բաղկացած է Հարավային Խաղաղ օվկիանոսյան շուրջ 80 կղզիներից:
- **Լինդոն, Յուտա (ԱՄՆ)** Լինդոնը գտնվում է Սոլթ Լեյք Սիթիից մոտ 40 մղոն (64 կմ) հարավ:
- **Մեծ Գվատեմալա Սիթի, Գվատեմալա** Կենտրոնական Ամերիկայում գտնվող Գվատեմալայում շուտով չորս տաճար է լինելու:
- **Արևելյան Սան Պաուլո, Բրազիլիա** Սա կլինի Բրազիլիայում հայտարարված 12-րդ տաճարը:
- **Սանտա Կրուզ, Բոլիվիա** Սա կլինի երկրորդ տաճարը Հարավային Ամերիկայի այս երկրում:

2018 թվականին Եկեղեցու նախագահ դառնալուց հետո նախագահ Նելսոնը հայտարարել է 49 նոր տաճարների կառուցման մասին: Եկեղեցին ներկայումս ունի 230 հայտարարված, կառուցման փուլում գտնվող կամ գործող տաճարներ: ■

Հայտարարություն տաճարային արարողության մասին

Առաջին նախագահությունը 2020 թվականի հուլիսի 20-ին՝ երկուշաբթի օրը, հրապարակել է հետևյալ ուղերձը՝ տաճարային օժտման արարողության փոփոխությունների վերաբերյալ.

«Տաճարային սուրբ ուսմունքները, խոստումները և արարողությունները հնագույն ծագում ունեն և Աստծո զավակներին մատնացույց են անում դեպի Նա, երբ այդ զավակները շարունակում են ուխտեր կապել և ավելին սովորել Աստծո ծրագրի մասին, ներառյալ՝ Փրկիչ Հիսուս Քրիստոսի դերի մասին:

Տաճարային փորձառության մեջ, նույնիսկ արդի պատմության ընթացքում, ուսուցման եղանակները շատ անգամներ ներշնչման շնորհիվ փոխվել են, որպեսզի անդամներն ավելի լավ հասկանան և ապրեն համաձայն նրա, ինչ սովորում են տաճարում:

Տաճարային փորձառության մաս է կազմում Աստծո հետ սրբազան ուխտերի կամ խոստումների կապումը: Շատերը ծանոթ են այն խորհրդանշական գործողություններին,

որոնք տեղի են ունենում կրոնական ուխտեր կապելիս (օրինակ՝ աղոթելը, մկրտության ժամանակ ցրի մեջ անձի ընկղմվելը կամ ամուսնության արարողության ժամանակ ձեռքերը բռնելը): Նման պարզ, խորհրդանշական գործողությունները տեղի են ունենում նաև տաճարային ուխտեր կապելիս:

Հոգ տանելով բոլորի մասին և ցանկանալով բարելավել տաճարային ուսման փորձառությունը՝ նոր փոփոխություններ են թույլատրվել տաճարային օժտման արարողության մեջ: Տաճարային արարողությունների սուրբ բնույթը հաշվի առնելով՝ մենք խնդրում ենք մեր անդամներին և ընկերներին չզբաղվել այս փոփոխությունների վերաբերյալ շահարկումներով կամ հասարակական քննարկումներով: Փոխարենը, մենք հրավիրում ենք, որ Եկեղեցու անդամները շարունակեն սպասել այն օրվան, երբ կարող են վերադառնալ և աղոթքով ու երախտագիտությամբ իրենց լիակատար մասնակցությունն ունենալ տաճարային սուրբ գործում: ■





Տաճարային աղոթքների ցուցակների առցանց համակարգ

Ստեղծվել է առցանց համակարգ, որն անդամների հնարավորություն է տալիս անդամների կամ ընկերների անուններն ուղարկել տաճար, որտեղ այդ անունները կտեղադրվեն աղոթքների ցուցակում: Տաճարների աղոթքների ցուցակներում անունները տեղադրելու հարցումները ներկայումս կարելի է ներկայացնել տվյալ տաճարի տեղեկատվական էջում՝ ChurchofJesusChrist.org/temples հասցեով և սեղմել աղոթքների ցուցակի կապուղին: Հարցումները կարելի է նաև ներկայացնել «Անդամի գործիքներ» բջջային հավելվածի «Տաճարներ» բաժնում: Մուտքագրվելուց հետո անունները կուղարկվեն տվյալ տաճար (կամ մոտակա գործող տաճարը):

Շատ կրոնների անդամներ աղոթում են սիրելի մարդկանց և այլոց համար, ովքեր մաքառում են հիվանդությունների կամ այլ խնդիրների դեմ: Սուրբ գրություններում նկարագրված են օրհակներ, երբ Հիսուս Քրիստոսն աղոթում էր ամբոխի մեջ և ներկաներին հորորում էր նույնպես աղոթել: Այդ նույն կիրառությունը նկատվում է տաճարում, որտեղ անդամները միավորվում են հավատքով և աղոթքով՝ խնդրելով Աստծուն օրհնել աղոթքների ցուցանակներում նշված անհատներին: ■

Ընդհանուր ձեռնարկը հասանելի է թվային ձևաչափով

Ընդհանուր ձեռնարկ. ծառայել Հիսուս Քրիստոսի «Անդրջին Օրերի Սրբերի Եկեղեցում» ձեռնարկի լրամշակման գործընթացը շարունակվում է և թարգմանվում են ընտրված նյութեր 21 հիմնական լեզուներով, որոնք շուտով լույս կտեսնեն:

Անգլերենով նոր ձեռնարկը լույս է տեսել թվային ձևաչափով՝ մարտին և հուլիսին լրամշակված նյութերի լրացուցիչ թողարկումներով: Մինչ այժմ գրքի 38 գլուխներից 16-ը վերաշարադրվել և հրատարակվել են: Մնացած գլուխները կվերանայվեն առաջիկա ամիսների ընթացքում, ներառյալ խմբագրումները՝ ծավալը կրճատելու և ընթերցանության մակարդակը պարզեցնելու համար:

2020 թվականի հոկտեմբերի գերագույն համաժողովից կարճ ժամանակ անց 32-րդ բաժնի՝ «Ապաշխարություն և Եկեղեցու անդամության խորհուրդներ», ինչպես նաև 38.6 բաժնի՝ «Բարոյական հարցերով քաղաքականություն» (որն աջակցում է գլուխ 32-ը) որոշ մասեր կսկսեն հրատարակվել 21 լեզուներով (բացի անգլերենից): Լրացուցիչ գլուխները թարգմանվում և պատրաստվում են տպագրության առաջիկա ամիսներին, և, ի վերջո, ամբողջ նյութը հասանելի կլինի 35 լեզուներով:

Թեպետ ձեռնարկը հասանելի է Եկեղեցու կայքում և Ավետարանի գրադարանի հավելվածում, սակայն նյութի հիմնական լսարանը Եկեղեցու ղեկավարներն են: Լրամշակված ձեռնարկը փոխարինում է *Ձեռնարկ 1-ին* (ցցի նախագահների և եպիսկոպոսների համար) և *Ձեռնարկ 2-ին* (բոլոր

ղեկավարների համար), և ձեռնարկի ողջ տեղեկատվությունը միավորում է մեկ հրատարակության մեջ:

Նոր ձեռնարկի կառուցվածքային շրջանակը փրկության և վեհացման աշխատանքն է, որն ընդգրկում է կենտրոնացման չորս ոլորտներ, երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոսը և օգնում ենք Աստծո աշխատանքին.

1. Ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով
2. Հոգ տանել կարիքավորների մասին
3. Հրավիրել բոլորին ընդունել ավետարանը
4. Միավորել ընտանիքները հավերժության համար

Բաժինները կօգնեն ամբողջ աշխարհի ղեկավարներին ծառայել Քրիստոսանման հոգատարությամբ՝ իրականացնելով Եկեղեցու տարբեր ծրագրերը, քաղաքականությունը և ընթացակարգերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հարմարեցնելով դրանք տեղական կարիքներին:

Ձեռնարկի թվային հրատարակությունը հնարավորություն է տալիս թարմացումներ և վերանայումներ կատարել Եկեղեցու աճի և քաղաքականության ճշգրտման հետ միասին: Ձեռնարկի մեջ ներառված ճկուն և փոխակերպվող սկզբունքները օգնում են ղեկավարներին և անդամներին արդյունավետորեն կիրառել սկզբունքները և Եկեղեցու ծրագրերը տարբեր չափերի համայնքներում և Սրբերի բազմազան, համաշխարհային համայնքում: ■

օրհներգերի գրքի լրամշակված թարմացում


2018 թվականի հունիսին հայտարարվեց Եկեղեցու օրհներգերի և մանկական երգերի լրամշակման մասին՝ սրբազան երաժշտության վերաբերյալ անդամների կարծիքի հարցումով և անդամների կողմից ինքնատիպ հիմների, երգերի և տեքստերի ներկայացման կոչով: Գրեթե 50000 անդամներ արձագանքեցին հետադարձ կապի հարցմանը, որը վերաբերում է մեր ներկայիս սրբազան երաժշտությանը: Հարցվածները նաև կիսվեցին իրենց զգացմունքներով՝ կապված այլ հավատքների ընտրանի հավաքածուների հետ, որոնք հնարավոր է ավելացնել հիմների գրքի մեջ:

66 երկրների անդամներից ստացվել են ավելի քան 16000 երաժշտական ստեղծագործություններ: Այս ինքնատիպ հիմներն ու երգերը անանուն վերանայվում և անցնում են բազմաթիվ փուլերի միջով՝ տաղանդավոր անդամների միջազգային խմբի կողմից և Եկեղեցու գլխավոր գրասենյակի ստուգման հանձնախմբերի կողմից:

Հանձնախմբերը երախտապարտ են, որ ամբողջ աշխարհի անդամներն իրենց ժամանակն ու տաղանդները ներդնում են, որպեսզի օգնեն ուրիշներին սուրբ երաժշտության միջոցով ավելի մոտենալ Փրկիչին: Քանի որ բոլոր երգերն ու առաջարկները մանրամասն քննարկվում են, կանխատեսվում է, որ նոր հավաքածուները հասանելի կդառնան մի քանի տարի անց:



Եկ, հետևիր ինձ Սովորել գերագույն համաժողովի ելույթներից



Օսակա, Ճապոնիա

Երբ մենք ձգտում ենք մասնակցել Տիրոջ գործին, ապրող մարգարեների և Եկեղեցու մյուս բարձրագույն ղեկավարների ուսմունքները ոգեշնչող առաջ-նորոգություն են տրամադրում մեզ: Յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ կիրակի օրերին, քվորումը և Սփոփող Միության նախագահությունները ընտրում են համաժողովի որևէ ուղերձ ուսումնասիրման համար՝ ելնելով անդամների կարիքներից և հիմնվելով Հոգու առաջնորդության վրա: Երբեմն եպիսկոպոսը կամ ցցի նախագահը նույնպես կարող են խորհուրդ տալ ուսում-նասիրել որոշակի ուղերձ: Ընդհանուր առմամբ, ղեկավարները պետք է շեշտը դնեն Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների ուղերձների վրա: Մակայն վերջին համաժողովի ցանկացած ուղերձ կարող է քննարկվել: Ղեկավարները և ուսուցիչները պետք է ուղիներ փնտրեն՝ խրախուսելու անդամներին ժողովը սկսելուց առաջ կարգալ ընտրված ուղերձները:

Լրացուցիչ տեղեկության համար տե՛ս Մեյքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ժողովներին վերաբերող գլոբալները *Ընդհանուր ձեռնարկ. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում Ժառայելը*, 2.1.2, 9.2.1.2, ChurchOfJesusChrist.org:

Ծրագրել ուսուցումը

Հետևյալ հարցերը կարող են օգնել ուսուցիչներին, երբ նրանք ծրագրեն ուսուցանել գերագույն համաժողովի ուղերձը:

1. Ելույթ ունեցողն ի՞նչ է կամենում, որ մենք հասկանանք: Ավետարանի ի՞նչ սկզբունքներ է նա ցանկանում ուսու-ցանել: Ի՞նչպե՛ս են այդ սկզբունքները վերաբերում մեր քվորումին կամ Սփոփող Միությանը: _____
2. Իր ելույթը լրացնելու համար սուրբ գրության ի՞նչ հատված օգտագործեց ելույթ ունեցողը: Կա՞ն արդյոք ուրիշ հատվածներ, որոնք կարդալով ավելի լավ կհասկանանք սկզբունքը: (Հատվածների որոշ հղում-ներ կարող եք գտնել Ժանրագրություններում կամ Թեմաների ուղեցույցում:) _____
3. Ի՞նչ հարցեր կարող եմ տալ, որոնք կօգնեն անդամ-ներին խորհել սկզբունքի մասին: Ի՞նչ հարցեր կօգ-նեն նրանց հասկանալ ուղերձի կարևորությունն իրենց կյանքում, իրենց ընտանիքներում և Տիրոջ աշխատանքում: _____
4. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հրավիրեմ Հոգին մեր ժողովների ժամանակ: Ի՞նչ կարող եմ օգտագործել քննարկումն ընդլայնելու համար, ներառյալ՝ պատմու-թյունները, համանմանությունները, երաժշտությունը և նկարները: Ի՞նչ էր օգտագործում ելույթ ունեցողը: _____
5. Արդյո՞ք ելույթ ունեցողը որևէ հրավերի կոչ հղեց: Ինչ-պե՛ս կարող եմ օգնել անդամներին՝ ըստ այդ հրավե-րի գործելու ցանկություն ունենալ: _____

Միջոցառման գաղափարներ

Կան շատ եղանակներ, որոնցով կարող եք օգնել անդամների սովորել գերագույն համաժողովի ելույթներից: Ահա մի քանի օրինակներ. դուք կարող եք ունենալ այլ գաղափարներ, որոնք ավելի լավ կգործեն ձեր քվորումում կամ Սփոփող Միությունում:



Զայցբուրգ, Ավստրիա

- **Քննարկեք խնդիրը**
Անդամներին փոքր խմբերի բաժանեք և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք համաժողովի տարբեր ուղերձներ՝ կարդալու և քննարկելու համար: Ապա, խնդրեք յուրաքանչյուր խմբին կիսվել իրենց սովորած ճշմարտությունով: Կամ կարող եք խմբեր ձևավորել այն մարդկանցով, ովքեր տարբեր բաժիններ են ուսումնասիրել, ապա թույլ տվեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց գրածով:
 - **Պատասխանեք հարցերին:**
Հրավիրեք անդամներին պատասխանել հարցերին՝ համաժողովի ուղերձի վերաբերյալ հետևյալ հարցի նման: Այս ուղերձում ավետարանի ի՞նչ ճշմարտություններ ենք գտնում: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ ճշմարտությունները: Ի՞նչ հրավերներ և խոստացված օրհնություններ տրվեցին: Ի՞նչ է այս ուղերձն ուսուցանում մեզ այն , աշխատանքի մասին, որն Աստված է կամենում, որ անենք:
 - **Կիսվեք մեջբերումներով**
Հրավիրեք անդամներին կիսվել համաժողովի այն ուղերձների մեջբերումներով, որոնք ոգեշնչում են նրանց կատարել փրկության աշխատանքի իրենց պարտականությունները: Հորդորեք նրանց մտածել, թե ինչպես կարող են կիսվել այդ մեջբերումներով, որպեսզի օրհնեն որևէ մեկին, այդ թվում՝ իրենց սիրելիներին և այն մարդկանց, ում նրանք սպասավորում են:
 - **Կիսվեք առարկայական դասերով**
Հրավիրեք մի քանի անդամների տնից նախօրոք բերել որևէ առարկա, որի օգնությամբ կարող են ուսուցանել համաժողովի ուղերձի մասին: Ժողովի ընթացքում խնդրեք անդամներին բացատրել, թե ինչպես են այդ առարկաները վերաբերում ուղերձին:
 - **Ղաս պատրաստեք տանը ուսուցանելու համար**
Խնդրեք անդամներին աշխատել զույգերով և համաժողովի ուղերձի թեմայով ընտանեկան երեկոյի համար մի դաս ծրագրել: Ինչպե՞ս կարող ենք ուղերձը հարմարեցնել մեր ընտանիքներին: Ինչպե՞ս կարող ենք այդ ուղերձով կիսվել այն մարդկանց հետ, ում սպասավորում ենք:
- **Կիսվեք փորձառություններով**
Միասին կարդացեք մի քանի հայտարարություններ գերագույն համաժողովից: Խնդրեք անդամներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց կյանքից, որոնք լուսաբանում կամ ամրապնդում են այն վարդապետությունը, որն ուսուցանվել է այս հայտարարություններում:
 - **Մոլորեք սուրբ գրության որևէ հատված:**
Հրավիրեք անդամներին կարդալ սուրբ գրության որևէ հատված, որի մասին հղում է արված համաժողովի ուղերձում: Կոչ արեք նրանց քննարկել, թե այդ ուղերձի ուսմունքներն ինչպես են օգնում նրանց ավելի լավ հասկանալ այդ հատվածը:
 - **Գտեք պատասխանը**
Ժամանակի ընթացքում ստեղծեք մի քանի հարցեր, որոնց կարելի է պատասխանել՝ օգտագործելով համաժողովի ուղերձը: Կենտրոնացեք այն հարցերի վրա, որոնք խորությամբ մտածելու և ավետարանի սկզբունքները կիրառելու հնարավորություն են տալիս (տես *Ուսուցանել Փրկիչի ձևով*, 31–32): Ապա անդամներին թույլ տվեք ընտրել որևէ հարց և գտնել այդ հարցի պատասխանը ուղերձում: Հրավիրեք նրանց քննարկել իրենց պատասխանները փոքր խմբերում:
 - **Գտեք պատահայտությունը**
Հրավիրեք անդամներին քննել համաժողովի ուղերձը և ուշադրություն դարձնել այն արտահայտություններին, որոնք կարևոր են նրանց համար: Խնդրեք նրանց կիսվել այդ արտահայտություններով և կիսվել, թե ինչ են սովորել դրանցից: Ինչպե՞ս են այդ ուսմունքներն օգնում մեզ իրագործել Տիրոջ աշխատանքը:
 - **Ստեղծեք որևէ գործ:**
Հրավիրեք անդամներին պատրաստել պաստառ կամ էջանիշ, որի վրա գրված է որևէ համաժողովի ուղերձից մի կարճ ոգեշնչող հայտարարություն: Նրանց հնարավորություն տվեք կիսվել իրենց պատրաստած գործերով: ■

Գերագույն համաժողովի ուղերձներն ուսումնասիրելու և այդ ուղերձներից ուսուցանելու համար տե՛ս <<Գերագույն համաժողովն ուսումնասիրելու և համաժողովից ուսուցանելու մտքեր>>, Գերագույն համաժողովի տակ գտնվող Ավետարանի գրադարանում:




Լուսանկարներ. Սան Լուկաս Սակատեպեկեն, Գվատեմալա, Ներդիր. Սան Պաոլո, Բրազիլիա

«Երբ հաջորդ վեց ամիսների ընթացքում դուք ուսումնասիրեք ձեր սուրբ գրությունները, ես խրախուսում եմ, որ կազմեք այն ամենի ցուցակը, որ Տերը խոստացել է անել ուխտի Իսրայելի համար»,- նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հորդորեց Եկեղեցու անդամներին: «Կարծում եմ, որ դուք շա՛տ կզարմանաք»:



4 02167 26201 5



ARMENIAN